ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 4/9 որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և պետական սեփականության կառավարում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2018թ. հուլիսի 6-ից մինչև 2019թ. մարտի 29-ը ներառյալ:
Հաշվեքննության տեսակը	Ֆինանսական և համապատասխանության:
Հաշվեքննության ընթացակարգերը	Զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում:
Հաշվեքննության շրջանակներում իրականացված ստուգում	Հաշվեքննության ընթացքում իրականացվել է ստուգում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում: Ստուգման ընթացքում «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, երկու առանձին նյութեր ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանումներ	ՀՀ հաշվեքննիչ պալատի մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի վարչություն:
Հաշվեքննության փաստաթղթավորումը	Հաշվեքննության գործընթացը փաստաթղթավորված է ինչպես աշխատանքային փաստաթղթերում կազմված 20 արձանագրություններում, ինչպես նաև արտացոլված՝ հարցում, արտաքին հաստատում ընթացակարգերի շրջանակներում ստացված նյութերում:

Ի.ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Հաշվեքննության են ենթարկվել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 2017թ. և 2018թ. 9 ամիսների ֆինանսական հաշվետվությունները և ֆինանսատնտեսական գործունեությունը:

Ղեկավարության պատասխանատվությունը

Նախարարության ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ բյուջետային դասակարգումների և դրանց կիրառման ցուցումների համաձայն, ինչպես նաև նախարարության ֆինանսատնտեսական գործունեությունն իրավական ակտերին, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան իրականացնելու համար: Նախարարության ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն, իր կարծիքով, թույլ կտա պատրաստել հնարավոր սխալների կամ խարդախության կամ անհամապատասխանությունների արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից և էական անհամապատասխանություններից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Հաշվեքննողի պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Հաշվեքննությունն անցկացվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտներով: Հաշվեքննության ընթացքում անհրաժեշտ է հետևել վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորել ու իրականացնել այնպես, որ ձեռք բերվի ողջամիտ երաշխիք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից և անհամապատասխանություններից զերծ լինելու վերաբերյալ:

Հաշվեքննության ընթացքում կատարվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռք բերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ հնարավոր խարդախության կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և ֆինանսատնտեսական գործունեության մեջ էական անհամապատասխանությունների ռիսկերի գնահատումը:

Ոչ լիարժեք եզրահանգման հիմք

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեության մեջ հայտնաբերվել են էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, որոնց արդյունքում ֆինանսական հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են եղել:

Ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք եզրահանգման» հիմք պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 2017թ. և 2018թ. 9 ամիսների հաշվեքննված ֆինանսական հաշվետվությունները և ֆինանսատնտեսա-կան գործունեությունը համապատասխանում են բյուջետային դասակարգումների և դրանց կիրառման ցուցումներին, ինչպես նաև նախարարության ֆինանսատնտեսական գործունեությունը կարգավորող իրավական ակտերին, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին ու պահանջներին:

Լևոն Յոլյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ
29 մարտի 2019 թվական
ՀՀ հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան պող. 19, ք. Երևան, Հայաստան

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ (ՍՏՈՒԳՄԱՄԲ) ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«Ասիական զարգացման բանկի (այսուհետև՝ ԱԶԲ) աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220կվ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման» ծրագրի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2014 թվականի սեպտեմբերի 5-ին կնքվել է թիվ 3150-ARM(SF) վարկային համաձայնագիրը՝ 24,022,000.0 ՀՓԻ (հատուկ փոխառության իրավունքի) գումարի չափով, որը համարժեք է 37 մլն ԱՄՆ դոլարին: Համաձայնագիրը վավերացվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 17.12.2014թ.-ին: Վարկային ծրագրի ավարտ է սահմանվել 2020թ. հունիսի 30-ը:

Վարկային համաձայնագրի պայմաններին համապատասխան՝ 02.02.2015թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև կնքվել է ենթավարկային համաձայնագիր, որով ՀՀ ֆինանսների նախարարությունն ԱԶԲ-ի կողմից տրված վարկային միջոցներից 23.4 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով վերավարկավորել է ԲԷՑ-ին: Համաձայն ենթավարկային համաձայնագրի 3.1-ին կետի՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը ԲԷՑ-ին է փոխանցում նաև համաֆինանսավորում՝ ՀՀ տարածքում գործող հարկերի, տուրքերի և մաքսային վճարների իրականացման համար: Ենթավարկային միջոցների օգտագործման վերջնաժամկետ է սահմանվել 30.06.2020թ.-ը:

Ծրագրի շրջանակներում կնքվել է ընդամենը 15.9 մլն ԱՄՆ դոլարի երեք պայմանագիր 2015-2016թթ. ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև վարկային ծրագրում նախատեսվել է 1.4 մլն ԱՄՆ դոլարի տոկոսավճարների մարում: Վարկային միջոցներից տնտեսվել է՝ 6.1 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ պետական բյուջեով ծրագրի 2017թ. տարեկան պլանը նախատեսվել է ընդամենը 1,475,840.7 հազ. դրամ: Ծրագրի 2017թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 2,958,174.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 2,782,604.85 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 3,945,193.62 հազ. դրամ:

ՀՀ պետական բյուջեով ծրագրի 2018թ. տարեկան պլանը նախատեսվել է ընդամենը 2,527,668.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 597,505.5 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 2,093,091.1 հազ. դրամ (30.09.2018թ. դրությամբ):

Ստուգումն ընդգրկող ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում կատարվել է երկու պայմանագիր.

1. ԲԷՑ-ի և Liaoning-EFACEC Electrical Equipment Co., LTD LEEEC & Northeast China International Electric Power Corporation (NEIE) JV-ի (այսուհետև՝ LEEEC) միջև 220կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման համար 06.05.2016թ.-ին կնքվել է թիվ ADB-L3150-ARM/HVEN/ICB պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 14,805,187.0 ԱՄՆ դոլար, իսկ կատարման վերջնաժամկետ է սահմանվել 26.10.2018թ.: Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 9,820,062.1 ԱՄՆ դոլար, որից՝ 7,690,931.2 ԱՄՆ դոլարը վարկային միջոցներից, իսկ 2,129,130.9 ԱՄՆ դոլարը համաֆինանսավորման միջոցներից:

   01.01.2017-30.09.2018թթ. պայմանագրի կատարողականը կազմել է 11,850,872.8 ԱՄՆ դոլարի չափով գումար, որը բաղկացած է վարկային միջոցներից՝ 9,885,633.9 ԱՄՆ դոլար, և համաֆինանսավորումից՝ 1,965,238.9 ԱՄՆ դոլար: Նույն ժամանակաշրջանում վարկային միջոցներից ձեռք են բերվել 8,091,204.7 ԱՄՆ դոլարի սարքեր սարքավորումներ և իրականացվել է 1,794,429.2 ԱՄՆ դոլարի շինարարական աշխատանք:
2. ԲԷՑ-ի և CESI S.p.A. & INCICO S.p.A (JV)-ի (այսուհետև՝ Խորհրդատու) միջև 20.11.2015թ.-ին կնքվել է թիվ ADB-L3150-ARM/HVEN/QCBS պայմանագիրը՝ ծրագրի շրջանակներում չորս ենթակայանների վերակառուցման վերահսկման և կառավարման խորհրդատվական ծառայությունների համար: Պայմանագրի գինը՝ 1,089,969.9 ԱՄՆ դոլար: Ծրագրի սկզբից պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 513,023.4 ԱՄՆ դոլար, որից՝ 410,011.5 ԱՄՆ դոլարը վարկային միջոցներից, իսկ 103,011.9 ԱՄՆ դոլարը համաֆինանսավորման միջոցներից (30.09.2018թ.՝ դրությամբ):

   01.01.2017-30.09.2018թթ. պայմանագրի կատարողականը կազմել է 466,058.8 ԱՄՆ դոլար, որը բաղկացած է վարկային միջոցներից՝ 415,722.6 ԱՄՆ դոլար, և համաֆինանսավորումից՝ 50,336.2 ԱՄՆ դոլար:

Անհամապատասխանություններ

1. «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների շինարարական և մոնտաժային աշխատանքների գծով Գլխավոր կապալառուն (LEEEC) ներկայացրել է ենթակապալառուներ, որոնք պետք է բավարարեին գլխավոր կապալառուի մրցութային փաթեթի 3-րդ բաժնի 2.7-րդ ենթակետով սահմանված որակավորման հետևյալ նվազագույն չափանիշներին՝

- Մոնտաժման մասով՝ 10 տարվա շինարարարական փորձառություն, որպես ենթակայանի մոնտաժման աշխատանքների կապալառու, ներառյալ՝ մինչև 220կՎ օդային մեկուսացմամբ ԲԲՍ-ի (բաց բաշխիչ սարքավորումներ) մոնտաժում,
- Շինարարության մասով՝ 10 տարվա շինարարարական փորձառություն՝ որպես ենթակայանի շինարարական աշխատանքների կապալառու, ներառյալ՝ էլեկտրահաղորդման օդային գծերի բարձրավոլտ սարքավորումների և հիմքերի կառուցում, շենքերի և օդային գծերի հիմքերի կառուցում:

Գլխավոր կապալառուի կողմից ներկայացված «Էներգանորոգում» ԲԲԸ-ի՝ փորձի վերաբերյալ տեղեկատվությունը չի համապատասխանում շինարարական և մոնտաժային աշխատանքների գծով ենթակապալառուի որակավորման նվազագույն չափանիշներին

1.1 Գլխավոր կապալառուն ԲԷՑ-ին է ներկայացրել «Էներգանորոգում» ԲԲԸ և «Քարամյանշին» ՍՊԸ ընկերությունների փաթեթները՝ որպես «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների, համապատասխանաբար, մոնտաժման և շինարարության աշխատանքների գծով ենթակապալառուներ ներգրավելու նպատակով: Սակայն գլխավոր կապալառուն ենթակապալի պայմանագիր է կնքել միայն «Էներգանորոգում» ԲԲԸ ընկերության հետ երկու ենթակայաններում մոնտաժման և շինարարության աշխատանքներ իրականացնելու համար: Գլխավոր կապալառուի կողմից ներկայացված «Էներգանորոգում» ԲԲԸ-ի՝ փորձի վերաբերյալ տեղեկատվությունը չի համապատասխանում շինարարական և մոնտաժային աշխատանքների գծով ենթակապալառուի որակավորման նվազագույն չափանիշներին:

«Էներջի գրուպ» ՍՊԸ-ն չի բավարարում 10 տարվա փորձի պահանջին

1.2 Գլխավոր կապալառուն ԲԷՑ-ին է ներկայացրել «Էներջի գրուպ» ՍՊԸ-ի փաթեթը՝ որպես «Շինուհայր» ենթակայանների մոնտաժման և շինարարության աշխատանքների գծով ենթակապալառու ներգրավելու նպատակով: «Էներջի գրուպ» ՍՊԸ-ն (հիմնադրվել է՝ 21.06.2012թ.-ին) չի բավարարում 10 տարվա փորձի պահանջին, ինչպես նաև օդային գծերի բարձրավոլտ սարքավորումների և հիմքերի կառուցման, շենքերի և օդային գծերի կառուցման աշխատանքների վերաբերյալ Կապալառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում շինարարական և մոնտաժային

աշխատանքների գծով ենթակապալառուի որակավորման նվազագույն չափանիշներին:

«Արտաշատ Ջրշին» և «Բիգ Էներգո» ՍՊԸ-ների՝ փորձի վերաբերյալ տեղեկատվությունը չի համապատասխանում շինարարական և մոնտաժային աշխատանքների գծով ենթակապալառուի որակավորման նվազագույն չափանիշներին

1.3 Գլխավոր կապալառուն ԲԷՑ-ին է ներկայացրել «Արտաշատ Ջրշին» ՍՊԸ և «Բիգ Էներգո» ՍՊԸ ՀՁ-ի փաթեթը՝ որպես «Շինուհայր» ենթակայանների մոնտաժման և շինարարության աշխատանքների գծով ենթակապալառու ներգրավելու նպատակով: Գլխավոր կապալառուի կողմից ներկայացված «Արտաշատ Ջրշին» ՍՊԸ-ի՝ փորձի վերաբերյալ տեղեկատվությունը չի համապատասխանում շինարարական և մոնտաժային աշխատանքների գծով ենթակապալառուի որակավորման նվազագույն չափանիշներին: Իսկ 15.11.2007թ.-ին հիմնադրված «Բիգ Էներգո» ՍՊԸ-ն չի բավարարում 10 տարվա փորձի պահանջին (ենթակապալի պայմանագիրը կնքվել է 02.06.2017թ.-ին):

2. 01.01.2017-30.09.2018թթ. ընթացքում գլխավոր կապալառուի կողմից մատակարար-ված 5,701,525.0 ԱՄՆ դոլար արժեքով սարքերի և սարքավորումների մատակարարման հաշիվ ապրանքագրերում առկա են պայմանագրի գնացուցակի հետ մի շարք անհամապատասխանություններ:

25 ապրանքատեսակների գծով ի հայտ են եկել գնային անհամապատասխանություն ներ ընդհանուր՝ 300,703.5 ԱՄՆ դոլարի չափով

2.1 Մատակարարման հաշիվ-ապրանքագրերում 25 ապրանքատեսակների գների և պայմանագրի գնացուցակ 1.-ի համեմատության արդյունքում ի հայտ են եկել գնային անհամապատասխանություններ ընդհանուր՝ 300,703.5 ԱՄՆ դոլարի չափով:

2.2 Մատակարարման հաշիվ-ապրանքագրերում առկա են ընդամենը 137,108.2 ԱՄՆ դոլար արժողությամբ 7 տեսակի սարքեր և սարքավորումներ, որոնք պայմանագրի գնացուցակում ներառված չեն՝ որպես առանձին ապրանք, և պարզ չէ, թե գնացուցակի որ ապրանքի բաղադրիչ են հանդիսանում:

Գնացուցակում չներառված 7 ապրանքատեսակի մասով 16,489,85 ԱՄՆ դոլարի մաքսազերծման ծախսեր է իրականացվել

2.3 Մատակարարված սարքեր, սարքավո-րումների մասով 1,618,417.5 ԱՄՆ դոլարի մաքսային ձևակերպման հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները կատարվել են ԲԷՑ-ի կողմից: 2.2-րդ կետում նշված անհամապատասխանությունների մասով ԲԷՑ-ի

մաքսազերծման ծախսերը 16,489.85 ԱՄՆ դոլարի չափով խեղաթյուրված են եղել:

3. 2017թ. մատակարարված սարքերի և սարքավորումների, շինարարական աշխատանքների համար գլխավոր կապալառուի կողմից ներկայացված 7 վճարման հանձնարարագրերի դիմաց ԲԷՑ-ը վճարել է ուշացումներով: Համաձայն գլխավոր կապալառուի պայմանագրի Հավելված 1.-ով սահմանված վճարման պայմանների, գլխավոր կապալառուն կարող է ԲԷՑ-ի նկատմամբ կիրառել 2,554.93 ԱՄՆ դոլարի տույժ: 01.03.2019թ. դրությամբ՝ վերնշված ուշացումների մասով դեռևս տույժերի վճարման պահանջ ԲԷՑ-ին առաջադրված չէ:

Տրանսպորտային միջոցը ձեռք է բերվել և շահագործվել է գլխավոր կապալառուի պայմանագրի տեխնիկական պահանջներին ոչ համապատասխան

4. Կապալառուն նախագծման աշխատանքների շրջանակներում ԲԷՑ-ին պետք է ապահովեր փոխադրամիջոցով՝ ներառյալ դրա գործառնական և պահպանման ծախսերը: Կապալառուն ԲԷՑ-ին մատակարարել է 66,352.0 ԱՄՆ դոլար արժեքով Toyota Land Cruiser 200 մակնիշի փոխադրամիջոց: ԲԷՑ-ին մատակարարված փոխադրամիջոցը, կապալառուի պայմանագրի տեխնիկական պահանջներին համաձայն, պետք է հասանելի լիներ ծրագրի ողջ ընթացքում: 2017թ. հոկտեմբերի 25-ին ԲԷՑ-ի և «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի միջև կնքված վարձակալության պայմանագրով մատակարարված փոխադրամիջոցն ամսական 80,000.0 դրամով (ներառյալ ԱԱՀ) տրվել է «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին, այն դեպքում, երբ 2018թ. մարտի 1-ին ԲԷՑ-ին պատկանող Շեվրոլե Նիվա մակնիշի տրանսպորտային միջոցը տրամադրվել է վարձակալության ամսական 120,000.0 դրամով (ներառյալ ԱԱՀ): Արդյունքում, տրանսպորտային միջոցը ձեռք է բերվել և շահագործվել է գլխավոր կապալառուի պայմանագրի տեխնիկական պահանջներին ոչ համապատասխան:

«Շինուհայր» ենթակայանում կատարվել է աշխատանքների 20.91%-ը, իսկ «Ագարակ-2» ենթակայանում՝ 67.48%-ը, մինչդեռ պայմանագրի ավարտին մնացել էր մեկ ամսից պակաս ժամանակ

5. 06.05.2016թ. «Ագարակ-2» ենթակայանի շինարարական և մոնտաժային աշխատանքների իրականացման նպատակով կապալառուն «Էներգանորոգում» ԲԲԸ-ի հետ ենթակապալառուի պայմանագիր է կնքել կապալառուի պայմանագրի կնքումից 7 ամիս անց (19.12.2016թ.), իսկ «Շինուհայր» ենթակայանի շինարարական և մոնտաժային աշխատանքների իրականացման նպատակով առաջին ենթակապալառուի պայմանագիրը

կնքվել է «Արտաշատ Ջրշին» ՍՊԸ և «Բիգ էներգո» ՍՊԸ ՀՁ-ի հետ՝ 1 տարի 2 ամիս անց (02.07.2017թ.) և «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հետ՝ պայմանագրի կնքման օրվանից ավելի քան 1.5 տարի անց (27.12.2017թ.):

ԲԷՑ-ի, գլխավոր կապալառուի և խորհրդատուի կողմից հաստատված հանձման-ընդունման արձանագրության համաձայն՝ 30.09.2018թ.-ի դրությամբ «Շինուհայր» ենթակայանում կատարվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների 20.91%-ը, իսկ «Ագարակ-2» ենթակայանում՝ 67.48%-ը, մինչդեռ աշխատանքների ավարտին մնացել էր մեկ ամսից պակաս ժամանակ (աշխատանքների ավարտը պայմանագրով սահմանսահմանված էր՝ 26.10.2018թ.):

Արդյունքում, առկա է անհամապատասխանություն պայմանագրով սահմանված աշխատանքների ավարտի ժամկետի և փաստացի կատարված աշխատանքների ժամանակացույցի միջև:

6. Գլխավոր կապալառուի պայմանագրի 26.2-րդ կետի համաձայն՝ Կապալառուն պատվիրատուին պետք է վճարի տույժ (վնասների փոխհատուցում) յուրաքանչյուր ուշացված օրվա համար պայմանագրի գնի 0.1%-ի չափով: Տույժի առավելագույն չափը կազմում է պայմանագրի գնի 10%-ը՝ 1,480,518.7 ԱՄՆ դոլար:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Պայմանագրի 32.1-րդ կետի համաձայն՝ կապալառուն պարտավոր է ապահովել վերակառուցվող օբյեկտի, ինչպես նաև դրա մի մասի (այդ թվում դրա մատակարարված ապրանքների) պահպանումը մինչև աշխատանքների ավարտը և վնասների առաջանալու դեպքում անկախ պատճառներից հատուցել դրանք իր միջոցներով:

  ԲԷՑ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Ագարակ-2» ենթակայանի տարածքից 2018թ. ապրիլի 12-ից մինչև սեպտեմբերի 13-ը ժամանակահատվածում գողացվել է 2018թ. փետրվարի 13-ի՝ կապալառուի կողմից մատակարարման հաշիվ ապրանքագրում ներառված տարբեր չափսերի ընդամենը 314 մետր պղնձից մալուխ, որի առնչությամբ, գլխավոր կապալառուի ներկայացուցչի 2018թ. հոկտեմբերի 3-ի հաղորդման հիման վրա, ՀՀ ոստիկանության Մեղրիի բաժնում հարուցվել է քրեական գործ:

  Ստուգման ընթացքում ԲԷՑ-ի հսկողության համակարգի նկատմամբ վերակատարման ընթացակարգի իրականացման արդյունքում պարզվել է, որ մատակարարված ապրանքի մասով կազմակերության ղեկավարության կողմից սահմանված կանոններով, ընթացակարգերով և գործողություններով ողջամիտ ձևով չեն երաշխավորվել կազմակերպության նպատակների իրականացումը, դրանց հետ կապված ռիսկերի կանխումը և նվազեցումը:

Մասնավորապես, 01.11.2018թ.-ին հանձնման-ընդունման ակտ թիվ 1-ով ընդունվել է պղնձից մալուխը, որը փաստացի առկա չի եղել ենթակայանի տարածքում:

- ՀՀ հաշվեքննիչ պալատի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներից ելնելով հաշվեքննողները ստուգվող օբյեկտի ղեկավարից պահանջել և ստացել են ԲԷՑ-ի «Mulberry» փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի հասանելիություն:

  Ստուգման ընթացքում Mulberry փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգում առկա է եղել գլխավոր կապալառուի 2019 թվականի փետրվարի 25-ի թիվ LEEEC-659 գրությունն՝ ուղղված ԲԷՑ-ին:

  Նշված փաստաթղթի ուսումնասիրության արդյունքում ի հայտ են եկել փաստեր, որոնք պարունակում են հանցագործության առերևույթ հատկանիշների կասկածներ[1]:

«Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» վարկային և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ

«Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» վարկային և դրամաշնորհային ծրագրերի նպատակն է՝ ապահովել էլեկտրաէներգիայի միջսահմանային փոխանակում Հարավային Կովկասում՝ միացնելով հայկական և վրացական էներգահամակարգերը 500/400/220կՎ բարձր լարման հաստատուն հոսանքի (այսուհետև՝ ԲԼՀՀ) փոխակերպիչ կայանի միջոցով:

Ծրագրերի վերջնական ներդրման արդյունքում նախատեսվում է Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 ՄՎտ-ից հասցնել 1050 ՄՎտ-ի, ինչը Իրան-Հայաստան 400կՎ երրորդ էլեկտրահաղորդման գծի շահագործմամբ էլեկտրաեներգիայի 1000 Մվտ փոխհոսքերի պարագայում կապահովի Վրաստանի և Իրանի էներգահամակարգերի հետ Հայաստանի Հանրապետության էներգահամակարգի զուգահեռ աշխատանքի հուսալիությունը և կայունությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգությունը՝ նպաստելով հյուսիս-հարավ՝ Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան քառակողմ տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը:

ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 21-ի թիվ 28-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի՝ ՀՀ տարածքով անցնող ծրագիծը:

---

[1] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատն իր կողմից բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ որակում չի տալիս և դրանց հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում:*

ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 16-ի թիվ 19 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության զարգացման վարկերի բանկի (այսուհետև՝ KFW) միջև 820,000.0 եվրո արժողությամբ ֆինանսավորման համաձայնագիրը: 24.05.2013թ.-ին ստորագրված համաձայնագրով բանկը տրամադրել է «Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գծի» ծրագրի փորձագիտական ծառայությունների համար ֆինանսական օժանդակություն (դրամաշնորհ): Ֆինանսական օժանդակության շրջանակներում իրականացվել են Շրջակա Միջավայրի և Սոցիալական Ազդեցության Գնահատման (ՇՄՍԱԳ) աշխատանքների, ինչպես նաև ծրագրի նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրությունները:

Ծրագիր 1՝ KFW-ի աջակցությամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների վարկային ծրագրի վերաբերյալ

«Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ) ծրագրի 1-ին փուլի իրականացման նպատակով 09.12.2014թ.-ին Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (այսուհետև՝ KFW), ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև ստորագրվել են 75 մլն եվրո և 10.2 մլն եվրո գումարով թիվ BMZ ID: 2012 66 949 և թիվ BMZ ID: 2007 66 352 վարկային և ծրագրային համաձայնագրերը:

Ծրագրի 1-ին փուլի իրականացման շրջանակներում 16.03.2015թ.-ին Եվրոպական ներդրումային բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքվել է նաև 10 մլն եվրո վարկի ներգրավման վերաբերյալ ֆինանսական համաձայնագիր: Վարկային միջոցները 12.03.2016թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև կնքված 10 մլն եվրո արժողությամբ ենթավարկային համաձայնագրով տրամադրվել է ԲԷՑ-ին:

Ծրագրի 1-ին փուլի շրջանակներում նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝

- ԲԼՀՀ փոխարկերպիչ կայանի, ինչպես նաև Այրումում 500/400/220 ԿՎ հզորությամբ ենթակայանի կառուցում,
- 500 ԿՎ հզորությամբ մինչև Վրաստանի սահմանը հասնող օդային գծի կառուցում,
- գոյություն ունեցող 220 ԿՎ հզորությամբ գծի՝ ԲԼՀՀ փոխակերպիչ կայանին միացում,
- ծրագրին անհրաժեշտ խորհրդատվական, վերապատրաստման և կրթական ծառայություններ:

11.12.2015թ.-ին Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III» (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ) ծրագրի 2-րդ փուլի իրականացման

նպատակով KFW-ի, ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև ստորագրվել է 83 մլն եվրո գումարով թիվ BMZ ID: 2014 68 735 վարկային և ծրագրային համաձայնագիրը:

Ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝

- Դդմաշենում ենթակայանի կառուցում,
- էլեկտրահաղորդման գծերի և համապատասխան բաշխիչ սարքերի շինարարություն և վերակառուցում,
- սարքավորումների մատակարարում և մեքենաների շահագործում,
- խորհրդատվություն և արտարժույթի ծախսերի վճարում:

25.05.2016թ.-ին KFW-ի, ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև ստորագրվել է 83 մլն եվրո վարկային համաձայնագրին կից հատուկ համաձայնագիր, որով հստակեցվել են ծրագրի 2-րդ փուլի միջոցառումները (2 ա). փուլ).

- ԲԼՀՀ փոխակերպիչ կայանից մինչև նոր «Դդմաշեն» ենթակայան մոտ 100կմ 400կՎ ՕԳ-ի մեկ շղթայի կառուցում երկշղթա հենարանի վրա,
- 400/220/10կՎ «Դդմաշեն» ենթակայանի կառուցում (500ՄՎԱ ԱՏ),
- 220կՎ «Մարաշ» երկշղթա գծի, 220կՎ «Նորադուզ» և 220կՎ «Աթարբեկյան» միաշղթա օդային գծերի կառուցում՝ նոր «Դդմաշեն» ենթակայանը գոյություն ունեցող 220կՎ ենթակայանին («Հրազդան» ՋԷԿ-ում), «Հրազդան» ՀԷԿ-ին, ինչպես նաև «Կամո» և «Մարաշ» ենթակայաններին միացնելու համար
- Մոտ 50կմ 220կՎ «Լոռի» ՕԳ-ի հաղորդալարի փոխարինում և հենարանների վերականգնում սկսած 4.5 կմ-ից՝ «Վանաձոր» ենթակայանից մինչև «Ալավերդի-2» ենթակայան,
- 2 հատ 110կՎ «Թումանյան 1 և 2» երկշղթա ՕԳ-ի կառուցում (մոտ 3կմ՝ «Ալավերդի-2» ենթակայանից մինչև «Ալավերդի-1» ենթակայան) և հին գծերի ապամոնտաժում և No. 14 հենարանից սկսած մոտ 45.5 կմ երկարությամբ միաշղթա ՕԳ-ի կառուցում և առաջին 14 ու վերջին հենարանների ու հիմքերի վերակառուցում:

ՀՀ 2017թ. պետական բյուջեով ծրագրի տարեկան պլանը կազմել է 1,115,591.2 հազ. դրամ: 2017թ.-ի ընթացքում ծախս չի կատարվել:

ՀՀ 2018թ. պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվել:

Ծրագիր 2՝ Եվրոպական միության Հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ) դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ

30.05.2016թ.-ին KFW-ի, ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև ստորագրված ֆինանսական օժանդակության մասին համաձայնագրով ԵՄ հանձնաժողովի կողմից հարևանության ներդրումային գործիքի շրջանկներում տրամադրվել է ծրագրին ֆինանսական օժանդակություն՝ 10 մլն եվրո դրամաշնորհի տեսքով:

ՀՀ 2017թ. պետական բյուջեով ծրագրի տարեկան պլանը կազմել է 997,197.8 հազ. դրամ:

2017թ.-ի ընթացքում ծախսեր չեն կատարվել:

ՀՀ 2018թ. պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվել:

ԲԷՑ-ի սեփական միջոցներից ծրագրերի իրականացմանն ուղղված ծախսեր

Ծրագրերի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը ծրագրերի շրջանակներում ԲԷՑ-ի սեփական միջոցներից ծախսվել է 3,464,279.9 եվրո, այդ թվում՝

- Կառավարման վճար՝ 1,630,000.0 եվրո,
- Վարկերի չօգտագործված մասի տոկոս 1,177,763.70 եվրո,
- Հողերի ձեռքբերում՝ 641,406.54 եվրո (որից Այրումում՝ 539,308.17 եվրո, Դդմաշենում՝ 102,098.37 եվրո)
- Չնախատեսված ծախսեր՝ 15,109.7 եվրո:

2017թ.-ին ԲԷՑ-ի միջոցներից իրականացվել է ընդամենը 19,156,357.3 ՀՀ դրամի ծախս Դդմաշեն համայնքում հողերի ձեռք բերման նպատակով, իսկ 2018թ.-ին ծախսեր չեն իրականացվել:

«Այրում» ենթակայանի կառուցման համար ծրագրի սկբից ձեռք են բերվել նախատեսված բոլոր 361 հողակտորները, այդ թվում՝ 333 հատ մասնավոր՝ 62.37 հեկտար մակերեսով և 28 համայնքային՝ ընդամենը 2.2 հեկտար մակերեսով:

«Դդմաշեն» ենթակայանի կառուցման համար ծրագրի սկբից ձեռք են բերվել նախատեսված 41 հողակտորներից 40 հողակտոր, որից 5-ը համայնքային հողակտորներ 0.1 հեկտար մակերեսով և մասնավոր 35-ը՝ 15.6 հեկտար մակերեսով: Մեկ հողակտոր ձեռք չի բերվել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կողմից արգելանքի տակ լինելու պատճառով:

Խորհրդատվական ծառայությունների ձեռք բերում

Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման նպատակով 21.12.2015թ.-ին ԲԵՑ-ը Fichtner GmbH & Co. KG (այսուհետև՝ Ֆիխտներ) ընկերության հետ կնքել է խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր: Պայմանագրի ընդհանուր գումարը՝

6,457,100.0 եվրո, պայմանագրի ավարտման ժամկետ է սահմանվել 20.04.2019թ.-ը:

Ֆիխտներ ընկերության կողմից պայմանագրի շրջանակներում մատուցվող խորհրդատվական ծառայությունները ներառում են հետևյալ բաղադրիչները.

Բաղադրիչ 1. Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության մանրամասն գնահատման մշակում (ՇՄՍԱԳ) ծրագրի բոլոր փուլերի համար, ներառյալ շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի կառավարման պլանը (ՇՄՍՀԿՊ) և վերաբնակեցման գործողության պլանը (ՎԳՊ), եթե անհրաժեշտ է: ՇՄՍԱԳ-ը պետք է համապատասխանի ՀՀ և եվրոպական օրենքներին, կանոնակարգերին, ուղեցույցներին և հրահանգներին (EU EIA-Directive; 2011/92/EU), ինչպես նաև KfW-ի համար ընդունելի միջազգային ստանդարտներին:

Բաղադրիչ 2. Աջակցություն ԲԷՑ ՓԲԸ-ին 1-ին փուլի պատրաստման և իրականացման համար:

Բաղադրիչ 3. Աջակցություն ԲԷՑ ՓԲԸ-ին 2-րդ ա) փուլի պատրաստման և իրականացման համար:

Բաղադրիչ 4. (օպցիա) Աջակցություն ԲԷՑ ՓԲԸ-ին 2-րդ բ) փուլի պատրաստման և իրականացման համար՝ որպես լրացուցիչ ծառայություններ (Այս օպցիան կախված է Հյուսիսային գազատուրբինային կայանի (2x270ՄՎտ) ժամանակին իրականացումից):

Պայմանագրի գինը Բաղադրիչ 1-3-ի մասով կազմել է՝ 4,229,150.0 եվրո, իսկ բաղադրիչ 4-ի մասով՝ 2,227,950.0 եվրո:

30.09.2018թ. դրությամբ պայմանագրի կատարողականը կազմել է 1,185,735.0 եվրո: Խորհրդատվական ծառայությունների դիմաց ծրագրերի միջոցներից փաստացի վճարվել է 2,063,623.0 եվրո (ներառյալ պայմանագրի կանխավճարը), որից՝ 947,627.5 եվրոն՝ վարկային միջոցներից, 694,620.0 եվրոն՝ դրամաշնորհային միջոցներից, իսկ 421,375.0 եվրոն՝ պետական բյուջեից համաֆինանսավորման միջոցներից:

01.01.2017թ. – 30.09.2018թ. ժամանակահատվածում խորհրդատուին վճարումներ չեն կատարվել:

ԲԷՑ-ի գլխավոր տնօրենը 27.07.2017թ.-ի թիվ 1-03/1232 գրությամբ դիմել է խորհրդատուին ժամանակավորապես կասեցնելու պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցումը՝ մինչև ծրագրի վերաբերյալ ՀՀ կառավարության վերջնական դիրքորոշման ներկայացումը: Ֆիխտներ ընկերությունը, 28.07.2017թ.-ի պատասխան գրությամբ հայտնել է, որ կասեցումը հնարավոր է միայն պայմանագրի 4.6.1-ին ենթակետի հիմքով, ըստ որի մինչև կասեցման պահանջը անհրաժեշտ է

համաձայնեցնել KFW բանկի հետ, միաժամանակ, խորհրդատուն համաձայնվել է ժամանակավորապես սահմանափակել ծրագրի հետ կապված միջոցառումները և ծրագրի վրա ծախսային ազդեցությունը հասցնել նվազագույնի:

Գլխավոր կապալառուների ընտրության մրցույթը

Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց ծրագրի 1-ին և 2-րդ ա) փուլերի՝ ԲԼՀՀ փոխակերպիչ կայանի, ենթակայանների և էլեկտրահաղորդման գծերի կառուցման համար ապրանքների և աշխատանքների ձեռք բերման նպատակով Խորհրդատու ընկերությունը և ԲԷՑ-ը համատեղ մշակել են գլխավոր կապալառուի մրցույթի փաստաթղթերը:

Ծրագրի 1-ին փուլ-ի և 2-րդ ա). փուլի իրականացման համար գլխավոր կապալառուների մրցույթի գնման գործընթացն անցկացվել է երկու լոտով՝

Լոտ 1՝ Այրում ԲԼՀՀ ՓԿ-ի և Դդմաշեն ենթակայանի կառուցում

Լոտ 2՝ 2-րդ ա). փուլի էլեկտրահաղորդման գծերի կառուցում:

22.07.2016թ.-ին հրապարակված հայտերի ընդունման հրավերի համաձայն՝ մրցութային փաթեթներ են ձեռք բերել Լոտ 1-ի մասով 17 ընկերություններ, իսկ Լոտ 2-ի մասով՝ 28 ընկերություններ: Լոտ 1-ի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել՝ 22.11.2016թ.-ը, իսկ Լոտ-2-ի մասով՝ 23.11.2016թ.-ը:

20.11.2016թ.-ին հրապարակված հայտարարությամբ հայտերի ներկայացման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2017թ. փետրվարի 6-ը՝ Լոտ 1-ի մասով, և փետրվարի 8-ը՝ Լոտ 2-ի մասով:

2017թ. փետրվարի 6-ին տեղի է ունեցել Լոտ 1-ի մրցույթի մասնակից հայտատուների փաթեթների բացման նիստը: Լոտ 1-ի մասով մրցույթին հայտ է ներկայացրել 3 ընկերություն՝ SIEMENS AG, ABB AB, Sinohydro Corporation Limited:

06.02.2017թ.-ին մրցութային հանձնաժողովը Լոտ 1-ի մասով որոշել է ստեղծել աշխատանքային խումբ՝ որակավորման փաստաթղթերի գնահատման համար: Աշխատանքային խմբի կողմից ներկայացված և KFW բանկի կողմից հաստատված որակավորման հաշվետվության հիման վրա՝ 28.02.2017թ. կայացած նիստում մրցութային հանձնաժողովը որոշել է երկու ընկերությունների՝ SIEMENS AG և ABB AB, որակավորման փաստաթղթերը համարել որակավորման պահանջներին համապատասխանող, իսկ Sinohydro Corporation Limited ընկերության հայտը՝ ոչ համապատասխան:

28.03.2017թ. կայացած նիստում մրցութային հանձնաժողովը բացել է հայտատուների տեխնիկական փաթեթները և որոշել ստեղծել աշխատանքային խումբ՝ տեխնիկական փաթեթների ուսումնասիրության նպատակով:

Ի կատարումն վերոնշյալ որոշման՝ 2017թ. ապրիլի 3-ին ԲԵՑ գլխավոր տնօրենի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է 60 օրվա ընթացքում ուսումնասիրեր տեխնիկական փաստաթղթերը և արդյունքները

ներկայացներ մրցութային հանձնաժողովին: Մինչդեռ, աշխատանքային խմբի կողմից տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները չեն ներկայացվել մրցութային հանձնաժողովին:

Արդյունքում, **տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրության փուլին հաջորդող ֆինանսական հայտերի ուսումնասիրության մրցութային փուլը տեղի չի ունեցել**:

2017թ. փետրվարի 8-ին տեղի է ունեցել Լոտ 2-ի մրցույթի մասնակից հայտատուների փաթեթների բացման նիստը: Լոտ 2-ի մասով հայտ է ներկայացրել 6 ընկերություն՝ Dalekovod JSC, Isolux Ingereria S.A., Ural Power Engineering Construction Company, KEC International Ltd, Kalpataru Power Transmission Ltd, Sinohydro Corporation Limited:

ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի հրամանով ստեղված աշխատանքային խմբերի կողմից տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները չեն ներկայացվել մրցութային հանձնաժողովին

08.02.2017թ.-ին մրցութային հանձնաժողովը հայտատուների որակավորման փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով որոշել է առաջարկել ԲԷՑ գլխավոր տնօրենին ստեղծել աշխատանքային խումբ, իսկ հաջորդ նիստը գումարել աշխատանքային խմբի կողմից դիտարկման արդյունքները հանձնաժողովին ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը: ԲԵՑ գլխավոր տնօրենի հրամանով նույն օրը ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք սեղմ ժամկետներում ուսումնասիրեր տեխնիկական փաստաթղթերը և արդյունքները ներկայացներ մրցութային հանձնաժողովին: Աշխատանքային խմբի կողմից տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները չեն ներկայացվել մրցութային հանձնաժողովին:

Արդյունքում, **տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրության փուլին հաջորդող ֆինանսական հայտերի ուսումնասիրության մրցութային փուլը Լոտ** 2-**ում նույնպես տեղի չի ունեցել**:

Լոտ 1-ի մասով 2017թ. ապրիլի 3-ից հետո և Լոտ-2-ի մասով 2017թ. փետրվարի 8-ից հետո որևէ մրցութային գործընթաց չի իրականացվել:

28.11.2017թ.-ին KFW բանկի ծրագրի ղեկավարը դիմել է ԲԷՑ-ի գլխավոր տնօրենին՝ առաջարկելով դիմել հայտատուներին երկարաձգելու հայտատուների 2017թ. հուլիսին լրացած հայտերի գործողության ժամկետները մինչև 2018թ. մարտի 31-ը, իսկ դրանց ապահովման երաշխիքների մասով՝ մինչև 2018թ. ապրիլի 28-ը: Ծրագրի ղեկավարը նշել է, որ տվյալ փուլում մրցույթի չեղյալ հայտարարումը նախատեսված չէ KFW-ի գնման ուղեցույցներով:

01.12.2017թ.–ին պատասխան գրությամբ ԲԷՑ-ի գլխավոր տնօրենը չի ընդունել ծրագրի ղեկավարի առաջարկը՝ գտնելով, որ մրցույթի չեղարկումը

համապատասխանում է բանկի ուղեցույցներին: Այնուհետև, ԲԷՑ-ի գլխավոր տնօրենը 3 անգամ պաշտոնապես (06.12.2017թ.-ին հայտերի ժամկետի լրացման պատճառով, 20.12.2017թ.-ին նոր տեխնիկական պահանջի հիմքով, 15.01.2018թ.-ին երկու երկրների նախարարների հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության պատճառաբանումով) դիմել է KFW բանկին մրցութային գործընթացը չեղարկելու հաստատում ստանալու համար:

18.01.2018թ.-ին KFW բանկը ԲԷՑ-ի գլխավոր տնօրենին ուղղված պաշտոնական գրությամբ վերահաստատել է իր դիրքորոշումը, որ մրցույթի չեղարկումը չի համապատասխանում բանկի ուղեցույցներին և հնարավոր է միայն հաստատված նոր տեխնիկական լուծման դեպքում:

Ծրագրի դադարեցման վերաբերյալ նախաձեռնությունը

21.02.2017թ.-ին ՀՀ վարչապետի մոտ կայացել է բարձր լարման ենթակայանների վերակառուցման ծրագրերի, ինչպես նաև Իրան-Հայաստան և Հայաստան - Վրաստան բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի ներդրումային ծրագրերի առաջին փուլի արդյունքների մասին խորհրդակցություն, որի ընթացքում հանձնարարվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին դադարեցնել Հայաստան-Վրաստան բարձր լարման էլեկտրաղորդման գծերի ներդրումային ծրագիրը՝ այն համարելով ոչ նպատակահարմար (հիմքը՝ ՀՀ վարչապետի մոտ 21.02.2017թ.-ին կայացած բարձր լարման ենթակայանների վերակառուցման ծրագրերի, ինչպես նաև Իրան-Հայաստան և Հայաստան - Վրաստան բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի ներդրումային ծրագրերի առաջին փուլի արդյունքների մասին խորհրդակցության թիվ 24.10/394769-17 արձանագրության 2-րդ կետ):

24.07.2017թ.-ին ԲԷՑ-ի գլխավոր տնօրենը տեղեկացրել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին, որ 2016թ.-ի ապրիլի 27-ին խորհրդատուի կողմից կազմված թիվ D06 հաշվետվության մեջ ծրագրի նախահաշիվը կազմել է 233.8 մլն եվրո, ինչը 06.07.2017թ-ին խորհրդատուն վերահաստատել է նախահաշիվը:

25.07.2017թ.-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարը ՀՀ փոխվարչապետ - միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարին, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարին առաջարկել է, հաշվի առնելով պետական բյուջեի սղությունը, դադարեցնել ծրագրի շրջանակներում իրականացվող գլխավոր կապալառուների միջազգային մրցույթը և, առանց պետական պարտքի վրա լրացուցիչ ճնշում գործադրելու, ծրագիրն իրականացնել միջազգային ֆինանսական կառույցներից ներգրավվող առևտրային վարկային միջոցներով, իսկ KFW բանկի կողմից ծրագրի

իրականացման նպատակով տրամադրվող վարկային միջոցներն ուղղել պետական այլ ծրագրերի իրականացմանը:

05.09.2017թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարին և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ուղղված գրությամբ՝ KFW-բանկի տարածաշրջանային ղեկավարները ներկայացրել են 22.08.2017թ. ՀՀ կառավարությունում տեղի է ունեցած հանդիպման ընթացքում հայկական կողմի երկու առաջարկների՝ 1). վարկային միջոցների նպատակների փոփոխում, 2). ենթասուվերեն վարկի տրամադրում, վերաբերյալ KFW-ի դիրքորոշումները: Առաջին առաջարկը մերժվել է KFW-ի կողմից, քանի որ այն հակասում է Գերմանիայի բյուջեի մասին օրենքին և ֆինանսական համագործակցության կարգավորումներին: Երկրորդ առաջարկը պետական երաշխիքների բացակայության պարագայում նույնպես չի ընդունվել: 21.09.2017**թ**. KFW-**ն հայտնել է**, **որ իրականացրել է վարկային միջոցների մասհանումների դադարեցման նպատակով տույժի հաշվարկ**, **որը** 21.09.2017**թ**.-**ին կազմում է** 13.9 **մլն եվրո**:

Ծրագրի իրականացման վերսկսման գործընթացը

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 03.10.2017թ.-ի թիվ 122-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ Հայաստան-Վրաստան և Հայաստան – Իրան օդային գծերի 400կՎ լարման հանգուցային ենթակայանի կառուցման համար Դդմաշեն համայնքում նախատեսված տարածքի այլընտրանքներն ուսումնասիրելու նպատակով: Մինչև 2018թ. ապրիլ ամիսը ենթակայանի մասով լուծումների վերաբերյալ որևէ առաջարկություն չի հաստատվել: Ավելին, իրանական Սանիր ընկերությունը 24.04.2018թ. գրությամբ ԲԷՑ-ին խնդրել է արագացնել Հրազդանի ՋԵԿ-ի մուտքային սխեմայի վերաբերյալ որոշումը, ինչի արդյունքում ավելի քան 2 տարի այն խոչընդոտում է կապալառուների կողմից գնման հայտերի վերջնականացմանը[2]:

Համաձայն KFW բանկի կողմից հայկական կողմին ուղղված 15.01.2018թ. գրության՝ ՀՀ-ն պետք է ներկայացնի ծրագրի իր վերջնական տարբերակը, որից հետո միայն հնարավոր կլինի անդրադառնալ գլխավոր կապալառուների ընտրության մրցութային գործընթացին:

Միաժամանակ, գրության մեջ նշվել է, որ ԲԷՑ-ի՝ «Տաշիր գրուպ» ընկերությանը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ պետք է տեղեկացվի համաֆինանսավորող կողմերին:

2018թ. մարտի 14-ին ՀՀ էներգետիկական համակարգի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված տեխնիկական հանձնաժողովը ընդլայնված նիստում հաստատել է ծրագրի նոր երեք փուլեր.

---

[2] *Հայաստան-Իրան 3-րդ էլեկտրահաղորդման գծի կառուցման ծրագրի արժեքն է 107.9 մլն եվրո*

- Հրազդան ՋԷԿ-ում նոր 400 կՎ ԲԲՍ-ի (բաց բաշխիչ սարքավորումների) կառուցում և առկա 220կՎ ԲԲՍ վերակառուցում՝ տեղադրելով 400/220/6 կՎ տրանսֆորմատոր,
- Հրազդան ՋԷԿ-Մառնեուլի երկշղթա 400 կՎ կամ 500 կՎ օդային էլեկտրահաղորդման գծի կառուցում՝ մոնտաժելով առաջին փուլով նախատեսված մեկ շղթան, ինչպես նաև 400 կՎ կամ 500 կՎ օդային էլեկտրահաղորդման գծի օգտագործում 220 կՎ լարմամբ,
- Հրազդան ՋԷԿ-ի տարածքում, անհրաժեշտության դեպքում, 500 Կվ ԲԲՍ և փոխակերպիչ կայանի կառուցում:

2018թ. մարտի 23-ին ԲԵՑ-ի կողմից Fichtner ընկերությանը տրամադրվել է նոր փուլերի հիման վրա մշակված նոր հեռանկարային զարգացման սխեման, որով պետք է պատրաստվեր նոր միջոցառումների տեխնիկատնտեսական հիմնավորում, նախահաշիվ, ժամանակացույց և գների ուսումնասիրություն: 2018թ. ապրիլի 6-ին խորհրդատուն մերժել է խնդրանքը, նշելով իր կողմից ծառայությունների մատուցման դադարեցման մասին, քանի որ մինչ այդ խորհրդատուի կողմից նոր փուլերի վերաբերյալ մատուցված լրացուցիչ ծառայությունների փոխհատուցման հարցը լուծված չէ:

Ծրագրի ընթացքի վերաբերյալ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության դիրքորոշումը

14.11.2018թ.-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից տրամադրված պաշտոնական պարզաբանմամբ պետական պարտքի վրա ծրագրի ճնշումը մեղմելու և ծրագրի միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով KFW-ի հետ բանակցվել և համաձայնություն է ձեռք բերվել ծրագրի վերանայման և օպտիմիզացման մասին: Նախարարի հրամանով ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների տեխնիկական առաջադրանքների մշակման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է պատասխանատու լինի տեխնիկական առաջադրանքի պատրաստման համար, ինչպես նաև նախարարի մեկ այլ հրամանով ստեղծվել է ՀՀ էլեկտաէներգետիկական համակարգի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացման տեխնիկական հանձնաժողով, որը պետք է դիտարկի և հաստատի պատրաստված տեխնիկական առաջադրանքները և որոշում կայացնի հետագա քայլերի հետ կապված:

Միաժամանակ, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պաշտոնակատարի 04.02.2019թ.-ի թիվ 01ԳԲ/23.2ՎՄ/569-19 գրությամբ հաստատվել է, որ 2017-2018թթ.-ի ընթացքում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության համակարգին

տրամադրվող վարկային ու դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող և իրականացվող ծրագրերի կառավարման խորհրդի կողմից վարկային ծրագրերի վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություններ, զեկուցագրեր և այլ գրություններ չեն ներկայացվել:

Ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի մասին

Ծրագրի տեխնիկական լուծումները 30.09.2018թ.-ի դրությամբ պաշտոնապես հաստատված չեն, մինչդեռ ծրագրի սկզբից բոլոր աղբյուրներից արդեն ծախսվել է ավելի քան 5.5 մլն եվրո, այդ թվում՝

1. Վարկային միջոցներից՝ 947,627.5 եվրո,
2. Դրամանշնորհային միջոցներից՝ 694,620.0 եվրո,
3. ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման միջոցներից՝ 421,375.0 եվրո,
4. ԲԷՑ-ի սեփական միջոցներից՝ 3,464,279.9 եվրո:

Անհամապատասխանություններ

Մրցույթների դադարեցումը չի իրականացվել բանկի գնումների ուղեցույցներով սահմանված ընթացակարգով

1. Վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող գլխավոր կապալառուների ընտրության մրցույթները ԲԷՑ-ի կողմից դադարեցվել են, որի արդյունքում հայտերի և դրանց ապահովման երաշխիքների ժամկետներն ավարտվել են: Միաժամանակ, 30.09.2018թ. դրությամբ, KFW բանկը չի հաստատել ԲԷՑ-ի՝ մրցույթների դադարեցման վերաբերյալ դիմումները: Արդյունքում, մրցույթների դադարեցումը չի իրականացվել բանկի գնումների ուղեցույցներով սահմանված ընթացակարգով:

Որոշվել է դադարեցնել Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցման ծրագիրը՝ համարելով ոչ նպատակահարմար, մինչդեռ ծրագրի սկզբից արդեն ծախսվել էր ավելի քան 5.5 մլն եվրո

2. 2017թ. փետրվարի 21-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած բարձր լարման ենթակայանների վերակառուցման ծրագրերի, ինչպես նաև Իրան-Հայաստան և Հայաստան-Վրաստան բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի ներդրումային ծրագրերի առաջին փուլի արդյունքների մասին խորհրդակցության արձանագրության հիման վրա՝ որոշվել է դադարեցնել Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցման ծրագիրը՝ համարելով ոչ նպատակահարմար, մինչդեռ ծրագիրը ներառված է եղել ՀՀ կառավարության և՛ 2017թ., և՛ 2018թ. գերակա խնդիրներում, ավելին, ծրագրի

սկզբից պետական միջոցների տարբեր աղբյուրներից արդեն ծախսվել էր ավելի քան 5.5 մլն եվրո:

3. 2017թ. հուլիսի 25-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարը ՀՀ փոխվարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարին առաջարկել է դադարեցնել ծրագիրը՝ հաշվի առնելով պետական բյուջեի միջոցների սղությունը, մինչդեռ նույն ժամանակահատվածում գլխավոր կապալառուների մրցույթների դադարեցման արդյունքում հայտնի չեն եղել հայտատուների ֆինանսական առաջարկները, ուստի նաև ծրագրի ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցների չափը:

4. Ծրագրի դադարեցման դեպքում վարկային միջոցների մասհանումների դադարեցման մասով կիրառվում է տույժ ֆինանսավորող կազմակերպությունների կողմից, մասնավորապես, 21.09.2017թ.-ին KFW-ի կողմից հաշվարկված տույժը ծրագրի դադարեցման դեպքում կազմում է 13.9 մլն եվրո:

5. ՀՀ վարչապետի 2000թ. փետրվարի 8-ի թիվ 44 որոշմամբ հաստատված Խորհրդի կանոնադրության 9-րդ կետի պահանջով՝ ծրագրի շրջանակներում առաջացող հարցերը ընկերության տնօրենի ներկայացմամբ, քննարկվում են խորհրդի նիստերում՝ մեկ շաբաթվա ընթացքում: ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի կողմից 01.01.2017թ.–30.09.2018թ. ընկած ժամանակահատվածում ծրագրի իրականացման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ որևէ հարց պաշտոնապես չի ներկայացվել:

6. 2018թ. մարտի 14-ին ՀՀ էներգետիկական համակարգի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված տեխնիկական հանձնաժողովի ընդլայնված նիստում հաստատված ծրագրի նոր փուլերը չեն համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև ստորագրված 83 մլն եվրո գումարով վարկային և ծրագրային համաձայնագրի նպատակներին, վարկային համաձայնագրին կից հատուկ համաձայնագրով սահմանված փուլերին, ինչպես նաև Fichtner խորհրդատվական ընկերության հետ կնքված պայմանագրի տեխնիկական պահանջներին:

Սպուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Գլխավոր կապալառուի ընտրության մրցութային գործընթացի փաստացի դադարեցված լինելու ժամանակահատվածում՝ ԲԷՑ-ն իր սեփական միջոցներից Դդմաշեն համայնքում ծրագրի շրջանակներում հողերի ձեռք բերման նպատակով վճարումներ է կատարել 36,331.0 եվրոյի չափով:
- 30.09.2018թ.-ի դրությամբ Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցման ծրագրի շրջանակներում վարկային և դրամաշնորհային համաձայնագրերում փոփոխություններ չեն իրականացվել:

«Իրան-Հայաստան 400կՎ երրորդ էլեկտրահաղորդման գծի և «համապատասխան ենթակայան» օբյեկտի շինարարության» ծրագրի վերաբերյալ

«Իրան-Հայաստան 400կՎ երրորդ էլեկտրահաղորդման գծի և համապատասխան ենթակայան» օբյեկտի շինարարության ծրագրի նպատակներն են՝ ՀՀ և ԻԻՀ միջև էլեկտրաէներգիայի փոխհոսքերը 350 ՄՎտ-ից հասցնել մոտ 1000 ՄՎտ-ի, բարձրացնել ՀՀ և ԻԻՀ էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքի հուսալիությունը և կայունությունը, հյուսիս-հարավ էներգահաղորդման գծի հզորացմամբ բարձրացնել ՀՀ էներգահամակարգի հուսալիությունը և կայունությունը:

Ծրագրի արժեքն է 107.9 մլն եվրո, որից 83.1 մլն եվրոն՝ վարկային, իսկ 24.8 մլն եվրոն՝ փոխառության միջոցներ են.

1. 26.06.2011թ.-ին Իրանի արտահանման զարգացման բանկի և ԲԷՑ-ի միջև կնքվել է թիվ 900/M/ARM/09 ֆինանսական համաձայնագիրը Իրան-Հայաստան 400կՎ երրորդ էլեկտրահաղորդման գծի և համապատասխան ենթակայանի նախագծման, ճարտարագիտության, ձեռքբերումների, շինարարության, մոնտաժման, փորձարկման և շահագործման նպատակով: Վարկային ծրագրի արժեքն է 83.1 մլն եվրո, որը կազմում է ծրագրի ընդհանուր արժեքի 77%-ը:
2. 23.02.2012թ.-ին իրանական «Սանիր» ընկերության ԱՄԷ-ի մասնաճյուղի՝ «SUNIR International FZE» ընկերության և ԲԷՑ-ի միջև կնքվել է թիվ 1390/1195/57175 փոխառության պայմանագիրը 24,817,000.0 եվրո գումարով, որը կազմում է ծրագրի ընդհանուր արժեքի 23%-ը:

Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվել 09.08.2015թ., իսկ փոխառության պայմանագրի դեպքում՝ 10.08.2015թ.: Վարկային ծրագրի և փոխառության պայմանագրի ավարտն է 01.09.2019թ.-ը:

Ծրագրի բաղադրիչներն են՝ օդային գծի սարքավորումներ՝ ընդամենը 52,485,312.2 եվրո գումարով, օդային գծի մոնտաժման աշխատանքներ՝ 23,170,080.0 եվրո, ենթակայանի բարձր լարման սարքավորումների ձեռքբերումներ՝ 23,157,910.0 եվրո, ենթակայանի ցածր լարման սարքավորումների ձեռքբերումներ՝ 3,599,174.0 եվրո, ենթակայանի շինարարական աշխատանքներ՝ 5,487,523.0 եվրո:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 05.12.2013թ.-ի թիվ 1372-Ն որոշման՝ ծրագրի շրջանակներում պատվիրատուն և կապալառուն ազատված են ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքի և շահութահարկի վճարումներից:

23.08.2011թ. ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև կնքվել է «Բյուջետային երաշխիքի տրման մասին» թիվ 01/EP/2011 պայմանագիրը, որով ՀՀ ֆինանսների նախարարությունը պարտավորվում է տրամադրել 1 (մեկ) երաշխիք՝ ի

ապահովումն 2011թ. հունիսի 26-ին կնքված թիվ 900/M/ARM/09 ֆինանսական համաձայնագրի շրջանակներում ԲԷՑ-ի կողմից Իրանի արտահանման զարգացման բանկից մինչև հինգ տարի ժամկետով ներգրավվող 83,083,000.0 եվրո վարկի հիմնական գումարի և դրա նկատմամբ տարեկան սահմանված Պաշտոնական ուղենիշային առևտրային տոկոսադրույք (CIRR) + 1% տոկոսադրույքով հաշվարկվող տոկոսների վճարման պարտավորության կատարման:

Ծրագրի կապալառուն է Իրանի էներգետիկ և ջրային սարքավորումների և ծառայությունների արտահանման «Սանիր» ընկերությունը, որի հետ ԲԷՑ-ը 05.07.2006թ.-ին կնքել է 107.9 մլն եվրո գումարի թիվ 477785 պայմանագիրը, որից 75.7 մլն եվրոն՝ էլեկտրահաղորդման գծի կառուցման համար, իսկ 32.2 մլն եվրոն՝ «Նորավան» ենթակայանի կառուցման համար:

2017 թվականին ծրագրի կատարողականը կազմել է 12,162,067.72 եվրո, այդ թվում՝ սարքեր սարքավորումների մատակարարումը՝ 11,103,579.67 եվրո, իսկ շինարարական աշխատանքները՝ 1,058,488.05 եվրո: 01.01.2018-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում ծրագրի կատարողականը կազմել է 6,160,330.5 եվրո, այդ թվում՝ սարքեր սարքավորումների մատակարարումները՝ 4,867,083.5 եվրո, իսկ շինարարական աշխատանքները՝ 1,293,247.0 եվրո:

Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը փաստացի վճարումները կազմել են 25,439,730.62 եվրո, որից 20,090,352.75 եվրո վարկային միջոցներից, 5,349,377.87 եվրո՝ փոխառության միջոցներից: 2017թ. փաստացի վճարումները կազմել են 10,450,937.66 եվրո, որից 8,047,222.0 եվրո վարկային միջոցներից, 2,403,715.66 եվրո՝ փոխառության միջոցներից: 01.01.2018-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում փաստացի վճարումները կազմել են 8,872,711.58 եվրո, որից 7,333,748.10 եվրո վարկային միջոցներից, իսկ 1,538,963.48 եվրոն՝ փոխառության միջոցներից:

Համաձայն ԲԷՑ-ի և ԻԱԶԲ-ի միջև կնքված թիվ 900/M/ARM/09 վարկային համաձայնագրի 8.1 կետի՝ ԲԷՑ-ը տարեկան պետք է վճարի վարկային միջոցների չօգտագործված մասով միջնորդավճար ԻԱԶԲ-ին, որը հավասար է համաձայնագրի գումարի չօգտագործած մասի 0.25%-ին, իսկ ԲԷՑ-ի և Sunir International FZE ընկերության միջև կնքված թիվ 1390/1195/57175 փոխառության պայմանագրի 6.1.1 կետի՝ ԲԷՑ-ը տարեկան պետք է վճարի հատկացման վճար, որը հավասար է պայմանագրի գումարի չօգտագործած մասի 0.25%-ին:

Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ. չօգտագործված մասի դիմաց հաշվարկվել է 749,262.93 եվրո գումար, որից 602,775.50 եվրոն վարկային միջոցների, իսկ 146,487.43 եվրոն փոխառության միջոցների դիմաց: 2017թ. չօգտագործված մասի դիմաց հաշվարկվել է 243,948.33 եվրո գումար, որից 187,827.36 եվրոն վարկային միջոցների, իսկ 56,120.97 եվրոն փոխառության միջոցների դիմաց: 2018թ. չօգտագործված մասի դիմաց հաշվարկվել է 132,168.91

եվրո գումար, որից 127,500.78 եվրոն վարկային միջոցների, իսկ 4,668.13 եվրոն փոխառության միջոցների դիմաց:

Անհամապատասխանություններ

ԲԷՑ-ը վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվություն պետական կառավարման մարմիններին չի տրամադրել

1. Համաձայն «Վարկային ծրագրերի իրականացման գրասենյակների կողմից վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգի մասին» ՀՀ կառավարության 09.07.1998թ. թիվ 429 որոշման 1-ին կետի և նրա «ա» ենթակետի՝ վարկային ծրագրերի իրականացման գրասենյակները հիմնադիր պետական կառավարման մարմիններ (համապատասխան ճյուղային նախարարություն կամ գերատեսչություն, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություն) պետք է ներկայացնեն օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ըստ առանձին ծրագրերի տրամադրված վարկերի օգտագործման վերաբերյալ ամենամսյա (մինչև հաջորդ ամսվա 10-ը) հաշվետվություն: Մինչ օրս ԲԷՑ-ը, որպես տվյալ ծրագիրն իրականացնող կազմակերպություն, այս որոշման շրջանակում պետական կառավարման մարմիններին հաշվետվություն չի տրամադրել: Արդյունքում, ի հայտ է եկել անհամապատասխանություն ՀՀ կառավարության 09.07.1998թ. թիվ 429 որոշման 1-ին կետի և նրա «ա» ենթակետի պահանջի կատարման հետ կապված:

2. ԲԷՑ-ի և «Սանիր» ընկերության միջև 29.09.2017թ. կնքվել է համաձայնագիր, որի 1-ին կետով ԲԷՑ-ն իր սեփական միջոցներից «Սանիր» ընկերությանն է փոխանցում 560 մլն ՀՀ դրամ գումար: Համաձայնագրի 2-րդ կետով «Սանիր» ընկերությունը պարտավորվում է այդ գումարը վերադարձնել ԲԷՑ-ին ԻԱԶԲ-ի և ԲԷՑ-ի միջև 26.06.2011թ. կնքված թիվ 900/M/ARM/09 ֆինանսական համաձայնագրի ժամկետը երկարաձգվելու և ԻԱԶԲ-ի կողմից «Սանիր» ընկերությանը 1 մլն եվրո համաձայնեցված կանխավճար փոխանցվելու օրվանից հաշվված 15 օրացուցային օրվա ընթացքում: Համաձայնագրի 3-րդ կետով «Սանիր» ընկերությունը պարտավորվում է ԲԷՑ-ին վճարել տույժ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար չվերադարձված գումարի 0.5 տոկոսի չափով՝ մինչև գումարն ամբողջությամբ վերադարձնելու օրը: 08.02.2018թ. ԲԷՑ-ի և «Սանիր» ընկերության միջև կնքվել է համաձայնագիր՝ վերոնշյալ համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին, որով «15 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինվել է «4 ամսվա ընթացքում» բառերով: ԻԱԶԲ-ի և ԲԷՑ-ի միջև 02.02.2018թ. կնքվել է համաձայնագիր, որով երկարաձգվել է թիվ 900/M/ARM/09

ֆինանսական համաձայնագիրը մինչև 01.09.2019թ.: ԻԱԶԲ-ի կողմից «Սանիր» ընկերությանը 1 մլն եվրո համաձայնեցված կանխավճարը փոխանցվել է 15.07.2018թ.-ին: Ստուգման ընթացքում պարզվել է, որ 01.03.2019թ. դրությամբ ԲԷՑ-ի միջոցներից «Սանիր» ընկերությանը տրամադրված փոխառությունը չի վերադարձվել, միաժամանակ, ի հայտ է եկել անհամապատասխանություն Փոխառության համաձայնագրի 3-րդ կետով սահմանված տույժի վճարման պահանջ չառաջադրելու մասով:

3. 29.09.2017-30.09.2018թթ. ԲԷՑ-ը փոխառության միջոցների դիմաց չօգտագործված մասի համար հաշվարկել է 18,672.52 եվրո գումար, այն դեպքում երբ փոխառության միջոցները տվյալ ժամանակահատվածում հասանելի չեն եղել այն հիմքով, որ ֆինանսավորման բացակայության պատճառով ԲԷՑ-ը տրամադրել է փոխառություն «Սանիր» ընկերությանը ծրագրի իրականացման նպատակով:

ԲԷՑ-ի միջոցներից «Սանիր» ընկերությանը տրամադրված փոխառությունը չի վերադարձվել

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- ԲԷՑ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 05.07.2006թ.-ին ԲԷՑ-ի և «Սանիր» ընկերության միջև կնքված պայմանագրի հոդված 3-ով սահմանված թիվ 3.3 փաստաթուղթը (տեխնիկական մասնագրեր, գծագրեր և նախագծային փաստաթղթեր) կցված չի եղել պայմանագրի բնօրինակին և այն առկա չէ ԲԷՑ-ում (հիմքը՝ 05.03.2019թ. ԲԷՑ-ի վարկային ծրագրերի 4-րդ բաժնի պետի գրությունը):
- ԲԷՑ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ծրագրի շրջանակներում «Սանիր» ընկերության կողմից մատակարարված և մոնտաժված 135 հենարանների պղնձե հողանցման կոնտուրները կտրված են[3] հիմքերի վերնամասերից (հիմքը՝ ԲԷՑ-ի կողմից 05.03.2019թ.-ին տրված տեղեկանք): Հենարանները գտնվում են «Սանիր» ընկերության տիրապետման ներքո և մինչև ծրագրի վերջնականացումը Սանիր» ընկերությունը պարտավոր է վերականգնել պակաս մասերը:
- Ծրագրի կատարողականը 30.09.2018թ. դրությամբ կազմում է 27,043,539 եվրո, կամ պայմանագրի ընդհանուր արժեքի 25.06%, մինչդեռ ծրագրի ավարտին մնացել է 1 տարուց քիչ (ծրագրի ավարտը՝ 01.09.2019թ.):

[3] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատն իր կողմից բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ որակում չի տալիս և դրանց հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում:*

«Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության» ծրագրի վերաբերյալ

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Հայաստանի Հանրապետության միջև 01.06.2011թ.-ին կնքվել է 39 մլն ԱՄՆ դոլարի թիվ 8055-AM վարկային պայմանագիրը, որը ՀՀ ԱԺ-ի կողմից վավերացվել է՝ 28.11.2011թ.-ին: Վարկային ծրագրի ավարտ է սահմանվել 30.06.2016թ.: Վարկային ծրագրի ավարտն առաջին անգամ երկարաձգվել է 08.09.2015թ.-ին երկու տարով՝ մինչև 30.06.2018թ., իսկ 20.06.2018թ.-ին համաձայնագրի ավարտը ևս մեկ անգամ երկարաձգվել է մինչև 31.12.2019թ.: Վարկային ծրագրի բաղադրիչներն են՝ 1. Հրազդան ՋԷԿ-ից Շինուհայր ենթակայան գնացող օդային գծի (այսուհետ ՕԳ) փոխարինում, ներառյալ՝ փոխհատուցում, հողերի ձեռք բերում և վերաբնակեցում, 2. տեխնիկական աջակցություն (գործառնական ծախսեր, ուսուցումներ, դաշտային աշխատանքների հսկողություն, ծրագրերի կառավարման, տեխնիկական հսկողության, գնումների, նախագծման կարողությունների հզորացում):

Վարկային համաձայնագրի 3.01 պայմանին համապատասխան՝ 18.11.2011թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև կնքվել է ենթավարկային համաձայնագիր «Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիություն» ծրագիրն իրականացնելու համար: ԲԷՑ-ին ծրագրի իրականացման համար տրամադրվել է 39 մլն ԱՄՆ դոլար: Համաձայն ենթավարկային համաձայնագրի 3.4-րդ կետի՝ ծրագրի միջոցները հասանելի են եղել ԲԷՑ-ին մինչև 30.06.2016թ.: 26.04.2017թ. ենթավարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 համաձայնագրով միջոցների հասանելիության ժամկետը երկարաձգվել է մինչև 30.06.2018թ.:

ՀՀ 2017թ. պետական բյուջեով ծրագրի տարեկան պլանը նախատեսվել է ընդամենը 3,625,665.8 հազ. դրամ: Ծրագրի 2017թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 3,496,157.3 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 893,687.8 դրամ, որից՝ 727,506.0 հազ. դրամը վարկային միջոցների, իսկ 166,181.7 հազ. դրամը ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման հաշվին:

ՀՀ 2018թ. պետական բյուջեով ծրագրի տարեկան պլանը նախատեսվել է ընդամենը 4,149,309.7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 581,288.88 դրամ, որից՝ 487,559.88 հազ. դրամը վարկային միջոցների հաշվին, 93,729.0 հազ. դրամը ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման հաշվին: (30.09.2018թ.՝ դրությամբ):

Ծրագրի շրջանակներում վարկային միջոցների հաշվին կնքվել է մոտ 34.7 մլն ԱՄՆ դոլար արժեքով պայմանագրեր: Ծրագրի վարկային միջոցների խնայողությունը կազմել է 4.3 մլն ԱՄՆ դոլար:

Ստուգումն ընդգրկող ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ 5 պայմանագրերով.

1. ԲԷՑ-ի և «Kalpataru Power Transmission» LTD-ի միջև «Նորատուս-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան 1» 220կՎ էլեկտրահաղորդման օդային գծի նախագծման, մատակարարման և տեղակայման նպատակով 21.11.2012թ.-ին կնքվել է թիվ HV-W-1/2011 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 20,436,903.9 ԱՄՆ դոլար և 2,135,928,253.0 ՀՀ դրամ (պայմանագրի կնքման օրվա դրությամբ ընդամենը՝ 25,682,694.0 ԱՄՆ դոլար): Պայմանագրի կատարման ժամկետը սահմանվել է 36 ամիս պայմանագրի ուժի մեջ մտնելուց սկսած: ԲԷՑ-ի և «Kalpataru Power Transmission» LTD-ի միջև 2016թ. հունվարի 1-ին կնքված պայմանագրի թիվ 5 փոփոխությամբ պայմանագրի հատուկ պայմանների 8.2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 30.11.2016 թվականը:

   Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 26,695,764.7 ԱՄՆ դոլար, որից՝ 21,092,616.7 ԱՄՆ դոլարը վարկային միջոցներից, իսկ 5,603,148.0 ԱՄՆ դոլարը համաֆինանսավորման միջոցներից:

   01.01.2017-30.09.2018թթ. ժամանակահատվածում իրականացվել է ընդամենը 2,965,901.5 ԱՄՆ դոլարի շինարարական աշխատանք, որից 2,471,583.7 ԱՄՆ դոլար վարկային միջոցներից, 494,317.7 ԱՄՆ դոլար համաֆինանսավորման միջոցներից: Նույն ժամանակահատվածում ապրանքներ ձեռք չեն բերվել:
2. Վարկային միջոցներից տնտեսված գումարների հաշվին ԲԷՑ-ի և «Gam Arak Industrial Company» ընկերության միջև «Լալվար» և «Նոյեմբերյան» 110կՎ օդային գծերի փոխարինման նպատակով 11.08.2016թ.-ին կքնվել է թիվ HV-W-1/2015 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 4,394,456.24 ԱՄՆ դոլար:

   Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել 20 ամիս պայմանագրի ուժի մեջ մտնելուց սկսած (22.05.2018թ.):

   Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 1,685,109.4 ԱՄՆ դոլար (ներառյալ պայմանագրի կանխավճարը՝ 878,891.24 ԱՄՆ դոլարը), որից՝ 1,221,848.1 ԱՄՆ դոլար վարկային միջոցների հաշվին, 463,261.3 ԱՄՆ դոլար համաֆինանսավորման միջոցների հաշվին:

   01.01.2017-30.09.2018թթ. ժամանակահատվածում իրականացվել է ընդամենը 265,955.1 ԱՄՆ դոլարի շինարական աշխատանք, որից 221,629.2 ԱՄՆ դոլար վարկային միջոցների հաշվին, 44,325.8 ԱՄՆ դոլար համաֆինանսավորման միջոցների հաշվին: Նույն ժամանակահատվածում

ձեռք է բերվել 302,092.1 ԱՄՆ դոլարի ապրանք, որից 236,647.9 դոլար վարկային միջոցների, 65,444.2 դոլար համաֆինանսավորման միջոցների հաշվին:

3. «Հրազդան ՋԷԿ»-ից «Շինուհայր» ենթակայան 220 կՎ ՕԳ-ի կառուցման իրականացման օժանդակության խորհրդատվության տրամադրման նպատակով ԲԷՑ-ի և «Hifab Oy» ընկերության միջև 21.03.2013թ.-ին կնքվել է թիվ HV-CS-1/2011 պայմանագիրը: Պայմանագրի գինն է 1,284,975 եվրո և 1,725,000 դոլար (ներառյալ բոլոր տեղական հարկերը): Պայմանագրի իրականացման ժամկետը՝ 36 ամիս: 31.03.2016թ.-ին կնքված պայմանագրի թիվ 5 փոփոխությամբ վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 30.11.2016թ., իսկ 04.04.2018թ.-ին կնքված թիվ 7 փոփոխությամբ այն երկարաձգվել է մինչև 30.06.2018թ.:

   Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 3,132,228.0 դոլար, որից՝ 2,564,274.6 դոլար վարկային միջոցներից, 567,953.4 դոլար համաֆինանսավորման միջոցներից:

   01.01.2017-30.09.2018թթ. ժամանակահատվածում տրամադրվել է ընդամենը 337,631.8 դոլարի խորհրդատվություն, որից 270,167.7 դոլարը վարկային միջոցների հաշվին, 67,464.1 դոլարը՝ համանֆինանսավորման հաշվին:

4. «Նոյեմբերյան» և «Լալվար» 110 կՎ ՕԳ-րի վերակառուցման տեխնիկատնտեսական ուսումնասիրության, իրականացման օժանդակության և վերակառուցման վերահսկողության խորհրդատվության նպատակով ԲԷՑ-ի և Tractebel Engineering S.A. ընկերության միջև 23.07.2014թ. կնքվել է Ա և Բ մասերից բաղկացած ընդամենը 780,095.0 դոլար գումարի թիվ HV-CS-1/2013 պայմանագիրը:

   Ստուգման ժամանակահատվածում գործել է պայմանագրի Մաս Բ-ն՝ 388,633.98 դոլար պայմանագրային արժեքով, աշխատանքների ավարտը՝ 22.01.2018թ.:

   30.09.2018թ. դրությամբ պայմանագիրը երկարաձգված կամ դադարեցված չի եղել: Ծրագրի սկզբից խորհրդատուի կողմից որևէ աշխատանք չի իրականացվել, 21.12.2016թ.-ին վարկային միջոցներից վճարվել է 57,730.0 եվրո գումարի կանխավճար: Այլ վճարումներ խորհրդատուին չեն իրականացվել:

5. Ծրագրի 2016թ. դեկտեմբերի 31, 2017թ. դեկտեմբերի 31 և 2018 հունիսի 30 ժամանակահատվածների աուդիտի իրականացման նպատակով ԲԷՑ-ի և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի միջև 29.05.2017թ. կնքվել է պայմանագիր՝ 4,340,400.0 ՀՀ դրամ գումարով (ներառյալ 20% ԱԱՀ), որը կազմում է մոտ՝ 9,008.9 դոլար: 29.05.2017-30.09.2018թթ. ժամանակահատվածում

ծառայության ընդհանուր ծավալը կազմել է՝ 6,278.3 դոլար, որից վարկային միջոցների հաշվին՝ 5,231.9 դոլար, համաֆինանսավորման միջոցների հաշվին՝ 1,046.4 դոլար:

Ծրագրի շրջանակներում 01.01.2017-30.09.2018թթ. ժամանակահատվածում հողերի ձեռք բերմանն ուղղված ծախսերի կատարողականը կազմում է՝ 204,692.9 դոլար, որից վարկային միջոցների հաշվին՝ 137,686.0 դոլար, համաֆինանսավորման միջոցներից՝ 67,006.9 դոլար:

Անհամապատասխանություններ

1. ԲԷՑ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված ենթավարկային համաձայնագրի 3.4-րդ կետով՝ ծրագրի իրականացման համար տրամադրվող միջոցները հասանելի են եղել ԲԷՑ-ին համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.06.2016թ.: 26.04.2017թ. ենթավարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 համաձայնագրով միջոցների հասանելիության ժամկետը երկարաձգվել է մինչև 30.06.2018թ.: 30.06.2018-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում ենթավարկային համաձայնագրում այլ փոփոխություններ չեն իրականացվել:

30.06.2016թ. - 26.04.2017թ., ինչպես նաև 30.06.2018թ. - 30.09.2018թ. ընկած ժամանակահատվածներում ենթավարկային համաձայնագրով սահմանված միջոցների հասանելիության ժամկետն ավարտված է եղել, սակայն ԲԷՑ-ը վարկային միջոցներից 3,063,000.0 ԱՄՆ դոլարի մասհանումներ է իրականացրել:

Հրազդան ՋԷԿ»-ից «Շինուհայր» ենթակայան 220 կՎ ՕԳ-ի կառուցման մասով

2. Ի կատարումն ՀՀ կառավարության 09.07.1998թ. թիվ 429 որոշման՝ ԲԷՑ-ի կողմից ներկայացված 2018 թվականի երրորդ եռամսյակի հաշվետվության մեջ ծրագրի սկզբից մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում «Kalpataru Power Transmission» LTD-ի կողմից մատակարարվել են 17,051,360.3 ԱՄՆ դոլար արժողությամբ սարքեր և սարքավորումներ: Ստուգման արդյունքում պարզվել է.

Առկա է 81,106.66 ԱՄՆ դոլարի անհամապատասխանություն 2018թ. 3-րդ եռամսյակի հաշվետվության՝ կատարողականի ցուցանիշում

2.1 Ծրագրի սկզբից մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ը՝ «Kalpataru Power Transmission» LTD-ն մատակարարել է 17,132,466.96 ԱՄՆ դոլարի սարքեր և սարքավորումներ: Արդյունքում, ի հայտ է

եկել 81,106.66 ԱՄՆ դոլարի անհամապատասխանություն 2018 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ ներկայացված հաշվետվության Ձև 2.-ի 1-ին կետի ա). ենթակետի սարքերի և սարքավորումների մասով կատարողականի և պայմանագրի շրջանակներում ԲԷՑ-ի անունով փաստացի ներմուծված սարքեր և սարքավորումների միջև: ԲԷՑ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ անհամապատասխանությունը պայմանավորված է դեռևս 2014թ. նոյեմբերի 10-ին «Kalpataru Power Transmission» LTD-ի կողմից ԲԷՑ-ի անունով ներմուծված 751,119.98 ԱՄՆ դոլար արժեքով սարքեր սարքավորումների մատակարարմամբ, որը կապալառուի կողմից ներկայացված սխալ հաշիվ ապրանքագրի արդյունքում հայտարարագրվել է 670,013.32 ԱՄՆ դոլար արժեքով:

2.2 Պայմանագրի հատուկ պայմանների 32.1-ին կետով սահմանված կարգով՝ կապալառուն պետք է կառույցի և պարտադիր պահեստամասերի յուրաքանչյուր մասնաբաժնի մատակարարումից և հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո թողարկի կառույցի և պարտադիր պահեստամասերի խնամքի ու պահպանության, ինչպես նաև միայն պայմանագրի նպատակներով օգտագործման վերաբերյալ պայմանագրի Հավելված 9-ում ներկայացված ձևին համապատասխան փոխհատուցման պարտավորագիր (Indemnity Bond): Վերոնշյալ պայմանը չի իրականացվել և կապալառուի կողմից հենարանների, հաղորդալարերի և դրանց պահեստամասերի մատակարարումների ողջ ընթացքում փոխհատուցման պարտավորագրեր ԲԷՑ-ին չեն տրամադրվել:

Արդյոք 17,132,466.96 ԱՄՆ դոլար արժեքով սարքերի և սարքավորումների մատակարարումների և դրանց դիմաց վարկային և ՀՀ բյուջեից համաֆիննանսավորման միջոցներից վճարումների մասով ԲԷՑ-ի ղեկավարության կողմից սահմանված կանոններով, ընթացակարգերով և գործողություններով ողջամիտ ձևով երաշխավորվել են կազմակերպության նպատակների իրականացումը, դրանց հետ կապված ռիսկերի կանխումը և նվազեցումը ստուգման ընթացքում հնարավոր չի եղել պարզել, քանի որ սարքերի և սարքավորումների մատակարարումն իրականացվել է ստուգումն ընդգրկող ժամանակահատվածից առաջ:

3. Առկա են մի շարք անհամապատասխանություններ պայմանագրի մաս կազմող գնացուցակի (price schedule) և 30.09.2018թ. դրությամբ փաստացի մատակարարված ապրանքների և կատարված աշխատանքների միջև.

3.1 Պայմանագրի գնացուցակ 1-ի համաձայն՝ կապալառուն արտասահմանից պետք է մատակարարեր 14,484,017.9 ԱՄՆ դոլարի (CIP պայմանով) սարքեր, սարքավորումներ, մինչդեռ պարզվել է, որ մատակարման ծավալը կազմել է 17,132,466.96 ԱՄՆ դոլար (CIP պայմանով): Արդյունքում

անհամապատասխանության չափը, պայմանագրի ծավալների համեմատ, կազմում է 2,648,395.06 ԱՄՆ դոլար ավելի ապրանք:

3.2 Պայմանագրի գնացուցակ 1-ի 5.6-րդ կետով նախատեսված 90,993.0 ԱՄՆ դոլար արժողությամբ հաղորդալարի անցկացման մեխանիզմ-սարքը (ZECK մակնիշի անվավոր կարապիկ և արգելակիչ սարք) իր լրակազմով պետք է մատակարարվեր ԲԷՑ-ին (CIP պայմանով) հաղորդալարի անցկացման և տեղակայման աշխատանքների ավարտից հետո: Ստուգմամբ պարզվեց, որ տվյալ սարքավորումները ներմուծվել են կապալառուի անունից, այլ ոչ թե ԲԷՑ-ի անունից, ինչպես պահանջվում է գնացուցակ 1-ի 5.6-րդ կետով, ինչպես նաև ապրանքները գտնվում են ԲԷՑ-ի՝ ք. Սևանում գտնվող Արևելյան մասնաճյուղի տարածքում, հաշվառված չեն մասնաճյուղի հաշվեկշռում և դրանց համար ՀՀ հարկային օրենսգրքի 57-րդ հոդվածին համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթերը բացակայում են:

90,993 ԱՄՆ դոլար արժեքով ապրանքներ տրամադրվել են ԲԷՑ-ին մատակարարման պայմանագրի պայմաններին ոչ համապատասխան: Դրանց սկզբնական հաշվառման փաստաթղթերը բացակայում են:

3.3 Պայմանագրի գնացուցակ 4-ով նախատեսված է եղել 5,358,141.0 ԱՄՆ դոլարի և 2,004,159,575.0 ՀՀ դրամի շինարարական և մոնտաժման աշխատանքների իրականացում: ԲԷՑ-ից ստացված պարզաբանման համաձայն, 30.09.2018թ. դրությամբ, աշխատանքների մասով կատարողականը կազմել է 5,086,167.16 ԱՄՆ դոլար և 1,890,087,835.0 ՀՀ դրամ, ինչը օդային գծի փաստացի լարման տակ լինելու պարագայում պակաս է պայմանագրի նախնական գնացուցակից ընդամենը՝ 271,974.0 ԱՄՆ դոլարով և 114,071,740.0 ՀՀ դրամով: Արդյունքում, ԲԷՑ-ին մատակարարված ապրանքների ծավալները, մատակարարման պայմանները, իրականացված աշխատանքների ծավալները չեն համապատասխանում պայմանագրում սահմանված ծավալներին և պայմանագրի իրականացման պայմաններին:

ԲԷՑ-ին մատակարարված ապրանքների և կատարված աշխատանքների ծավալները չեն համապատասխանում պայմանագրի պայմաններին

4. Վարկային ծրագրի գործառնական ձեռնարկի 6-րդ հավելվածով գնման նախնական հաստատման ենթակա է 4 մլն ԱՄՆ դոլարից ավելի գնումը: Որպես նախնական հաստատման ենթակա գնման պայմանագիր՝ ԲԷՑ-ի և «Kalpataru Power Transmission» LTD-ի միջև կնքված պայմանագրում մատակարարվող ապրանքների և իրականացվող **աշխատանքների ծավալների և պայմանների նշանակալի փոփոխությունները** *(b. any substantial modification of the scope of*

services or other significant changes to the terms and conditions of the contract) պետք է իրականացվեին պայմանագրի փոփոխությամբ՝ նախապես ստանալով Համաշխարհային բանկի հաստատումը (ՀԲ գնումների ուղեցույցի 1-ին հավելված, 3-րդ կետի բ ենթակետ):

Պայմանագրի պայմանների նշանակալի փոփոխություններն իրականացվել են առանց պայմանագրում փոփոխություններ կատարելու

Մինչդեռ, մատակարարման և աշխատանքների նշանակալի փոփոխություններն իրականացվել են առանց պայմանագրում փոփոխություններ կատարելու, ինչը չի համապատասխանում Համաշխարհային բանկի գնումների ուղեցույցի վերոնշյալ պահանջին:

5. Պայմանագրի հիմնական պայմանների 24.4-րդ կետի համաձայն, նախնական շահագործման աշխատանքների ավարտից հետո, Կապալառուն օբյեկտների կամ դրանց մի մասի շահագործման մեջ դնելու մասին պետք է գրավոր ծանուցի ծրագրի ղեկավարին: Պայմանագրի հիմնական պայմանների 24.5-րդ կետին համաձայն՝ ծրագրի ղեկավարը կապալառուի ծանուցումը ստանալուց հետո տասնչորս օրվա ընթացքում պետք է կապալառուին տրամադրի Ավարտման սերտիֆիկատ՝ հաստատելով օբյեկտների կամ դրա մի մասի ավարտին հասցնելու մասին, կամ կապալառուին գրավոր ծանուցի առկա որևէ թերությունների և/կամ պակասորդների մասին: ԲԷՑ-ի պարզաբանմամբ՝ պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո կապալառուն չի կարողացել սահմանված 36 ամիսների ընթացքում հասնել օբյեկտների ավարտմանը (05.03.2016թ.): Պայմանագրի փոփոխություն թիվ 5-ով ևս 8 ամսով (մինչև 30.11.2016թ.) ավարտի ժամկետի երկարաձգման պարագայում կապալառուն նույնպես չի կարողացել օբյեկտներն ավարտին հասցնել: Օդային գիծը բոլոր 5 հատվածներով առաջին անգամ լարման տակ է դրվել 28.11.2017թ.-ին:

Չնայած օդային գծի լարման տակ լինելու փաստին՝ ավարտման սերտիֆիկատ պատվիրատուի կողմից չի տրամադրվել

Ստուգման արդյունքում պարզվել է, որ չնայած օդային գծի լարման տակ լինելու փաստին, 30.09.2018թ. դրությամբ պայմանագրի 24.4-րդ կետին համապատասխան օբյեկտների շահագործման հանձնելու վերաբերյալ գրությունը կապալառուի կողմից չի ներկայացվել և 24.5-րդ կետին համապատասխան ավարտման սերտիֆիկատ պատվիրատուի կողմից չի տրամադրվել:

6. Պայմանագրի հիմնական պայմանների 26.2-րդ կետի համաձայն՝ եթե Կապալառուն չի կարողանում ավարտել օբյեկտները կամ դրանց մի մասը պայմանագրի հատուկ պայմանների 8.2-րդ կետում սահմանված աշխատանքների ավարտման ժամկետում, և պայմանագրի հիմնական

պայմանների 40-րդ կետին համապատասխան ավարտի ժամկետի երկարաձգում տեղի չի ունեցել, կապալառուն պետք է Պատվիրատուին վճարի տույժ (վնասների հատուցում, liquidated damages) Պայմանագրի հատուկ պայմանների 26.2-րդ կետի համաձայն, որը կազմում է Պայմանագրի գնի 2%-ը յուրաքանչյուր շաբաթվա համար և հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասին նկատմամբ, որի համար կապալառուն չի կարողացել հասնել ավարտմանը: Տույժի առավելագույն չափը չի կարող գերազանցել պայմանագրի գնի 10% սահմանաչափը:

Ստուգման արդյունքում պարզվել է, որ պայմանագրով սահմանված ավարտման ժամկետից՝ 30.11.2016թ., հետո մինչև օդային գծի լարման հանձնումը 52 շաբաթվա ընթացքում իրականացվել է 2,965,901.5 մլն ԱՄՆ դոլարի շինարարական աշխատանք:

Տույժի վճարման պահանջ պատվիրատուի կողմից չի առաջադրվել

30.09.2018թ. դրությամբ՝ կապալառուից հատուկ պայմանների 26.2-րդ կետի պահանջներին համապատասխան, պայմանագրի գնի 10%-ի չափով տույժի վճարման պահանջ պատվիրատուի կողմից չի առաջադրվել: Տույժը կազմում է 2,043,690.0 ԱՄՆ դոլար և 213,592,825.0 ՀՀ դրամ՝ 2,9 մլն դոլարի չավարտված աշխատանքների նկատմամբ շաբաթական 2% տույժի հաշվարկը 52 շաբաթվա ուշացումների դեպքում գերազանցում է տույժի առավելագույն 10%-ը:

7. 01.01.2017-30.09.2018թթ. ժամանակահատվածում ԲԷՑ-ի կողմից ընդունված 2,965,901.5 ԱՄՆ դոլարի շինարական աշխատանքների ստուգման արդյունքում պարզվել է.

7.1 Պայմանագրի պայմանների համաձայն՝ կապալառուն պետք է իրականացներ 220կՎ էլեկտրահաղորդման գծի ապամոնտաժման աշխատանքներ մոտ 11 կմ երկայնքով (1 կմ ապամոնտաժման գինը՝ 12,402.0 ԱՄՆ դոլար և 5,174,041.0 ՀՀ դրամ): Ապամոնտաժման աշխատանքները պայմանագրի տեխնիկական պայմաններով պետք է ներառեին հետևյալ աշխատանքները՝ հաղորդալարերի և հենարանների ապամոնտաժում, հենարանների հիմքերի ապամոնտաժում մինչև 1մ հողի մակերևույթից ներքև և հողի ծածկույթի վերականգնում, ապամոնտաժված պողպատյա թափոնների փաթեթավորում, փոխադրում և մատակարարում պատվիրատուի կողմից սահմանված պահեստներ, մեկուսիչների հեռացում և փոխադրում ԲԷՑ-ի պահեստներ:

Տեխնիկական առաջադրանքով սահմանվել են օդային գծից ապամոնտաժվող հատվածները, ինչպես նաև յուրաքանչյուր ապամտոնտաժված հատվածի տեղափոխման համար նախատեսված ԲԷՑ-ի պահեստները:

7.1.1. Նորատուս և Լիճք գծերի ապամոնտաժման աշխատանքների մասով ստուգման արդյունքում հայտնաբերվել են հետևյալ անհամապատասխանությունները.

Ապամոնտաժման ծավալները հիմնավորող փաստաթղթերն ամբողջական չեն

- Կապալառուի կողմից իրականացված ապամոնտաժման ծավալները հիմնավորող փաստաթղթերն ամբողջական չեն, մասնավորապես, կապալառուի կողմից ԲԷՑ-ին տրամադրված ապամոնտաժման փաստաթղթերի դաշտերը լրացված են թերի, որոշ դեպքերում՝ ընթեռնելի չեն:
- Տեխնիկական պահանջներին համապատասխան՝ Նորատուս օդային գծի 21 հենարանները պետք է ապամոնտաժվեին և տեղափոխվեին «Զարենցավան-3» ենթակայան: Ապամոնտաժված հենարաններից 8-ը տեղափոխվել են ք. Սևանում գտնվող ԲԷՑ-ի արևելյան մասնաճյուղ, իսկ մնացած 13 հենարանները չեն ապամոնտաժվել պայմանագրի տեխնիկական պահանջներին համապատասխան և դրանց մնացորդները փաստացի գտնվում են Հրազդան ՋԷԿ-ին կից դաշտերում և դրանց ամբողջականության վերաբերյալ տեղեկություններ ԲԷՑ-ում առկա չեն: Նույն հատվածներում ապամոնտաժված հաղորդալարերի և ամպրոպապաշտպան ճոպանների իրական ծավալները հավաստող փաստաթղթեր ԲԷՑ-ում նույնպես առկա չեն:
- Տեխնիկական պահանջներին համապատասխան՝ Լիճք օդային գծի 3 հենարանները պետք է ապամոնտաժվեին և տեղափոխվեին ԲԷՑ-ի արևելյան մասնաճյուղ: Արևելյան մասնաճյուղում Լիճք օդային գծից ապամոնտաժված հենարաններ առկա չեն եղել:
- ԲԷՑ-ի տարածք տեղափոխված ապամոնտաժված պողպատյա թափոնները, տեխնիկական պայմաններին համապատասխան, պետք է փաթեթավորվեին կապալառուի կողմից, ինչը նույնպես չի իրականացվել:

Չնայած անհամապատասխանություններին՝ ապամոնտաժման աշխատանքներն ընդունվել են ԲԷՑ-ի կողմից ամբողջ ծավալով և դրանց դիմաց վճարվել է 122,780.0 ԱՄՆ դոլար և 39,840,115.0 ՀՀ դրամ

Չնայած վերոնշյալ անհամապատասխանություններին՝ ապամոնտաժման աշխատանքները 26.09.2017թ.-ին ընդունվել են ԲԷՑ-ի կողմից ամբողջ ծավալով (11 կմ ապամոնտաժման արժեքը՝ 136,422.0 ԱՄՆ դոլար և 56,914,451.0 ՀՀ դրամ), որի դիմաց 17.10.2017թ.-ին վճարվել է պայմանագրի վճարման պայմաններին համապատասխան

122,780.0 ԱՄՆ դոլար և 39,840,115.0 ՀՀ դրամ: Արդյունքում առաջացել է վերը նշված գումարի չափով խեղաթյուրում:

7.1.2 30.09.2018թ. դրությամբ էլեկտրահաղորդման գծի Նորատուս, Լիճք, Վարդենիս և Եղեգնաձոր գծերի ապամոնտաժված ապրանքանյութական ակտիվների հաշվապահական ձևակերպում ԲԷՑ-ի կողմից չի իրականացվել:

7.2 Օդային գիծն ամբողջությամբ լարման տակ է դրվել 28.11.2017թ.-ին, մինչդեռ 2018թ. օգոստոսի 15-ին կապալառուն ներկայացրել է 259,300,687.0 ՀՀ դրամ և 621,121.0 ԱՄՆ դոլարի երկու հաշիվ ապրանքագրեր, որոնց դիմաց կապալառուին 27.08.2018թ.-ին վճարվել է համապատասխանաբար՝ 181,510,482.0 ՀՀ դրամ և 559,009.0 ԱՄՆ դոլար՝ ներառյալ հարկերը:

Աշխատանքներն ընդունվել և դրանց դիմաց վճարումներն իրականացվել են աշխատանքների կատարման փաստից 8 ամիս անց

Ստուգման արդյունքում արձանագրվել է, որ վերոնշյալ ծավալներով աշխատանքները նախորդել են օդային գծի լարման տակ դնելու աշխատանքներին (28.11.2017թ.), մինչդեռ աշխատանքներն ընդունվել և դրանց դիմաց վճարումներն իրականացվել են աշխատանքների կատարման փաստից ավելի քան 8 ամիս անց (15.08.2018թ.), որի արդյունքում ի հայտ են եկել անհամապատասխանություններ ԲԷՑ-ի կողմից 2017թ. ֆինանսական հաշվետվության մեջ առկա ֆինանսական ցուցանիշներում:

8. Գլխավոր կապալառուի պայմանագրի իրականացմանն օժանդակող խորհրդատու «Hifab Oy» ընկերությունը 01.01.2017-04.04.2018թթ. ընկած ժամանակահատվածում գործող պայմանագիր չի ունեցել և ԲԷՑ-ի կողմից տրամադրված պարզաբանման համաձայն՝ տվյալ ժամանակահատվածում խորհրդատվական աշխատանքներ չի իրականացվել, ինչով էլ պայմանավորված է եղել նույն ժամանակահատվածում շինարարական աշխատանքների հանձնման-ընդունման ակտերում խորհրդատուի ստորագրության բացակայությունը:

Ստուգման արդյունքում պարզվել է, որ 09.06.2018թ. գրությամբ խորհրդատուն դիտարկել է 01.01.2017-04.04.2018թթ. ժամանակահատվածում մատակարարված հաշիվ-ապրանքագրերը և թույլատրել դրանց 870,476.0 ԱՄՆ դոլարի և 282,818,232.0 ՀՀ դրամի վճարումները, այն դեպքում, երբ տվյալ ժամանակահատվածում խորհրդատուի պայմանագրի տեխնիկական պայմանների Ա հավելվածով սահմանված պարտավորությունների իրականացումը, մասնավորապես, գլխավոր կապալառուի կողմից կատարված աշխատանքների տեխնիկական հսկողությունը, որակի ստուգումը, նախագծման, մատակարարման և կառուցման պայմանագրով նախատեսված շրջակա

միջավայրի և սոցիալական ոլորտի խնդիրների պաշտպանիչ միջոցառումների պահանջների համապատասխանության վերահսկումը, ինչպես նաև օդային գծի փորձարկման աջակցությունը գործնականում հնարավոր չէր իրականացնել աշխատանքների ավարտից 4 ամիս անց՝ հիմնվելով միայն տեղանքի այցելությունների և հաշիվ ապրանքագրերի փաստաթղթային ստուգման վրա:

01.01.2017-01.12.2017թթ. ժամանակահատվածում «Հրազդան ՋԵԿ»-«Շինուհայր» օդային գծի վերակառուցման շրջանակներում հաղորդալարի և հենարանների մոնտաժման աշխատանքների տեխնիկական հսկողության ակտերի ստուգման արդյունքում պարզվեց նաև, որ դրանք ստորագրվել են խորհրդատուի ներկայացուցչի կողմից, մինչդեռ խորհրդատուն տվյալ ժամանակահատվածում գործող պայմանագիր չի ունեցել:

«Լալվար» և «Նոյեմբերյան» 110ԿՎ ՕԳ-ի կառուցման մասով

9. 03.06.2018թ.-ին կապալառու Gam Arak ընկերությունը տեղեկացրել է ԲԷՑ-ին, որ դադարեցրել է պայմանագրի շինարարական աշխատանքների մասով ենթակապալառուի պայմանագիրը «Ռեդինետ» ՓԲԸ-ի հետ և առաջիկայում կներգրավի նոր ենթակապալառու: 13.06.2018թ.-ին կապալառուն տեղեկացրել է ԲԷՑ-ին, որ ցանկանում է նշանակել «Տ-քնսթրաքշն» ՓԲԸ-ին՝ որպես ենթակապալառու հողերի ձեռքբերման, ՎԳՊ-ի, ՇՄՍՀԳԻ հաշվետվությունների, մուտքի ճանապարհների և հիմքերի շինարարական աշխատանքների համար՝ կցելով անհրաժեշտ տեղեկանքներ, այդ թվում՝ ենթակապալառուի թեկնածուի կատարած աշխատանքների ցանկը: 19.06.2018թ.-ին ԲԷՑ-ը պաշտոնապես հաստատել է կապալառուի կողմից ներկայացված ենթակապալառուին:

Տեղային աշխատանքների համար ներգրավված ենթակապալառուն չի բավարարել որակավորման նվազագույն չափանիշներին

Ստուգման արդյունքում պարզվել է, որ տեղային աշխատանքների համար ներգրավված ենթակապալառուն չի բավարարում գլխավոր կապալառուի մրցութային փաթեթի որակավորման բաժնի՝ ենթկապալառուի վերաբերյալ 2.7-րդ ենթակետով սահմանված որակավորման նվազագույն չափանիշներին:

Մասնավորապես, Տեղային շինարարական աշխատանքների մասով ենթակապալառուն պետք է ներկայացներ վերջին 5 տարվա ընթացքում առնվազն 2 110ԿՎ և ավելի էլեկտրահաղորդման գծի կառուցման, վերակառուցման կամ վերականգնման ծրագրի ավարտման սերտիֆիկատ: «Gam Arak Industrial Company» ընկերության կողմից ներկայացված

ենթակապալառու ընկերությունը հիմնադրվել է 29.04.2016թ.-ին և կապալառուի կողմից ներկայացված փորձը չի ներառում 110կՎ և ավելի որևէ էլեկտրահաղորդման գծի կառուցման փորձ:

10. «Լալվար» և «Նոյեմբերյան» 110կՎ ՕԳ-ի կառուցման շրջանակներում խորհրդատվության ծառայությունների տրամարդման նպատակով ԲԷՑ-ի և Tractebel Engineering S.A ընկերության միջև 23.07.2014թ. կնքված պայմանագրի մաս Բ-ի 26-րդ կետով սահմանված են հաշվետվությունների ներկայացման պարտավորություններ, իսկ պայմանագրի Հավելված Ա-ում՝ պատվիրատուին ներկայացվող հաշվետվությունների և փաստաթղթերի ներկայացման հաճախականությունը և ժամանակացույցը:

Խորհրդատուին պայմանագրի սկզբից վճարվել է՝ 57,730.0 եվրո, սակայն 30.09.2018թ. դրությամբ խորհրդատուի կողմից պայմանագրի պայմաններին համապատասխան հաշվետվություններ չեն ներկայացվել: ԲԷՑ-ի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ խորհրդատուն տեղանքում տեխնիկական հսկողության աշխատանքներ նույնպես չի իրականացրել:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Ստուգման ընթացքում ուսումնասիրվել է Նորատուս, Լիճք, Վարդենիս,Վայք և Որոտան-1 օդային գծերի ապամոնտաժման իրականացման գործընթացը, ինչպես նաև ապամոնտաժման արդյունքում առաջացած ապրանքանյութական ակտիվների հաշվապահական ձևակերպումները:

ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի 2018թ.-ի մարտի 16-ի թիվ 24-Լ հրամանով ստեղծվել է երեք հանձնաժողով, որոնք պետք է կազմակերպեին Նորատուս, Լիճք, Վարդենիս,Վայք և Որոտան-1 օդային գծերի հաղորդալարերի, ճոպանների, մեկուսիչների և դրանց կցամասերի ապամոնտաժումը և իրականացնեին ապամոնտաժված նյութերի գույքագրում, չափագրում, մուտքագրում և մասնաճյուղերում դրանց պահեստավորում՝ ըստ մասնաճյուղերի հաշվեկշիռներում գտնվող հատվածների:

Ապամոնտաժման աշխատանքների ավարտից հետո ապամոնտաժման արդյունքում հավաքված հաղորդալարերը պետք է տեղափոխվեր ՀՀ, ք. Երևան, Զ. Անդրանիկի 1 հասցեում գտնվող ընկերության կենտրոնական պահեստ: Մասնաճյուղերի կողմից նշված գույքի հանձնումը և ընդունումը պետք է ձևակերպվեր ԲԷՑ-ում գործող կարգի համաձայն:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 27.11.2018թ. թիվ ՀՊԵ-ԿԱ-148 գրությամբ՝ ԲԷՑ-ից պահանջվել է տեղեկատվություն Նորատուս, Լիճք, Վարդենիս, Վայք և Որոտան-1 օդային գծերի փոխարինման աշխատանքների շրջանակներում

ապամոնտաժված ապրանքանյութական ակտիվների վերաբերյալ՝ ըստ վերջնական գտնվելու վայրի, գույքային համարների, արժեքների և տրված հաշվապահական ձևակերպումների, ինչպես նաև պահանջվել են օդային գծերի տեխնիկական անձնագրերը:

Վերոնշյալ հարցմանն ի պատասխան՝ ԲԷՑ-ի կողմից 03.12.2018թ. թիվ 1-02/1515 գրությամբ տրամադրվել է ապամոնտաժման և հաշվապահական ձևակերպումների վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվեքննողների կողմից ուսումնասիրվել է նշված տեղեկատվությունը և դրանում նկատվել են խեղաթյուրման ռիսկեր:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018թ. դեկտեմբերի 13-ի թիվ ՀՊԵ-ԿԱ-173 գրության հիմքով 2018թ. դեկտեմբերի 24-25-ը հաշվեքննողների և ԲԷՑ-ի պաշտոնատար անձանց մասնակցությամբ իրականացվել է կենտրոնական պահեստում գտնվող ալյումինե հաղորդալարերի և պողպատյա ամպրոպապաշտպան ճոպանների կշռում[4] :

Հաշվեքննողների կողմից ելակետային տվյալների[5] և կշռմամբ ստացված տվյալների համադրման արդյունքում ի հայտ են եկել հետևյալ անհամապատասխանությունները.

Անվանում	Ըստ ելակետային տվյալների	Ըստ կշռման տվյալների	Տարբերությունը
ԱՍ300ՈՒ տեսակի ալյումինե հաղորդալար	92տ	58.4տ	-33.6**տ**
ԱՍՕ-500 տեսակի ալյումինե հաղորդալար	19.5տ	19 տ	-0.5**տ**
Ս70 տեսակի պողպատյա ամպրոպապաշտպան ճոպան	12.6տ	12.9տ	0.3**տ**

Հաշվեքննողները 26.12.2018թ.-ի ՀՊԵ-ԿԱ-2013 գրությամբ պահանջել են ենտրոնական պահեստում գտնվող նյութերի սկզբնական հաշվառման փաստաթղթերը: Ի պատասխան վերոնշյալ գրության՝ ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի 17.01.2019թ.-ի թիվ 1-03/36 գրությամբ տեղեկացվել է, որ հիմնավորող հաշվապահական փաստաթղթերը մշակման փուլում են և ամբողջական տեղեկատվությունը հնարավոր կլինի տրամադրել տարեկան գույքագրման արդյունքում: ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի 26.12.2018թ.-ի թիվ 156-Լ հրամանով տարեկան գույքագրման արդյունքները պետք է ամփոփվեին և ներկայացվեին

[4] *Կշռումն իրականացվել է ԲԷՑ-ի կողմից տրամադրված հատուկ տեխնիկայով և կշռման սարքով:*
[5] *Ելակետային տվյալներ են հանդիսացել միայն երկու հատվածների՝ Նորատուս և Լիճք օդային գծերի տեխնիկական անձնագրերը:*

գլխավոր տնօրենին մինչև 2019թ. փետրվարի 28-ը: Ստուգման ընթացքում գույքագրման արդյունքներով պահանջված տեղեկատվությունը հաշվեքննողներին այդպես էլ չի ներկայացվել:

Արդյունքում՝

- Նորատուս և Լիճք օդային գծերի հատվածների մասով ելակետային և կշռման տվյալների համադրմամբ ի հայտ է եկել մոտ 33.6տ ԱՍ300ՈՒ տեսակի ալյումինե հաղորդալարի, 0.5տ ԱՍՕ-500 տեսակի ալյումինե հաղորդալարի, ինչպես նաև 0.3տ Ս70 տեսակի պողպատյա ամպրոպապաշտպան ճոպանի ծավալների տարբերություն,
- ապամոնտաժված գույքի հանձնման և ընդունման վերաբերյալ տեղեկատվությունը խեղաթյուրված է, իսկ հրամանի հիման վրա ապամոնտաժված ապրանքանյութական ակտիվները չեն գույքագրվել, չափագրվել և դրանց սկզբնական հաշվառման փաստաթղթեր չեն կազմվել:

Այսպիսով, նշված փաստերի հետազոտման, վերլուծության և եզրահանգման արդյունքում ի հայտ են եկել փաստեր, որոնք պարունակում են հանցագործության առևերույթ հատկանիշների կասկածներ[6]:

- Ծրագրի շրջանակներում 01.01.2017-30.09.2018թթ. ժամանակահատվածում հողերի ձեռք բերման համար նախատեսված վարկային և պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից փաստացի ծախսեր չեն իրականացվել, մինչդեռ ՀՀ կառավարության 09.07.1998թ. թիվ 429 որոշման հիման վրա՝ ԲԷՑ-ի կողմից ներկայացված 2017 թվականի տարեկան և 2018 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ կատարողականները կազմել են՝ 204,692.9 դոլար, որից վարկային միջոցների հաշվին՝ 137,686.0 դոլար, համաֆինանսավորման միջոցներից՝ 67,006.9 դոլար: ԲԷՑ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում վարկային միջոցներից հողերի ձեռք բերմանն ուղղված կատարողականի նկատմամբ փաստացի վճարումները կատարվել են ԲԷՑ-ի սեփական միջոցներից, հետագայում վարկային միջոցներից դրանց հատուցման նպատակով:
- ԲԷՑ-ի և Tractebel Engineering S.A ընկերության միջև 23.07.2014թ. կնքված պայմանագրի մաս Բ-ի ժամկետն ավարտվել է 22.01.2018թ.-ին: 30.09.2018թ. դրությամբ պայմանագիրը չի երկարաձգվել:

[6] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատն իր կողմից բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ որակում չի տալիս և դրանց հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում:*

«Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (այսուհետև՝ KFW) աջակցությամբ իրականացվող Գյումրի-2 ենթակայանի վերականգնման» ծրագրի վերաբերյալ՝ մեքենամեխանիզմների ձեռք բերում

Ծրագիրն իրականացվել է 2009թ. հունվարի 30-ին KfW-ի և Հայաստանի Հանրապետության (ՀՀ անունից՝ ՀՀ ֆինանսների նախարարություն և ԲԷՑ) միջև կնքված «220/110/10 «Գյումրի-2» ենթակայանի վերականգնում» թիվ BMZ 2007.66.253 վարկային համաձայնագրով իրականացված ծրագրի տնտեսված միջոցների հաշվին (հիմնական ծրագիրն ավարտվել էր 2014թ. փետրվարի 6-ին):

2017թ. ՀՀ պետական բյուջեով ծրագիրը պլանավորված չի եղել: ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի թիվ 424-Ն որոշմամբ ծրագիրը ներառվել է ՀՀ պետական բյուջեում: Ծրագրի 2017թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 1,034,975.6 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 425,320.32 հազ. դրամ, որից՝ 423,261.75 հազ. դրամը վարկային միջոցների հաշվին, 2,058.57 հազ. դրամը՝ ՀՀ պետական բյուջեից համաֆինանսվորման հաշվին:

2018թ. ՀՀ պետական բյուջեում ծրագրի տարեկան ճշտված պլանը կազմել է 484,859.5 հազ. դրամ, դրամարկղային ծախս չի իրականացվել (30.09.2018թ.՝ դրությամբ):

Ծրագրի շրջանակներում կնքվել է երկու պայմանագիր.

- Խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման նպատակով ԲԷՑ-ը, որպես 2010թ. հունվարի 15-ին «Գյումրի-2» ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի խորհրդատու CONSULECTRA GmbH/MVVdecon GmbH կոնսորցիումի (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) հետ կնքված պայմանագրի լրացում, 2016 թվականի փետրվարի 1-ին 44,707.0 եվրո գումարով խորհրդատվական պայմանագիր է կնքել CONSULECTRA Unternehmensberatung GmbH ընկերության հետ:

  2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ խորհրդատուին փաստացի վճարվել է՝ 21.5 հազար եվրո, որից 17.9 հազար եվրոն՝ վարկային միջոցների, իսկ 3.6 հազար եվրոն՝ համաֆինանսավորման միջոցների հաշվին :

- Մեքենամեխանիզմների ձեռք բերման նպատակով 2017թ. նոյեմբերի 15-ին ԲԷՑ-ը Կալուգագլավսնաբ/Ռուսկոմտրանս կոնսորցիումի (ՌԴ) հետ կնքել է 1,432,903.5 եվրո գումարով պայմանագիր: Պայմանագրի կատարման ժամկետը 3 ամիս էր՝ սկսած կանխավճարի վճարումից (վերջնաժամկետը՝ 2018թ.-ի մարտի 29):

2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ մատակարարին փաստացի վճարվել է 716.5 հազար եվրո վարկային միջոցներից՝ որպես պայմանագրի գնի 50%-ի չափով կանխավճար (վճարման ամսաթիվը՝ 2017թ.-ի դեկտեմբերի 29):

Անհամապատասխանություններ

1. «220/110/10 «Գյումրի-2» ենթակայանի վերականգնում» ծրագրի արդյունքում տնտեսվել է ընդամենը 1,477,610.50 եվրո գումար, որից՝ վարկային միջոցներից տնտեսված գումարը կազմել է 1,471,263.59 եվրո, իսկ ծրագրի գլխավոր կապալառուի (ALSTOM Grid GmbH ընկերություն) թերակատարումների արդյունքում առաջացած գումարը՝ 6,346.91 եվրո:

2015թ. սեպտեմբերի 4–ին KFW-ն համաձայնություն է տվել տնտեսված միջոցներն օգտագործելու «Գյումրի-2» ենթակայանի շահագործման ու պահպանման համար մեքենամեխանիզմների (վերամբարձ կռունկներ, հենահարթակով ամբարձիչներ և այլն) ձեռք բերման նպատակով: Բանկի պաշտոնական հաստատումը ստանալուց հետո ԲԷՑ-ի տնօրենի առաջարկությամբ 2015թ. սեպտեմբերի 24-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության համակարգին օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող և իրականացվող ծրագրերի կառավարման խորհուրդը (այսուհետև՝ Խորհուրդ) հավանություն է տվել վարկային ծրագրի շրջանակներում տնտեսված 1,471,263.59 եվրո գումարն օգտագործելու «Գյումրի-2» ենթակայանի շահագործման ու պահպանման համար մեքենամեխանիզմների (վերամբարձ կռունկներ, հենահարթակով ամբարձիչներ և այլն) ձեռք բերման նպատակով: ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 24-ի թիվ 56 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Խորհրդի առաջարկությունը՝ տնտեսված 1,471,263.59 եվրո գումարի օգտագործման վերաբերյալ:

Վարկային միջոցներից տնտեսված 6,346.91 եվրո գումարո օգտագործվել է առանց ՀՀ կառավարության հաստատման

Ընդամենը տնտեսված 1,477,610.50 եվրո գումարի մասին նշվել է ԲԷՑ-ի տնօրենի՝ Խորհրդին հասցեագրված 2016թ. նոյեմբերի 28-ի գրության մեջ, սակայն դրանում ներառվող հավելյալ 6,346.91 եվրո տնտեսված գումարի վերաբերյալ առանձին չի նշվել, ուստի 6,346.91 եվրոյի օգտագործման մասով ՀՀ կառավարությունը որոշում չի կայացրել: ՀՀ վարչապետի 2000թ. փետրվարի 8-ի թիվ 44 որոշմամբ հաստատված Խորհրդի կանոնադրության 7-րդ կետի է). ենթակետի համաձայն՝ խորհրդի խնդիրներից է ծրագրի շրջանակներում

տնտեսված միջոցների օգտագործման, ինչպես նաև միջոցների վերաբաշխման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելը՝ համաձայնեցնելով համապատասխան վարկատու կազմակերպության հետ:

Այսպիսով, վարկային միջոցներից տնտեսված 6,346.91 եվրո գումարի օգտագործումն իրականացվել է ՀՀ վարչապետի 2000թ. փետրվարի 8-ի թիվ 44 որոշմամբ հաստատված Խորհրդի կանոնադրության 7-րդ կետի է) ենթակետին ոչ համապատասխան:

2. Ծրագրի խորհրդատու CONSULECTRA Unternehmensberatung GmbH ընկերությունը պայմանագրի շրջանակներում 2016թ. մարտի 24-ին ԲԷՑ-ին ներկայացրել է մեքենամեխանիզմների ձեռք բերման մրցութային փաթեթը՝ ներառյալ տեխնիկական տվյալների աղյուսակի հավելվածը: Գնման գործընթացի համար հիմք հանդիսացած տեխնիկական տվյալների աղյուսակում որոշ ապրանքատեսակների մասով առկա են հղումներ սարքավորումների մակնիշներին: Նշված 6 հղումներից 5-ը վերաբերում են այն ապրանքանիշներին, որոնք արտադրվում են միայն մեկ երկրում, ինչը սահմանափակում է դրանց համարժեքության վերաբերյալ պայմանի կատարումը այլ երկրների հայտատուների կողմից:

2017**թ.-ին անցկացված գնման գործընթացի ուսումնասիրության արդյունքում ի հայտ է եկել անհամապատասխանություն տեխնիկական առաջադրանքի պայմանների և** KFW-**ի գնումների ուղեցույցի** 2.3-**րդ** «**Մրցութային փաստաթղթեր և պայմաններ**» **բաժնի** 2.15-**րդ կետի միջև**, **համաձայն որի**, **մրցութային փաստաթղթերը պետք է մշակվեն այնպես**, **որպեսզի բոլոր հայտատուների համար ապահովվի հավասար պայմաններով ազնիվ և թափանցիկ մրցակցություն**:

3. Գնման գործընթացի միակ որակավորված հայտատու Կալուգագլավսնաբ/Ռուսկոմտրանս կոնսորցիումի (ՌԴ) ֆինանսական հայտի՝ նախատեսված միջոցների գերազանցման հիմքով ԲԷՑ-ը 21.08.2017թ.-ին դիմել է KFW-ին մրցույթը չեղյալ համարելու և քանակների ու գների փոփոխությունների միջոցով հայտատուի հետ բանակցություններ սկսելու վերաբերյալ: 29.08.2017թ.ին բանկը պատասխան գրությամբ չի առարկել ԲԷՑ-ի պահանջը և առաջարկել է բանակցված պայմանագրի նախագիծը ներկայացնել KFW-ի հաստատմանը: 26.09.2017թ. գրությամբ ԲԷՑ-ը KFW-ի հաստատմանն է ներկայացրել բանակցված քանակների և գների փոփոխությունները, ինչպես նաև պայմանագրի նախագիծը, որը հաստատվել է բանկի կողմից: Պայմանագրի նախագծում հայտատուի կողմից ներկայացված երկու ապրանքատեսակ փոխարինվել է այլ ապրանքատեսակներով, իսկ 4 ապրանքատեսակի մասով առաջարկվել են նույն ապրանքատեսակից այլ մակնիշներ: Վերոնշյալ մեքենամեխանիզմների տեսակների փոփոխությունները

շարժիչների վառելիքի տեսակի պահանջների մասով չեն համապատասխանում բանկին ուղարկված պայմանագրի վերջնական տարբերակի տեխնիկական պայմաններին:

KFW բանկի կողմից հաստատված պայմանագրի նախագծի նկատմամբ ի հայտ է եկել խեղաթյուրում 903.5 եվրո գումարի չափով

4. 2017թ. նոյեմբերի 15-ին ԲԷՑ-ի և Կալուգագլավսնաբ /Ռուսկոմտրանս կոնսորցիումի (ՌԴ) միջև կնքված պայմանագրի ուսումասիրության արդյունքում պարզվել է.

- պայմանագրում մատակարարի ստորագրության ամսաթիվը բացակայում է,
- 3.2-րդ ենթակետով, որպես, պատվիրատուի ներկայացուցիչ է նշանակվել CONSULECTRA խորհրդատվական ընկերությունը, որի համար սահմանվել են պարտավորություններ, մինչդեռ խորհրդատվական ընկերությունը պայմանագրի կողմ չի հանդիսացել և որևէ էջ չի ստորագրել:
- պայմանագրի գինը՝ KFW-ի կողմից հաստատված պայմանագրի նախագծի համեմատ, առանց հետագա հիմնավորման թանկացել է 903.5 եվրոյով (ավելացել է ուսուցման ծախսը՝ 1,500.0 եվրո, նվազել է պահեստամասերի և գործիքների գինը 596.5 եվրոյով): **Արդյունքում**, KFW **բանկի կողմից հաստատված պայմանագրի նախագծի նկատմամբ ի հայտ է եկել խեղաթյուրում 903.5 եվրո գումարի չափով**:

5. Պայմանագրի 1.7-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի կատարումն իրականացվում է կանխավճարից սկսած երեք ամսում (29.03.2018թ.): Պայմանագրի կատարման վերաբերյալ նախնական հանձնման սերտիֆիկատը պայմանագրի կողմերի և խորհրդատուի կողմից կազմվել է 15.06.2018թ.-ին:

Համաձայն սերտիֆիկատի՝ առկա են եղել պայմանագրից հետևյալ շեղումները.

- ավտոկռունկը մատակարարվել է 29.04.2018թ.-ին (107,100 եվրո արժողությամբ), իսկ դրա հակակշիռը՝ 14.05.2018թ.-ին (900 եվրո արժողությամբ),
- ամբարձիչ կցորդի վրա (6 հատ, ընդամենը 240,000.0 եվրո արժողությամբ) մատակարարվել է 25.05.2018թ.-ին (վերջնաժամկետից 8 շաբաթ անց),
- վթարային ավտոարհեստանոցի որոշ կահավորանք չի մատակարարվել (EISMANN եռակցման համակարգի պարագաները և հիդրավլիկ պրեսի ՊՊ-Ն մատրիցաները),
- առկա են եղել թերություններ ավտոլաբարատորիայի աշխատանքում,
- ուսուցումն իրականացված չի եղել:

2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ վերոնշյալ թերությունները վերացվել են, ուսուցումներն անցկացվել են, բացառությամբ՝ վթարային արհեստանոցի հիդրավլիկ

պրեսի ՊՊ-Ն մատրիցաների (հիմքը՝ ԲԷՑ-ի 2018թ. նոյեմբերի 12-ի գրությանը կից տեղեկանքը և Կալուգագլավսնաբ ընկերության 2018թ. սեպտեմբերի 7-ի գրությունը՝ ուղղված ԲԷՑ-ին):

Պայմանագրի 7.4-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի ուշացման համար մատակարարի միակ պարտավորությունն է պատվիրատուին ուշացման վնասի հատուցումը (Delay Damages), որը կազմում է շաբաթական 1.5% մատակարարման գնից: Առավելագույն վնասի գումարը չպետք է գերազանցի պայմանագրի գնի 10%-ը:

2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ պայմանագրով սահմանված աշխատանքները դեռևս ավարտված չէին

Հիմք ընդունելով պայմանագրի 8.1-ին կետը՝ մատակարարը պետք է տեղեկացներ պատվիրատուին բոլոր աշխատանքների ավարտից հետո, մինչդեռ մատակարարի գրության հիմքով 2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ պայմանագրով սահմանված բոլոր աշխատանքներն ավարտված չեն:

ԲԷՑ-ի պաշտոնատար անձանց տրամադրած տեղեկանքի համաձայն՝ պատվիրատուն ուշացման վնասի հատուցման պահանջ չի առաջադրել՝ հիմք ընդունելով մատակարարի 06.04.2018թ. թիվ 06/10 գրությունը, որով մատակարարը ծանուցել է ԲԷՑ-ին առ այն, որ առկա է եղել ֆորս-մաժոր, որը վերջինիս հնարավորություն չի տվել պայմանագրով սահմանված ժամկետում կատարել իր պարտականությունները: Ֆորս-մաժորը, ըստ տեղեկանքի, տևել է երեք ամիս՝ 30.12.2017թ. – 30.03.2018թ.:

Մատակարարի կողմից պայմանագրով սահմանված մատակարարումների ժամկետի ավարտից 8 օր անց ԲԷՑ-ին հասցեագրված 06.04.2018թ. թիվ 06/10 գրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ֆորս-մաժորի առկայության վերաբերյալ մատակարարն իր գրության մեջ չի նշել (գրության մեջ նշվել է Վերին Լարս – ռազմավրացական ճանապարհի ծանր բեռնատարների երթևեկության սահմանափակումների մասին): Ավելին, 2018թ. մայիսի 11-ի թիվ 11/10 գրությամբ մատակարարը տեղեկացրել է ԲԷՑ-ին, որ երկու ամբարձիչը դուրս կգա Անգլիայից 11.05.2018թ.-ին (ժամկետի ավարտից 49 օր անց):

Մատակարարի կողմից ԲԷՑ-ին ներկայացված 01.01.2018-30.03.2018թթ. ժամանակահատվածում Վերին Լարս - ռազմավրացական ճանապարհի սահմանափակումների վերաբերյալ ՌԴ ԱԻՆ գլխավոր վարչության 21.09.2018թ.-ի թիվ 4385-7.7 գրության հիման վրա՝ նշված ժամանակահատվածում ցերեկային ժամերին ծանր բեռնատարների երթևեկությունը հիմնականում թույլատրված է եղել:

Այսպիսով, ԲԷՑ-ի պաշտոնատար անձանց տրամադրած տեղեկանքում առկա փաստերը խեղաթյուրված են, մինչդեռ դրանց հիման վրա, 30.09.2018թ. դրությամբ, Պատվիրատուն մատակարարին չի առաջադրել պայմանագրի 7.4-րդ ենթակետով սահմանված ուշացման վնասի հատուցման պահանջ:

ԲԷՑ-ի պաշտոնատար անձանց տրամադրած տեղեկանքում առկա փաստերը խեղաթյուրված են, որը հիմք ընդունելով, ԲԷՑ-ը ուշացման վնասի հատուցման պահանջ չի առաջադրվել:

Պայմանագրի անգլերեն տարբերակի 7.4-րդ ենթակետի համաձայն՝ ուշացման վնասի հատուցման պահանջի հաշվարկը կատարվում է մատակարարումների ծավալի նկատմամբ:

Ապրանքների մատակարարման օրվա դրությամբ՝ ուշացման վնասի հատուցման պահանջը կազմում է՝ 143,290.3 եվրո (պայմանագրի գնի առավելագույնը 10%-ը):

Պայմանագրի ռուսերեն տարբերակի 7.4-րդ ենթակետի համաձայն՝ ուշացման վնասի հատուցման պահանջի հաշվարկը կատարվում է մատակարարման ծավալի նկատմամբ:

Ապրանքների մատակարարման օրվա դրությամբ՝ ուշացման վնասի հատուցման պահանջը կազմում է՝ 30,087.0 եվրո[7]:

6. Պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ներմուծման փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ պայմանագրով սահմանված GAZ 27057 հիմքով ЛВИ HVT-3A մակնիշի երկու ավտոլաբարատորիայի փոխարեն նույն գնով (միավորի գինը՝ 85,000.0 եվրո) ԲԷՑ-ին մատակարարվել են GAZ 27057 հիմքով ЛВИ HVT-1 մակնիշի ավտոլաբորատորիաներ: Մատակարարված ավտոլաբորատորիան ֆունկցիոնալ առումով զիջում է ЛВИ HVT-3A ավտոլաբորատորիային: Մասնավորապես, տեխնիկական պահանջներով նախատեսված 6 ֆունկցիոնալ հնարավորությունն առկա չէ մատակարարված ավտոլաբարատորիայի կահավորանքում (Megger E 6-31, Meter resistance grounding 1820ER, generator of high-voltage pulses GVI-2000M, Reflectrometer TDR-107, Setting Burn down UP-7M, Inductive search set IFL 55106):

Պայմանագրով մատակարարված 170,000.0 եվրո արժեքով ապրանքները չեն համապատասխանում պայմանագրի պայմաններին

Արդյունքում, 170,000.0 եվրո արժեքով մատակարարումների մասով արձանագրվել է խեղաթյուրում:

[7] Պայմանագրի հատուկ պայմանների 1.4 ենթակետի համաձայն՝ պայմանագրի լեզուներն են՝ ռուսերեն և անգլերեն: Տարբեր բովանդակության կամ մեկնաբանության դեպքում գերակայող է անգլերեն տարբերակը:

Մատակարարված մեքենամեխանիզմները շահագործվում են տնտեսված միջոցների օգտագործման համար իրավական ակտերով սահմանված նպատակներին ոչ համապատասխան

7. Ինչպես Խորհրդի 2015թ. սեպտեմբերի 24-ի որոշմամբ, այնպես էլ՝ ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 24-ի թիվ 56 արձանագրային որոշմամբ, տնտեսված միջոցներով ձեռք բերված մեքենամեխանիզմները պետք է ծառայեին «Գյումրի-2» ենթակայանի շահագործման ու պահպանման համար: Մինչդեռ.

- ԲԷՑ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մատակարարված բոլոր մեքենամեխանիզմներից Գյումրիում գտնվող Արևմտյան մասնաճյուղին տրամադրվել է միայն մեկ վթարային արհեստանոց,
- պայմանագրի շրջանակներում մատակարարված 12 Շեվրոլե Նիվա մակնիշի ավտոմեքենաներից 4-ը 2018թ. մարտից մայիս ամիսներին ԲԷՑ-ի կողմից տրվել են վարձակալության մասնավոր ընկերությունների յուրաքանչյուրը ամսական 120,000.0 ՀՀ դրամով՝ ներառյալ 20% ԱԱՀ-ն (3-ը՝ Տ-Քնսթրաքշն ՓԲԸ-ին, 1-ը՝ Վոլիոս ՓԲԸ-ին):

Արդյունքում, մատակարարված մեքենամեխանիզմները շահագործվում են տնտեսված միջոցների օգտագործման համար վերոնշյալ իրավական ակտերով սահմանված նպատակներին ոչ համապատասխան:

Հաշվետվության մեջ ներկայացված աշխատանքների կատարողականի և փաստացի ընդունված կատարողականի միջև առկա է խեղաթյուրում մոտ 1.4 մլն եվրոյի չափով

8. Չնայած 30.09.2018թ. դրությամբ աշխատանքները չավարտելու փաստին (վերջնական հաշիվ-ապրանքագիրը մատակարարի կողմից ներկայացվել է միայն 2018թ. նոյեմբերի 28-ին)՝ ՀՀ կառավարության 09.07.1998թ. թիվ 429 որոշմամբ հաստատված վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ 2018թ. 3-րդ եռամսյակի համար կազմված հաշվետվության մեջ հաշվետու տարվա սկզբից վարկային միջոցներից կատարված աշխատանքների ծավալը մեքենամեխանիզմների ձեռք բերման մասով ներկայացվել է՝ 1,431.4 հազ. եվրո:

Արդյունքում, վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ 2018թ. երեք եռամսյակների ամփոփ հաշվետվության մեջ ներկայացված կատարված աշխատանքների ծավալի և պայմանագրի փաստաթղթավորված հիմքով կատարողականի միջև առկա է խեղաթյուրում 1,431.4 հազ. եվրո գումարի չափով:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Մեքենամեխանիզմների ձեռք բերման համար ծրագրով փաստացի նախատեսվել է 1,432,903.5 եվրո: Ստուգման շրջանակներում ստուգման օբյեկտից պահանջվել են մեքենամեխանիզմների ձեռք բերման նախահաշվային փաստաթղթերը: ԲԷՑ-ի և խորհրդատուի կողմից համատեղ կազմված նախահաշիվը եղել է 1,143,000.0 եվրո, որում չեն ներառվել հարկերը, տեղափոխման ծախսերը, 30մ ավտոաշտարակի և պահեստամասերի գները: «Գյումրի-2» ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի գլխավոր մատակարարի ընտրության համար ԲԵՑ-ի մրցութային հանձնաժողովի կողմից ստեղծված աշխատանքային խումբը մրցութային հայտերի ֆինանսական գնահատման փուլում իրականացրել է շուկայի լրացուցիչ ուսումասիրություն կայքերի և հեռախոսազանգերի միջոցով, որոնք չեն փաստաթղթավորվել: Աշխատանքային խմբի կողմից 2017թ. հուլիսի 26-ին մրցութային հանձնաժողովին ներկայացված հաշվարկը կազմել է 2,313,900.0 եվրո առանց հարկերի, տեղափոխման ծախսերի ու շահույթի կամ 2,776,680.0 եվրո առանց հարկերի (ներառյալ տեղափոխման ծախսերը ու 20% շահույթը): Մինչդեռ միակ որակավորված հայտատուի՝ Կալուգագլավսնաբ/Ռուսկոմտրանս կոնսորցիումի (ՌԴ) ներկայացրած ֆինանսական առաջարկը, որը բացվել է մրցութային հանձնաժողովի կողմից 2017թ. հուլիսի 3-ին, կազմել է 3,377,188.0 եվրո առանց հարկերի (ներառյալ տեղափոխման ծախսերը), ինչն ավելի քան երկու անգամ գերազանցում է ծրագրով նախատեսված գումարը: Գնման նախահաշվի կազմման, հետագայում նաև աշխատանքային խմբի կողմից շուկայական ուսումնասիրության հիմքում ընկած հաշվարկների հիմքերն ամբողջական չեն, դրանցում բացակայում են տեղեկատվության աղբյուրները:

«Վերակառուցման և զարգացման համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիություն ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր»-ի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (այսուհետև՝ ՎԶՄԲ) միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին կնքվել է 40 մլն ԱՄՆ դոլարի թիվ 8388-AM վարկային համաձայնագիր: Համաձայնագիրը վավերացվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 17.12.2014թ.-ին: Վարկային ծրագրի ավարտ է սահմանվել 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վարկային համաձայնագրի 3.01 պայմանին համապատասխան՝ 02.02.2015թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև կնքվել է համաձայնագիր, որով ՀՀ ֆինանսների նախարարությունը ՎԶՄԲ-ի կողմից ստացված վարկային միջոցներից 40 մլն ԱՄՆ դոլար գումարով վերավարկավորել է ԲԷՑ-ին: Համաձայն ենթավարկային համաձայնագրի 3.1-ին կետի՝ ԲԷՑ-ին է փոխանցում նաև ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորվող գումարները: Ենթավարկային միջոցների օգտագործման վերջնաժամկետ է սահմանվել 31.12.2018թ.-ը կամ վարկային համաձայնագրով սահմանված ժամկետը:

ՀՀ 2017թ. պետական բյուջեով ծրագրի տարեկան պլանը նախատեսվել է ընդամենը 5,076,844.8 հազ. դրամ: Ծրագրի 2017թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 4,998,760.9 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 988,796.3 հազ. դրամ:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով ծրագրի տարեկան պլանը նախատեսվել է ընդամենը 8,397,467.3 հազ. դրամ, 30.09.2018թ. դրությամբ փաստացի ծախսը կազմել է՝ 1,969,326.3 հազ. դրամ:

Ծրագրի շրջանակներում վարկային միջոցների հաշվին կնքվել է մոտ 25.6 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ 7 պայմանագիր: Ծրագրի վարկային միջոցների խնայողությունը կազմել է 14.4 մլն ԱՄՆ դոլար:

Ստուգումն ընդգրկող ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում իրականացվել է 7 պայմանագիր.

1. ԲԷՑ-ի և «Kaskad-Energo» LLC-ի միջև «Հաղթանակ» ենթակայանի վերակառուցման նպատակով 01.07.2016թ.-ին կնքվել է թիվ HV-W-ESRAF-1/2015_1 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 14,091,352.0 ԱՄՆ դոլար, իսկ կատարման վերջնաժամկետ է սահմանվել 25.08.2018թ.: Պայմանագրի կատարման վերջնաժամկետը 26.08.2018թ.-ին երկարաձգվել է մինչև 31.12.2018թ.: Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը պայմանագրի շրջանակներում վարկային միջոցներից փաստացի ծախսվել է 6,498,586.0 ԱՄՆ դոլար:

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագրի կատարողականը վարկային միջոցների հաշվին կազմել է 5,803,754.0 ԱՄՆ դոլար, իսկ համաֆինանսավորման հաշվին 486,016.0 ԱՄՆ դոլար: Նույն ժամանակաշրջանում ձեռք է բերվել 4,667,272.0 ԱՄՆ դոլարի սարքեր, սարքավորումներ և իրականացվել է 1,622,498.0 ԱՄՆ դոլարի նախագծման և շինարարական աշխատանքներ:

2. ԲԷՑ-ի և «Efacec Engenharia e Sistemas S.A»-ի միջև «Զարենցավան-3» ենթակայանի վերակառուցման համար 01.07.2016թ.-ին կնքվել է թիվ HV-W-ESRAF-1/2015_2 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 2,533,119.29 ԱՄՆ դոլար, 2,046,265.30 եվրո, 658,639,773.45 դրամ (ընդհանուր պայմանագրի կնքման օրվա դրությամբ՝ 6,168,555.0 ԱՄՆ դոլար), իսկ կատարման վերջնաժամկետ է

սահմանվել 13.07.2018թ.-ը: Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 1,246,041.0 ԱՄՆ դոլար՝ որպես պայմանագրի կանխավճար:

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագրի շրջանակներում մատակարարումներ և աշխատանքներ չեն իրականացվել:

3. ԲԷՑ-ի և «Xian Electric Engineering Co» LLC-ի միջև «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման համար 01.07.2016թ.-ին կնքվել է թիվ HV-W-ESRAF-1/2015_3 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 5,105,450.0 ԱՄՆ դոլար, իսկ կատարման վերջնաժամկետ է սահմանվել 01.05.2018թ.-ը: Պայմանագրի գնացուցակում կատարված փոփոխությունների արդյունքում պայմանագրի գինը 08.08.2018թ.-ին նվազել է՝ դառնալով 4,083,399.71 ԱՄՆ դոլար, ինչպես նաև երկարաձգվել է պայմանագրի կատարման վերջնաժամկետը մինչև 31.12.2018թ.-ը: Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը պայմանագրի շրջանակներում վարկային միջոցներից փաստացի ծախսվել է 2,218,765.0 ԱՄՆ դոլար:

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագրի կատարողականը կազմել է 2,062,470.0 ԱՄՆ դոլար, որից վարկային միջոցների հաշվին՝ 1,786,094.0 ԱՄՆ դոլար, համաֆինանսավորման հաշվին՝ 276,376.0 ԱՄՆ դոլար: Նույն ժամանակաշրջանում ձեռք է բերվել 731,213.5 ԱՄՆ դոլարի սարքեր ու սարքավորումներ և իրականացվել է 1,331,256.5 ԱՄՆ դոլարի շինարարական և նախագծման աշխատանքներ:

4. ԲԷՑ-ի և «Decon International GmbH & Consulectra Unternemensberatung GmbH»-ի (այսուհետև՝ Խորհրդատու) միջև 08.12.2016թ.-ին կնքվել է թիվ HV-W-ESRAF-1/2015 պայմանագիրը՝ ծրագրի շրջանակներում 3 ենթակայանների վերակառուցման վերահսկման և կառավարման խորհրդատվական ծառայությունների համար: Պայմանագրի գինը՝ 1,018,406.0 եվրո (1,222,395.0 ԱՄՆ դոլար): Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 708,013.9 ԱՄՆ դոլար, որից՝ 566,372.2 ԱՄՆ դոլարը վարկային միջոցներից, իսկ 141,641.8 ԱՄՆ դոլարը համաֆինանսավորման միջոցներից:

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագրի շրջանակներում տրամադրվել է 672,652.0 դոլարի խորհրդատվական ծառայություններ, որից վարկային միջոցների հաշվին 538,122.0 ԱՄՆ դոլար, իսկ համաֆինանսավորման հաշվին՝ 134,530.0 ԱՄՆ դոլար:

5. ԲԷՑ-ի և անհատ խորհրդատու Գ. Խաչատրյանի միջև 21.04.2017թ.-ին կնքվել է թիվ HV-IC-SSS-ESRAF-1/2016 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 5,153,250.0 դրամ (ներառյալ եկամտահարկը), իսկ կատարման վերջնաժամկետ է

սահմանվել 23.06.2017թ. որն էլ՝ 22.06.2017թ.-ին երկարաձգվել է մինչև 07.07.2017թ.:

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագիրն ամբողջ ծավալով (5,153,250.0 ՀՀ դրամ) իրականացված է եղել:

6. ԲԷՑ-ի և անհատ խորհրդատու Հ. Ավագյանի միջև 01.12.2016թ.-ին կնքվել է թիվ HV-IC-SSS-ESRAF-2/2016 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 1,078,487.0 դրամ (ներառյալ եկամտահարկը), իսկ կատարման վերջնաժամկետ է սահմանվել 15.05.2017թ.:

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագիրն ամբողջ ծավալով (1,078,487.0 ՀՀ դրամ) իրականացված է եղել:

7. ԲԷՑ-ի և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի միջև 29.05.2017թ.-ին կնքվել է թիվ HV-CS-ESRAF-1/2017 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 4,962,000.0 դրամ (ներառյալ 20% ԱԱՀ):

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագրի կատարողականը կազմել 3,222,000.0 ՀՀ դրամ (ներառյալ 20% ԱԱՀ), որի դիմաց 30.09.2018թ. դրությամբ վճարումներն իրականացվել են ամբողջ ծավալով:

Ընդհանուր առմամբ, ծրագրի 01.01.2017-30.09.2018թթ. կատարողականը կազմում է 9,044,532.0 ԱՄՆ դոլար, որից վարկային միջոցների հաշվին՝ 8,142,480.0 ԱՄՆ դոլար, իսկ համաֆինանսավորման հաշվին՝ 902,052.0 ԱՄՆ դոլար:

Անհամապատասխանություններ

«Հաղթանակ» ենթակայանի վերակառուցման մասով

1,078,000.0 ԱՄՆ դոլար արժեքով ապրանքների մատակարարումն իրականացվել է պայմանագրի մատակարարման պայմաններին ոչ համապատասխան

1. Kaskad Energo LLC ընկերության հետ կնքված պայմանագրի անբաժանելի մաս կազմող գնացուցակ 1-ի համաձայն՝ պայմանագրի շրջանակներում նախատեսված 10.6 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ սարքերը և սարքավորումները պետք է կապալառուի կողմից մատակարարվեին արտասահմանից՝ մատակարարման CIP պայմանով, և ներմուծվեին ՀՀ տարածք ԲԷՑ-ի անունով: Ստուգման արդյունքում պարզվել է, որ կապալառուն 07.10.2017թ.-ին ներմուծել է 1,078,000.0 ԱՄՆ դոլար արժողությամբ երկու գծային կարգավորվող տրանսֆորմատորներ իր անունով և տեղափոխել այն ԲԷՑ-ի՝ «Հաղթանակ» ենթակայանի տարածք՝ ինչը չի համապատասխանում գնացուցակ 1-ով սահմանված մատակարարման CIP պայմանին: Մատակարարված 1,078,000.0 ԱՄՆ դոլար արժողությամբ գծային կարգավորվող տրանսֆորմատորներն ընդունվել են ԲԷՑ-ի կողմից 20.12.2017թ.-ին, իսկ դրա դիմաց վճարումներն իրականացվել են 27.12.2017թ.-ին՝ 646,800.0 ԱՄՆ դոլար վարկային միջոցներից (մատակարարման 60%-ի չափով) և 215,600.0 ԱՄՆ դոլար ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներից՝ 20% ԱԱՀ-ի վճարման համար: Արդյունքում, 1,078,000.0 ԱՄՆ դոլար արժողությամբ ապրանքների մատակարարումն իրականացվել է պայմանագրի մատակարարման պայմաններին ոչ համապատասխան:

2. 31.07.2018թ.-ի թիվ 2-03-16/18 որոշմամբ կառավարման խորհուրդը, հիմք ընդունելով ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի տեղեկանքը և համաշխարհային բանկի հաստատումը, որոշում է կայացրել՝

- երկարաձգել պայմանագրի ժամկետը 25.08.2018թ.-ից մինչև 31.12.2018թ. կապալառուին Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված շինարարական թույլտվության ուշացման հիմքով,
- կատարել փոփոխություն պայմանագրի գնացուցակում՝ գնացուցակ 1-ում (մատակարարում արտասահմանից CIP պայմանով) ներառված 10.6 մլն դոլար արժեքով սարքերը և սարքավորումները տեղափոխվել են գնացուցակ 2 (մատակարարում երկրի ներսում EXW պայմանով):

Համաձայն գլխավոր տնօրենի փոփոխությունը հիմնավորող տեղեկանքի՝ գնացուցակի փոփոխության արդյունքում մաքսազերծումն ու մաքսազերծման գումարների վճարումը կիրականացնի կապալառուն, և ըստ իրենց հաշվարկների, մաքսազերծման համար անհրաժեշտ գումարը կազմում է շուրջ 215,000.0 ԱՄՆ

դոլար, իսկ ԱԱՀ-ի մասով պարտավորությունը՝ 2.1 մլն ԱՄՆ դոլար: Մինչդեռ, ըստ տեղեկանքի, գնացուցակի փոփոխության արդյունքում, պատվիրատուն կվճարի միայն 2.1 մլն ԱՄՆ դոլար, որն առաջարկվում է վճարել ԲԷՑ-ի սեփական միջոցներից այնուհետև հաշվանցել այն: Առաջարկի ընդունման դեպքում կապալառուն համաձայնվել է, որպեսզի ԲԷՑ-ը կապալառուին վճարի դուրս գրված հաշիվների դիմաց առաջացած ԱԱՀ-ի չափով 18 ամսվա ընթացքում: Արդյունքում, ըստ գլխավոր տնօրենի, համաֆինանսավորման գումարները կօգտագործվեն շուրջ 215,000.0 ԱՄՆ դոլարով պակաս՝ ինչն անմիջականորեն ազդեցություն կունենա նաև էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության սակագնի վրա, քանի որ պետական բյուջեից համաֆինանսավորման գումարները պատվիրատուին տրամադրվում են որպես վարկ և մարվելու են սակագնի միջոցով:

Պայմանագրի վերոնշյալ փոփոխությունը ստորագրվել է 26.08.2018թ.-ին, որից հետո կապալառուի կողմից ԲԷՑ-ին 28.09.2018թ.-ին մատակարարվել է 3,373,672.0 ԱՄՆ դոլարի ապրանք՝ ներառյալ 674,734.4 ԱՄՆ դոլարի ԱԱՀ: Մատակարարման դիմաց կապալառուին վճարվել է՝ 2,024,203.2 ԱՄՆ դոլար, իսկ առաջացած 20% ԱԱՀ-ն ԲԷՑ-ը պարտավորվել է սեփական միջոցներից վճարել 18 ամսվա ընթացքում:

ԲԷՑ-ի տնօրենի տեղեկանքում առկա հիմնավորումները խեղաթյուրված են եղել:

Պայմանագրի փոփոխության արդյունքում առաջացել է մոտ 542,360.0 **ԱՄՆ դոլարի հավելյալ հարկային պարտավորություն**:

Մինչդեռ ստուգման ընթացքում պարզվել է, որ վերոնշյալ ապրանքների՝ ԲԷՑ-ի կողմից ներմուծման դեպքում ԱԱՀ չէր առաջանա, քանի որ, համաձայն «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով 2018թ. հունվարի 1-ից սկսած տվյալ ապրանքային ենթախմբերը ազատված են ԱԱՀ-ից: Միաժամանակ, մաքսատուրքերի հաշվարկման մասով ԲԷՑ-ը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ենթակապալառուների մի մասը ԵԱՏՄ միասնական տնտեսական տարածքում գործող ընկերություններ են, որտեղից ապրանքների ներմուծման դեպքում մաքսատուրք չի առաջանում: Մասնավորապես, արտաքին հաստատման ընթացակարգով ստացված տեղեկատվության համաձայն, կապալառուի կողմից 01.01.2017-30.09.2018թթ.-ի ընթացքում երրորդ երկրներից ներմուծումների դիմաց վճարվել է ընդամենը 63.9 մլն դրամի ներմուծման մաքսատուրք (շուրջ 132,374.0 ԱՄՆ դոլար):

Արդյունքում, ԲԷՑ-ի տնօրենի տեղեկանքում առկա հիմանվորումները խեղաթյուրված են եղել, մինչդեռ դրա հիման վրա կատարված գնացուցակի

փոփոխության արդյունքում կապալառուի կողմից 28.09.2018թ.-ին մատակարարված ապրանքների մասով առաջացել է մոտ 542,360.0 ԱՄՆ դոլարի հավելյալ հարկային պարտավորություն[8]:

3. Գլխավոր կապալառուի պայմանագրի տեխնիկական առաջադրանքի 1.1.9.3.1 (ստուգում, փորձարկումներ և մատակարարում) և 6.1.1 (գործարանային և անհատական փորձարկումներ) կետերին համաձայն՝ Պատվիրատուն (2 անձ) և Խորհրդատուի Ճարտարագետը (1 անձ) պետք է մասնակցեն «Ուժային տրանսֆորմատորների, Ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի, Անջատիչների և բաժանիչների, Հոսանքի և լարման տրանսֆորմատորների, 10 կՎ ՓԲ վահանի» յուրաքանչյուր գործարանային փորձարկումներին: Ինչպես նաև 6.1.1 կետի համաձայն՝ գործարանային փորձարկումներից 3 ամիս առաջ կապալառուն պետք է պատվիրատուին ներկայացնի գործարանային փորձարկումների նախնական ծրագիր, ինչպես նաև սարքավորումները պետք է մատակարարվեն միայն այն դեպքում, երբ գործարանային տեստերը հաջող են անցել: Միաժամանակ, Kaskad Energo LLC-ի կողմից մատակարարված սարքավորումների փորձարկումների մասով արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ԲԷՑ-ին մատակարարված սարքավորումների գործարանային փորձարկումներին պատվիրատուն և խորհրդատուն չեն մասնակցել:

3.1 01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում ԲԷՑ-ին մատակարարված սարքավորումների գործարանային փորձարկումներին պատվիրատուն և խորհրդատուն չեն մասնակցել, որով առաջացել է անհամապատասխանություն պայմանագրի տեխնիկական առաջադրանքի 1.1.9.3.1 և 6.1.1 պահանջների մասով: Մասնավորապես, 2018 թվականի առաջին եռամսյակային հաշվետվությունում (3.1.3 բաժնում) խորհրդատուն (Decon և Consulectra ընկերությունների կոնսորցիում) հաստատել է, որ չի հրավիրվել գործարանային ընդունման փորձարկումներին, իսկ ԲԷՑ-ի կողմից հաշվեքննողներին տրամադրված տեղեկատվության համաձայն՝ պատվիրատուի ներկայացուցիչները չեն մասնակցել պայմանագրի շրջանակներում մատակարարված անջատիչների, բաժանիչների, հոսանքի, լարման և գծային կարգավորող տրանսֆորմատորների գործարանային փորձարկումներին:

3.2 Առկա է անհամապատասխանություն պայմանագրի Հավելված 1-ի (Վճարման պայմաններ) 1.1 կետի պահանջների մասով, համաձայն որի՝

[8] *Քանի որ գումարի ճշգրիտ հաշվարկը ստուգման շրջանակներից դուրս է, ուստի այն հնարավոր է պարզել միայն հարկային մարմնի վարչարարության միջոցով:*

սահմանվում են վճարումների հիմք հանդիսացող փաստաթղթերը, այդ թվում՝ գործարանային փորձարկման հաշվետվությունը:

30.09.2018թ. դրությամբ պատվիրատուն ընդունել է սարքեր և սարքավորումներ, վճարել դրանց դիմաց պայմանագրի պայմաններին չհամապատասխանող գործարանային փորձարկումների արդյունքում կազմված հաշվետվությունների հիման վրա:

Կապալառուի կողմից չի պահպանվել 3 ամիս առաջ գործարանային փորձարկումների ծրագրի ներկայացման պահանջը

3.3 Կապալառուի կողմից պատվիրատուին որոշ սարքերի մասով գործարանային փորձարկումների ծրագրերը ներկայացվել են պայմանագրի տեխնիկական առաջադրանքի 6.1.1-րդ կետին ոչ համապատասխան: Օրինակ՝ 2017թ. դեկտեմբերի 18-ից 20-ը ք. Եկատերինբուրգում ծրագրվող երկու հոսանքասահմանափակիչ ռեակտորների գործարանային փորձարկման մասին ԲԷՑ-ին տեղեկացվել է 15.12.2017թ.-ին, մեկ այլ դեպքում, 2018թ. փետրվարի 6-8-ը ք. Չեբոկսարիում ծրագրվող պաշտպանության և ավտոմատիկայի սարքավորումների գործարանային փորձարկման մասին տեղեկացվել է 22.01.2018թ.-ին: Արդյունքում, կապալառուի կողմից չի պահպանվել 3 ամիս առաջ գործարանային փորձարկումների ծրագրի ներկայացման պահանջը:

<u>ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ</u>

Համաշխարհային բանկի կողմից ծրագրի ղեկավարը 09.06.2018թ.-ին ԲԷՑ-ին ուղղված գրությամբ, հիմնվելով տեղանք կատարած այցելության և ԲԷՑ-ից ստացված տեղեկատվության վրա, հավեստել է՝ բոլոր սարքավորումները ճշտորեն արտադրված են ենթակայանի համար և հաջողությամբ անցել են պահանջված գործարանային տեստերը:

Մատակարարված սարքավորումները չեն համապատասխանում պայմանագրի տեխնիկական պահանջներին

4. ԲԷՑ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ կապալառուի կողմից 30.09.2018թ. դրությամբ մատակարարված սարքավորումները չեն համապատասխանում պայմանագրի տեխնիկական պահանջներին, մասնավորապես.

40 ՄՎա գծային կարգավորվող տրանսֆորմատորը

- պետք է մատակարարվեր վակուումային լարման կարգավորիչով, սակայն մատակարարվել է յուղային կարգավորիչով,
- պետք է ունենար Δ/Δ միացման խումբ, սակայն մատակարարվել է «աստղ» միացման խմբով,
- բեռի տակ լարման կարգավորիչը պետք է ունենար արտամղող փական, սակայն մատակարարվել է մեմբրանային կառուցվածքով,

– հովացման համակարգը պետք է մատակարարվեր գալվանացված և ներկապատված, սակայն՝ մատակարարվել է գալվանացված, բայց առանց ներկապատման:

220/110 կՎ անջատիչների շարժաբերի մասով

– 220 և 110 կՎ էլեգազային անջատիչները պետք է մատակարարվեին երկու միացման կոճերով, սակայն փաստացի մատակարարված սարքավորումները ունեն մեկ միացման կոճ:

10 կՎ օդային մեկուսացմամբ բաշխիչ սարքի

– ելքային բջիջներում տեղադրված հոսանքի տրանսֆորմատորների գործակիցները պետք է լինեին 100/5, 300/5 և 600/5, սակայն մատակարարվել է՝ 150/5, 300/5 և 600/5:

Մինչդեռ, վերոնշյալ սարքերն ընդունվել են ԲԷՑ-ի կողմից և դրանց դիմաց կատարվել են վճարումներ:

Չարենցավան-3 ենթակայանի վերակառուցման մասով

5. ԲԷՑ-ի և Efacec Engenharia e Systemas S.A ընկերության միջև 01.07.2016թ. կնքված պայմանագրի շրջանակներում 01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում որևէ աշխատանք չի իրականացվել և սարքավորումներ չեն մատակարարվել:

Պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 1,246,041.0 ԱՄՆ, որը 2016թ. օգոստոս ամսին վճարված պայմանագրի 20%-ի կանխավճարն է (506,623.86 ԱՄՆ դոլար, 409,253.06 եվրո և 131,727,954.69 ՀՀ դրամ):

24.10.2017թ.-ի թիվ 01/50-17 գրությամբ ԲԷՑ-ը կապալառուին հրահանգել է տվյալ ամսաթվից մեկ ամիս ժամկետով կասեցնել պայմանագրի շրջանակներում սարքավորումների պատվերների տեղադրումը և արտադրությունը՝ պատճառաբանելով, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը իրականացնում է էներգահամակարգի պահանջների փոփոխությունների հետ կապված ուսումնասիրություններ, որի արդյունքում հնարավոր է՝ «Չարենցավան-3» ենթակայանը չներառվի էներգահամակարգի հզորությունների ապահովման և փոխադրման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներում: 23.11.2017թ. և 22.12.2017թ. գրություններով ԲԷՑ-ը վերստին դիմել է կապալառուին մեկական ամսով կասեցումը երկարաձգելու համար:

Կապալառուն 24.01.2018թ.-ի դրությամբ հաստատել է, որ պայմանագիրը մնում է կասեցված և սպասում է 01.02.2018թ. կառավարման խորհրդի նիստի որոշմանը, մինչդեռ կառավարման խորհրդի որևէ որոշմամբ «Չարենցավան-3»

ենթակայանի վերակառուցման հետագա ընթացքի վերաբերյալ որոշում չի կայացվել:

Գլխավոր կապալառուի պայմանագրի կատարումը 24.10.2017թ.-ից փաստացի կասեցված է եղել, մինչդեռ պայմանագրի հետագա ընթացքի մասով, ԲԷՑ-ը չի դիմել Համաշխարհային բանկին, իսկ կազմակերպության գլխավոր տնօրենը հարցը Կառավարման խորհուրդ պաշտոնապես չի ներկայացրել

Այսպիսով, գլխավոր կապալառուի պայմանագրի կատարումը 24.10.2017թ.-ից փաստացի կասեցված է, մինչդեռ պայմանագրի հետագա ընթացքի մասով, 30.09.2018թ. դրությամբ, ԲԷՑ-ը չի դիմել Համաշխարհային բանկին, ինչպես նաև, ՀՀ վարչապետի 2000թ. փետրվարի 8-ի թիվ 44 որոշմամբ հաստատված Խորհրդի կանոնադրության 9-րդ կետի պահանջին համապատասխան, կազմակերպության գլխավոր տնօրենը հարցը Կառավարման խորհուրդ պաշտոնապես չի ներկայացրել:

Պայմանագրի 41.3-րդ կետի համաձայն, եթե Կապալառուի պարտավորությունների կատարումը դադարեցվում է կամ առաջընթացի տեմպերը կրճատվում են, ապա պայմանագրի ավարտման ժամկետը պետք է երկարաձգվի: Մինչդեռ պայմանագրի կատարման վերջնաժամկետն ավարտվել է 13.07.2018թ.-ին և 30.09.2018թ. դրությամբ պայմանագրի ժամկետը չի երկարաձգվել:

6. ԲԷՑ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում ԲԷՑ-ի ներկայացուցիչները մասնակցել են կապալառուի կողմից պատվիրված անջատիչների (04.09.2017թ.-ին) և ուժային տրանսֆորմատորների գործարանային փորձարկումներին (25.05.2018թ.-ին): Իսկ 2018թ. ապրիլի 3-ին ԲԷՑ-ը հավանություն է տվել կապալառուի արդեն պատվիրված սարքավորումների մատակարարմանը (բացառությամբ տրանսֆորմատորի հսկման համակարգի, ենթակայանի հսկման և ղեկավարման համակարգի և գործարանային պատրաստման հիմքերի, որոնց պատվերը կասեցված է եղել): Ապրանքների մատակարարումը միաժամանակ աշխատանքների կասեցման պարագայում չի համապատասխանում պայմանագրով սահմանված աշխատանքների ժամանակացույցին:

Վանաձոր-1 ենթակայանի վերակառուցման մասով

7. 30.09.2018թ. դրությամբ պայմանագրի կատարողականը կազմում է 1,786,094.0 ԱՄՆ դոլար կամ ընդհանուր գումարի 44%-ը մինչդեռ, պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետն ավարտվում է 31.12.2018թ.-ին: Պայմանագրի հիմնական պայմանների 26.2-րդ

կետի համաձայն՝ եթե Կապալառուն չի կարողանում ավարտել օբյեկտները կամ դրանց մի մասը պայմանագրի հատուկ պայմանների 8.2-րդ կետում սահմանված աշխատանքների ավարտման ժամկետում, և պայմանագրի հիմնական պայմանների 40-րդ կետին համապատասխան ավարտի ժամկետի երկարաձգում տեղի չի ունեցել, կապալառուն պետք է Պատվիրատուին վճարի տույժ (վնասների հատուցում, liquidated damages) Պայմանագրի հատուկ պայմանների 26.2-րդ կետի համաձայն, որը կազմում է Պայմանագրի գնի 0.5%-ը յուրաքանչյուր շաբաթվա համար և հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասին նկատամամբ, որի համար կապալառուն չի կարողացել հասնել ավարտման: Տույժի առավելագույն չափը չի կարող գերազանցել պայմանագրի գնի 10% սահմանաչափը:

Ապամոնտաժումից առաջացած նյութերի պահպանման համար հատուկ տարածքներ չեն նախատեսվել

8. Գլխավոր կապալառուի պայմանագրի տեխնիկական պայմանների 4.1.9 բաժնի տեղանքի պատրաստման պայմաններով նախատեսված է, որ Կապալառուն պետք է տրամադրի տեղի պլանը, որտեղ նշված լինի հատուկ տարածքներ բուսականության կուտակման, վարելահողի, ապամոնտաժումից գոյացած նյութերի և հողի համար: Ստուգման արդյունքում պարզվեց, որ տեղի պլանում ապամոնտաժումից առաջացած նյութերի պահպանման համար հատուկ տարածքներ չեն նախատեսվել:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- 22.12.2017թ.–ին ԲԷՑ-ի և Kaskad Energo LLC ընկերության միջև կնքվել է պայմանագրի փոփոխություն համաձայն որի՝ 1,078,000.0 ԱՄՆ դոլար արժողությամբ երկու գծային կարգավորվող տրանսֆորմատորները գնացուցակ 1-ից (մատակարարում արտասահմանից CIP պայմանով), տեղափոխվել են գնացուցակ 2 (մատակարարում երկրի ներսում EXW պայմանով): Պայմանագրում մատակարարվող ապրանքների և իրականացվող աշխատանքների ծավալների և պայմանների նշանակալի փոփոխությունները պետք է իրականացվեն պայմանագրի փոփոխությամբ՝ նախապես ստանալով Համաշխարհային բանկի հաստատումը, այնուհետև, դրա հիման վրա, կառավարման խորհրդի որոշմամբ հաստատումը: Չնայած ՀԲ հաստատումն առկա է եղել, սակայն տվյալ ժամանակահատվածում Կառավարման խորհրդի որոշում այդ մասով չի ընդունվել:
- «Հաղթանակ» ենթակայանի վերակառուցման համար կապալառուի կողմից գծային կարգավորվող տրանսֆորմատորների մատակարարման

ենթակապալառուներ են ներկայացվել ռուսական Siemens Transformers LLC, SVEL JSC, Electric Machine Plant LLC ընկերությունները: Միաժամանակ, մաքսազերծման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հայտնի է դարձել, որ մատակարարված գծային կարգավորվող տրանսֆորմատորների մասով Kaskad Energo ընկերության հայաստանյան մասնաճյուղի մատակարար է հանդիսացել «Կալուգագլավսնաբ» ռուսական ընկերությունը: Կապալառուն «Կալուգագլավսնաբ» ընկերությանը չի ներկայացրել ԲԷՑ-ին՝ որպես ենթակապալառու, հետևաբար, ընկերությունը չի հաստատվել ԲԷՑ-ի կողմից և չի ներառվել պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 5-ում (ենթակապալառուների ցանկում):

- Ստուգման ընթացքում պարզվեց, որ աշխատանքների կատարողականը, առ 30.09.2018թ., կազմում է ընդամենը 723,532.0 ԱՄՆ դոլար (26%): Հատկանշական է, որ գլխավոր կապալառուի պայմանագրի հատուկ պայմանների 8.2 կետի համաձայն՝ աշխատանքների վերջնաժամկետ է սահմանված 31.12.2018թ.-ը:
- Խորհրդատու Decon և Consulectra ընկերությունը 2018 թվականի եռամսյակային հաշվետվությունների «Հիմնական խնդիրներ» բաժնում նշել է, որ «Հաղթանակ», «Վանաձոր-1» և «Աշնակ» ենթակայանների վերակառուցման աշխատանքների դանդաղ ամսական առաջընթացը հնարավորություն չի տալիս ծրագիրը հասցնել ավարտին անգամ պայմանագրերի ավարտի նոր թիրախային ժամկետներում:
- «Հաղթանակ» ենթակայանից գլխավոր կապալառուի պայմանագրի շրջանակներում կատարվել են ապամոնտաժման աշխատանքներ, ապամոնտաժված սարքերը հիմնականում տեղափոխվել են ԲԷՑ-ի «Շահումյան» ենթակայանի տարածք: Ապամոնտաժված սարքերի արտաքին զննման արդյունքում պարզվել է, որ մի շարք էլեկտրական սարքավորումներ գտնվում են բաց տարածքում, իսկ որոշ սարքավորումներ տեղափոխման ժամանակ վնասվել են, մասնավորապես, ստուգման արդյունքում պարզվեց, որ «Հաղթանակ» ենթակայանից ապամոնտաժված և «Շահումյան» ենթակայանում տեղակայված 110կՎ երկու լարման տրանսֆորմատորներ ջարդված վիճակում են, ինչի հետևանքով տեղի է ունեցել 320 կգ տրանսֆորմատորի յուղի կորուստ:
- Xian Electric Engineering Co Ltd ընկերությունը «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման շրջանակներում 28.08.2017թ.-ի թիվ XD-HVEN-170828-114 գրությամբ ԲԷՑ-ին առաջարկել է շինարարության գծով նոր ենթակապալառու «Ախուրյան կոոպշին» ՍՊԸ-ի փաթեթը, որը փոխարինել է կապալառուի պայմանագրով հաստատված «Քարամյանշին» ՍՊԸ-ին: Գրության մեջ կապալառուն նշել է, քանի որ ԲԷՑ-ի կողմից «Քարամյանշին» ՍՊԸ-ն չի

ընդունվել՝ որպես շինարարության գծով ենթակապալառու, ուստի «Ախուրյան կոոպշին» ՍՊԸ-ի և ԲԷՑ-ի կողմից առաջարկված «ԲԻԳ Էներգո», «Առսարքտեխ» և «Արտաշատ ջրշին» ՍՊԸ-ներից կապալառուն ընտրել է «Ախուրյան կոոպշին» ՍՊԸ-ին:

«Վերակառուցման և զարգացման համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության և ՎԶՄԲ-ի միջև 2015 թվականի ապրիլի 8-ին կնքվել է թիվ 8495-AM վարկային համաձայնագիրը՝ 52.0 մլն ԱՄՆ դոլարի չափով: Համաձայնագիրը վավերացվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 23.06.2015թ.-ին: Վարկային ծրագրի ավարտ է սահմանվել 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վարկային համաձայնագրի 3.01 կետին համապատասխան՝ 11.08.2015թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության և ԲԷՑ-ի միջև կնքվել է ենթավարկային համաձայնագիր, որով ՀՀ ֆինանսների նախարարությունը ՎԶՄԲ-ի կողմից տրված վարկային միջոցներից 21.8 մլն ԱՄՆ դոլար գումարով վերավարկավորել է ԲԷՑ-ին: Համաձայն ենթավարկային համաձայնագրի 3.1-ին կետի՝ ԲԷՑ-ին է փոխանցում նաև ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորվող գումարները: Ենթավարկային միջոցների օգտագործման վերջնաժամկետ է սահմանվել 31.12.2019թ.:

2017 թվականի ՀՀ պետական բյուջեով ծրագրի տարեկան պլանը նախատեսվել է ընդամենը 606,578.9 հազ. դրամ: Ծրագրի 2017թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 1,812,159.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 858,698.12 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,000,254.53 հազ. դրամ:

2018 թվականի ՀՀ պետական բյուջեով ծրագրի տարեկան պլանը նախատեսվել է ընդամենը 1,316,964.7 հազ. դրամ, 30.09.2018թ. դրությամբ դրամարկղային ծախսը՝ 1,092,031.83 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 1,709,275.4 հազ. դրամ:

Ծրագրի շրջանակներում վարկային միջոցների հաշվին կնքվել է մոտ 10.4 մլն ԱՄՆ դոլար արժեքով 6 պայմանագիր: Ծրագրի վարկային միջոցների խնայողությունը կազմել է 11.4 մլն ԱՄՆ դոլար:

Ստուգումն ընդգրկող ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում իրականացվել է 5 պայմանագիր.

1. ԲԷՑ-ի և «Xian Electric Engineering Co» LLC-ի միջև «Աշնակ» ենթակայանի վերակառուցման համար 01.07.2016թ.-ին կնքվել է թիվ ETNIP_HVEN_ICB_1/2015 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 9,181,847.0 ԱՄՆ դոլար, իսկ կատարման վերջնաժամկետ է սահմանվել 12.09.2018թ.-ը: 08.08.2018թ.-ին պայմանագրի գնացուցակում կատարված փոփոխությունների արդյունքում

պայմանագրի գինն ավելացել է՝ դառնալով 9,960,741.0 ԱՄՆ դոլար, ինչպես նաև կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 31.03.2019թ.: Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 5,845,641.4 ԱՄՆ դոլար, որից՝ 4,482,976.2 ԱՄՆ դոլարը վարկային միջոցներից, իսկ 1,362,665.3 ԱՄՆ դոլարը համաֆինանսավորման միջոցներից:

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագրի կատարողականը վարկային միջոցների հաշվին կազմել է 4,324,659.0 ԱՄՆ դոլար, նույն ժամանակաշրջանում ձեռք է բերվել 2,741,951.3 ԱՄՆ դոլարի սարքեր և սարքավորումներ, և իրականացվել է 1,582,707.7 ԱՄՆ դոլարի շինարարական և նախագծման աշխատանքներ: Կատարողականի դիմաց ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորումը կազմել է 1,081,165.0 ԱՄՆ դոլար:

2. ԲԷՑ-ի և «Decon International GmbH & Consulectra Unternemensberatung GmbH»-ի (այսուհետև՝ Խորհրդատու) միջև 08.12.2016թ.-ին կնքվել է թիվ ETNIP-CS-1/2015 պայմանագիրը՝ ծրագրի շրջանակներում Աշնակի ենթակայանի վերակառուցման վերահսկման և կառավարման խորհրդատվական ծառայությունների համար: Պայմանագրի գինը՝ 339.468.75 եվրո (366,726.65 ԱՄՆ դոլար): Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ.-ը պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսվել է 258,128.1 ԱՄՆ դոլար, որից՝ 206,541.1 ԱՄՆ դոլարը վարկային միջոցներից, իսկ 51,587.0 ԱՄՆ դոլարը համաֆինանսավորման միջոցներից:

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագրի կատարողականը կազմել է 246,053.6 ԱՄՆ դոլար, որից վարկային միջոցների հաշվին՝ 196,842.9 ԱՄՆ դոլար, համաֆինանսավորման հաշվին 49,210.7 ԱՄՆ դոլար:

3. ԲԷՑ-ի և անհատ խորհրդատու Գ.Խ.-ի միջև 21.04.2017թ.-ին կնքվել է թիվ ETNIP-HVEN_SSS_2 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 5,468,750.0 դրամ (ներառյալ եկամտահարկը), իսկ կատարման վերջնաժամկետ է սահմանվել 23.06.2017թ. որն էլ՝ 22.06.2017թ.-ին երկարաձգվել է մինչև 07.07.2017թ.:

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագիրն ամբողջ ծավալով կատարվել է, և վճարումներն իրականացվել են ամբողջությամբ:

4. ԲԷՑ-ի և անհատ խորհրդատու Հ. Ավագյանի միջև 01.12.2016թ.-ին կնքվել է թիվ ETNIP-HVEN_SSS_1 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 1,106,013.0 դրամ (ներառյալ եկամտահարկը), իսկ կատարման վերջնաժամկետ է սահմանվել 15.05.2017թ.:

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում պայմանագիրն ամբողջ ծավալով կատարվել է, և վճարումներն իրականացվել են ամբողջությամբ:

5. ԲԷՑ-ի և անհատ խորհրդատու Տ. Սահակյանի միջև 17.12.2015թ.-ին կնքվել է թիվ ETNIP-HVEN_CS_1/2017 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 16,176,000.0 դրամ (ներառյալ եկամտահարկը), իսկ կատարման վերջնաժամկետ է սահմանվել 31.12.2017թ.: Պայմանագրի շրջանակներում ծրագրի սկզբից փաստացի վճարվել է՝ 8,088,000.0 ՀՀ դրամ (ներառյալ եկամտահարկը):

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում փաստացի վճարվել է 674,000.0 ՀՀ դրամ (ներառյալ եկամտահարկը):

6. ԲԷՑ-ի և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի միջև 29.05.2017թ.-ին կնքվել է թիվ ETNIP-HVEN_CS_1/2017 պայմանագիրը: Պայմանագրի գինը կազմել է 9,964,800.0 դրամ (ներառյալ 20% ԱԱՀ):

01.01.2017-30.09.2018թթ. ընկած ժամանակահատվածում ընկերությանը փաստացի վճարվել է 6,196,800.0 ՀՀ դրամ (ներառյալ 20% ԱԱՀ):

Անհամապատասխանություններ

Աշնակ ենթակայանի վերակառուցման մասով

Հանձնման-ընդունման ակտի համաձայն ղեկավարման և պաշտպանության վահանների մոնտաժման աշխատանքները 100%-ով կատարված են, սակայն ստուգման ընթացքում պարզվեց, որ դրանց մալուխները դեռևս մոնտաժված չեն

1. 30.09.2018թ. դրությամբ պայմանագրի կատարողականը կազմում է 4,324,659.0 ԱՄՆ դոլար կամ ընդհանուր գումարի 44%-ը, պայմանագրի ժամկետն ավարտվում է 31.03.2019թ.-ին: Պայմանագրի հիմնական պայմանների 26.2-րդ կետի համաձայն՝ եթե Կապալառուն չի կարողանում ավարտել օբյեկտները կամ դրանց մի մասը պայմանագրի հատուկ պայմանների 8.2-րդ կետում սահմանված աշխատանքների ավարտման ժամկետում, և պայմանագրի հիմնական պայմանների 40-րդ կետին համապատասխան ավարտի ժամկետի երկարաձգում տեղի չի ունեցել, կապալառուն պետք է Պատվիրատուին վճարի տույժ (liquidated damages) Պայմանագրի հատուկ պայմանների 26.2-րդ կետի համաձայն, որը կազմում է Պայմանագրի գնի 0.5%-ը յուրաքանչյուր շաբաթվա համար և հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասին նկատմամբ, որի համար կապալառուն չի կարողացել հասնել ավարտման: Տույժի առավելագույն չափը չի կարող գերազանցել պայմանագրի գնի 10% սահմանաչափը:
2. Առկա է խեղաթյուրում գլխավոր կապալառուի պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ակտում: 06.08.2018թ. հանձնման-ընդունման ակտի համաձայն ղեկավարման և պաշտպանության վահանների մոնտաժման աշխատանքները՝ 10,240.0 ԱՄՆ դոլար արժեքով,

100%-ով կատարված են, սակայն ստուգման ընթացքում իրականացված զննման արդյունքում պարզվեց, որ դրանց մալուխները դեռևս մոնտաժված չէին: ԲԷՑ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մալուխների մոնտաժումը նախատեսվել է կարգաբերման փուլում, որը դեռևս չի մեկնարկել և դրա մասով վճարումներ չեն իրականացվել:

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-Ի (ԱՅՍՈՒՀԵՏԵՎ՝ ԲԷՑ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

220ԿՎ Գյումրի օդային գծի 245 հատ հենարանների ներկման աշխատանքների ձեռք բերման վերաբերյալ (ծածկագիր՝ «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-17/44»)

«ԲԷՑ» ՓԲԸ-ն 08.02.2017թ.-ին փոփոխված գնումների պլանով նախատեսել էր «220ԿՎ Գյումրի օդային գծի 245 հատ հենարանների ներկում» աշխատանքի ձեռք բերում՝ 97.2 մլն ՀՀ դրամի շրջանակներում: 10.04.2017թ.-ին գնումների պլանը փոփոխվել է՝ նախատեսելով աշխատանքի կատարման համար 150.0 մլն ՀՀ դրամ առավելագույն գինը՝ նախորդ գնից 52.8 մլն ՀՀ դրամով ավելի: Փոփոխության համար հիմք է ծառայում «ԲԷՑ» ՓԲԸ-ի «Նախագիծ» մասնաճյուղի կողմից կազմված նախահաշիվը՝ 151,986,030.0 ՀՀ դրամ նախահաշվային արժեքով, որը 31.03.2017թ.-ին դրական եզրակացությամբ փորձաքննություն է անցել «ՄԱՌՔ» ՍՊԸ-ի կողմից:

Գնման կարիքի բավարարման նպատակով կազմակերպվել է գնման գործընթաց «բաց մրցույթ» գնման ընթացակարգով: Գնահատող հանձնաժողովի կազմը գործադիր տնօրենի հրամանով հաստատվել է 17.10.2017թ.-ին: Մրցույթին մասնակցել է մեկ կազմակերպություն՝ «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ն (գրանցված՝ 29.04.2016թ.-ին), որի հետ 27.11.2017թ.-ին կնքվել է «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-17/44» կապալային աշխատանքների կատարման պայմանագիրը՝ 142.2 մլն ՀՀ դրամ գումարով: Աշխատանքների կատարման ժամկետը պայմանագրով սահմանվել է օդային գծի անջատման՝ հոսանքազրկման օրվանից 335 աշխատանքային օր:

«Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ն, որպես գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթուղթ է ներկայացրել «Առսարքտեխ» ՍՊԸ-ի և «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի միջև 15.08.2017թ.-ին կնքված «ԲԷՑ» ՓԲԸ-ի 220 կՎ «Շամբ» օդային գծի 270 հատ հենարանների ներկման ենթակապալի պայմանագիրը:

«ԲԷՑ» ՓԲԸ-ն 19.12.2017թ.-ին պայմանագրով նախատեսված ապրանքների և նյութերի ձեռք բերման համար «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ին վճարել է կանխավճար 71.1 մլն ՀՀ դրամի չափով, վերջինիս 18.12.2017թ.-ի թիվ 05/04-17/02 գրության հիման վրա, ըստ որի պահանջվող գումարը պետք է օգտագործվեր Ռուսաստանի Դաշնությունից նյութերի մատակարարման կազմակերպման նպատակով:

Համաձայն Նախարարի՝ ՀՀ հաշվեքննիչ պալատ ներկայացրած 26.02.2019թ.-ի թիվ «ՀՊԵ-66» գրության՝ պայմանագրի կնքումից հետո «ԲԷՑ» ՓԲԸ-ն «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորին» Գյումրի 220 կՎ ՕԳ անջատման հայտ է ներկայացրել երկու անգամ՝ 12.06.2018թ.-ին ու 18.10.2018թ.-ին.

երկու հայտերն էլ բավարարվել են: Առաջին անջատումը, որն արվել է ոչ ներկման նպատակով, տեղի է ունեցել 14.06.2018թ.-ին՝ միացվելով նույն օրը, իսկ երկրորդ անջատումը՝ 22.10.2018թ.-ին՝ տևելով 15 օր:

Ըստ 24.12.2018թ.-ին կազմված միջանկյալ Ակտ N-1-ի ու N-2-ի և «ԲԷՑ» ՓԲԸ-ի «Կապիտալ շինարարության և շինվերանորոգման» բաժնի պետի՝ Հաշվեքննիչ պալատին տրված առ 27.02.2019թ.-ը տեղեկանքի՝ ներկվել են 91 հենարան ամբողջությամբ, 4 հենարան մասնակի (50%) և 109 հենարան դեռևս պետք է ներկվի:

Անհամապատասխանություններ

- Որպես գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի ներկայացրած «Առսարքտեխ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի գծով դրա ներկայացման պահին՝ 10.11.2017թ.-ին, աշխատանքներ կատարված չեն եղել:

Աղյուսակ 1. Տեղեկատվություն «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի «Առսարքտեխ» ՍՊԸ-ին դուրս գրած հարկային հաշիվների վերաբերյալ

N	Աշխատանքի անվանումը (բովանդակությունը)	Դուրս գրման ամսաթիվ	Մատակարարման ամսաթիվ	Գումարը (ՀՀ դրամ)
1	«Շամբ» 220 կՎ ՕԳ թիվ 1-268 մետաղական հենարանների ներկման աշխատանքներ	20.09.2018	19.09.2018	14,861,340.0
		20.09.2018	19.09.2018	27,014,184.0
		08.11.2018	02.11.2018	18,276,960.0
		08.11.2018	02.11.2018	6,135,900.0
		08.11.2018	02.11.2018	9,829,488.0
2	Ընդամենը	-	-	76,117,872.0

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի հետ, ըստ որի՝ «առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)»:

- Անտեսելով 2-րդ կետի անհամապատասխանությունը՝ 09.11.2017թ.-ի Արձանագրություն N3-ով Գնահատող հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակցից ստացված փաստաթղթերը գնահատել է հրավերով

սահմանված պահանջներին համապատասխան, իսկ մասնակցին՝ ընտրված մասնակից:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հետ, ըստ որի՝ «հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին» և 6-րդ մասի հետ, ըստ որի՝ «Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները»:

71.1 մլն ՀՀ դրամի չափով կանխավճարի վճարումը չի համապատասխանում «ԲԷՑ» և «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ների միջև կնքված պայմանագրի և հրավերի հավելվածի մի շարք պահանջների

➢ «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի 18.12.2017թ.-ի թիվ 05/04-17/02 գրության հիման վրա 71.1 **մլն ՀՀ դրամի** չափով կանխավճարի վճարումը չի համապատասխանում «ԲԷՑ» և «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ների միջև կնքված պայմանագրի 2.1-րդ, 5.4-րդ կետերին և հրավերի հավելված 6-ի հավելված 3-ին: «Գնման հայտում», «Հրավերում» և կնքված պայմանագրում սահմանված չէ կանխավճարի վճարում: Կանխավճարի վճարումը հավաստվում է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի N000605 վճարման հանձնարարագրով: Ավելին՝ ըստ վերը նշված գրության կանխավճարը պահանջվել է Ռուսաստանի Դաշնությունից նյութերի մատակարարման կազմակերպման համար աշխատանքները գարնանը կազմակերպելու նպատակով այն հիմնավորմամբ, որ գարնանային ձնհալի ժամանակ Հայաստանը և Ռուսաստանի Դաշնությունը միմյանց կապող Վերին Լարսի փակ լինելու պայմաններում «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ն ստիպված է նախատեսված ապրանքների և նյութերի ձեռքբերումն իրականացնել է 2017թ.-ի տարեվերջում: 01.01.2017-29.11.2018թթ. ընկած ժամանակահատվածում «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ն 05/04-17/02 գրության մեջ նշված նյութերը չի ներմուծել: Կանխավճարը բանկային երաշխիքով ապահովված չէ այն դեպքում, երբ այն ամբողջությամբ պետք է ապահովված լիներ պայմանագրով նախատեսվելու դեպքում: Հետևաբար «ԲԷՑ» ՓԲԸ-ն ոչ միայն չի հետևել պայմանագրի պայմաններին՝ վճարելով կանխավճար, այլև իր վրա է վերցրել լրացուցիչ ռիսկեր:

Նշված փաստերի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ «Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է

ներկայացնում կանխավճարի ապահովում կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով»:

Գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը իրավազոր չի եղել

➢ Գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը իրավազոր չի եղել, քանի որ նիստին ներկա են եղել հանձնաժողովի 5 անդամներից 3-ը: Հետևաբար, գնահատող հանձնաժողովի N3 Արձանագրությունը անվավեր է: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը այդ մասին չի զեկուցել պատվիրատուի ղեկավարին: Ավելին՝ N3 Արձանագրությունը չի ստորագրվել գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից, ում անունը գրված է Արձանագրությունում:

Նշված փաստերի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ «Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները», ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը», 3-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին» և 5-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը»:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

➢ 08.02.2017թ.-ին հաստատված Գնումների պլանի փոփոխությամբ 220 կՎ «Գյումրի» օդային գծի ներկման համար սահմանված 97.2 մլն ՀՀ դրամ առավելագույն գումարը հիմնավորված չէ, քանի որ վերջինիս համար նախահաշիվ չի կազմվել: Նախահաշիվ չի կազմվել նաև 2015-2016թթ. հաղորդման ծառայության մատուցման սակագնի մեջ ներառված 81 մլն ՀՀ դրամի համար, հետևաբար այն նույնպես հիմնավորված չէ:

➢ 220կՎ «Գյումրի» օդային գծի 245 հենարանի (1600 տ) ներկման աշխատանքների գումարը 81.0 **մլն ՀՀ դրամի** չափով Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ներառվել է 2015-2016թթ.-ի հաղորդման ծառայության մատուցման սակագնի հաշվարկի մեջ: Հաջորդ տարիների սակագներում չեն ներառվել օդային գծի ներկման համար լրացուցիչ գումարներ: 2017թ.-ի գործարար ծրագրով 220 կՎ «Գյումրի» օդային գծի 245 հատ հենարանների ներկման համար նույնպես նախատեսվել

է 81.0 **մլն ՀՀ դրամ**: Հետևաբար, «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-17/44» պայմանագրի գնի՝ 142.2 մլն ՀՀ դրամի 45.0 **մլն ՀՀ դրամ** մասի ֆինանսավորումն իրականացվել է այլ շահագործման ծախսերի հաշվին:

- Ըստ ԲԷՑ-ի «Արևմտյան մասնաճյուղի» գլխավոր ճարտարագետի կողմից տեխնիկական տնօրենի տեղակալին ներկայացված թիվ «01.01.32» գրությանը կից «Թերությունների ակտի»՝ կազմված 29.03.2017թ-ին, անհրաժեշտ էր ներկել 211 հատ հենարան, 7 հատ ցինկապատ հենարանի տակդիրներ և որոշ ցինկապատ հենարանների վրա տեղադրված մետաղյա անկյունակներ, սակայն «Տ-ՔՆՍՏՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի հետ կնքված «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-17/44» պայմանագրով նախատեսվել է Գյումրի 220 կՎ ՕԳ-ի 204 հատ հենարանի ներկում և վերջիններիս ցինկապատ լինել-չլինելու հանգամանքը հաշվի առնված չէ: Ավելին, 24.12.2018թ.-ի դրությամբ երկու ցինկապատ հենարանների՝ N18-ի և N28-ի ամբողջական ներկման (և՛ ցինկապատ հենարանի, և՛ ոչ ցինկապատ տակդիրի) փաստն արձանագրված է միջանկյալ Ակտ N-1-ով: Եթե նշված հենարանների ցինկապատ հատվածների ներկում պայմանագրով չնախատեսվեր, պայմանագրի գումարը հնարավոր կլիներ նվազեցնել 1,491,354.0 **ՀՀ դրամով**:
- 71.1 մլն ՀՀ դրամ տրված կանխավճարի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային հաշվարկային դրույքով՝ տարեկան 12%-ով, հաշվարկված ԲԷՑ-ի կորստի չափը մինչև 30.09.2018թ.-ը կազմում է մոտ 6.66 մլն ՀՀ դրամ պարզ տոկոսադրույքով և մոտ 6.98 մլն ՀՀ դրամ շարունակական կապիտալիզացիայով:

«Էլեկտրահաղորդման գծերի հանութագրման և բազային երկրատեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան քարտեզագրական հիմքի ստեղծման և ներդրման աշխատանքների» ձեռք բերման վերաբերյալ (ծածկագիր՝ «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-18/02»)

«ԲԷՑ» ՓԲԸ-ն 2018 թվականի գնումների պլանով նախատեսել է «Էլեկտրահաղորդման գծերի հանութագրման և բազային երկրատեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան քարտեզագրական հիմքի ստեղծման և ներդրման աշխատանքների» ձեռք բերում՝ 146.5 **մլն ՀՀ դրամի** շրջանակներում:

Գնումն իրականացնելու համար ընկերությունը հայտարարել է «բաց մրցույթ»: Մրցույթում հաղթող է ճանաչվել «Վոլիոս» ՓԲԸ-ն, որի հետ 22.03.2018թ.-ին կնքվել է «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-18/02» պայմանագիրը՝ 141.0 **մլն ՀՀ դրամ** գումարով: Աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է 20.06.2018թ.-ը (պայմանագրի

ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում): Պայմանագրով սահմանված 40 տոկոս կանխավճարը՝ 56.4 **մլն ՀՀ դրամը**, վճարվել է 23.03.2018թ.-ին:

Հետագայում՝ 19.06.2018թ.-ին, հիմք ընդունելով Կատարողի 07.06.2018թ.-ի թիվ EP-098 գրությունը, կողմերի միջև կնքվել է «Համաձայնագիր N01»-ը, որով պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 2018 **թվականի հուլիսի** 20-**ը**: Գրությամբ որպես հիմնավորում է ներկայացվում աշխատանքային խմբերի տեղաշարժը խոչընդոտող ՀՀ-ում ստեղծված քաղաքական իրավիճակը, ինչպես նաև անձրևների տեսքով տեղումները:

Հիմք ընդունելով «Վոլիոս» ՓԲԸ-ի 13.07.2018-ի թիվ EP-136 գրությունը՝ 20.07.2018-ին կնքվում է «Համաձայնագիր N02-ը», որով Պայմանագրի 4.1 կետով սահմանված ընդհանուր գինը նվազեցվում է 6,747,920.0 ՀՀ դրամով, ինչպես նաև Պայմանագրի Հավելված N1-ի 1.3 ենթակետով նշված օդային գծի երկարությունը նվազեցվում է 26.58 կիլոմետրով, իսկ 1.4 ենթակետով սահմանված հենարանների քանակը՝ 133 հատով: EP-136 գրության մեջ որպես նշված պայմանագրի փոփոխությունների պատճառ է բերվում «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ սահմաններից դուրս գտնվող օդային գծերի հանութագրումը և էլեկտրոնային քարտեզների ստեղծումը ոչ նպատակահարմար դիտարկվելու հանգամանքը:

Կատարված աշխատանքների դիմաց «Վոլիոս» ՓԲԸ-ին վճարվել է 127.9 **մլն ՀՀ դրամ** 26.11.2018-ի դրությամբ: Վճարումները ամբողջությամբ չեն կատարվել. դեռևս պետք է վճարվի փաստացի դուրս գրված և հաստատված 134.2 **մլն ՀՀ դրամի** հարկային հաշիվների մնացյալ՝ 6.3 **մլն ՀՀ դրամ** մասը:

Անհամապատասխանություններ

- Հրավերով վճարումները նախատեսվել է իրականացնել քարտեզագրական հիմքը կադաստրային գեոպորտալում տեղադրելու օրվանից հաշված 100 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն պայմանագրով սահմանվել է 40 տոկոս կանխավճար՝ 56.4 **մլն ՀՀ դրամ**, որը կատարողին վճարվել է 23.03.2018թ.-ին, իսկ մնացած մասի վճարումը նախատեսվել է իրականացնել հանձնման-ընդունման արձանագրությունները երկկողմ ստորագրելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում **առանց քարտեզագրական հիմքը կադաստրային գեոպորտալում տեղադրելու** անհրաժեշտության:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք

հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝ պայմանագրով կանխավճար նախատեսելը, եթե հրավերով նախատեսված չի եղել կանխավճար հատկացնելու հնարավորություն»:

56.4 մլն ՀՀ դրամ վճարված կանխավճարը ապահովված չի եղել բանկային երաշխիքով

➢ 2.2.1 կետում նշված 56.4 մլն ՀՀ դրամ վճարված կանխավճարը ապահովված չի եղել բանկային երաշխիքով:

Նշված փաստերի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ «Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով»:

Տուգանքի չափի մասին դրույթ պայմանագիրը չի պարունակում:

➢ Հրավերին կից պայմանագրի նախագծի 5-րդ «Կողմերի պատասխանատվությունը բաժին» մասի դրույթները չեն համապատասխանում «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-18/02» պայմանագրի 5-րդ բաժնի դրույթներին: Մասնավորապես, կնքված պայմանագրում նշված չէ տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվող տուգանքի չափի մասին, որը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսից:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ»:

➢ Պայմանագրի, ինչպես նաև Պայմանագրի նախագծի Հավելված N1-ի՝ «Տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցի» 1.7-րդ կետով նախատեսված աշխատանքը՝ «Էլեկտրահաղորդման գծերի հենարանների տեխնիկական վիճակի մասին եզրակացության տրամադրումը» 2018 թվականի գնման պլանում ներառված «Էլեկտրահաղորդման գծերի հանութագրման և բազային երկրատեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան քարտեզագրական հիմքի ստեղծման և

ներդրման աշխատանքներից» տարբերվող աշխատանք է, հետևաբար, դրա գնումը պետք է իրականացվեր առանձին չափաբաժնով:

Խոչընդոտվել է մրցակցությունը

Այդպիսով խոչընդոտվել է մրցակցությունը այն կազմակերպությունների համար, որոնք միայն մասնագիտացած են էլեկտրահաղորդման գծերի հենարանների տեխնիկական զննման մեջ և այն կազմակերպությունների համար, որոնք միայն մասնագիտացած են քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության իրականացման մեջ:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հետ, ըստ որի՝ «Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում», 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ու 3-րդ կետերի, ըստ որոնց՝ « Գնման առարկայի բնութագրերը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը» և 25-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, ըստ որի՝ «Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը»:

- Գնահատող հանձնաժողովի անդամը չի ստորագրել «Հայտերի բացման արձանագրություն N3-ը» և «Շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը», չնայած վերջինիս անունը երկու արձանագրության մեջ նշված է:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ «Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները» և 7-րդ մասի, ըստ որի՝ « Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն», ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը»:

- Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը Պատվիրատուին ներկայացնելու գրությունն առկա չէ ըստ «ԲԷՑ» ՓԲԸ-ից 30.11.2018-ին ստացված N1-02/1507 գրության:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» Կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետի հետի հետ, ըստ որի՝ «Հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում»:

Չի պահպանվել պահանջվող մասնագիտական փորձառության պահանջը

➢ 2016 թվականի դեկտեմբերի 30-ին հիմնադրված «Վոլիոս» ՓԲԸ-ն, որը «Քաղաքաշինության բնագավառում ինժեներական հետազոտման»՝ համար 16695 լիցենզիան ստացել է 25.12.2017-ին, իսկ «Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում և փորձաքննության»՝ համար 16534 լիցենզիան՝ 28.04.2017-ին, չի կատարել նմանատիպ աշխատանքներ մինչև բաց մրցույթին մասնակցելը՝ պահանջված Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետով: Դրա մասին գնահատող հանձնաժողովը տեղեկացել է ՊԵԿ-ի եզրակացությամբ՝ տրված 02.03.2018-ին, որով երևում է, որ «Վոլիոս» ՓԲԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը հավասար է **զրոյի**: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՊԵԿ եզրակացությունը, պետք է մերժեր հայտը: Բացի այդ, «ԲԷՑ» ՓԲԸ-ին «Վոլիոս» ՓԲԸ-ի կողմից նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների վերաբերյալ ներկայացման ենթակա փաստաթղթերը պահանջող N ՀՊԵ-ԿԿ-145 գրությանն ի պատասխան ներկայացված N 1-02/1507 գրության մեջ նշվում է, որ բոլոր փաստաթղթերը գտնվում են փաթեթում, սակայն հաշվեքննության ընթացքում փաթեթի զննության արդյունքում նշված փաստաթղթերը չեն հայտնաբերվել:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, ըստ որի՝ «Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն», ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի, ըստ որի՝ «առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը»:

Չի պահպանվել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը

➢ Ելնելով ՊԵԿ-ի կողմից 02.03.2018-ին գնահատող հանձնաժողովին տրված «Եզրակացությունից»՝ Հրավերի 2.5-րդ կետի 3-րդ ենթակետի ա) մասով սահմանված պահանջն այն մասին, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի մասնակցի ներկայացրած գնային առաջարկից, չի բավարարվել: Այսպիսով, հայտը պետք է մերժվեր «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին չբավարարելու պատճառով, ինչը տեղի չի ունեցել:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի, ըստ որի՝ «Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ», ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի ա) մասի, ըստ որի՝ « … երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից»:

- «Հրավերի» հավելված 6-ի՝ «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց» հավելված N1-ի «Այլ պայմաններ» բաժնում սահմանվում են մասնակցին ներկայացվող պահանջները, մասնավորապես մասնակիցը պետք է ունենա.
- նախագծային աշխատանքների մշակման լիցենզիա,
- քաղաքաշինության փաստաթղթերի մշակում և փորձաքննության ներդիրներ՝ բնակելի, հասարակական, արտադրական և էներգետիկ,
- քաղաքաշինության բնագավառում ինժեներական հետազննման լիցենզիա իր ներդիրներով:
- Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի) և հողաշինարարի որակավորման վկայական:

«Վոլիոս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված լիցենզավորված անձինք երբեք չեն հանդիսացել այդ ընկերության աշխատակից

«Վոլիոս» ՓԲԸ-ի կողմից 23.02.2018թ.-ին ներկայացված ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված «Քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի» որակավորման վկայական N0174-ում նշված անձը՝ **Դ.Գ.-ն**, ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տրված «Ինժեներական հետազննման» N16695-Մ Լիցենզիայի ներդիրում նշված անձինք՝

Դ.Գ-ն և **Ռ.Տ.-ն**, ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տրված «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ բնակելի, հասարակական և արտադրական» N16534-01 լիցենզիայի ներդիրում նշված անձինք՝ **Ա.Փ.-ն**, **Ա.Հ.-ն** և «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ էներգետիկ» N16534-04 լիցենզիայի ներդիրում նշված անձինք՝ **Գ.Գ.-ն**, **Ս.Գ.-ն**, երբևէ չեն եղել «Վոլիոս» ՓԲԸ-ի աշխատակից՝ համաձայն արտաքին հաստատման ընթացակարգով ստացված տեղեկատվության:

Ավելին՝ **Գ.Գ.-ի**, **Ս.Գ.-ի** կողմից 20.10.2016 թվականին ստացված «Շինարարության իրականացում՝ էներգետիկ» 16360-04 և **Ա.Հ.-ի** կողմից 31.05.2016 թվականին ստացված «Շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական» N16360-01 լիցենզիաները ներկայացվել են «ԲԷՑ» ՓԲԸ-ին «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-17/44» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի կողմից այն պարագայում, որ նշված անձինք տվյալ ընկերության աշխատակիցներ չեն եղել:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- 2018 թվականի Գնումների պլանով «Էլեկտրահաղորդման գծերի հանութագրման և բազային երկրատեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան քարտեզագրական հիմքի ստեղծման և ներդրման աշխատանքների» ձեռք բերման համար սահմանված 146.5 **մլն ՀՀ դրամ** առավելագույն գումարը հիմնավորված չէ նախահաշվով: 07.12.2018 թվականի ՈՀՊԵ-ԿԿ-165 գրությամբ հաշվեքննողը «ԲԷՑ» ՓԲԸ-ին խնդրել էր տրամադրել «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-18/02» պայմանագրի մասով պատասխանատու ստորաբաժանման կողմից «Գնման հայտի» շրջանակներում կազմված «Էլեկտրահաղորդման գծերի հանութագրման և բազային երկրատեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան քարտեզագրական հիմքի ստեղծման և ներդրման աշխատանքների» նախահաշիվը, որը մինչև արձանագրության կազմման օրը չի տրամադրվել:
- Ըստ 01.06.2018-ին արտադրատեխնիկական ծառայության պետի կողմից ստորագրված գրության «ԲԷՑ» ՓԲԸ-ն 15.09.2017-ի N1-03/1489 գրությամբ դիմել են մասնագիտական ուղղվածություն ունեցող 7 կազմակերպությունների և ստացել են օդային գծերի ու մետաղյա հենարանների հանութագրման նախահաշվային գնացուցակներ նախնական մոտավոր նախահաշիվ կազմելու համար (397 մլն ՀՀ դրամ): «1-02/1348» գրությամբ դիմել են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին ստացված 397 մլն ՀՀ գումարը էլեկտրահաղորդման սակագնում ներառելու համար, որից

հաստատվել է միայն 198 մլն ՀՀ դրամը: Հետագայում, սակայն, նախահաշիվ ներկայացրած կազմակերպություններից ոչ մեկը չի մասնակցել «Էլեկտրահաղորդման գծերի հանութագրման և բազային երկրատեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան քարտեզագրական հիմքի ստեղծման և ներդրման աշխատանքների» ձեռք բերման նպատակով կազմակերպված բաց մրցույթին:

- «ԲԷՑ» ՓԲԸ-ի համար պետք է հաշվարկվի տույժ «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-18/02» պայմանագրի 5.4 կետում նշված գումարի՝ «Կատարողին» վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրվա համար: Կատարողին վճարման ենթակա գումարը հավասար է *փաստացի վճարված գումարի* և «Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման» արձանագրություններում նշված *վճարման ենթակա գումարների* տարբերությանը, որը կազմում է 6,353,820.0 **ՀՀ դրամ**: Վերջինիս համեմատ հաշվարկված տույժը կազմում է 412,998.3 **ՀՀ դրամ**: Հաշվարկը կատարվել է 27.07.2018-ից մինչև 04.12.2018 ընկած ժամանակահատվածի համար՝ սկիզբ ընդունելով 20.07.2018-ին տրված հարկային հաշիվներից հետո 5-րդ աշխատանքային օրը՝ պայմանագրով սահմանված վճարման ժամկետը: Իսկ կատարված աշխատանքների դիմաց փաստացի վճարված գումարների՝ Պայմանագրով սահմանված վճարման ժամկետից ուշ վճարման համար հաշվարկված տույժերի գումարը կազմում է 1,070,700.19 **ՀՀ դրամ**: Հաշվարկված տույժերի ընդհանուր գումարը 1,483,698.49 **ՀՀ դրամ** է:
- Համաձայն «ԲԷՑ» ՓԲԸ-ի «Նախագիծ» մասնաճյուղի տնօրենի 22.02.2019-ին տրամադրած տեղեկանքի «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից ձեռք բերված գեոդեզիական-չափագրական սարքավորումները օգտագործվել են «Վոլիոս» ՓԲԸ-ի կողմից, քանի որ «ԲԷՑ» ՓԲԸ-ն չի ունեցել գեոդեզիստի որակավորում ունեցող աշխատակից:
- «ԲԷՑ» ՓԲԸ-ի «Նախագիծ» մասնաճյուղի 7 աշխատակիցներ ազատվել են աշխատանքից և ընդունվել են «Վոլիոս» ՓԲԸ աշխատանքի: Հետագայում նրանցից երեքը հետ են ընդունվել աշխատանքի «ԲԷՑ» ՓԲԸ-ի «Նախագիծ» մասնաճյուղ:

Աղյուսակ 2. Աշխատանքից ազատված և «Վոլիոս» ՓԲԸ աշխատանքի անցած անձանց վերաբերյալ տեղեկատվություն

N	Անունը, Ազգանունը	Ազատման օրը	Վոլիոս ՓԲԸ ընդունման օրը	Վոլիոս ՓԲԸ-ից ազատման օրը	Ընդունման օրը
1	Լ.Գ.	10.04.2018	04.05.2018	31.05.2018	07.06.2018
2	Ա.Մ.	10.04.2018	04.05.2018	-	-
3	Խ.Մ.	10.04.2018	03.09.2018	-	-
4	Բ.Հ.	10.04.2018	04.05.2018	-	-
5	Վ.Հ.	10.04.2018	04.05.2018	31.05.2018	07.06.2018
6	Հ.Բ.	10.04.2018	04.05.2018	-	-
7	Ս.Հ.	10.04.2018	04.05.2018	31.05.2018	08.06.2018
8	Մ.Գ.	10.04.2018	04.05.2018	17.08.2018	-

«Կոորդինատների որոնման սարքի /արտաքին ալեհավաք/» և «Էլեկտրոնային տախոմետրի» ձեռք բերման վերաբերյալ (ծածկագիր՝ « ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-17/31»)

«ԲԷՑ» ՓԲԸ-ն նախատեսել էր գնել «Կոորդինատների որոնման սարք /արտաքին ալեհավաք/» և «Էլեկտրոնային տախոմետր» 2017 թվականի գնումների պլանում հունիսի 21-ին արված փոփոխությամբ: Առավելագույն արժեքները սահմանվել էին 6,500,000.0 և 6,000,000.0 **ՀՀ դրամ**, համապատասխանաբար (ընդհանուր՝ 12,500,000.0 **ՀՀ դրամ**):

Նշված սարքավորումների ձեռք բերման համար իրականացվել է գնման գործընթաց «գնանշման հարցման» ընթացակարգով, որի արդյունքում հաղթող է ճանաչվել երկու մասնակիցներից՝ «ՍԵԳ» ՍՊԸ-ից և «Գեո-նալ» ՍՊԸ-ից, երկրորդը՝ ավելի ցածր գին առաջարկածը: Վերջինիս և «ԲԷՑ» ՓԲԸ-ի միջև 2017թ. հուլիսի 24-ին կնքվել է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-17/31» պայմանագիրը՝ 12,444,000.0 **ՀՀ դրամ** ընդհանուր գումարով:

Ըստ պայմանագրի, ապրանքների մատակարարումը պետք է տեղի ունենար պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ վճարումը՝ «Հանձման-ընդունման» արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Ապրանքների հանձնում-ընդունումը տեղի է ունեցել 03.08.2017թ.-ին, իսկ ապրանքների դիմաց վճարումը՝ 16.08.2017թ.-ին՝ պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան:

Անհամապատասխանություններ

Գնման առարկան հղում է պարունակել կոնկրետ մոդելի և արտադրողի, ինչն արգելված է ՀՀ օրենսդրությամբ

- ««ԲԷՑ» ՓԲԸ 2017 թվականի գնումների պլանով նախատեսված էլ. սարքերի և պահեստամասերի գնման հայտը հաստատելու մասին» Արձանագրությանը կից «Գնման հայտ» հավելված 1-ում գնման առակայի հատկանիշները հղում են պարունակում արտադրողին և մոդելին, սակայն առանց վերջիններիս անհնար չէր գնման առարկայի բնութագրումը: Մասնավորապես Գնման հայտի 2-րդ՝ «Գնման առարկային անվանում» սյան 2-րդ տողում գրված են «GNSS համակարգ Leica Zeno20 արտաքին անտենայով AS10 կամ համարժեք» բառերը, որոնք հղում են պարունակում Leica Geosystems արտադրողին և Leica Zeno20 մոդելին, իսկ 3-րդ տողում գրված են «Էլեկտրոնային տախիոմետր leica ts 06 plus 5” R1000 կամ համարժեք» բառերը, որոնք նույնպես հղում են պարունակում Leica Geosystems արտադրողին և LEICA TS06 plus R1000 մոդելին: Վերը նշվածը հանգեցրել է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Նշված փաստերի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հետ, ըստ որի՝ «Գնման առարկայի բնութագրերը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը» և 5-րդ մասի հետ, ըստ որի՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ մոդելի կամ արտադրողի:

Գնումները համակարգող աշխատակիցները ընդգրկվել են գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով, ինչն արգելված է ՀՀ օրենսդրությամբ

- 31.03.2017թ.-ին համար 47-Լ հրամանով գնումները համակարգող նշանակված պաշտոնատար անձի աշխատակիցները (Հ.Հ-ն և Դ.Գ.-ն) ընդգրկվել են գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 15-րդ կետի հետ, ըստ որի՝ «Գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչը կամ աշխատակիցը»:

Հայտերի բացման նիստը կայացել է նախատեսվածից 2 ժամ ուշ

➢ Ըստ «Հայտերի բացման մասին» Արձանագրություն N2-ի՝ հայտերի բացման նիստը կայացել է ժամը 12:00-ին, սակայն Արձանագրություն N1-ով հաստատված «Գնանշման հարցման մասին» Հայտարարութ-յամբ և Հրավերի 8.1 կետով հայտերի բացման նիստի ժամը սահմանվել էր 10:00-ն: Հետևաբար՝ հայտերի բացման նիստը կայացել է նախատեսվածից 2 ժամ ուշ:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի հետ, ըստ որի՝ «Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում հայտերի բացման նիստում»:

Հանձնաժողովի նիստն իրավազոր չի եղել

➢ 11.07.2017 թվականի Արձանագրություն N03-ը ստորագրված է գնահատող հանձնաժողովի ընդհանուր 5 անդամներից նիստին ներկա 3-ի կողմից, այսինքն՝ Արձանագրություն N03-ն անվավեր է հանձնաժողովի նիստի իրավազոր չլինելու պատճառով: Դրա մասին Հանձնաժողովի քարտուղարը գրավոր չի զեկուցել պատվիրատուի ղեկավարին:

Նշված փաստերի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը» և 3-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին»:

➢ «ՀՊԵ-ԿԱ-31» գրության ի պատասխան «ԲԷՑ» ՓԲԸ-ն հաշվեքննողին տրամադրել է Մատակարարման բաժնի պետի գրությունը ուղղված գլխավոր տնօրենի խորհրդականին, որտեղ նշվում է, որ գրությամբ պահանջվող «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-17/31» պայմանագրի շրջանակներում «Գեո-Նալ» ՍՊԸ-ի կողմից որպես «մասնագիտական փորձառության» չափանիշի գնահատման համար ներկայացված նախկինում կատարված համանման պայմանագրի հաշիվ ապրանքագրերը և հանձման-ընդունման արձանագրությունները մատակարարման բաժնում չեն գտնվել:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, ըստ որի՝ «Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն», ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի, ըստ որի՝

«առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը»:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- 21.06.2017-ին հաստատված Գնումների պլանի փոփոխությամբ «Կոորդինատների որոնման սարքի /արտաքին ալեհավաք/» և «Էլեկտրոնային տախոմետրի» ձեռք բերման համար սահմանված առավելագույն գումարները՝ 6,500,000.0 և 6,000,000.0 **ՀՀ դրամները** հիմնավորված չեն նախահաշվային կամ այլ փաստաթղթերով:
- Ըստ «ԲԷՑ» ՓԲԸ-ի «Նախագիծ» մասնաճյուղի տնօրենի 22.02.2019թ.-ին կազմած Թիվ 01-01/02 տեղեկանքի՝ 2016 թվականին և դրանից հետո «Նախագիծ» մասնաճյուղի համար չափագրումներ է իրականացրել Վլադիմիր Հարությունյանը, ով աշխատանքներն իրականացրել է իր գործիքներով, իսկ 2017-ին ձեռք բերված սարքավորումները օգտագործվել են «Վոլիոս» ՓԲԸ-ի կողմից: Հաշվի առնելով դա և այն հանգամանքը, որ «ԲԷՑ» ՓԲԸ-ն 2017-2018թթ.-ին չի ունեցել Կադաստրի պետական կոմիտեի կողմից ՀՀ տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության բնագավառում որակավորման վկայական ստացած աշխատակից, որը կկարողանար օգտագործել ձեռք բերված սարքավորումները՝ «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից ձեռք բերված գեոդեզիական սարքավորումներն արդյունավետ չեն օգտագործվել՝ չպահպանելով «Գնումների մասի» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գնումների արդյունավետ իրականացման սկզբունքը:

«Սերվերային և տվյալների պահպանման համակարգի» (այսուհետ՝ սերվեր) ձեռք բերման վերաբերյալ (ծածկագիր՝ «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-17/35»)

«ԲԷՑ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) 2017 թվականի գնումների պլանով «Սերվեր տիպ 1-ի» և «Սերվեր տիպ 2-ի» համար նախատեսվել է վճարել առավելագույնը 3,180,000.0 և 3,033,000.0 **ՀՀ դրամ** գումար,

համապատասխանաբար: Հունիսի 21-ին փոփոխված գնումների պլանով նախատեսվել էր «Սերվերային և տվյալների պահպանման համակարգի» (այսուհետ՝ սերվեր) ձեռք բերում՝ 26,975.0 **հազ. ՀՀ դրամի** շրջանակներում: 03.07.2017թ.-ին՝ նախատեսվող գումարն ավելացվել է 6,660.0 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 33,635.0 **հազ. ՀՀ դրամ**: Կատարվելիք գնման նախահաշվային արժեք գնումների համար պատասխանատու ստորաբաժանումը չներկայացրեց:

Ընկերությունը գնումն իրականացնելու համար ընտրել է «գնանշման հարցման» գնման ընթացակարգը: Մրցույթում հաղթող է ճանաչվել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն, որի հետ 18.08.2017թ.-ին կնքվել է «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-17/35» պայմանագիրը 52,221.5 հազ. ՀՀ դրամ գումարով: Նշված ընդհանուր արժեքից սերվերի գումարը 33,450.0 **հազ. ՀՀ դրամ** է:

Պայմանագրով աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է 13.09.2018թ.-ը՝ պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ վճարումները նախատեսվել է իրականացնել հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ ստորագրման պահից 90 աշխատանքային օրվա ընթացքում:

Սերվերի Հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվել է 06.09.2017թ.-ին, վճարումը կատարվել է 28.09.2017թ.-ին:

Անհամապատասխանություններ

Հանձնաժողովի նիստն իրավազոր չի եղել

➢ 19.07.2017 թվականի Արձանագրություն N03-ը և N04-ը ստորագրված են գնահատող հանձնաժողովի ընդհանուր 5 անդամներից նիստին ներկա 2-ի կողմից, այսինքն՝ Արձանագրություն N03-ը և N04-ն անվավեր են հանձնաժողովի նիստի իրավազոր չլինելու պատճառով: Դրա մասին Հանձնաժողովի քարտուղարը գրավոր չի զեկուցել պատվիրատուի ղեկավարին:

Նշված փաստերի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը» և 3-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին»:

Սպուգմամբ արձանագրված այլ փաստեր

- 21.06.2017-ի Գնումների պլանի փոփոխությամբ «Սերվերային և տվյալների պահպանման համակարգի» ձեռք բերման համար սահմանված առավելագույն գումարը՝ 26,975.0 **հազ. ՀՀ դրամը** և դրա 03.07.2017-ի ավելացումը 6,660.0 **հազ. ՀՀ դրամով** հիմնավորված չեն նախահաշվային կամ այլ փաստաթղթերով: «ԲԷՑ» ՓԲԸ-ն չունի ՏՏ ոլորտը կանոնակարգող և կարգավորող ներքին կարգեր, որոնք կսահմանեին ՏՏ համակարգը օգտագործողների հասանելիությունները և իրավազորությունները, ինչպես նաև ՏՏ համակարգերը շահագործելու կանոնները:

- Ըստ Ցանցային գլխավոր ադմինիստրատո-րի տրամադրած տեղեկանքի նոր սերվերը ձեռք է բերվել «Mullberry» համակարգի ներդրման համար: Համակարգը մինչև օրս չի ներդրվել և ընկերությունը 2017թ.-ի համար վճարել է 980.0 **հազ**., իսկ 2018թ-ի համար 1,152.0 **հազ ՀՀ դրամ** «ՎԻ ԻՔՍ Սոֆթին»-ին «Mullberry» սպասարկման և սերվերներում տեղակայման համար: 2017 թվականի փետրվարի 8-ին փոփոխված գնումների պլանով նախատեսվել է «Mullberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրում» 850.0 հազ. ՀՀ դրամով: Դրանով է պայմանավորված նաև «սերվեր տիպ 1-ի» և «սերվեր տիպ 2-ի» գնման անհրաժեշտությունը՝ համապատասխանաբար 3,180.0 հազ. և 3,033.0 հազ ՀՀ դրամով, որոնք այդպես էլ չեն գնվել, իսկ դրանց փոխարեն գնվել է նոր սերվերը 33,450.0 հազ. ՀՀ դրամով: Եթե «սերվեր տիպ 1-ը» և «սերվեր տիպ 2-ը» գնվեին և փաստաթղթաշրջանառության «Mullberry» համակարգը ներդրվեր, ապա «ԲԷՑ» ՓԲԸ-ն կտնտեսեր 28,519.0 հազ. ՀՀ դրամ: «ԲԷՑ» ՓԲԸ-ն նախկինում սերվեր ունեցել է: Սերվերը դուրս չի գրվել, գտնվում է նորի հետ նույն սենյակում: Օգտագործվել է հաշվապահության 1C համակարգը օգտագործելու համար:

««Շահումյան-2» ենթակայանի թիվ 2 ԱՏԴՑՏՆ-125000/220 մակնիշի ավտոտրանսֆորմատորի և ԼՏԴՆ-40000/10 մակնիշի գծային կարգավորող տրանսֆորմատորի նորոգում» աշխատանքի ձեռք բերման վերաբերյալ (ծածկագիր՝ ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-17/24)

«ԲԷՑ» ՓԲԸ-ի 2017 թվականի հունվարի 27-ի գնումների պլանով նախատեսվել է ««Շահումյան-2» ենթակայանի թիվ 2 ԱՏԴՑՏՆ-125000/220 մակնիշի ավտոտրանսֆորմատորի և ԼՏԴՆ-40000/10 մակնիշի գծային կարգավորող տրանսֆորմատորի նորոգում» աշխատանքի իրականացում ՊԸ գնման

ընթացակարգով 19.2 **մլն ՀՀ դրամի** շրջանակներում: 22.05.2017 թվականի Գնումների պլանի փոփոխությամբ նվազեցվում է նախատեսված գումարի չափը մինչև 18.5 **մլն ՀՀ դրամ**, իսկ 21.06.2017 թվականին փոփոխվում է գնման ընթացակարգը ՊԸ-ից ԳՀ-ի (գնանշման հարցում):

Գնանշման հարցման ընթացակարգով իրականացված գնման գործընթացի արդյունքում հաղթող է ճանաչվել միակ մասնակիցը՝ «Էներգանորոգում» ԲԲԸ-ն, որի հետ 07.08.2017թ.-ին կնքվել է «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-17/24» ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ աշխատանքների 16,989,709.2 **ՀՀ դրամ** ընդհանուր արժեքով:

Համաձայն պայմանագրի՝ աշխատանքները պետք է մատուցվեին ենթակայանի և ավտոտրանսֆորմատորի անջատման օրվանից՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ աշխատանքների դիմաց վճարումը պետք է կատարվեր հանձման-ընդունման արձանագրության երկկողմանի ստորագրվելուց հաշվված 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Աղյուսակ 3. Բանկային վճարման և հարկային հաշիվների տվյալները

N	Բանկային վճարում		Հարկային հաշիվ		
	Վճարման ամսաթիվը	**Գումարը**	**Ծառ. անվանումը**	**Ծավալը**	**Գումարը**
1	13.11.2017	16,989,709.20	ԱՏԴՑՏՆ-125000/220	1	13,283,869.20
2	-	-	ԼՏԴՆ-40000/10/10	1	3,705,840.00
3	**Ընդամենը**	16,989,709.20	-	2	16,989,709.20

Անհամապատասխանություններ

- Հաշվեքննության ընթացքում փաթեթի զննությամբ չի հայտնաբերվել «Շահերի բախման բացակայության մասին» հայտարարությունը: Հաշվեքննողների հարցման ի պատասխան հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձը պահանջվող փաստաթուղթը չի ներկայացրել:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի հետ, ըստ որի՝ «Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն»:

Հանձնաժողովի նիստն իրավազոր չի եղել

- Հայտերի գնահատման նիստին (Արձանագրություն N3) ներկա է եղել Գնահատող հանձնաժողովի 5 անդամից 3-ը, ինչը նշանակում է, որ հանձնաժողովի նիստն իրավազոր չի եղել: Դրա մասին Հանձնաժողովի քարտուղարը գրավոր չի զեկուցել պատվիրատուի ղեկավարին:

Նշված փաստերի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը» և 3-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին»:

- «ԲԷՑ» ՓԲԸ-ի և «Էներգանորոգում» ԲԲԸ-ի միջև 2017 թվականի նոյեմբերի 14-ին կնքվել է համար՝ «ԷՆ/Կ-17/39-1» կապալի պայմանագիրը, որով «Էներգանորոգում» ԲԲԸ-ն պարտավորվել է իրականացնել Պատվիրատուի («ԲԷՑ» ՓԲԸ) կողմից տրամադրված «Մարաշ» ե/կ-ի ՏՄ-630/10 ԿՎԱ տիպի տրանսֆորմատորի նորոգում: Աշխատանքի գինը ամրագրված է 585,688.0 ՀՀ դրամ: Սակայն ««Մարաշ» ե/կ-ի ՏՄ-630/10 ԿՎԱ տիպի տրանսֆորմատորի նորոգում» աշխատանք «ԲԷՑ» ՓԲԸ-ի 2017 թվականի գնումների պլանով և դրա փոփոխություններով նախատեսված չի եղել և հետևաբար, գնումների գործընթաց չի կազմակերպվել:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթի հետ, ըստ որի՝ «Սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները»:

«Յուղի վերլուծություն և զտում» ծառայության ձեռք բերման վերաբերյալ (ծածկագիր՝ ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/27)

«ԲԷՑ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ընկերություն) 2017 թվականի գնումների պլանով նախատեսել է «Յուղի վերլուծություն և զտում» ծառայության ձեռք բերում՝ 12.6 **մլն ՀՀ դրամի** շրջանակներում: Նախահաշվային արժեքը գնումների հայտում արտացոլված չէ:

Ընկերությունը ծառայության ձեռք բերման համար իրականացրել է գնման գործընթաց գնանշման հարցման ընթացակարգով, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն: Վերջինիս հետ 11.07.2017թ.-ին կնքվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/27» պայմանագիրը՝ 12,588,522.0 **ՀՀ դրամ** գումարով:

Պայմանագրով ծառայության մատուցման ժամկետը սահմանվել է 11.07.2018թ.-ը՝ պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 1 տարվա ընթացքում: Վճարումները նախատեսվել է իրականացնել Հանձման-ընդունման ակտի երկկողմ հաստատման օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Անհամապատասխանություններ

Հանձնաժողովի նիստն իրավազոր չի եղել

- Գնահատող հանձնաժողովի 27.06.2017-ի Արձանագրություն N3-ը ստորագրված է նիստին ներկա հանձնաժողովի 3 անդամներից 2-ի կողմից, ինչը նշանակում է, որ հանձնաժողովի նիստն իրավազոր չէ: Դրա մասին Հանձնաժողովի քարտուղարը գրավոր չի զեկուցել պատվիրատուի ղեկավարին:

Նշված փաստերի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ «Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները», «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը» և 3-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին»:

«Էներկակարգաբերում» ՓԲԸ-ին վճարվել է պայմանագրային գնից 755,651.0 ՀՀ դրամ ավելի գումար

- «Էներգակարգաբերում» ՓԲԸ կողմից ծառայությունները չեն մատուցվել «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/27» պայմանագրի «Տեխնիկական բնութագրով»՝ Հավելված 1-ով սահմանված պայմաններին համապատասխան: Իրականացվել է տրանսֆորմատորի յուղի կրճատ վերլուծություն առանց tg δ%-ի 51 նմուշի համար՝ 250-ի փոխարեն, տրանսֆորմատորի յուղի կրճատ վերլուծություն 263 նմուշի համար՝ 100-ի փոխարեն, տրանսֆորմատորի յուղի լրիվ վերլուծություն 4 նմուշի համար՝ 5-ի փոխարեն և տրանսֆորմատորային յուղում լուծված գազերի տարրալուծական վերլուծություն 59 նմուշի համար՝ 55-ի փոխարեն: Այս անհամապատասխանությունների արդյունքում «Էներկակարգաբերում» ՓԲԸ-ին վճարվել է պայմանագրային գնից 755,651.0 **ՀՀ դրամ** ավելի գումար:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/27» պայմանագրի 1-ին՝ «Պայմանագրի առարկան» կետի և Հավելված 1-ի հետ:

«Միկրոպրոցեսորային ռելեների վերանորոգում» աշխատանքի ձեռք բերման վերաբերյալ (ծածկագիր՝ ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14)

«ԲԷՑ» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանով հաստատված է եղել «Միկրոպրոցեսորային ռելեների վերանորոգում» աշխատանքը գնման առարկաների ցանկում, որի համար նախատեսվել է 10,000,000.0 **ՀՀ դրամ** առավելագույն գումար: Վերջինս գնումների պլանի՝ 17.05.2018թ.-ի «փոփոխություն 5-ով» իջեցվել է 8,600,000.0 **ՀՀ դրամի**:

Գնանշման հարցում ընթացակարգով իրականացված գնման արդյունքում հաղթող է ճանաչվել միակ մասնակից «Ֆիքսիթ ԻԹ Քոմփանի» ՍՊԸ-ն, որի հետ 2018 թվականի հունիսի 12-ին կնքվել է «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14» Աշխատանքների կատարման պայմանագիրը՝ 8,500,000.0 **ՀՀ դրամ** գնով:

Պայմանագրով աշխատանքի կատարման ժամանակահատվածը սահմանվել է պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարի, այսինքն՝ մինչև 12.06.2019-ը, իսկ վճարումների կատարումը՝ երկկողմ ստորագրված հաշիվ-ապրանքագրի և հանձման-ընդունման արձանագրության հիման վրա 30 օրացուցային օրվա ընթացքում: Հանձման-ընդունման արձանագրությունների ստորագրման և վճարումների կատարման ժամանակացույցը ներկայացվում է ստորև (աղյուսակ 4).

Աղյուսակ 4. **Հանձման-ընդունման արձանագրությունների և դրանց դիմաց վճարումների ամփոփ տվյալներ**

N	Հանձման-ընդունման արձանագրություններ		Վճարումներ	
	Համարը	**Կազմման ամսաթիվը**	**Գումարը (ՀՀ դրամ)**	**Ամսաթիվը**
1	N1	21.06.2018	1,700,000.0	12.07.2018
2	N2	04.07.2018	1,700,000.0	24.07.2018
3	N3	13.08.2018	850,000.0	17.08.2018
4	N6	05.09.2018	850,000.0	12.09.2018
5	**Ընդամենը**		5,100,000.0	-

30.09.2018 թվականի դրությամբ պայմանագրով նախատեսված թվով 10 վերանորոգման աշխատանքներից չեն կատարվել 4-ը՝ ընդհանուր 3,400,000.0 **ՀՀ դրամի**: Իրականացված աշխատանքները և վճարումները կատարվել են պայմանագրին համապատասխան:

Անհամապատասխանություններ

- «Շահերի բախման բացակայության մասին» հայտարարությունը չի ստորագրվել գնահատող հանձնաժողովի անդամի՝ Ն.Գ.-ի կողմից, ում

անունը նշված է եղել «Շահերի բախման բացակայության մասին» հայտարարության մեջ:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ կետի հետ, ըստ որի՝ «Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն»:

Հանձնաժողովի նիստն իրավազոր չի եղել

➢ Գնահատման նիստի Արձանագրություն N3-ը ստորագրել են գնահատող հանձնաժողովի ներկա 3 անդամները գործող 5 անդամներից, այսինքն՝ նիստն իրավազոր չի եղել:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի հետ, ըստ որի՝ «Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը»:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի աշխատակիցը նշանակվել է գնահատող հանձնաժողովի անդամ

➢ Գնահատող հանձնաժողովի քարտուղարի աշխատակիցը՝ Դ.Գ.-ն նշանակվել է գնահատող հանձնաժողովի անդամ:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 15-րդ կետի հետ, ըստ որի՝ «Գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչը կամ աշխատակիցը»:

Շամբ 220 կվ ՕԳ 1-268 մետաղական հենարանների ներկման աշխատանքների վերաբերյալ

Նախահաշվային գին ըստ գործարար ծրագրի՝ 114,000,000.0 ՀՀ դրամ
Ըստ գնումների պլանի՝ 114,000,000.0 ՀՀ դրամ
Ըստ փոփոխված գնումների պլանի (10.04.2017թ.)՝ 187,300,000.0 ՀՀ դրամ
Պայմանագիր՝ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-17/16, 01.08.2017թ.
Պայմանագրի կողմ՝ «Առսարքտեխ» ՍՊԸ
Պայմանագրի գին՝ 176,313,708.0 ՀՀ դրամ

Պայմանագրի կատարում 30.09.2018թ. դրությամբ

Տրված կանխավճար՝	19.12.2017թ. 89,000,000.0 ՀՀ դրամ
Ընդամենը փոխանցված ըստ բանկային քաղվածքի՝	137,976,131.0 ՀՀ դրամ
Ընդամենը ստացված հարկային հաշիվ՝	65,851,655.0 ՀՀ դրամ
Ընդամենը վճարված ըստ բանկային քաղվածքի՝	65,851,655.0 ՀՀ դրամ (վճարում աշխատանքի կատարման դիմաց՝ 48,976,131.0 ՀՀ դրամ, կանխավճարի մարում՝ 16,875,524.0 ՀՀ դրամ
Չմարված կանխավճար՝	72,124,476.0 ՀՀ դրամ
Պայմանագրի չկատարված մաս ՀՀ դրամ (%)՝	110,462,053.0 (63%)

Անհամապատասխանություններ

- Գնման ընթացակարգի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ հաղթող ճանաչված մասնակցի՝ «Առսարքտեխ» ՍՊԸ-ի և երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Բիգ Էներգո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկներն ունեին ընդհանրություններ *(146,928,090.0 - 147,928,090.0)*: Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա էին նաև այլ ընդհանրություններ: Հրավերի 1-5 հավելվածներով սահմանված ձևաչափերում ամսաթիվ լրացնելու վավերապայման նախատեսված չի եղել: Մինչդեռ «Առսարքտեխ» և «Բիգ Էներգո» ընկերությունների կողմից հայտերով ներկայացված համապատասխան փաստաթղթերում լրացվել են ամսաթվեր, որոնք գտնվել են փաստաթղթերի միևնույն հատվածում: Համընկել են նաև տառատեսակները և տառաչափերը: Պատվիրատուի կողմից այդ փաստը հաշվի չի առնվել: Մրցույթի երրորդ մասնակցի՝ «Ա և Ա Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերում նման ընդհանրություններ առկա չեն եղել:

Նշված փաստը հակասել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջին, համաձայն որի գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքների վրա:

Մասնակցի կողմից հրավերով պահանջված վկայականները չեն ներկայացվել, սակայն այն հաղթող է ճանաչվել

- Հրավերում կատարվել է փոփոխություն, որով սահմանվել է. «այն աշխատողները, որոնք աշխատանք են կատարում բարձրության վրա,

պետք է ունենան էլեկտրատեղակայանքներում աշխատելու իրավունք (վկայական) և IV-V էլեկտրաանվտանգության խումբ՝ ՀՀ կառավարության 23.11.2006թ. N 1933-Ն որոշման համաձայն»: Հաղթող ճանաչված մասնակցի կողմից հրավերով պահանջված վկայականները չեն ներկայացվել: Մինչդեռ մասնակցի հայտը գնահատվել է բավարար, և վերջինս ճանաչվել է որպես հաղթող մասնակից:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի հետ, համաձայն որի «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»:

Նմանատիպ աշխատանքի կատարման պահանջը չի պահպանվել

➢ Հրավերում կատարվել է փոփոխություն, որով սահմանվել է. «նմանատիպ աշխատանքի տեսակ է համարվում 110 և 220կՎ մետաղական հենարանների ներկման՝ հրավերով պահանջվող լիցենզիայի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների կատարումը»: Հաղթող մասնակցի կողմից այս չափանիշի մասով ներկայացվել են հարկային հաշիվներ, որոնք վերաբերել են էլեկտրամատակարարման, ոչ թե ներկման աշխատանքներին: Մինչդեռ մասնակցի հայտը գնահատվել է բավարար, և վերջինս ճանաչվել է որպես հաղթող մասնակից:

Հրավերով սահմանվել է. «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրության պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:»:

Գնման փաթեթում բացակայել են գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ստորագրվող շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները և գնահատման թերթիկները

➢ Գնման փաթեթում բացակայել են գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ստորագրվող շահերի բախման բացակայության

մասին հայտարարությունները և գնահատման թերթիկները:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարութ-յան 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 10-րդ ենթակետով սահմանված պահանջի հետ, համաձայն որի գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է ներկայացված հայտերը՝ ներառյալ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, դրանց գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկներում և իր ստորագրությամբ հաստատում դրանք:

Արձանագրվել է նաև անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) 33-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի հետ, համաձայն որի հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հրապարակվում է տեղեկագրում:

Պատվիրատուն առանց կանխավճարի ապահովման կապալառուին է փոխանցել պայմանագրով չնախատեսված 89,000,000.0 ՀՀ դրամի չափով կանխավճար

➢ Ստուգման ընթացքում պարզվեց, որ «Առսարքտեխ» ՍՊԸ տնօրեն՝ Հ.Պ.-ն 19.12.2017թ. գրությամբ դիմել է ԲԷՑ-ի տնօրեն Ռ.Խ.-ին՝ 89,000,000.0 ՀՀ դրամ կանխավճար տրամադրելու խնդրանքով: Համաձայն գրության՝ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերը կապալառուն ցանկացել է ձեռք բերել Ռուսաստանի Դաշնությունից՝ նշելով տեղական շուկայում պայմանագրով նախատեսված քանակությամբ և գներով դրանք ձեռք բերելու անհնարինությունը: Պատվիրատուն առանց կանխավճարի ապահովման կապալառուին է փոխանցել պայմանագրով չնախատեսված 89,000,000.0 ՀՀ դրամի չափով կանխավճար: Հաջորդ տարվա ընթացքում կապալառուն սեպտեմբեր ամսին դուրս է գրել 41,875,524.0 ՀՀ դրամի հարկային հաշիվ, որի դիմաց պատվիրատուն, տրված կանխավճարը հաշիվներով ներկայացված ամբողջ գումարի չափով մարելու փոխարեն, կատարել է 25,000,000.0 ՀՀ դրամի վճարում, իսկ տարբերության մասով մարել է կանխավճարը: Քանի որ տվյալ պայմանագրի կատարումը և պատվիրատուի կողմից իրականացվող հսկողության գործընթացները գնահատվել են ռիսկային, այդ պատճառով ստուգման ընթացքում տվյալ դեպքով կիրառվել է «դիտարկում» ընթացակարգ: Պարզվել է, որ 2018թ. նոյեմբեր ամսին պատվիրատուն կապալառուին փոխանցել է ևս 4,000,000.0 ՀՀ դրամի

չափով կանխավճար: Ստուգման ընթացքում պարզվեց նաև, որ 2017-2018թթ. ընթացքում Ռուսաստանի Դաշնությունից պայմանագրի կատարման համար անհրաժեշտ նյութերի ներմուծում կապալառուի կողմից չի իրականացվել:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջի հետ, որով սահմանվում է. «Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխմանը: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝ պայմանագրով կանխավճար նախատեսելը, եթե հրավերով նախատեսված չի եղել կանխավճար հատկացնելու հնարավորություն:»: Արձանագրվել է անհամապատասխանություն նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, համաձայն որի պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով:

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են ենթակապալային աշխատանքներ, ինչը նախատեսված չի եղել պայմանագրով

➢ Ստուգման ընթացքում պարզվեց, որ պայմանագրի կատարման ընթացքում «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են ենթակապալային աշխատանքներ, ինչը նախատեսված չի եղել պայմանագրով: Ներկման աշխատանքները կապալառուն պետք է կատարեր անձամբ, իր ուժերով, նյութերով ու միջոցներով: Համաձայն ստացված տեղեկատվության՝ 2018թ. «Առսարքտեխ» ՍՊԸ-ին ենթակապալի կողմից դուրս է գրվել 76,117,872.0 ՀՀ դրամի չափով հարկային հաշիվ՝ Շամբ 220 կվ ՕԳ 1-268 մետաղական հենարանների ներկման աշխատանքների դիմաց: Ենթակապալային աշխատանքները իրականացվել են կապալառուի հետ 15.08.2017թ. կնքված 142,888,891.0 ՀՀ դրամ արժողությամբ պայմանագրի հիման վրա: Պայմանագիրը, այդ թվում նաև հարկային հաշիվները առկա չեն եղել պատվիրատուի կողմից ներկայացված գնման փաթեթում:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ հոդվածի 6-րդ ենթակետի պահանջի հետ, համաձայն որի, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է նաև

գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պարտենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները:

Արձանագրվել են անհամապատասխանություններ հենարանների ներկման աշխատանքների գծով

➢ Քանի որ տվյալ պայմանագրի կատարումը և պատվիրատուի կողմից իրականացվող հսկողության գործընթացները գնահատվել են ռիսկային, այդ պատճառով ստուգման ընթացքում կիրառվել է «դիտարկում» ընթացակարգ, որի շրջանակներում համեմատվել են 2018թ. ընթացքում պատվիրատուի կողմից ներկայացված պայմանագրի կատարման արդյունքներով հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունները և ներկման աշխատանքների նկատմամբ հսկողություն իրականացրած աշխատանքային խմբի կողմից կազմված արձանագրությունը: Ըստ հանձնման-ընդունման արձանագրությունների՝ 65%-ով ներկվել է թվով 63 հենարան, 35%-ով՝ 42, 70%-ով՝ 90, 100%-ով՝ 48 հենարան, իսկ պայմանագրով նախատեսված 268-ից չի ներկվել թվով 25 հենարան: Ըստ ներկման աշխատանքների նկատմամբ հսկողություն իրականացրած աշխատանքային խմբի կողմից կազմված արձանագրության՝ 100%-ով ներկված է եղել թվով 56 հենարան, 70%-ով՝ 131 հենարան, 65%-ով՝ 36 հենարան, իսկ 35%-ով՝ 33 հենարան: Ներկված չի եղել թվով 13 հենարան:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

➢ Ստուգման ընթացքում պարզվեց, որ տվյալ գործարքի կատարողականները հաստատող ԲԷՑ-ի պաշտոնատար անձը՝

ա. տվյալ պահին զբաղեցրել է ԲԷՑ-ի մասնաճյուղերից մեկի ղեկավարի պաշտոնը,

բ. նախկինում զբաղեցրել է մրցույթի երկրորդ տեղը զբաղեցրած կազմակերպության տնօրենի տեղակալի պաշտոնը,

գ.վերջինիս ընտանիքի անդամը հանդիսացել է հաղթող կազմակերպության աշխատակից,

դ. վերջինիս ընտանիքի անդամը գտնվում է ազգակցական կապի մեջ երկրորդ տեղը զբաղեցրած կազմակերպության հիմնադիրի հետ,

ե. հանդիսացել է մեկ այլ կազմակերպության հիմնադիր, որի տնօրենը հանդիսանում է երկրորդ տեղը զբաղեցրած կազմակերպության հիմնադիրը,

զ. հետագայում դարձել է ԲԷՑ-ի տնօրեն:

➢ Պայմանագրի գնման ժամանակացույցն առաջացրել է տարընթերցում, որով առաջնորդվելու պարագայում պայմանագրի գործողությունը կարող էր երկարաձգվել անորոշ ժամկետով: Պայմանագրով աշխատանքների

կատարման ժամկետի սկիզբ է նախատեսվել 220կվ ՕԳ-ի անջատման օրվանից սկսած 335 աշխատանքային օր: Շամբ 220 կվ օդային գծերի անջատումներ 2017թ. չեն կատարվել, մինչդեռ պայմանագրի կատարման արդյունքի մի մասը ընդունվել է: ՀՀ կառավարության 23.11.2006թ. «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին N 1933-Ն որոշման 103-րդ կետի համաձայն՝ հենարանների ներկման աշխատանքները կարող են կատարվել առանց գծի անջատման:

- Ստուգման ընթացքում պարզվեց, որ Շամբ 220 կվ ՕԳ 1-268 մետաղական հենարանների ներկման անհրաժեշտությունը հիմնավորող թերությունների ակտը կազմվել է 13.04.2017թ., իսկ նախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննության եզրակացությունը՝ 30.03.2017թ., ինչը չի համապատասխանում գործընթացի հաջորդական քայլերի տրամաբանական շղթային:

Սիփան 220 կվ ՕԳ 1-87 մետաղական հենարանների ներկման աշխատանքների վերաբերյալ

Նախահաշվային գին ըստ գործարար ծրագրի՝ 47,760,000.0 ՀՀ դրամ
Ըստ գնումների պլանի՝ 47,760,000.0 ՀՀ դրամ
Ըստ փոփոխված գնումների պլանի (10.04.2017թ.)՝ 67,300,000.0 ՀՀ դրամ
Պայմանագիր՝ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-17/12, 29.05.2017թ.
Պայմանագրի կողմ՝ «Դավիթ Էներջի» ՍՊԸ
Պայմանագրի գին՝ 66,499,920.0 ՀՀ դրամ

Անհամապատասխանություններ

- Հրավերի պահանջներին համապատասխան մրցույթի մասնակիցների կողմից հայտերը ներկայացվել են փաստաթղթային ձևով: Հետևաբար, մրցույթի հայտերը գրանցվել են հայտերի գրանցամատյանում, որոնցում գրանցման համարների վրա կատարված են եղել ուղղումներ: Ելնելով գնման փաթեթում առկա փաստաթղթերից՝ մրցույթի մասնակիցներն են եղել՝ «Առսարքտեխ» և «Դավիթ Էներջի» ընկերությունները: Մինչդեռ գրանցամատյանում և հայտերի ծրարների վրա կատարված են եղել ուղղումներ՝ ջնջված են եղել «3» և «5» գրանցման համարները:

Պատվիրատուի կողմից գրանցամատյանի համապատասխան ձևաչափը չի կիրառվել

Պատվիրատուի կողմից գրանցամատյանի համապատասխան ձևաչափը չի կիրառվել:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2001թ. «Մրցույթի հայտերի գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» N16 հրամանի 7-րդ կետի պահանջի հետ, որով սահմանվում է. «Գրանցամատյանում գրառումները կատարվում են թանաքով, ջնջումներ և քերվածքներ կատարել չի թույլատրվում, ուղղումները կատարվում են միայն գրանցամատյանի վարման պատասխանատուի կողմից: Գրանցամատյանում ուղղումներ կատարելու դեպքում գրանցամատյանի 1-ին՝ «Սահմանված կարգով ներկայացված մրցույթի հայտեր» մասում, «Նշագրումներ» սյունակում դրվում է ուղղումը կատարած անձի ստորագրությունը:»:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված և հանձնման-ընդունման արձանագրություններով հաստատված փաստացի ցուցանիշների միջև առկա են եղել անհամապատասխանու-թյուններ

➢ Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված և հանձնման-ընդունման արձա-նագրություններով հաստատված փաստացի ցուցանիշների միջև առկա են եղել անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով հանձնման-ընդունման արձանագրու-թյունները՝ պայմանագրով նախատեսված ПС330-3 տիպի թվով 42 մետաղական հենարաններից ներկվել է ընդամենը 4-ը, У330-3 տիպի թվով 11 հատ մետաղական հենարաններից՝ ընդամենը 3-ը, իսկ У330-1 տիպի 5 հենարաններից՝ ընդամենը 3-ը: Համաձայն արձանագրությունների՝ պայմանագրով նախատեսված П330-3, П330-2 տիպի հենարաններ չեն ներկվել, ներկվել են ПС330-5, У330-3+5+9, У330-3+5, У330-3+9, П330-2+5, У330-1+9, У330-1+14 տիպի հենարաններ, որոնք նախատեսված չեն եղել պայմանագրի տեխնիկական բնութագրով: Տեխնիկական անձնագրում այդ հենարանների տիպերը նույնպես ընդգրկված չեն եղել: Փաստացի և պայմանագրով նախատեսված ցուցանիշների համեմատության արդյունքում չեն համապատասխանել նաև միավորի արժեքները: Չեն համընկել նաև նյութական միջոցները բեռնելու, բեռնաթափելու և տեղափոխելու համար պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված և փաստացի ցուցանիշները:

Պայմանագրով նախատեսված 87 հենարաններից փաստացի ներկվել է ընդամենը 67 հենարան

➢ Համաձայն հանձնման-ընդունման արձանագրությունների՝ պայմանագրով նախատեսված թվով 87 հենարաններից (591տ) փաստացի ներկվել է ընդամենը 67

հենարան (594տ): Չեն ներկվել 1-16, 81, 83, 86.87 հենարանները: Ներկված 67 հենարանների գերակշիռ մասը (57 հատ), ըստ տիպերի, ընդգրկված չի եղել պայմանագրի տեխնիկական բնութագրում: Տեղեկատվության հավաքագրման ընթացքում պարզվեց, որ ներկման աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել հենարանների տիպերի և քաշերի միջև անհամապատասխանություններ: Համաձայն «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի 20.11.2017թ. գրության՝ վերջինս պատվիրատուի կողմից N 1-16, 81, 83, 86, 87 հենարանները չներկելու վերաբերյալ ստացել է բանավոր ցուցում: Աշխատանքների կատարման ընթացքում կազմված աշխատանքային խմբի կողմից հենարանների հետազոտման, չափման, տիպերի և քաշերի ճշգրտման արդյունքների համաձայն՝ թվով 87 հենարանների քաշը կազմել է 796տ՝ պայմանագրով նախատեսված 591տ փոխարեն: Ստուգման ընթացքում պարզվեց նաև, որ պայմանագրին կից կնքվել է համաձայնագիր: Համաձայնագիրը կնքվել է 18.12.2017թ.՝ աշխատանքների կատարումից հետո (հանձնման-ընդունման 04.12.2017թ. թիվ 17/12 արձանագրություն): Համաձայնագրով հենարանների քանակը սահմանվել է 67՝ նախատեսված 87-ի փոխարեն: Պայմանագրի գումարը ավելացել է 1,382,894.0 ՀՀ դրամով, կազմելով՝ 67,882,814.0 ՀՀ դրամ, մինչդեռ N17/12 հանձնման-ընդունման արձանագրության համաձայն՝ պայմանագրի կատարումը 67 հենարանների ներկման համար կազմել է ընդամենը 66,499,920.0 ՀՀ դրամ: Համաձայնագրում ընդգրկվել է նաև ամբարձիչի աշխատանք (15,518,141.0 ՀՀ դրամ 1182 ժ/ա համար), որը պայմանագրով սահմանված չի եղել, սակայն նախատեսված է եղել նախահաշվով: Փոփոխությունների արդյունքում նվազել են նաև միավորի արժեքները: Փոփոխվել են ասֆալտե և գրունտային ճանապարհով նյութական միջոցների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման համար պայմանագրով սահմանված հեռավորությունները՝ ասֆալտե ճանապարհով 40կմ սահմանված հեռավորության փոխարեն՝ 200կմ, իսկ գրունտային ճանապարհով 40կմ սահմանված հեռավորության համար՝ 100կմ: Փոփոխության արդյունքում մոտ երկու անգամ ավելացել են միավորի արժեքները:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Համաձայն N 06 հանձնման-ընդունման արձանագրություն՝ N 82 հենարանի 80%-ով ներկումը ներկայացվել է կրկնակի, որի դիմաց հաշվարկվել է 764,562.0 ՀՀ դրամ, մինչդեռ ըստ N 01 արձանագրության՝ N 82 հենարանը 80%-ով արդեն ներկված է եղել: Համաձայն N 07 արձանագրության՝ ներկվել է հենարանի մնացած 20%-ը:

Շամբ** 220 **կվ ՕԳ** 1-268 **և Սիփան** 220 **կվ ՕԳ** 1-87 **մետաղական հենարանների ներկման աշխատանքների ձեռք բերման համար սահմանված նախահաշվային գների վերաբերյալ

- Ընկերության գործարար ծրագրի, ինչպես նաև գնումների պլանի հաստատման հիմքում դրվում է լիցենզավորվող գործունեության սակագներով ֆինանսավորվող ծախսերի և ներդրումների կատարումը: Ելնելով ընտրանքում ներառված 2017թ. գնումների ուսումնասիրությունից՝ գործարար ծրագրով հաստատված նախահաշվային և գնումների պլանի փոփոխություններով սահմանված գների միջև առկա են եղել զգալի շեղումներ: Ընկերության կողմից հիմնական միջոցների նորոգման ծախսերը պլանավորվել են առանց համապատասխան ֆինանսական միջոցների իրավական հիմքերի, այսինքն՝ սակագներով ապահովվածության:
- Հիմք ընդունելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ ՀԾԿՀ) կողմից հաստատված սակագների հաշվարկի հիման վրա կազմված 2015-2016թթ. ընթացիկ նորոգման ծախսերի վերաբերյալ տեղեկանքը՝ Շամբ 220 կվ ՕԳ 1-268 մետաղական հենարանների ներկման աշխատանքների համար նախատեսված ծախսը կազմել է 114,000,000.0 ՀՀ դրամ: Կնքված պայմանագրի գինը կազմել է 176,313,708.0 ՀՀ դրամ: Պայմանագրի գնի 62,313,708.0 ՀՀ դրամի չափով ծախսի տարբերությունը, ըստ էության, կատարվել է նախահաշվով նախատեսված այլ միջոցների հաշվին: ՀԾԿՀ կողմից հաստատված՝ սակագնի հաշվարկի հիման վրա Սիփան 220 կվ ՕԳ 1-87 մետաղական հենարանների ներկման աշխատանքների ձեռք բերման համար նախատեսված նախահաշվային գինը կազմել է 47,760,000.0 ՀՀ դրամ, կնքված պայմանագրի գինը՝ 66,499,920.0 ՀՀ դրամ: Նախահաշվով նախատեսված այլ միջոցների հաշվին կատարված ծախսի տարբերությունը կազմել է 18,739,920.0 ՀՀ դրամ:

Անուշ-Բջնի և Շահումյան-2-էջմիածին 110 կվ ՕԳ-ի թիվ 1-4 հենարանների հաղորդալարերի և հենարանների վնասվածքների վերացման և 1-2 թռիչքներում լրացուցիչ հենարանների տեղադրման վերաբերյալ

Գնման առարկա 1՝ «Շահումյան-2-էջմիածին» 110 կվ ՕԳ-ի վերականգնում՝ թիվ 100/1, 97/4 խարիսխային հենարանների հատվածում վթարի վերացման աշխատանքներ

Գնումների պլանով ընտրված գնման ձև՝ բաց ընթացակարգ

Պայմանագիր՝ ԲԷՑ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/61, 02.05.2017թ.

Պայմանագրի կողմ՝ «Բիգ էներգո» ՍՊԸ
Պայմանագրի գին՝ 45,062,400 ՀՀ դրամ
Գնման առարկա 2՝ «Անուշ-Բջնի» 110 կվ ՕԳ-ի վերականգնում՝ թիվ 1-3 խարիսխային հենարանների հատվածում վթարի վերացման աշխատանքներ
Գնումների պլանով ընտրված գնման ձև՝ բաց ընթացակարգ
Պայմանագիր՝ ԲԷՑ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/44, 29.03.2017թ.
Պայմանագրի կողմ՝ «Բիգ էներգո» ՍՊԸ
Պայմանագրի գին՝ 45,001,721.0 ՀՀ դրամ

Անհամապատասխանություններ

➢ Գնման պահանջը ձևավորվել է գնումների պլանավորման փուլում և կանխատեսվել է պատվիրատուի կողմից՝ ընդգրկվելով 2017թ. գործարար ծրագրում և տարվա սկզբում հրապարակված գնումների պլանում: Գնման ձև է ընտրվել բաց ընթացակարգը: Ստացված տեղեկատվության համաձայն՝ գնման գործընթացի ընթացքում գնումների պլանով նախատեսված գնման ընթացակարգը փոխարինվել է բանակցային ընթացակարգով՝ առանց հայտարարությունը նախապես հրապարակելու: Գնումը կատարվել է հրատապության հիմքով:

Գնման գործընթացի ընթացքում գնումների պլանով նախատեսված գնման ընթացակարգը փոխարինվել է բանակցային ընթացակարգով՝ առանց հայտարարությունը նախապես հրապարակելու

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-206-Ն) 20-րդ հոդվածի, 5-րդ մասի, 2-րդ կետի պահանջի հետ, որով սահմանվում է. «Բանակցային ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, եթե ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ իրավիճակից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել»:

➢ Նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրատուի կողմից, ըստ էության, կազմվել են 2017թ. ընթացքում, որոնցում բացակայել են հաստատման ամսաթվերը, մասնավորապես՝ օրը և ամիսը: Գնման գործընթացի որ փուլում են հաստատվել դրանք, պարզ չէ: Հիմք ընդունելով

Նախագծանախահաշվային փաստաթղթերում բացակայել են հաստատման ամսաթվերը, մասնավորապես՝ օրը և ամիսը

նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացությունների ամսաթվերը («Անուշ-Բջնի» ՕԳ՝ 17.03.2017թ., «Շահումյան-2-Էջմիածին» ՕԳ՝ 18.04.2017թ.)՝ դրանք կազմվել են ավելի ուշ՝ աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցները նախատեսվելուց հետո, քանի որ այդ ծախսերը նախատեսված են եղել 2017թ. գործարար ծրագրով և տարվա սկզբում հրապարակված գնումների պլանով:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-206-Ն) 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի հետ, որով սահմանվում է. «Շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա, առանց նախագծային փաստաթղթերի առկայության շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվել չեն կարող, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»:

- Հիմք ընդունելով էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարի մասնագիտական քննության արդյունքներով կազմված համապատասխան արձանագրությունները՝ «Շահումյան-2» 110կՎ ՕԳ-ի հատվածում պատահարի առաջացման և դրա հետևանքների վերացման ժամանակահատված է գրանցվել 20.01.2017թ.-28.01.2017թ., 110կՎ «Էջմիածին» ՕԳ-ի հատվածում՝ 24.01.2017թ.-25.01.2017թ., «Անուշ-Բջնի» ՕԳ-ի հատվածում՝ 20.01.2017թ.-30.01.2017թ.: Ստուգման ընթացքում պարզվեց, որ հրատապության հիմքով աշխատանքներն իրականացվել են տասնհինգ օրացուցային օրը գերազանցող ժամանակահատվածում՝ հիմք ընդունելով

Հրատապության հիմքով աշխատանքներն իրականացվել են տասնհինգ օրացուցային օրը գերազանցող ժամանակահատվածում

  - «Բիգ էներգո» ՍՊԸ-ի կողմից պատվիրատուին դուրս գրած հարկային հաշիվների մատակարարման ամսաթվերը՝ 04.04.2017թ., 08.05.2017թ.,
  - ենթակապալային աշխատանքներ իրականացրած «Ապարանի ԷՑՇ» ԲԲԸ կողմից «Բիգ էներգո» ՍՊԸ-ին դուրս գրած հարկային հաշիվների մատակարարման ամսաթվերը՝ 03.04.2017թ., 05.05.2017թ.,
  - «Բիգ էներգո» ՍՊԸ-ի և «Ապարանի ԷՑՇ» ԲԲԸ-ի միջև հաստատված շինմոնտաժային աշխատանքների հանձնման-ընդունման ակտերի ամսաթվերը՝ 03.04.2017թ., 05.05.2017թ.,
  - ընկերության տեխնիկական տնօրենի կողմից տրված կարգադրությունները, համապատասխան մասնագիտական խմբի կողմից կազմված արձանագրությունները՝ 12.04.2017թ., 14.03.2017թ.:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերության պահանջի հետ, համաձայն որի հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝ պայմանագրի կատարման արդյունքն ամբողջ ծավալով ընդունվի գնման պահանջի ծագման օրվանից հաշված մինչև տասնհինգ օրացուցային օրվա ընթացքում, պայմանով, որ հրատապ համարվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

- Պայմանագրերում, որոնք կնքվել են աշխատանքները կատարվելուց հետո, ենթակապալային աշխատանքներ սահմանված չեն եղել: Ստուգման ընթացքում պարզվեց, որ Շահումյան-2-էջմիածին 110 կվ ՕԳ-ի թիվ 100/1, 97/4 և Անուշ-Բջնի 110 կվ ՕԳ-ի թիվ 1-3 խարիսխային հենարանների հատվածում վթարի վերացման աշխատանքներն ամբողջ ծավալով իրականացվել են «Բիգ Էներգո» ՍՊԸ-ի ենթակապալը հանդիսացող «Ապարանի ԷՑՇ» ԲԲԸ-ի կողմից:

Նշված փաստի մասով արձանագրվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի հետ, համաձայն որի, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Ստուգման ընթացքում պարզվեց, որ «Ապարանի ԷՑՇ» ԲԲԸ-ը ենթակապալային աշխատանքների դիմաց «Բիգ Էներգո» ՍՊԸ-ին դուրս է գրել 81,598,168.0 ՀՀ դրամի չափով հարկային հաշիվ: «Շահումյան-2-էջմիածին» 110 կվ ՕԳ-ի թիվ 100/1, 97/4 և «Անուշ-Բջնի» 110 կվ ՕԳ-ի թիվ 1-3 խարիսխային հենարանների հատվածում վթարի վերացման աշխատանքների ձեռք բերման համար «Բիգ Էներգո» ՍՊԸ-ի հետ կնքված ԲԷՑ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/61, ԲԷՑ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/44, ԲԷՑ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/47 (ընտրանքում չներառված) պայմանագրերի ընդհանուր գումարը կազմել է 95,517,521.0 ՀՀ դրամ: Ենթակապալային աշխատանքների հետ տարբերությունը կազմել է 13,919,353.0 ՀՀ դրամ:
- Հատկանշական է, որ ԲԷՑ-ի Հարավային մասնաճյուղի տնօրենը նախկինում եղել է «Բիգ Էներգո» ՍՊԸ–ի փոխտնօրենը, բացի այդ նշված պաշտոնատար

անձը, որը հետագայում է դարձել է ԲԷՑ-ի տնօրեն, հանդիսանում է մեկ այլ կազմակերպության հիմնադիր, որի տնօրենն իր հերթին հանդիսանում է «Բիգ Էներգո» ՍՊԸ–ի հիմնադիր: Ընդ որում, նշված պաշտոնատար անձի ընտանիքի անդամը «Բիգ Էներգո» ՍՊԸ–ի հիմնադիրի հետ գտնվում է ազգակցական կապի մեջ:

էլեկտրական սարքերի և պահեստամասերի ձեռքբերման վերաբերյալ

Գնման առարկա՝ փոխակերպիչ կոմուտացիոն բլոկ STS 207-230HV, Repeater RD 48 LV, Repeater RD 48 HV
Պայմանագիր՝ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-17/18, 16.05.2017թ.
Պայմանագրի կողմ՝ «Զավեն Եղիազարյան Սերյոժայի» ԱՁ
Պայմանագրի գին՝ 6,975,000.0 ՀՀ դրամ
Պայմանագրով նախատեսված և փաստացի ձեռք բերված էլեկտրական սարքերի քանակ՝ փոխակերպիչ կոմուտացիոն բլոկ STS 207-230 HV՝ 1 հատ, Repeater RD 48 LV՝ 5 հատ, Repeater RD 48 HV՝ 5 հատ
Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետ՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր

Անհամապատասխանություններ

- Հրապարակված հրավերում կատարվել է փոփոխություն, որը վերաբերել է անգործության ժամկետի փոփոխությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-206-Ն) 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2 կետի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

- Հիմք ընդունելով պայմանագրի կատարման արդյունքներով հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը՝ ապրանքները մատակարարվել են 11 օր ուշացումով, մասնավորապես՝ 26.07.2017թ., որի պարագայում պատվիրատուն մատակարարից պետք է գանձեր 767,250.0 ՀՀ դրամի տույժ:

Ապրանքները մատակարարվել են 11 օր ուշացումով, պետք է գանձվեր 767,250.0 ՀՀ դրամի տույժ

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 16.05.2017թ.: Գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր: Պայմանագրի կատարման վերջնաժամկետն է եղել 15.07.2017թ.:

Պայմանագրի 7.2 կետով սահմանվել է. «Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 1% չափով»:

Հանձնման-ընդունման արձանագրության ձևաչափը, չի պահպանվել

➢ Հանձնման-ընդունման արձանագրության ձևաչափը, որը նախատեսված է եղել պայմանագրի հավելված 3-ով, չի պահպանվել: Պայմանագրի կատարման արդյունքներով հաստատված արձանագրության բովանդակությունը չի ապահովել պայմանագրով նախատեսված և փաստացի ձեռք բերված էլեկտրական սարքերի տեխնիկական բնութագրերի համադրելիությունը: Պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող անհրաժեշտ վավերապայմաններ չեն լրացվել, որոնցից են եղել տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը, պայմանագրի գնման ժամանակացույցով սահմանված քանակական ցուցանիշը և կատարման ժամկետը: Չեն լրացվել նաև հանձնման-ընդունման արձանագրության ձևաչափով պահանջվող այլ կարևոր վավերապայմաններ:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

➢ Հիմք ընդունելով ԲԷՑ-ի հաշվապահական համակարգից ստացված տվյալները՝ ձեռք բերված թվով 11 էլեկտրական սարքերից շահագործման մեջ գտնվում է Repeater RD 48LV տեսակի ընդամենը 3 էլեկտրական սարք: Արևմտյան մասնաճյուղում հաշվառված STS 207-230HV տեսակի թվով 1 փոխակերպիչ կոմուտացիոն բլոկը, Հյուսիսային մասնաճյուղում հաշվառված Repeater RD 48HV տեսակի թվով 5 և Repeater RD 48LV տեսակի թվով 2 էլեկտրական սարքերը շահագործման մեջ չեն դրվել: Ստուգման օբյեկտի կողմից տրամադրված՝ գնման առարկային առնչվող համապատասխան փաստաթղթերը բավարար կերպով չեն հիմնավորել էլեկտրական սարքերի նախատեսված քանակով գնման պահանջի անհրաժեշտությունը:

ԲԷՑ-ՊԸԾՁԲ-17/11 պայմանագրով կատարված գնման վերաբերյալ

ԲԷՑ-ի վարկային ծրագրերի իրականացման և վերահսկման վարչության պետի տեղակալը 14.03.2017թ. զեկուցագրով (Մուտք 15.03.2017թ. N784) դիմել է ընկերության գլխավոր տնօրենին՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Սյունիքի և Կապանի անտառտնտեսություններում և «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիկ» ազգային պարկի տարածքում էլեկտրահաղորդման գծի և ենթակայանի կառուցման ծրագրի շրջանակներում հենարանների մոտեցման ճանապարհների կառուցման համար ծառահատումների ծառայության մատուցման մրցույթ կազմակերպելու համար:

Գնման մրցույթը կազմակերպվել է պարզեցված ընթացակարգով: Մրցույթի կազմակերպման և անցկացման համար ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի 28.03.2017թ. 39-Լ հրամանով կազմավորվել է հանձնաժողով: Ըստ ԲԷՑ-ի ներկայացրած փաստաթղթերի՝ մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ «Էներգո ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ն, որն էլ մրցույթի ընտրված մասնակից է համարվել գնման ենթակա երկու չափաբաժնի աշխատանքների համար՝ 12,752,800.0 ՀՀ դրամ գնային առաջարկով: Մրցույթի կազմակերպման և ընթացակարգի գնահատման գործընթացն իրականացնելիս հանձնաժողովը 10.04.2017թ. երկրորդ ժողովի արձանագրությամբ հաստատել է, որ մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

22.05.2017թ. ԲԷՑ-ը «Էներգո ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ի հետ կնքել է անտառահատման ծառայությունների մատուցման ԲԵՑ-ԲԸԾՁԲ 17/11 պայմանագիրը: Պայմանագրի գործունեության ժամկետ սահմանվել է 30 օր:

Գնման հայտում ընդգրկվել են հետևյալ աշխատանքները՝

1.Սյունիքի անտառտնտեսությունում իրականացնել 2.5 հա մակերեսի վրա անտառհատում, որի արդյունքում պետք է առաջանար 80.5 խմ բնափայտ,

2.Կապանի անտառտնտեսությունում իրականացնել 4.24 հա համակերեսի վրա անտառհատում, որի արդյունքում պետք է առաջանար 476.53 խմ բնափայտ,

3. «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «ԱՐԵԻԿ» ազգային պարկի տարածքում իրականացնել 2.13 հա համակերեսի վրա անտառհատում, որի արդյունքում պետք է առաջանար 98.13 խմ բնափայտ:

Աշխատանքները կատարելիս «Էներգո ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ն պետք է իրականացներ առաջացած շինափայտի, տեխնոլոգիական փայտի, սաղարթի առանձնացում և հատման տեղից հեռացում, մոտեցում անտառմիջյան ճանապարհներին, վառելափայտի և շինփայտի տեղափոխում պահեստ: Ընդ որում ընկերությունը, եռօրյա պարբերությամբ, պետք է պատվիրատուին ներկայացներ տեղեկատվություն կատարված աշխատանքի վերաբերյալ՝ վերստուգելով դրա

իսկությունը, կտրված բնափայտի ծավալները (խ/մ) պետք է համընկնեն գույքագրման արձանագրությամբ որոշված ծավալներին:

Համաձայն 20.06.2017թ. «Պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ» ակտի «Էներգո ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ն իրականացրել է անտառահատում միայն 2.5 հա մակերեսի վրա, իսկ 16.06.2017թ. հանձնման-ընդունման արձանագրության՝ 2.5 հա տարածքում ծառահատման արդյունքում առաջացած 41 մետր խորանարդ վառելափայտը պահեստավորվել է ԲԷՑ-ի «Գորիս» մասնաճյուղում:

03.11.2017թ. ԲԷՑ-ը կատարված աշխատանքի դիմաց «Էներգո ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ին վճարել է 3,980,267.0 ՀՀ դրամ:

ԲԵՑ-ԲԸԾՁԲ 17/11 պայմանագրի՝ 20.06.2017թ. կնքված N01 համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետը կասեցվել է մինչև անտառահատվող հատվածների ճանապարհների վերջնական նախագծման ավարտը:

Անհամապատասխանություններ

- Բացակայում են ընդհանուր նշանակության և հատուկ նշանակության անտառային հողերի օգտագործման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը, անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման վերաբերյալ ծրագիր (այսուհետ՝ ծրագիր), որը ներառում է օգտագործման տրամադրվող անտառային տարածքի առնվազն կրկնապատիկի չափով անտառապատման աշխատանքների իրականացման նախագիծը և անտառապատման ժամանակացույցը:
- ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1045-Ն որոշմամբ նշված փաստաթղթերը ԲԷՑ-ի կողմից հաշվեքննության ընթացքում չներկայացվեցին:

Կատարված 2.5 հա անտառահատման դիմաց անտառօգտագործման հետևանքով անտառներին և անտառային հողերին պատճառված վնասի վերականգնման աշխատանքներ չեն իրականացվել

- 2017թ. կատարված 2.5 հա անտառահատման դիմաց անտառօգտագործ-ման հետևանքով անտառներին և անտառային հողերին պատճառված վնասի վերականգնման աշխատանքներ 30.09.2018թ. դրությամբ չեն իրականացվել:
- ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի առանց ժամանակային թվագրման գրությամբ հաստատված գնման հրավերով սահմանված են գնման առարկայի բնութագիրը և տեխնիկական առաջադրանքը, որոնց «այլ պայմաններ» մասում, որպես կատարման վայր, նշված են միայն Սյունիքի և Կապանի անտառտնտեսությունները, իսկ «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիկ» ազգային պարկի մասին նշումը բացակայում է:

- Մրցույթի փաստաթղթերն ուսումնասիրելիս պարզվեց, որ հարկային մարմնի կողմից 12.04.2017թ. ներկայացված եզրակացությունում ժամկետանց հարկային պարտավորությունների սյունակում տեղեկությունը բացակայում է, որը չի կարող միանշանակ համարվել տվյալ պահին հարկային չկատարված պարտավորության բացակայություն, եզրակացությամբ բացակայում են նաև նախորդ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքի մասին տեղեկությունները: Ընդ որում, հարկային մարմինների տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «Էներգո ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ն, որը հանդիսանում է շրջանառության հարկ վճարող, 21.04.2017թ. դրությամբ ունեցել է 1,945,341.0 ՀՀ դրամ չվճարված հարկային պարտավորություն:
- «Էներգո ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից, որպես նախկինում նմանատիպ աշխատանքներ անհրաժեշտ ծավալով կատարված լինելու փաստը հաստատող փաստաթղթեր, ներկայացվել է անտառահատում իրականացնելու վերաբերյալ «Հույսի ապավեն» ՍՊԸ-ի հետ 18.01.2017թ. կնքված Ա-1067/16 պայմանագիրը և այդ պայմանագրով կատարված աշխատանքների 22.03.2017թ. հանձնման-ընդունման ակտը: Պայմանագրով սահմանված 5,880,000.0 ՀՀ դրամ արժեքը և պայմանագրով կատարված աշխատանքների հանձնման-ընդունման 22.03.2017թ. ակտում նշված աշխատանքների կատարման արժեքը՝ 7.840.000.0 ՀՀ դրամ, իրար չեն համապատասխանում: Ընդ որում, եթե նախորդ նմանատիպ աշխատանքների պայմանագրի գինը կազմում է 5,880,000.0 ՀՀ դրամ, ապա այն պակաս է մասնակցի առաջարկած 12,752,800.0 ՀՀ դրամ գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Պայմանագրով սահմանված 5,880,000 ՀՀ դրամ արժեքը և պայմանագրով կատարված աշխատանքների հանձնման-ընդունման նշված արժեքը՝ 7.840.000 ՀՀ դրամ, իրար չեն համապատասխանում

- Անտառահատում իրականացնելու համար «Էներգո ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ի տեխնիկական միջոցների, աշխատանքային ռեսուրսների առկայությունը հաստատող փաստաթղթերը ԲԷՑ-ի կողմից չի ներկայացվել:
- Պահեստ է հանձնվել մոտ 40խմ պակաս բնափայտ քան նախատեսված է գնման հայտում:

Պահեստ է հանձնվել մոտ 40խմ պակաս բնափայտ

- 30.09.2018թ. դրությամբ ԲԵՑ-ԲԸԾՁԲ 17/11 պայմանագրի մնացած մասի կատարման աշխատանքները վերսկսված չեն: Հատված անտառի վերաճի արդյունքում արդեն կատարված աշխատանքն արդյունավետ չի լինի:

- 30.09.2018թ. դրությամբ ԲԷՑ-ի կողմից պայմանագրի կատարման համար խոչընդոտ հանդիսացած հանգամանքների կապակցությամբ պատճառված վնասների փոխհատուցման համար որևէ գործողություն չի ձեռնարկել:

Սպուգմամբ արձանագրված այլ փաստեր

- ԲԷՑ-ի կողմից չի կանխատեսվել և չի կանխվել այն խնդիրներն ու պատճառները, որոնց հետևանքով գնված աշխատանքների կատարումը անավարտ է մնացել: Մասնավորապես, «Սանիր» ընկերությունն անտառհատման տարածքներում մոտեցման ճանապարհներ չի կառուցել, տեղանքի ռելիեֆի բարդությանը համապատասխան չի նախատեսվել հենարանների մոտեցման ճանապարհների կիրառելի տարբերակները:

ԲԵՑ-ԲԸԾՁԲ 17/05 պայմանագրով կատարված գնման վերաբերյալ

02.05.2017թ. ԲԷՑ-ը կնքել է «Արմ-Դավ» ՍՊԸ-ի հետ ծառայությունների մատուցման ԲԵՑ-ԲԸԾՁԲ 17/05 պայմանագիրը: Պայմանագրի գործունեության ժամկետ սահմանված է երկու տարի:

Մաքսային բրոքերային ծառայություններ մատուցելու պայմանագիր կնքելու մրցույթի վերաբերյալ ԲԷՑ-ը 01.03.2017թ. հրապարակել է հայտարարություն, որում կատարվել է փոփոխություն 03.03.2017թ.: Փոփոխությունը վերաբերել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված նոր ձևաչափով հայտ ներկայացնելուն:

Մրցույթին մասնակցելու հայտի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 13.04.2017թ. ժամը 15:00-ն: Մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել երկու սուբյեկտ՝ «ԴԻ ՋԻ ՔՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ-ն ՝ 13.04.2017թ. 13:35-ին, և «Արմ-Դավ» ՍՊԸ-ն՝ 13.04.2017թ. 14:59-ին:

ԲԷՑ-ի տնօրենի 28.02.2017թ.-ի N27-Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի՝ 03.03.2017թ. ժամը 15:00-ի նիստին մասնակցել է հանձնաժողովի 4 անդամ, իսկ 13.04.2017թ. ժամը 15:00-ի մրցույթի արդյունքները ամփոփող նիստին՝ 3 անդամ:

ԲԷՑ-ի տնօրենի 28.02.2017թ.-ի N27-Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովը 2017 թվականի ապրիլի 13-ին, ժամը 15:00-ին (հաղթող մասնակցի կողմից հայտի փաթեթը ներկայացնելուց մեկ րոպե հետո) կայացած: Հանձնաժողովը որոշել է գնման մրցույթի հաղթող ճանաչել «Արմ-Դավ» ՍՊԸ-ին և վերջինիս հետ կնքել է ծառայության մատուցման պայմանագիր:

ԲԷՑ-ի 2017թ. գնումների պլանով նախատեսված է «մաքսային բրոքերային ծառայության ստացում»:Գնումների մրցույթի արդյունքում հաղթող մասնակցի հետ պայմանագիր է կնքվել երկու տարի ժամկետով՝ մինչև 05.05.2019թ.:

Անհամապատասխանություններ

Գնման մրցույթի արձանագրության մեջ բացակայում է գնման անհրաժեշտության և գնման ձևի ընտրության հիմնավորումը

➢ Գնման մրցույթի արձանագրության մեջ բացակայում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով տեղեկությունը՝ սահմանված գնման անհրաժեշտության և գնման ձևի ընտրության հիմնավորումը:

➢ Մրցույթի հայտը և կից փաստաթղթերը կազմված են «մաքսային բրոքերային ծառայություններ մատուցելու» գնում կազմակերպելու համար: Մինչդեռ նման անվանումով գործառույթ մաքսային ոլորտը կարգավորող գործող հիմնական իրավական ակտերում սահմանված չէ: Բովանդակային առումով նման ծառայություն կարող է մատուցել մաքսային ներկայացուցիչը՝ իր համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով:

➢ Մրցույթի հայտի փաթեթում պայմանագրի հավելվածի նախագծում սահմանված է «մաքսային բրոքերի ծառայության իրականացման տեխնիկական բնութագիր», որտեղ, որպես ծառայության նկարագիր, նշված են օդային, ցամաքային տրանսպորտով, փոստային ծառայության միջոցով ներմուծվող և արտահանվող բեռների, ինչպես նաև էլեկտրաէներգիայի ներկրման և արտահանման «մաքսային բրոքերի ծառայության նկարագրի» բաղկացուցիչ մանրամասները: Համաձայն «ծառայության նկարագրի»՝ այն իրենից ներկայացնում է «բեռի մաքսային զննում, ձևակերպում, բացթողում, ծածկագրի ձևակերպում» բաղկացուցիչների ամբողջություն: ԵՏՄ մաքսային օրենսգրքով, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով նշված գործառույթների իրականացման իրավասությունները վերապահված են մաքսային մարմիններին և կարող են իրականացվել միայն նրանց կողմից: Նշված գործառույթները որևէ կերպ չեն կարող, որպես այդպիսին, դիտվել մաքսային ներկայացուցչի կողմից մատուցվող ծառայություններ:

➢ Մաքսային ներկայացուցչի աշխատակիցները, ըստ մաքսային գործը կանոնակարգող իրավանորմերի, կարող են մատուցել ապրանքների մաքսային հայտարարագրերի (համապատասխան սյունակների) լրացման, էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարագիրը մաքսային հսկողության ներկայացման գործողություններ կատարելու ծառայություններ,

մաքսային վճարումներ կատարելիս, մաքսային զննում իրականացնելիս հանդես գալ որպես հայտարարատուի ներկայացուցիչ: Նշված գործողությունները, բովանդակային և իրավազորության առումով, բոլորովին այլ՝ պայմանագրի հավելվածում «մաքսային բրոքերի ծառայության նկարագրի» հատվածում շարադրված գործառույթներից տարբերվող, իրավական նշանակության գործողություններ են:

- Կնքված պայմանագրի 3 (Հանձնման–ընդունման արձանագրություն) և 3.1 հավելվածներում (Պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ) «ծառայության անվանումը» սյունակում նշված է «Մաքսային միջնորդական ծառայություն» եզրույթը, որը, որպես մատուցվելիք ծառայություն, սահմանված կամ նախատեսված չէ ոչ մրցույթի պայմաններում, ոչ կնքված պայմանագրի առարկան սահմանող հավելվածում և ոչ էլ օրենսդրությամբ:
- Սույն դեպքով չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված են գնման առարկայի նկարագրության համար սահմանված դրույթները:
- Մրցույթի ներկայացված կնքվելիք պայմանագրի նախագծի որոշ կետեր ընդհանրապես, իսկ որոշ կետերում սահմանված դրույթները չեն համընկնում:

Արձանագրությունում որպես կնքված պայմանագրի գին նշված է 172,387,000 **ՀՀ դրամ: Մինչդեռ պայմանագիրը կնքված է** 109,200,000 **դրամի չափով**

- Արձանագրության 4-րդ կետի աղյուսակում որպես կնքված պայմանագրի գին նշված է 172,387,000.0 ՀՀ դրամ: Մինչդեռ պայմանագիրը կնքված է 109,200,000.0 դրամի չափով:
- Մրցույթի հաղթողի հետ պայմանագիր կնքելիս ԲԷՑ-ի կողմից չի պահանջվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված պայմանագրի ապահովումը: Մինչդեռ պայմանագրի առարկան այնպիսի ծառայության մատուցումն է, որն անհաղթահարելի ուժի առկայության փաստից տարբերվող որևէ պատճառով չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ԲԷՑ-ի համար կստեղծի մաքսային կանոնների, իրականացվող ծրագրերով պայմանագրային պարտավորությունների խախտումների և դրանց հետ կապված չնախատեսված ծախսեր կատարելու իրավիճակներ:

Մրցույթի հաղթողի հետ պայմանագիր կնքելիս ԲԷՑ-ի կողմից չի պահանջվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35**-րդ հոդվածով սահմանված պայմանագրի ապահովումը**

- Մրցույթին մասնակցելու համար, ի թիվս այլ փաստաթղթերի, «Արմ-Դավ» ՍՊԸ-ն ներկայացրել է բաց ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների

համապատասխանության մասին (Հավելված 2 «ԲԷՑ_ԲԸԾՁԲ-17/05» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի) հայտարարություն:

- Համաձայն Հավելված 2-ի ներկայացված հայտարարության՝ հայտ ներկայացնելու պահին «Արմ-Դավ» ՍՊԸ-ն չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և սոցիալական ապահովության վճարների գծով:
- Հայտարարության մեջ բացակայում է տեղեկություն օրենքում սահմանված ժամկետում մրցույթի մասնակցի ներկայացուցչի՝ ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության համար դատապարտված լինելու կամ չլինելու մասին, օրենքով սահմանված կարգով կայացված՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար անբողոքարկելի վարչական ակտի առկայության մասին:
- Մրցույթին մասնակցելու համար, ի թիվս այլ փաստաթղթերի, «Արմ-Դավ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին (Հավելված 3.1. «ԲԷՑ_ԲԸԾՁԲ-17/05» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի):
- «Արմ-Դավ» ՍՊԸ-ի կողմից «ԲԷՑ_ԲԸԾՁԲ-17/05» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի Հավելված 3.1.-ում ներկայացված է տեղեկություն առ այն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում ընկերությունը իրականացրել է մաքսային բրոքերային ծառայության մատուցում՝ 145,815,000.0 ՀՀ դրամի չափով, ընդ որում դրա շրջանակներում առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը, գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի (109,200,000.0 ՀՀ դրամ) քսան տոկոսից: Որպես հիմնավորում «Արմ-Դավ» ՍՊԸ-ն ներկայացրել է «Արմ-Դավ» ՍՊԸ-ի և «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի միջև 18.04.2017թ. (մրցույթում հաղթող ճանաչվելու օրվանից՝ 13.04.2017թ.), հինգ օր հետո, կնքված 60,000,000.0 ՀՀ դրամի մաքսային բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր: Պայմանագիրի վերջնաժանկետ է սահմանված 18.04.2019թ.:

Գնահատող հանձնաժողովը անտեսել է, որ հայտ ներկայացնելու պահին մրցույթին մասնակցելու պայմանի առկայությունը հավաստող փաստաթուղթը գոյություն չի ունեցել

- ԲԷՑ-ի 28.02.2017թ.-ի N27-Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովը ոչ միայն անտեսել է, որ հայտ ներկայացնելու պահին մրցույթին մասնակցելու պայմանի առկայությունը հավաստող փաստաթուղթը գոյություն չի ունեցել, այլև հաշվի չի առել, որ մրցույթի նշված պայմանը՝ «հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում մատուցված մաքսային բրոքերային ծառայության շրջանակներում առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը, գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի (109,200,000.0 ՀՀ դրամ) քսան տոկոսից», առկա չէ: Այսինքն, գնային առաջարկի քսան տոկոսից ոչ պակաս ծառայությունը պետք է արդեն մատուցված լիներ մասնակցի կողմից՝ մինչև մրցույթով հայտ ներկայացնելու պահը: Ընդ որում, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 5-րդ մասի, կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի, ծառայությունները մատուցված լինելը պետք է հաստատվի որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերով (նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճեններ, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը): Այդ ծառայությունները մատուցված, իսկ դրա արդյունքը (պատշաճ կատարումը)՝ հանձնված և ընդունված են համարվում կողմերի միջև հաշիվը ստորագրելու և հաստատվելու պահից՝ համաձայն ՀՀ օրենսդրության և պայմանագրի 1.5 կետի:
- Ելնելով վերոգրյալից, հետևում է, որ մրցույթի հաղթող ճանաչված «Արմ-Դավ» ՍՊԸ-ն մրցույթին ներկայացրել է ոչ ճիշտ տեղեկություն և չի ներկայացրել մրցույթի պայմանով սահմանված տեղեկությունը հաստատող փաստաթղթեր: Առկա է անհամապատասխանություն մրցույթի հրավերի՝ 2.ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԻ 2.3-րդ կետի 2-րդ պարբերության 2) ենթակետի պայմանների հետ: Հետևաբար «Արմ-Դավ» ՍՊԸ-ի ներկայացված երաշխիքային գումարը ենթակա էր (ենթակա է) գանձման հօգուտ ԲԷՑ-ի՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

Մրցույթի հաղթող ճանաչված «Արմ-Դավ» ՍՊԸ-ն մրցույթին ներկայացրել է ոչ ճիշտ տեղեկություն և չի ներկայացրել մրցույթի պայմանով սահմանված տեղեկությունը հաստատող փաստաթղթեր

- Մրցույթի հրավերի Հավելված 3.6-ի ձևաչափով ներկայացված հայտարարության համաձայն՝ հայտ ներկայացնելու պահին «Արմ-Դավ» ՍՊԸ-ն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ: Նշված հավելվածին կից ներկայացվել է մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման վկայական ունեցող հինգ անձանց վկայականներ (անձանց անուն ազգանունները, մաքսային ձևակերպումների մասնագետի վկայականների համարները կից ցուցակում): Քանի որ ներկայացված չեն, թե ինչ պաշտոններ են նրանք զբաղեցնում ընկերությունում նշված անձիք, հետևաբար հարց է առաջանում, թե ինչպես մրցույթի կազմակերպիչները կարող էին հավաստիանալ, որ նշված անձինք ինչ իրավական հիմքով են հանդիսանում «Արմ-Դավ» ՍՊԸ-ի, որպես մաքսային ներկայացուցչի, անունից մաքսային ձևակերպումներ իրականացնողներ:
- Մրցույթի անցկացման կարգի հաջորդ անհամապատասխանությունը վերաբերվում է «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշման 47 և 48 կետերի պահանջների կիրառմանը: Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 20.04.2017թ.-ից ոչ շուտ (մրցույթի արդյունքներն ամփոփող մրցութային հանձնաժողովի նիստերից հետո) տրամադրված տեղեկանքի համաձայն «Արմ-Դավ» ՍՊԸ-ն հայտի ներկայացման օրվա դրությամբ առկա է 95,806.0 դրամի հարկային ժամկետանց պարտավորություն, մրցույթի հայտով «Արմ-Դավ» ՍՊԸ-ի ներկայացրած շրջանառության տվյալից տարբերվող տվյալ: ՊԵԿ-ի տեղեկանքում բացակայում են նշված ՍՊԸ-ի պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռի վերաբերյալ տվյալները: Այսինքն, անտեսելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ կետի հոդվածների և «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշման 47 և 48 կետերի պահանջները, մրցութային հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել մրցույթի մասնակցության պայմանները չբավարարող ընկերությունը: Ընդ որում, համաձայն «Արմ-Դավ» ՍՊԸ-ի 2017թ. գանձապետական հաշիվներին փոխանցված գումարների ուսումնասիրությունից պարզվում է, որ 2017թ. օգոստոսին «Արմ-Դավ» ՍՊԸ-ն բյուջե է փոխանցել 115,000.0 դրամ շրջանառության հարկի գումար: Տվյալ տարվա մայիս ամսից որպես ԱԱՀ վճարող հանդիսացող սուբյեկտի կողմից շրջանառության հարկի գումար փոխանցելը (առկա է 2017թ. օգոստոսին շրջ. հարկի վճարման մասին տվյալ՝ 115,000.0 դրամ) նշանակում է, որ վերջինս

Մրցութային հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել մրցույթի մասնակցության պայմանները չբավարարող ընկերությունը

ունեցել է չվճարված հարկային պարտավորություն, մրցույթին մասնակցելու օրվա դրությամբ՝ 50,000.0 դրամը գերազանցող գումարի՝ 115,000.0 դրամի չափով: Եթե դա նախկին ապառք է, ապա հարկային պարտքն առկա է եղել մրցույթին մասնակցելիս, եթե ընթացիկ հարկային վճարում է, ապա ինչպես է այն կատարել ԱԱՀ վճարողը: Նշված փաստը հակասում է ոչ միայն մրցութային հանձնաժողովի հարցման կապակցությամբ հարկային մարմնի ներկայացրած տեղեկանքին առ այն, որ հարցման պահին առկա ընկերության չվճարված պարտավորություն 95,000.0 դրամի չափով, այլև հարկային տեղեկանքի ներկայացման օրից 11 օր հետո լրացուցիչ ներկայացված ՀՀ ԿԱ Արաբկիրի հարկային տեսչության տեղեկանքում արտացոլված տեղեկությանը, համաձայն որի, ներառյալ ներկայացված հաշվետվությունների (նշված չէ, թե երբ ներկայացված հաշվետվությունների) «Արմ-Դավ» ՍՊԸ-ն 13.04.2017թ. դրությամբ, ունի հարկատեսակների գծով ընդհանուր 1,517,145.0 դրամի չափով գերավճար:

- Բացի այս, անհամապատասխանություն է առկա նաև մրցույթի պայմանների և պայմանագրի պայմանների միջև:
- Մրցույթի հայտում, պայմանագրի N1 հավելվածում, սահմանված է նկարագիրը, քանակը, որոնցից ելնելով մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեին իրենց գնային առաջարկները: Այսինքն, մրցույթի մասնակիցը պետք է առաջարկեր ծառայություն մատուցելու այն գինը, որի շրջանակներում, երկու տարվա ընթացքում, պետք է իրականացներ հավելվածի նախագծում նկարագրված ծառայությունները՝ նշված քանակով: Մինչդեռ, գնային առաջարկները ներկայացնելուց հետո, մրցույթի հաղթող կազմակերպության հետ կնքված պայմանագրին կից հավելվածում սահմանված է ծառայությունների մատուցման քանակական և գնային սկզբունքորեն բոլորովին այլ հաշվարկ: Կնքված պայմանագրի հավելվածում սահմանված է, թե նշված ծառայություններից յուրաքանչյուր մեկ դեպքով ինչ կարժենա մատուցվող ծառայությունը, իսկ հավելվածի նախագծում նշված ծառայությունների՝ ըստ տեսակների քանակների նախատեսված տվյալները, որպես պայմանագրի պայման, բացակայում են: Ընդ որում, եթե հաշվարկվի մրցույթի հայտում պայմանագրի հավելվածում նշված ծառայությունների տեսակների հայտարարված քանակի և կնքված պայմանագրով սահմանված հաղթած գնային առաջարկի համապատասխան թվերի արտադրյալը, ապա ծառայության արժեքը կստացվի 149,378,000.0

Գնային առաջարկները ներկայացնելուց հետո, մրցույթի հաղթող կազմակերպության հետ կնքված պայմանագրին կից հավելվածում սահմանված է ծառայությունների մատուցման քանակական և գնային սկզբունքորեն բոլորովին այլ հաշվարկ

ՀՀ դրամ կնքված պայմանագրի 109,200,000.0 ՀՀ դրամ արժեքի փոխարեն: Ընդ որում, կնքված պայմանագրի 4.2 կետով սահմանված պայմանի համաձայն, աշխատանքի գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

Մինչդեռ տվյալ դեպքով, ըստ մրցույթի տրամաբանության և նպատակի, անհրաժեշտ էր մրցույթով հաղթած գնային առաջարկի թիվը համամասնորեն բաժանել պայմանագրի գործելու ժամանակահատվածում նախատեսված և մրցույթի պայմաններում նշված ծառայության ծավալ կազմող տվյալների վրա՝ ծառայությունների տեսակների մեկ միավորի գինը ամրագրելու, ըստ յուրաքանչյուր դեպքով մատուցված ծառայության փաստով վճարման հերթական չափը որոշելու համար: Ըստ պայմանագրով սահմանված առանձին ծառայությունների գների համամասնության, որպեսզի ընտրված մասնակցի առաջարկած մրցութային գինը բավարարեր նախատեսված քանակով մատուցված ծառայությունների համար վճարելու, դրանք պետք է պայմանագրով սահմանվեին համապատասխանաբար՝ 91,000.0 ՀՀ դրամ գնահատված ծառայությունը՝ 66,521.0 ՀՀ դրամ, 3,000.0 ՀՀ դրամ գնահատվածը՝ 2,193.0 ՀՀ դրամ, 50,000.0 ՀՀ դրամ գնահատվածը՝ 36,550.0 ՀՀ դրամ, 10,000.0 ՀՀ դրամ գնահատվածը՝ 7,310.0 ՀՀ դրամ: Ընդ որում, նույն ծառայությունը, որի պարագայում մատուցվելիք ծառայության առումով որևէ չափանիշի տարբերություն ըստ էության չկա, պայմանագրի նույն հավելվածի այլ մասերում սահմանված է էական տարբերվող գներով՝ 50,000.0 և 60,000.0 ՀՀ դրամ:

Նույն ծառայությունը, որի պարագայում մատուցվելիք ծառայության առումով որևէ չափանիշի տարբերություն ըստ էության չկա, պայմանագրի նույն հավելվածի այլ մասերում սահմանված է էական տարբերվող գներով՝ 50,000.0 և 60,000.0 ՀՀ դրամ

- Թե ով է հանդիսանում «Արմ-Դավ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Երևանից դուրս գտնվող վայրերում, օրինակ Մեղրիի մաքսային կետում, և ինչ աշխատանքային հարաբերություններ են սահմանված ներկայացուցչի և ընկերության միջև (առկա է աշխատանքային կամ այլ պայմանագիր), առկա է ընդհանրապես այդպիսի աշխատակից, կատարվել է արդյոք վերջինիս կողմից Մեղրիի մաքսակետում ներկայացուցչական անհրաժեշտ գործողություններ, որոնց համար կատարվել են վճարումներ՝ սույն հաշվեքննության շրջանակից դուրս է:
- Մրցույթով, ինչպես նաև կնքված պայմանագրով մատուցվելիք ծառայությունների նկարագիրը շարադրված է այնպես, որ առանձին բեռների մաքսային հսկողության ընթացակարգից ելնելով (կարմիր, դեղին, կանաչ ընթացակարգեր), անկախ դրա բաղադրիչների կատարման

անհրաժեշտությունից կամ կատարված չլինելու փաստից (զննում, բացթողում) գանձվում է նույն գումարն, ինչ որ ծառայության բաղկացուցիչն իրականում ամբողջապես կատարված լիներ: Մինչդեռ, ԲԷՑ-ի և «Արմ-Դավ» ՍՊԸ-ի կողմից կազմվել են մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրություններ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտեր, որոնցով արձանագրվել են, որ ծառայությունները իրենց ամբողջ բաղկացուցիչներով հանդերձ կատարվել են:

Ելնելով վերոգրյալից պետք է կիրառվի կողմերի միջև կնքված պայմանագրի 7.1 կետի դրույթը, որի հիման վրա միակողմանի լուծվի պայմանագիրը:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Կնքված պայմանագրի շրջանակներում, ԲԷՑ-ի կողմից ներմուծված և որպես մաքսային ներկայացուցիչ, «Արմ-Դավ» ՍՊԸ-ի կողմից հայտարարագրված ապրանքների մաքսային վճարների ուշ վճարման դեպքերով հաշվարկվել և վճարվել է մաքսային վճարների տույժեր: Մինչդեռ, համաձայն ԵՏՄ մաքսային օրենսգրքի 405 հոդվածի 4-րդ մասի, Մաքսային ներկայացուցչի կողմից մաքսային գործառնությունները հայտարարատուի անունից իրականացնելու դեպքում մաքսային ներկայացուցիչն այդ հայտարարատուի հետ մաքսատուրքերը և հարկերը վճարելու համապարտ պարտավորություն է կրում՝ կատարման ենթակա պարտավորության լրիվ չափով: Իսկ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մաքսային ներկայացուցիչը կրում է համապատասխան մաքսային ընթացակարգով հայտարարագրման ժամանակ նախատեսված մաքսատուրքը, հարկերը և այլ վճարները վճարելու պարտավորությունը, եթե մաքսային ներկայացուցչի և հայտարարատուի կամ նրա լիազորած անձի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Սույն դեպքով մաքսային ներկայացուցչի և հայտարարատուի կամ նրա լիազորած անձի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- ԲԷՑ-ի կողմից 2017-2019թթ. ընթացքում ընկերության կողմից ներմուծվող, արտահանվող ապրանքների մաքսային հայտարարագրումների, դրանց հետ կապված մաքսային այլ անհրաժեշտ ներկայացուցչական գործառույթներ իրականացնելու համար մաքսային բրոքերի ծառայությունների մատուցման գնումներ իրականացնելու գործառույթի արդյունավետության գնահատումը հաշվեքննության շրջանակից դուրս է:

Իրան-Հայաստան գազատարի առաջին (գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց) հատվածի վարձակալության պայմանագրի վերաբերյալ

20.07.2007 թվականին ԲԷՑ-ի և «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) միջև կնքվել է Իրան-Հայաստան գազատարի առաջին հատվածի (գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց հատվածի) առուվաճառքի նախնական պայմանագիր: Սույն պայմանագրի 3.2 կետով սահմանված է գործարքի կնքման սահմանային ժամկետ՝ մինչև 31.12.2007 թվականը: Պայմանագրով, որպես պարտավորությունների ապահովում, սահմանված է նախավճար:

Պայմանագրով սահմանված չի եղել հաշվարկ, որով պետք է վճարվի գազատարի ձեռք բերման համար: Այնուհետև կողմերի միջև պարբերաբար կնքվել են պայմանագրին կից լրացուցիչ թվով 12 համաձայնագրեր, որոնցով երկարաձգվել է գազատարի վաճառքի պայմանագրի կնքման սահմանային ժամկետը: Վերջին կնքված լրացուցիչ համաձայնագիրը կողմերի միջև ստորագրվել է 30.08.2018թ., որով գործարքի կնքման սահմանային ժամկետը երկարաձգվել է մինչև 31.03.2019թ.: Ընդ որում առուվաճառքի նախնական պայմանագրով գործարքի կնքման սահմանային ժամկետ սահմանված է 31.12.2007թ.:

ԲԷՑ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի («Հայռուսգազարդ» ՓԲԸ) միջև կնքված՝ Իրան-Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց հատվածի վարձակալության պայմանագրի, գազատարի ամորտիզացիոն մասհանումների հաշվարկների և այլ տեղեկությունների ուսումնասիրությունից պարզվել է հետևյալը՝

Իրան-Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց հատվածի վարձակալության պայմանագիրը ԲԷՑ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի («Հայռուսգազարդ» ՓԲԸ) միջև կնքվել է 12.05.2019թ.: Ի սկզբանե պայմանագիրը կողմերի միջև կնքվել է որպես փոխառության պայմանագիր, որտեղ ԲԷՑ-ը հանդիսանում է Փոխատու, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն՝ Փոխառու: Ընդ որում պայմանագրով նախատեսվում էր «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի իրավունքը՝ գազատարն անհատույց օգտագործման հանձնել «Տրանսգազ» ՍՊԸ-ին: 23.02.2010թ. կողմերը կնքել են լրացուցիչ համաձայնագիր, որով կողմերի կարգավիճակը փոխվում է՝ սահմանելով ԲԷՑ-ն՝ որպես Վարձատու, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն՝ Վարձակալ: Վարձակալության արժեքը պայմանագրով սահմանված է ամսական 4,140,000.0 դրամի չափով, այդ թվում՝ ԱԱՀ (3,450,000.0 դր.+ 690,000.0 դր.):

Համաձայն 23.02.2010թ. վերոհիշյալ համաձայնագրի, գազատարը կարող է ենթավարձակալությամբ հանձնվել «Տրանսգազ» ՍՊԸ-ին:

Իրան-Հայաստան գազատարի առաջին (գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց) հատվածի շինարարության շրջանակներում ԲԷՑ-ի կողմից «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծվել են գազատարի կառուցման համար խողովակներ և սարքավորումներ, որոնց ժամանակավոր ներմուծման ժամկետները երկարաձգվել են ՀՀ կառավարության 05.10.2006թ. թիվ 1430-Ա, 30.11.2006թ. թիվ 1700-Ա, 31.05.2007թ. թիվ 676-Ա որոշումներով: 15.03.2019թ. դրությամբ ԲԷՑ-ի կողմից տվյալ ապրանքների վերահայտարարագրման մասին այլ տեղեկատվություն չի տրամադրվել:

Անհամապատասխանություններ

- Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445 հոդվածի 6-րդ մասի՝ «Նախնական պայմանագրով նախատեսված պարտավորությունները դադարում են, եթե մինչև այն ժամկետի ավարտը, որում կողմերը պետք է կնքեին հիմնական պայմանագիրը, այն չի կնքվում, կամ կողմերից մեկը մյուսին առաջարկ չի ներկայացնում այդ պայմանագիրը կնքելու մասին»:
- Գազատարի առուվաճառքի նախնական պայմանագրով գործարքի կնքման սահմանային ժամկետը՝ 31.12.2007թ. է, իսկ նշված ժամկետը երկարաձգելու համաձայնագրերից առաջինը կնքվել է 28.04.2010թ.՝ ժամկետը լրանալուց, պայմանագրով կողմերի պարտավորությունների կամ պայմանագրի գործողության դադարման պահից երկու տարի չորս ամիս հետո:

Ժամկետը երկարաձգելու համաձայնագրերից առաջինը կնքվել է ժամկետը լրանալուց, պայմանագրով կողմերի պարտավորությունների կամ պայմանագրի գործողության դադարման պահից երկու տարի չորս ամիս հետո

- Գազատարի առուվաճառքի պայմանագիրը կնքելու համար ԲԷՑ-ը բաժնետիրոջ և գազատարի առուվաճառքի ժամկետի երկարացման համաձայնագրերը կնքելու համար ԲԷՑ-ի կառավարման խորհրդի որոշումներ առկա չեն:
- Գազատարի հաշվեկշռային արժեքը վաճառքի նախնական պայմանագիր կնքելու պահին կազմել է 15,915,856,702.0 ՀՀ դրամ, իսկ 30.09.2018թ. դրությամբ՝ 10,509,015,050.0 ՀՀ դրամ: Գազատարի վաճառքի պայմանագրի կնքման սահմանային ժամկետը երկարաձգելու վերաբերյալ կողմերի միջև պայմանագրին կից թվով 12 լրացուցիչ համաձայնագրերի կնքելու արդյունքում ԲԷՑ-ը զրկվել է 2007թ.-ից մինչև 31.03.2019թ. գազատարն արդյունավետ տնօրինելու հնարավորությունից, գազատարն օգտագործվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ–ի կողմից նման կոմունիկացիայի շահագործման հնարավորության համար անհամեմատ ցածր վարձավճարով: Միաժամանակ

գազատարի հաշվեկշռային արժեքն այդ ժամանակահատվածում կնվազի (նվազել է), որը համեմատաբար ավելի ցածր գնի ելակետային հիմք է հանդիսանում, քան նախնական պայմանագիրը կնքելու ժամանակ:

- Գազատարի վարձակալության ժամկետը սահմանված է մինչև ԲԷՑ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի («Հայռուսգազարդ» ՓԲԸ) միջև կնքված՝ Իրան-Հայաստան գազատարի առաջին հատվածի (գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց հատվածի) վերոհիշյալ առուվաճառքի պայմանագիր կնքելը: Նկատի առնելով այն հանգամանքը, որ նշված պայմանագիր կնքելու պարտավորության վերաբերյալ առուվաճառքի նախնական պայմանագիրը վերը նշված հիմքով դադարել է, հետևաբար գազատարի վարձակալության պայմանագրով պայմանագրի ժամկետի վերաբերյալ դրույթն անվավեր է:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն գազատարի ձեռք բերման նախնական պայմանագրի համաձայն վճարված 9 մլրդ ՀՀ դրամի չափով գումարը ներառել է ԲԷՑ-ի կողմից իրացվող գազի սակագնի բաղկացուցիչներում, նախատեսելով նշված գումարի ներդրումից 10%-ի չափով տարեկան շահույթ

- Գազատարը ենթակա է եղել շահագործման 26.05.2016թ. տրված թիվ 3 շահագործման թույլտվության (ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ) տրամադրման պահից: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն գազատարի ձեռք բերման նախնական պայմանագրի համաձայն վճարված 9 մլրդ ՀՀ դրամի չափով գումարը ներառել է ԲԷՑ-ի կողմից իրացվող գազի սակագնի բաղկացուցիչներում, նախատեսելով նշված գումարի ներդրումից 10%-ի չափով տարեկան շահույթ: Համեմատելով նշված գումարի ներդրման արդյունքում ստացած տարեկան շահույթի 900 մլն ՀՀ դրամի չափով գումարը գազատարի տարեկան վարձավճարի գումարի հետ (49,680,000.0 ՀՀ դրամ), ակնհայտ է որ գազատարի վարձավճարը տնտեսական առումով համարժեք չէ:
- Համաձայն ԲԷՑ-ի տրամադրած հաշվապահական հաշվառման տվյալների գազատարի ամորտիզացիոն մասհանումները կազմում են ամսական 42,546.0 հազ. դրամ: Գրավոր հարցմանը՝ թե ինչ չափանիշերով է որոշվել գազատարի ամսական վարձավճարի չափը 4,140.0 հազ. դրամ՝ ԲԷՑ-ի կողմից հիմնավոր պարզաբանում չներկայացվեց:

Գազատարի ամորտիզացիոն մասհանումները կազմում են ամսական 42,546.0 հազ. դրամ: Գրավոր հարցմանը՝ թե ինչ չափանիշերով է որոշվել գազատարի ամսական վարձավճարի չափը 4,140.0 հազ. դրամ՝ ԲԷՑ-ի կողմից հիմնավոր պարզաբանում չներկայացվեց

- Միաժամանակ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 31.05.2016 թվականի N 137 Ա որոշմամբ ՀՀ-ում գազի տեղափոխում իրականացնող

կազմակերպությանը՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին պատկանող «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից փոխադրվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի փոխադրման սակագինը սահմանվել է 11,347,532.0 դրամ՝ ներառյալ ԱԱՀ: Համաձայն ՀՀ ՊԵԿ կայք էջում տեղադրված տեղեկության 2017թ. Իրանից Հայաստան է ներմուծվել 183,937.8 հազ. խ/մ, իսկ 2018 թվականի առաջին կիսամյակում՝ 195,246.5 հազ. խ/մ բնական գդազ: Հաշվի առնելով գազի փոխադրման սակագինը և ներկրված գազի ամսական միջին ծավալները՝ պարզվում է, որ «Տրանսգազ» ՍՊԸ-ն Իրան-Հայաստան սահմանից գազի փոխադրման համար 2017թ. ամսական ստացել է 173,936,673.0 դրամ (183,937.8 հազ. խ/մ / 12 ամիս* 11,347,532.0 դր.), իսկ 2018թ. առաջին կիսամյակի ընթացքում ամսական ստացել է 369,260,984.4 դրամ (195,246.5 հազ. խ/մ / 6ամիս* 11,347,532.0 դր.): Նկատի առնելով, որ Իրան-Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց հատվածը կազմում է նշված գազատարի (Մեղրիից՝ Երևանի ՋԷԿ) մեկ հինգերորդ մասը, նշված ամսական գումարների համապատասխանաբար մեկ հինգերորդ մասերը՝ 2017թ. համար՝ 34,787,334.6 դրամ, 2018թ. համար՝ 73,852,196.9 դրամ, կազմում են գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց հատվածով գազի փոխադրման համար ամսական վճարի չափերը: Իրան-Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց հատվածի շահագործման համար վճարվում է ամսական 4,140,000.0 դրամ: Ընդ որում, քանի որ գազի փոխադրման ծառայությունն իրականացնում է ոչ թե «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կառուցվածքային ստորաբաժանումը՝ ծառայության ինքնարժեքով, այլ նրա կողմից ստեղծված «Տրանսգազ» ՍՊԸ-ն, գազի փոխադրման, հետևաբար սպառողներին գազի մատակարարման ինքնարժեքը ավելանում է փոխադրման ծառայության համար վճարվող ավելացված արժեքի հարկի և ձևավորվող շահույթի չափով:

ԲԷՑ-ի կողմից ձեռք բերվել և 30.09.2018թ. դրությամբ պահեստավորված է 597,473,673.0 ՀՀ դրամ արժեքի 776,339.0 կգ խողովակների խմբաքանակ: Նշված քանակի և արժեքի խողովակների ձեռք բերման անհրաժեշտության վերաբերյալ ԲԷՑ-ի կողմից բացատրություն չի ներկայացվել:

➢ Գազատարի, որպես անշարժ գույքի, նկատմամբ իրավունքների պետական գրանցումը իրականացվել է 17.02.2017թ.: Գազատարի վարձակալության իրավունքի, ինչպես նաև այն ենթավարձակալության իրավունքների պետական կադաստրային գրանցում կատարված չէ:

➢ Իրան-Հայաստան գազատարի առաջին (գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց) հատվածի շինարարության շրջանակներում ԲԷՑ-ի կողմից ձեռք բերվել և 30.09.2018թ. դրությամբ պահեստավորված է 597,473,673.0 ՀՀ դրամ արժեքի 776,339.0 կգ խողովակների խմբաքա-

նակ: Նշված քանակի և արժեքի խողովակների ձեռք բերման անհրաժեշտության վերաբերյալ ԲԷՑ-ի կողմից բացատրություն չի ներկայացվել:

- Խողովակների գտնվելու վայրի և պահպանման պայմանների վերաբերյալ պարզվել է հետևյալը:
- Պահեստավորման ենթակա խողովակներից 8մմ, 9.5մմ պատի հաստությամբ, 711մմ տրամաչափի, ընդհանուր 567.3 գծամետր 55 հատ խողովակները 01.09.2010թ. «Օբյեկտների պահպանման ծառայություն մատուցելու» պայմանագրով ԲԷՑ-ի «Էներգետիկ օբյեկտների կառուցման տնօրինություն» մասնաճյուղի տնօրենը հանձնել է պահպանության ՀՀ քաղաքացի Հ.Բ.-ին: Խողովակները գտնվում են Սյունիքի մարզի Քաջարանի լեռնանցքով անցնող ավտոմայրուղու հարևանությամբ, Լեռնանցք 2,535 մ կետում, Արևիկ, Լիճքվազ գյուղերի տարածքում: Խողովակները ներկրման պահից՝ 30.09.2018թ., մինչև 30.09.2018թ.-ը, գտնվել են բացօթյա տարածքում, անմիջականորեն հողի վրա՝ առանց շերտազատման, կամ այլ կերպ սարքավորված տակդիրների վրա, որևէ ձևով պաշտպանված չեն տեղումների անմիջական ազդեցությունից: Պահպանության պայմանագիրը վերոհիշյալ քաղաքացու հետ կնքվել է առանց ԲԷՑ-ի տնօրենի լիազորագրի, 85,555.0 դրամ ծառայության արժեքով (վճարման պարբերականություն սահմանված չէ պայմանագրով), իսկ պայմանագիրը գործում է 01.09.2010թ.-ից մինչև «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին նշված խողովակների հանձնման օրը: Պայմանագիրը գործում է 30.09.2018թ.-ի դրությամբ: Խողովակները պահպանելու համար 30.09.2018թ. դրությամբ, պահպանություն իրականացնող քաղաքացուն վճարվել է 8,555,550.0 ՀՀ դրամ գումար: Պայմանագրին կից հավելվածում նշված 55 հատ խողովակների պատերի հաստությունը նշված է 8մմ և 9.5մմ, մինչդեռ ԲԷՑ-ի տնօրենի 20.12.2017թ. 171-Լ հրամանով իրականացված գույքագրման թիվ 260 թերթիկում արձանագրված է, որ պահպանվող խողովակների խմբաքանակում առկա են 21,112.41 կգ 11մմ պատի հաստությամբ խողովակներ: Նշված տարբերության հանգամանքը պարզելու համար պահպանության հանձնող կողմը գործողություններ չի ձեռնարկել: Ընդ որում, հիշյալ 55 խողովակներից 5 հատի գողության փաստով ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության կողմից հարուցվել է քրեական գործ:

Սպուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445 հոդվածի 6-րդ մասի՝ «6.Նախնական պայմանագրով նախատեսված պարտավորությունները

դադարում են, եթե մինչև այն ժամկետի ավարտը, որում կողմերը պետք է կնքեին հիմնական պայմանագիրը, այն չի կնքվում, կամ կողմերից մեկը մյուսին առաջարկ չի ներկայացնում այդ պայմանագիրը կնքելու մասին»:

Գազատարի առուվաճառքի նախնական պայմանագրով գործարքի կնքման սահմանային ժամկետը՝ 31.12.2007 թվականն է, իսկ նշված ժամկետը երկարաձգելու համաձայնագրերից առաջինը կնքվել է 28.04.2010 թվականին՝ ժամկետը լրանալուց, պայմանագրով կողմերի պարտավորությունների կամ պայմանագրի գործողության դադարման պահից երկու տարի չորս ամիս հետո: Նախնական պայմանագրի ժամկետի փոփոխությունների վերաբերյալ համաձայնագրերը կնքվել են առանց նոտարական վավերացման, որը չի համապատասխանում «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի, ինչպես նաև 55-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին:

Համաձայն նշված իրավական նորմերի՝ դրանք առոչինչ են:

- Իրան-Հայաստան գազատարի առաջին (գազատարի Մեղրի-Քաջարան 40 կիլոմետրանոց) հատվածի շինարարության շրջանակներում ԲԷՑ-ի կողմից ձեռք բերված և չօգտագործված խողովակների մեկ այլ խմբաքանակ՝ ընդհանուր 2,651.3 գծամետր, 711մմ տրամաչափի 223 հատ խողովակները, ԲԷՑ-ի «Էներգետիկ օբյեկտների կառուցման տնօրինություն» մասնաճյուղի տնօրենը 20.12.2017թ. ակտով հանձնել է պահպանության «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ին: Ակտով պահատվությունը կատարվել է առանց լիազորագրի, պահատվության վճարի, պահպանության պայմանների սահմանմամբ, մինչև գույքի առուվաճառքի պայմանագրի կնքումը: «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից պահպանվող խողովակները գտնվում են տարբեր վայրերում, Սյունիքի մարզի Ագարակ, Գորիս քաղաքների մոտ գտնվող տարածքներում և Երևանի Նուբարաշեն համայնքում:

ԲԷՑ-ԳՀԾՁԲ-1812 պայմանագրով կատարված գնման վերաբերյալ

01.04.2015թ. ԲԷՑ-ը «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-իհետ կնքել է անվտանգության և պահնորդային ծառայության մատուցման գնման ԲԵՑ-ԳՀԾՁԲ 15/02 պայմանագիրը:

Պայմանագրի գործունեության ժամկետ սահմանված է մինչև կողմերի պայմանագրով սահմանված պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Միաժամանակ սահմանված է ծառայության մատուցման ընդհանուր արժեք՝ 70,000,000.0 ՀՀ դրամի չափով, իսկ ծառայության ամսական արժեքը՝ 1,945,000.0 ՀՀ դրամ: 28.05.2015թ. կնքվել է պայմանագրին կից համաձայնագիր, որի համաձայն սահմանվել է ծառայության ամսական արժեքը 2,194,900.0 ՀՀ դրամ:

01.06.2018թ. ԲԷՑ-ն «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի հետ կնքել է անվտանգության և պահնորդային ծառայության մատուցման գնման ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/12 պայմանագիր՝ 6 ամիս ժամկետով:

Անհամապատասխանություններ

➢ Պայմանագրով սահմանված ծառայության ընդհանուր արժեքը սահմանվել է 70,000,000.0 ՀՀ դրամ, ամսական ծառայության գումարի չափը սահմանված է 1,945,000.0 ՀՀ դրամ: ԲԷՑ-ի և «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի միջև 2017թ. դեկտեմբերից 2018թ. ապրիլ ամիսը ներառյալ կազմվել են թվով հինգ հանձնման-ընդունման արձանագրություններ (31.12.2017թ. N12, 31.01.2018թ. N1/18, 28.02.2018թ. N2/18, 31.03.2018թ. N3/18, 30.04.2018թ. N4/18), իսկ «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ն ներկայացրել է դրանց համապատասխան հաշիվ ապրանքագրեր: Նշված հաշիվ ապրանքագրերի և դրանց հիման վրա կատարված բանկային փոխանցումների տվյալների համաձայն ամսական ծառայությունների համար դուրս են գրվել հաշիվներ և իրականացվել են վճարումներ 2,194,900.0 դրամի չափով: Հետևաբար պայմանագրով սահմանված ծառայության ընդհանուր՝ 70,000,000.0 ՀՀ դրամի չափով գումարը վճարվել է պայմանագրի ուժի մեջ մտնելուց պահից՝ 01.04.2015թ., հետո 32 ամսվա ընթացքում՝ մինչև 01.11.2017թ.: 01.11.2017թ. հետո, մինչև նոր գնման ընթացակարգի արդյունքում 01.04.2018թ. պայմանագրին կից համաձայնագիր կնքելը ընկած ժամանակահատվածի համար «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ 10,974,500.0 (5ամիս*2.194.900.0 դր.) ՀՀ դրամ գումարի չափով վճարման հիմքերը բացակայում են:

01.11.2017թ. հետո, մինչև նոր գնման ընթացակարգի արդյունքում 01.04.2018թ. պայմանագրին կից համաձայնագիր կնքելը ընկած ժամանակահատվածի համար «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ 10,974,500.0 ՀՀ դրամ գումարի չափով վճարման հիմքերը բացակայում են:

➢ Ըստ էության, պայմանագրի գործողության եռամյա ժամկետում ծառայության համար վճարված գումարը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որի պարագայում, ի սկզբանե, մրցույթի մասնակցի կողմից պետք է ներկայացվեր բանկային երաշխիք, որը չի կատարվել:

Վճարված գումարը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որի պարագայում, ի սկզբանե, մրցույթի մասնակցի կողմից պետք է ներկայացվեր բանկային երաշխիք, որը չի կատարվել

➢ Ներկայացվել են ԲԵՑ-ԳՀԾՁԲ 15/02 պայմանագրի երկարացման երկու համաձայնագրեր՝ կնքված 01.04.2018թ. և 27.04.2018թ., որոնց հիման վրա

երկարացվել է ծառայության մատուցման ժամկետը յուրաքանչյուր անգամ՝ մեկ ամսով, վերջնական ժամկետը սահմանելով 01.06.2018թ.: Արդյունքում իրականացվել է ծառայություն 01.04.2018թ.-ից 01.06.2018թ.-ը և կատարվել վճարում դրա դիմաց՝ առնվազը 4,389,800.0 ՀՀ դրամ:

- Ինչ իրավակարգավորման համաձայն է կատարվել պայմանագրի ժամկետների երկարացումը և ինչու մինչև 01.04.2018թ. նախապես չի իրականացվել մրցույթ՝ ծառայության նոր գնում կատարելու համար, որևէ հիմնավորում ԲԷՑ-ը չի ներկայացրել: Պայմանագրի կատարված փոփոխությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետային սահմանափակման դրույթին, այն է՝ արգելվում է պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանք-ների կատարման կամ ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը մեկ անգամ՝ մինչև երեսուն օրացուցային օրվանից ավելի ժամկետով երկարաձգելը, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Բացակայում են մրցույթի պայմաններով և պայմանագրի N1 հավելվածով սահմանված GSM կապի միջոցով տագնապի ազդանշան ընդունելու համակարգը, պահնորդի շարժման հետագիծը վերահսկող տեխնիկական միջոցները (չիպեր)

- 01.06.2018թ. ԲԷՑ-ը «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի հետ կնքել է անվտանգության և պահնորդային ծառայության մատուցման գնման ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/12 պայմանագիրը:
- Պայմանագիրը կնքվել է վեց ամիս ժամանակով: Որևէ հիմնավորում չի ներկայացվել, թե ինչ պատճառաբանությամբ է 01.06.2018թ. կնքված պայմանագրի ժամկետը մրցույթի պայմաններով սահմանված վեց ամիս, որի հետևանքով պայմանագիրն ավարտվում է 01.12.2018թ. և անհրաժեշտություն է առաջանում իրականացնել նոր մրցութային գնում մինչև տարվա վերջ՝ ևս մեկ ամսով ծառայության մատուցման ապահովման համար: Պայմանագրով սահմանված է ծառայության ընդհանուր արժեք՝ 9,900,000.0 ՀՀ դրամի չափով (ծառայության ամսական միջին արժեքը կազմում է 1,650,000.0 ՀՀ դրամ): Հարցման և զննման արդյունքում պարզվեց, որ բացակայում են մրցույթի պայմաններով և պայմանագրի N1 հավելվածով սահմանված GSM կապի միջոցով տագնապի ազդանշան ընդունելու համակարգը, պահնորդի շարժման հետագիծը վերահսկող տեխնիկական միջոցները (չիպեր):

ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ 17/34 պայմանագրով աշխատանքների կատարման մրցույթի և կնքված պայմանագրի կատարման վերաբերյալ

ԲԷՑ-ի «Հարավային» մասնաճյուղի արտադրական մասնաշենքի վերակառուցում ճաշարանի ու վարչական մասի և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման գնման (այսուհետ՝ աշխատանքներ) համար պլանով նախատեսվել է 465,000,000.0 ՀՀ դրամ:

Աշխատանքների գնման նպատակով կազմակերպվել է բաց մրցույթ: Մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել ութ կազմակերպություն: Նրանցից երկուսի հայտերը մերժվել են մրցութային հանձնաժողովի կողմից: Ընդ որում մերժված հայտ ներկայացնողներից «ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ն ներկայացրել է աշխատանքների կատարման գնային առաջարկ, որը շուրջ 119.0 մլն ՀՀ դրամով ավելի պակաս է եղել, քան մրցույթի ընտրված մասնակցի գնային առաջարկը:

Մրցույթի ընտրված մասնակից է համարվել «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ն, որի հետ 23.09.2017թ. կնքվել է պայմանագիր 353,934,302.0 ՀՀ դրամ արժեքով (այդ թվում՝ ԱԱՀ-ն):

ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-17/34 պայմանագիրը կնքվել է 23.09.2017 թվականին:

Անհամապատասխանություններ

- Մրցույթի կազմակերպիչները ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը ծանուցել են տվյալ մրցույթի ընթացակարգով անգործության ժամկետի ավարտից՝ 01.08.2018թ., 17 օր հետո, ինչը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին, համաձայն որի «անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը»:

Մրցույթի կազմակերպիչները ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը ծանուցել են տվյալ մրցույթի ընթացակարգով անգործության ժամկետի ավարտից 17 օր հետո

- Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ «մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները, ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման կարգի» 61-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված է, որ՝ «1) մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ պակաս չէ գնման ընթացակարգն սկսելու տարում տվյալ գնման առարկայի մասով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, հանրապետական գործադիր մարմինների մեջ ամենամեծ ծավալն ունեցող պատվիրատուի գնումների պլանով նախատեսված ընդհանուր գումարի (այսուհետ՝ ընդհանուր գումար) երեսուն տոկոսից,

բ. առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես սույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը»:

- Նույն կարգի 65-րդ կետով սահմանված է, որ «Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները»:
- Մրցույթի հայտով «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի (գրանցման համար՝ 269.120.921492, ՀՎՀՀ՝ 02266448) կողմից ներկայացված շինարարությամբ զբաղվելու N11567 լիցենզիան, որի վրա «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի կնիքի առկայությունը որևէ ձևով չի բացատրվում, տրվել է ՀՀ քաղաքաշինության

նախարարության կողմից 18.01.2008թ., այլ կազմակերպությանը՝ «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ին (գրանցման համար՝ 264.120.06600, ՀՎՀՀ՝ 00082703), որոնք որևէ իրավահաջորդության կապ չունեն իրար հետ:

- «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի կողմից, որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր, մրցույթի հայտով ներկայացվել է այլ կազմակերպության՝ «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի (գրանցման համար՝ 264.120.09306, ՀՎՀՀ՝ 00082703) և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության միջև 19.05.2019թ. կնքված T3-CW-03/1 կապալի պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի կատարման կապակցությամբ դուրս գրած հաշիվների, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 21.04.2016թ. 01/27/4785-16 գրության լուսապատճենները: Ընդ որում հայտին կից ներկայացրած փաստաթղթերի շարքում առկա է նաև «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի սույն պայմանագրի վերաբերյալ 25.07.2016թ. 05/2-728 տեղեկանքի՝ նոտարական կարգով հաստատված օրինակն առ այն, թե «Քանի որ տեղի է ունեցել պետական ռեգիստրի վկայականի և ՀՎՀՀ-ի փոփոխություն, սույնով տեղեկացնում եմ, որ այդ փոփոխությունները որևէ կերպ չեն ազդել ընկերության հետ կնքված պայմանագրի վրա, և պայմանագիրը վավեր է «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 02266448) և պատվիրատուի միջև»: Նշված տեղեկանքով փորձ է կատարվել ապահովել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված մասնակցի որակավորման իրավական հիմքերը: Միաժամանակ այն ինքնին հանդիսանում է «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի (գրանցման համար՝ 264.120.09306, ՀՎՀՀ՝ 00082703) և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության միջև 19.05.2016թ. կնքված T3-CW-03/1 կապալի պայմանագրի կատարման իրավաչափության ուսումնասիրման առարկա:
- Բացի այն հանգամանքից, որ մրցույթի մասնակցության հայտով ներկայացվել են այլ կազմակերպության վերաբերյալ փաստաթղթեր, դրանք չէին կարող բավարար համարվել նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» պահանջներին, քանի որ վերը նշված դուրս գրված հաշիվները չեն հանդիսանում պատշաճ կատարված աշխատանքներն հանձնման-ընդունման ակտ կամ արձանագրություն, իսկ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 21.04.2016թ. 01/27/4785-16 գրությունն իր բովանդակությամբ չի կարող հանդիսանալ պատշաճ

Մրցույթի մասնակցության հայտով ներկայացվել են այլ կազմակերպության վերաբերյալ փաստաթղթեր

կատարված աշխատանքներն ընդունելու փաստ: Այսինքն բացակայել են հայտով պարտավորված՝ պատշաճ աշխատանքների պատշաճ կատարումը հավաստող հանձնման-ընդունման վերաբերյալ փաստաթուղթը:

- Ներկայացված պայմանագիրը վերաբերվում է ճանապարհների և ավտոմայրուղիների ուղեանցների շինարարութ-յանը, մինչդեռ մրցույթը վերաբերվում է արտադրական մասնաշենքի վերակառուցում, ճաշարանի ու վարչական մասի և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարմանը: Նշված երկու շինարարությունների տեսակները, համաձայն տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ աղյուսակի, դասակարգվում են տարբեր խմբերում՝ համապատասխանաբար՝ F41.20.1 (Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի շինարարություն) և F42.11 (Ճանապարհների և ավտոմայրուղիների շինարարություն): Հետևաբար դրանք իրենց նկարագրով չեն կարող հանդիսանալ նմանատիպ աշխատանքներ:

Ներկայացված պայմանագիրը վերաբերվում է ճանապարհների և ավտոմայրուղիների ուղեանցների շինարարությանը, մինչդեռ մրցույթը վերաբերվում է արտադրական մասնաշենքի վերակառուցում, ճաշարանի ու վարչական մասի և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարմանը

- «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ն մրցույթի հայտի ապահովման նպատակով ներկայացրել է բանկային երաշխիք՝ տրված «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից, N132-89, 07.08.2017թ., 17,700,000.0 ՀՀ դրամի չափով: Երաշխիքը տրամադրվել է մինչև 09.11.2017թ. ներառյալ: Նկատի առնելով «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերի, դրանց տվյալների անհամապատասխանությունը օրենքով սահմանված որակավորման չափանիշների վերաբերյալ պահանջվող տեղեկություններին, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթը, ԲԷՑ-ը պարտավոր էր ներկայացնել երաշխիք տրամադրած բանկին հայտի ապահովման վճարման պահանջ: Միաժամանակ, հիմք ընդունելով վերոգրյալ փաստերը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին մասի, ԲԷՑ-ն պարտավոր էր հայտարարել գնման ընթացակարգը չկայացած:

Պայմանագիրը կնքվել է առանց պայմանագրի ապահովման բանկային երաշխիքի առկայության

- Պայմանագիրը կնքվել է առանց պայմանագրի ապահովման բանկային երաշխիքի առկայության: Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ՝ «Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման

վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում»: ՀՀ կառավարության 04.05.2017թ, թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 30-րդ կետի 10) ենթակետի համաձայն՝ «եթե տվյալ ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այն դեպքում, երբ տվյալ ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով»:

- Ընդ որում, 15.03.2019թ. դրությամբ որևէ ձևով հաշվեքննողներին չի ներկայացվել բացատրություն այն փաստի վերաբերյալ, թե պայմանագրի կնքումը 23.09.2017թ. թվագրվելու պարագայում, ըստ մրցույթի փաստաթղթերում առկա գրության, «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ն տնօրենը, պայմանագիրը կնքելուց 20 օր հետո, ԲԷՑ-ն ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-17/34 ծածկագրով հայտարարված մրցույթային գնահատող հանձնաժողովի նախագահին ուղղված 12.10.2017թ. N1-32 գրությամբ հայտնում է ընկերության «պատրաստակամությունը կնքելու «Հարավային» մասնաճյուղի արտադրական մասնաշենքի վերակառուցում, ճաշարանի ու վարչական մասի և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման պայմանագիրը»:
- Սույն դեպքով, չնայած ձեռք բերվող աշխատանքների պայմանագրի արժեքին, չի պահանջվել պայմանագրի կատարման երաշխիք: ԲԷՑ-ը պայմանագիրը կնքել է առանց պարտավորությունների կատարման համար բանկային երաշխիքի:

Չնայած այն հանգամանքին, որ պայմանագրով նախատեսված չի եղել կանխավճար վճարելու պայման, ԲԷՑ-ը «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ին տրամադրել է կանխավճար 100,000,000.0 **ՀՀ դրամի չափով, որը** 30.09.2018**թ. դրությամբ մարված չէ**

- Չնայած այն հանգամանքին, որ պայմանագրով նախատեսված չի եղել կանխավճար վճարելու պայման, ԲԷՑ-ը «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ին տրամադրել է կանխավճար 100,000,000.0 ՀՀ դրամի չափով, որը 30.09.2018թ. դրությամբ մարված չէ: Ընդ որում ԲԷՑ-ը նշված կանխավճարը տրամադրել է առանց դրա դիմաց որևէ իրավական

երաշխիքների ձևակերպման կամ այլ կերպ ապահովման:

- Մրցույթի արդյունքներով ԲԷՑ-ի և «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի միջև կնքվել է աշխատանքների կատարման պայմանագիր նշված գնի պայմանով: Համաձայն պայմանագրի՝ այն ուժի մեջ է մտել ստորագրման պահից՝ 23.09.2017թ., աշխատանքները պետք է կատարվեին պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրում:
- Նշված գնումը կատարելու համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել ԲԷՑ ՓԲԸ-ի ոչ 2016-2018թթ. սակագներով, ոչ էլ՝ ՀՀ ՀԾԿՀ-ի կողմից հաստատված ընկերության ներդրումային ծրագրերով:
- Հաշվի առնելով, որ 2016-2017թթ. ընկերության մի շարք վարկային և ներդրումային ծրագրեր կասեցվել և դադարեցվել են, իսկ որոշ ծրագրերի բյուջեները կրճատվել են ֆինանսական միջոցների սղության և ՀՀ արտաքին պարտքի աճը մեղմելու պատճառով, արտադրական շենքը ճաշարանի և վարչական մասի վերակառուցելու 465 մլն դրամ գումարի գնման անհրաժեշտությունը չի հիմնավորվում և գնումը իրականացվել է առանց ֆինանսական միջոցների իրավական հիմքերի ապահովման:

Արտադրական շենքը ճաշարանի և վարչական մասի վերակառուցելու 465 մլն դրամ գումարի գնման անհրաժեշտությունը չի հիմնավորվում և գնումը իրականացվել է առանց ֆինանսական միջոցների իրավական հիմքերի ապահովման

- 2016թ. ԲԷՑ-ի գլխամասի և «Հարավային» մասնաճյուղի բակային հատվածում առկա ջրավազանի տեղում ԲԷՑ-ը նախատեսել էր կառուցել ճաշարան, որի նախահաշվային արժեքը, համաձայն ընկերության «Նախագիծ» մասնաճյուղի կողմից կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի, կազմել է 71,900.0 հազ. դրամ: Սույն մասով ընկերությունը հայտարարել է մրցույթ, որի արդյունքում 31.10.2016թ. հաղթող է ճանաչվել «Մավշին» ՍՊԸ-ն: Վերջինիս հետ պայմանագիր չի կնքվել, և, որպես հիմնավորում, ընկերությունը ներկայացնում է գնման պահանջի վերացումը:
- Վերոգրյալից ելնելով՝ պետական միջոցները օգտագործել են անարդյունավետ և առանց այդ միջոցները օգտագործելու համար օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնությունների ձեռք բերման:
- «Հարավային» մասնաճյուղի արտադրական մասնաշենքի վերակառուցում ճաշարանի ու վարչական մասի և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը իրականացվել է Ա/Ձ Մարտուն Մկրտչյանի և «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի կողմից, որոնց հետ նույն օրը՝ 04.05.2017թ., կնքվել են համապատասխանաբար N ԲԷՑ-ԲԸԱՀԾՁԲ-17/60 և N ԲԷՑ-ԲԸԱՀԾՁԲ-17/62 պայմանագրերը:

- Համաձայն Ա/Ձ Մարտուն Մկրտչյանի հետ 04.05.2017թ. կնքվածթիվ ԲԷՑ-ԲԸԱՀԾՁԲ-17/60 պայմանագրի (մեկ անձից գնման ընթացակարգ), որի արժեքը կազմել է 980,000.0 դրամ, տեխնիկական առաջադրանքը ներառել է գլխավոր հատակագծի մշակում, ճարտարապետական մաս, կոնստրուկտորական մաս և տարածքի բարեկարգում:

  Իսկ «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի հետ կնքված 04.05.2017թ. թիվ ԲԷՑ-ԲԸԱՀԾՁԲ-17/62 պայմանագրի, որի արժեքը կազմել է 980,000 դրամ, տեխնիկական առաջադրանքը ներառել է հետևյալը՝ ջրամատակարարում և կոյուղի, ջեռուցում և օդափոխություն, օդորակում, կապ և տեսահսկում, հակահրդեհային ազդանշանային համակարգ, էլեկտրատեխնիկական մաս, խոհանոցի տեխնոլոգիա, նախահաշիվ:

  Վերը նշված պայմանագրերի մասով ԲԷՑի կողմից հեղինակային հսկողության իրականացման վերաբերյալ փաստաթղթեր չեն տրամադրվել:
- Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջների հետ, որոնցով արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով, ինչպես նաև առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.09.1998թ.-ի թիվ 143 հրամանով սահմանված է պահանջների հետ:

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջների հետ, որոնցով արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով

  - Նշված աշխատանքների իրականացման նպատակով ԲԷՑ-ը 29.06.2017թ. հայտարարել է մեկ փուլով բաց մրցույթ, հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 08.08.2017թ., նախահաշվային արժեքը՝ 465.0 մլն դրամ :
- Մրցույթին հայտեր ներկայացրել են 8 կազմակերպություններ, հաղթող է ճանաչվել «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ն, որի հետ 23.09.2017թ. կնքվել է թիվ ԲԷՑ-ԲՄԱԾՁԲ-17/34 պայմանագիրը՝ 353,934.3 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, արժեքով: «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի կողմից 04.12.2017թ. ներկայացվել է մեկ կատարողական ակտ, որի գումարը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմել է 108,505.0 հազ.դրամ:
- Հրավերով սահմանվել է, որ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի

շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Հիմք ընդունելով վերոգրյալը ԲԷՑ-ի կողմից հարցում է կատարվել ՊԵԿ և ստացվել պատասխան, ըստ որի վերը նշված ընկերության՝ հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 218,530,861.0 ՀՀ դրամ, որը չի բավարարում հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը, հետևաբար «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ն չէր կարող ճանաչվել մրցույթի հաղթող, իսկ տեղեկատվությունը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի, պետք է տրամադրվեր լիազոր մարմնին վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Չի բավարարվել հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը

- Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջների հետ: Բացի այդ,անտեսելով օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի հայտը գնահատել է բավարար, իսկ վերջինիս՝ ընտրված մասնակից:
- Հրավերով աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար նախատեսվել է գանձել տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 5 (հինգ) տոկոսի չափով, բայց ոչ ավելի պայմանագրի գնի 50 (հիսուն) տոկոսից, իսկ պայմանագրով՝ 6.2 կետ, տույժը սահմանվել է 0.5 տոկոս:
- Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջի հետ, այն է՝ գնումների գործընթացը հիմնվում է միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:
- Հրավերով, ինչպես նաև պայմանագրով կանխավճար չի նախատեսվել, սահմանվել են, որ վճարումները կատարվում են հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ մինչև 180 օրացուցային օրվա ընթացքում, որը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն խոչընդոտում է մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման հնարավորությունը: Կապալառուն իր 20.10.2017թ. թիվ 1-30 գրությամբ 100 մլն դրամ կանխավճար ստանալու

Հրավերով, ինչպես նաև պայմանագրով կանխավճար չի նախատեսվել, սահմանվել են, որ վճարումները կատարվում են հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ մինչև 180 օրացուցային օրվա ընթացքում

նպատակով դիմել է ընկերությանը գրությամբ առ այն, որ շինության ներսում նախատեսված շինարարական աշխատանքները ավարտվել են և հաշվի առնելով, որ շենքի արտաքին հարդարման և ծածկի կառուցման աշխատանքները նախատեսվել են իրականացնել շինարարության վերջում և այդ իսկ պատճառով մատակարարների հետ շինանյութերի ներմուծման պայմանագրերը կնքվել են նոյեմբեր ամսին մատակարարելու պայմանով, որն էլ եղանակային պայմանների փոփոխմամբ և Լարսի անցակետի փակման պատճառով անհնարին է դարձել, վերջինս աշխատանքները ժամանակին կատարելու համար ստիպված է շինանյութերը ձեռք բերել ՀՀ տարածքում՝ երկրորդական շուկայից, կանխիկ գումարով:

- Ընկերությունը հիմք ընդունելով կապալառուի գրությունը վերջինիս հետ 29.10.2017թ. կնքել է համաձայնագիր և կատարել կանխավճարային վճարում՝ 20.10.2017թ-ին 50 մլն դրամ և 25.10.2017թ-ին 50 մլն դրամ, ընդամենը՝ 100 մլն դրամ:
- Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված դրույթների հետ, որոնցով արգելվում է պայմանագրով կանխավճար նախատեսելը, եթե հրավերով նախատեսված չի եղել կանխավճար հատկացնելու հնարավորություն՝ բացառությամբ կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված գնումների, կամ եթե պայմանագրի կատարումը տեղափոխվում է պայմանագիրը կնքվելու տարվան հաջորդող բյուջետային տարի:

ԲԷՑ-ի և «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի միջև կնքվել է համաձայնագիր, որով հաստատվել է պայմանագրով սահմանված աշխատանքների նոր ծավալաթերթ-նախահաշիվ, որով կատարման ենթակա աշխատանքների ծավալը, բնութագիրը փոփոխվել են, իսկ դրանց արժեքը նվազել է մոտ 40 մլն. ՀՀ դրամի չափով

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի արգելվում է փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:
- ԲԷՑ-ի և «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի միջև 27.10.2018թ. կնքվել է պայմանագրին կից N4 համաձայնագիր, որով հաստատվել է պայմանագրով սահմանված աշխատանքների նոր ծավալաթերթ-նախահաշիվ, որով կատարման ենթակա աշխատանքների ծավալը, բնութագիրը փոփոխվել են, իսկ դրանց արժեքը նվազել է մոտ 40 մլն. ՀՀ դրամի չափով: Աշխատանքների կատարման ժամկետը հետաձգվել է մինչև 01.06.2019թ.:

- ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված դրույթների 3–րդ ենթակետի համաձայն արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական են, մասնավորապես, պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող ապրանքներով, աշխատանքներով կամ ծառայություններով, որոնք միասին գումարային արտահայտությամբ գերազանցում են պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը: Պայմանագրի գնի տասնհինգ տոկոսի շրջանակում փոխարինումը կարող է կատարվել, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը»: Պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունը բացակայում է:
- «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի կողմից պայմանագրով սահմանված աշխատանքները սահմանված ժամկետներում չկատարելու համար հրավերով սահմանված պատասխատատվության միջոցների կիրառման դեպքում (յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի՝ 245,429.3 հազ. դրամի, գնի 5 (հինգ) տոկոսի՝ օրական 12,271.5 հազ.դրամի չափով, բայց ոչ ավելի պայմանագրի գնի 50 (հիսուն) տոկոսից՝ 176,976.2 հազ.դրամից) տույժի գումարն առ 31.07.2018թ. կկազմեր 176,976.2 հազ.դրամ:

Պայմանագրով սահմանված աշխատանքները սահմանված ժամկետներում չկատարելու համար տույժ կիրառվելու դեպքում առ 31.07.2018թ. այն կկազմեր 176,976.2 հազ.դրամ

- «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ն հիմնադրվել է 2016թ., ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 15.07.2016 թ, (գրանցման համար 269.120.921492): Այնուհետև, 2018 թվականին, վերակազմավորվել է «Մոնտաժտրանսսշին» ՍՊԸ-ի (գրանցման ամսաթիվ՝ 23.02.2018թ., գրանցման համար՝ 269.120.921492):
- Հատկանշական է, որ վերը նշված կազմակերպությունների հիմնադիր հանդիսացող անձանց հետ փոխկապակցված անձինք հիմնադրել (գրանցել) են նույն անվանումով, մեկ կրկնվող «Ս» տառի տարբերությամբ, այլ իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպություններ՝ հետևյալ ժամանակագրությամբ՝

- 2004թ. «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ (գրանցման ամսաթիվ՝ 12.01.2004թ., գրանցման համար՝ 264.120.06600), որը դադարեցրել է գործունեությունը, լուծարվել, վերակազմավորվելով 2010 թվականին՝ «Մոնտաժտրանսշին» ՍՊԸ-ի (գրանցման ամսաթիվ՝ 07.07.2010թ., գրանցման համար՝ 264.110.09084): «Մոնտաժտրանսշին» ՍՊԸ-ն դադարեցրել է գործունեությունը, լուծարվել, վերակազմավորվելով 2011թ.՝ «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի (գրանցման ամսաթիվ՝ 04.02.2011թ., գրանցման համար՝ 264.120.09306): «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ին (գրանցման ամսաթիվ՝ 04.02.2011թ., գրանցման համար՝ 264.120.09306) փոխկապակցված անձի կողմից 11.07.2014թ. սնանկ ճանաչելու դիմում է ներկայացված դատարան:

  Ընդ որում, որպես նշված վերջին երեք կազմակերպությունների գտնվելու վայրի հասցե նշված է՝ «Կոմիտաս 49, Երևան 0051, Հայաստան», որը հանդիսանում է բազմահարկ շենք, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցման կենտրոնի տեղակայման վայր, բայց ոչ նշված իրավաբանական անձանց տեղակայման վայրը:

ԲԷՑ-ԲՄԱՊՁԲ-17/30 ծածկագրով գնում կազմակերպելու վերաբերյալ

ԲԷՑ-ի կողմից ԲԷՑ-ԲՄԱՊՁԲ-17/30 ծածկագրով մարդատար ավտոմեքենաների գնում կազմակերպելու նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը:

Մարդատար ավտոմեքենաների ձեռք բերումը նախատեսված է եղել 2017թ. ԲԷՑ գնումների պլանով: Գնումների պլանով մեքենաների ձեռք բերման համար նախատեսվել է 27,600,000.0 ՀՀ դրամ գումար:

Ըստ գնման ընթացակարգի արձանագրության մրցույթին հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ «Կալուգագլավսնաբ» ԲԸ-ն (ՌԴ, ք. Կալուգա, Ազարովսկայա 2 փող.):

ԲԷՑ-ը բաց մրցույթի ընթացակարգով, ՌԴ-ում գրանցված «Կալուգագլավսնաբ» ԲԸ-ից 07.08.2017թ. ԲԷՑ-ԲՄԱՊՁԲ-17/30 պայմանագրով գնել է երկու Toyota Camry մակնիշի մարդատար ավտոմեքենա՝ 47,600.0 ԱՄՆ դոլար (478.74*47,600$=22,788,000.0 ՀՀ դր.) արժեքով: Գնելուց հետո մեքենաները ՀՀ տեղափոխելիս ընկերությունը ծախսել է ԵՏՄ երկրից մեքենաների ՀՀ ներմուծման համար ավելացված արժեքի հարկ՝ 4,554,844.0 ՀՀ դրամ գումար: Արդյունքում մեքենաների ձեռք բերման համար վճարվել է 27,342,844.0 ՀՀ դրամ:

Անհամապատասխանություններ

- Գնման մրցույթի հրավերում սահմանված չէ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 1.-ին մասի 9) կետով սահմանված՝ «հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը»:

Տեխնիկական բնութագրում նշվել է ձեռք բերվող մեքենայի մակնիշը

- Տեխնիկական բնութագրում նշված է ձեռք բերվող մեքենայի մակնիշը, որը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 5-րդ մասի պահանջին:
- Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 1-ին մասի՝ «Հրավերը պետք է պարունակի՝10) նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով»: Նշված դեպքով գնի հաշվարկը հայտում բացակայում է:
- «Կալուգագլավսնաբ» ԲԸ-ի, որպես նախորդ երեք տարիների ընթացքում նմանատիպ (թեթև մարդատար մեքենաների մատակարարմա) գործարք կատարած լինելու վերաբերյալ ներկայացրած՝ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերից հանձնման-ընդունման փաստաթուղթն ամսաթիվ չունի, ինչպես նաև բացակայում են ընկերության հաշվեկշռի վերաբերյալ սահմանված կարգով տեղեկություններ:

Գնված մեքենաների վրա տեղակայված լուսարձակները քսենոնային չեն, ինչպես նախատեսված են եղել գնման պայմաններով և կնքված պայմանագրով

- Գնված մեքենաների վրա տեղակայված լուսարձակները քսենոնային չեն, ինչպես նախատեսված են եղել գնման պայմաններով և կնքված պայմանագրով:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Հաշվեքննողների հարցմանն ի պատասխան ԲԷՑ-ի կողմից 15.03.2019թ. դրությամբ չի ներկայացվել հիմնավորում, թե ինչու են ընկերությանը 2017 թվականին անհրաժեշտ մարդատար մեքենաներ, երբ նույն ժամանակահատվածում ընկերության այլ մարդատար մեքենաներ՝ թվով 6 հատ, վարձով տրվել են այլ կազմակերպությունների՝ շահագործման: Չի ներկայացվել հիմնավորում, թե ինչու է ընտրվել հատկապես նշված մակնիշի և լրակազմի մեքենաներ: Ընդ որում, «Կալուգագլավսնաբ» ԲԸ-ից ձեռք բերված նոր մեքենաները վարձով տրվել են նշված ընկերության հետ առընչվող հայաստանյան գրանցում ունեցող ընկերությունների:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր
Վարձակալության վերաբերյալ

ԲԷՑ-ի 2017թ. գնումների պլանով նախատեսվել էր 2 բիզնես դասի սեդան ավտոմեքենա, ինչպես նաև ավտոբուսների ձեռքբերում: Միաժամանակ՝ ընկերությունը ձեռք բերված «Շեվրոլետ Նիվա» ավտոմեքենաներից 2-ը, ինչպես նաև ընկերությանը պատկանող ՎԱԶ 21214 մակնիշի թվով 3 ավտոմեքենաները վարձակալությամբ տվել է Տաշիր ընկերությունների խմբին պատկանող հետևյալ ընկերություններին՝ «ՎՈԼԻՈՍ» ՓԲԸ, «ՏԵՖՖԻ» ՓԲԸ և «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ:

1.«Վոլիոս» ՓԲԸ ՀՎՀՀ 00902375, ք. երևան, Նոր Նորք, Գյուլիքեխյան Փ. 23 43, գործունեության հիմնական տեսակը՝ նախագծային աշխատանքներ:

- Պայմանագիր 19.03.2018թ. N05/18 SHEVROLET NIVA - 1հատ, 120,000.0 դրամ ներառյալ ԱԱՀ:
- Պայմանագիր 01.04.2018թ. N06/19 ՎԱԶ 21214 1հատ – 60,000.0 դրամ ներառյալ ԱԱՀ:
- «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ ՀՎՀՀ 02648403, գրանցման համար 273.120.908003 / 2016-04-29, Լոռու մարզ, Տաշիր, գործունեության հիմնական տեսակը՝ շինարարություն:
- Պայմանագիր 01.03.2018թ. N04/18, SHEVROLET NIVA, 3 հատ, 360,000.0 դրամ ներառյալ ԱԱՀ:
- Պայմանագիր 01.04.2018թ N06/18, ՎԱԶ 21214 1հատ 60,000.0 դրամ ներառյալ ԱԱՀ:
- «ՏԵՖՖԻ» ՓԲԸ ՀՎՀՀ 02647211, գրանցման համար 273.120.892866 / 2016-03-22, Լոռու մարզ, Տաշիր, Տաշիր թաղ. 68Ա 1h սեն.6:
- Պայմանագիր 01.04.2018թ N06/20, ՎԱԶ 21214 - 1հատ, 60,000.0 դրամ՝ ներառյալ ԱԱՀ:
- ԲԷՑ-ի կողմից վարձակալության են տրվել նաև այլ գույքեր:

Մասնավորապես՝

1. «Նինոծմինդա» 110կՎ ՕԳ-ն (21558մ)՝ «Էներգո Պրո Ջորջիա» ՍՊԸ-ին՝ տարեկան 15,600.0 ԱՄՆ դոլար գումարով,

2. Ջ.Անդրանիկի 1 հասց. 25.5քմ տարածքը՝ Ա/Ձ Սեյրան Վերդյանին՝ ամսական 40,000.0 ՀՀ դրամ գումարով,

3. Ջ.Անդրանիկի 1 հասցեի 27.2քմ տարածքը և Ջովունի-220կՎ ենթակայանի 171.8քմ տարածքը «Ապարանի ԷՑՇ» ԲԲԸ-ին՝ համապատասխանաբար 20,000.0 և 12,000.0 ՀՀ դրամ գումարով (պայմանագրերը 15.06.2018թ. լուծվել են),

4. Մեղրի-Քաջարան գազատարի վարձակալություն՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին ամսական 4,140,000.0 ՀՀ դրամ գումարով, (նշված վարձակալության վերաբերյալ առանձին ներկայացված է վերլուծություն),

5. Բարձր հաճախականության կապի թվային սարքավորումները (PLC)՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին՝ տարեկան 1,008,000.0 ՀՀ դրամ գումարով,

6. ՓԲՍ-10կՎ, բջիջ Կ-26 ՎՄՊԷ-10/1600,պարպիչների բջիջ Կ-25, լարման տրանսֆորմատոր ՆՍՍԻ-6,բջիջ Կ-26 ՎՄՊԷ-10/636, ՕԳ «Վանաձոր -1» ԵԿ-ից մինչև «Վանաձոր -2» ԵԿ (Փամբակ 2 ՕԳ)՝ «Հայաստանի Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին՝ տարեկան 5,328,000.0 ՀՀ դրամ գումարով,

7. 110 կՎ բարձր լարման «Նինոծմինդա» ՕԳ-ի «Աշոցք-Բավրա» ենթահատվածի հենարանների վրայով օպտիկամանրաթելային մալուխները կախելու հնարավորություն՝ «Յուքոմ» ՍՊԸ-ին՝ ամսական 15,000.0 ՀՀ դրամ գումարով,

8. Զ.Անդրանիկի 1 հասցե 58.9քմ տարածքը ՝«ՌՕ-ԱՌ» ՍՊԸ-ին՝ 12,000.0 ՀՀ դրամ գումարով,

9. Զ.Անդրանիկի 1 հասց. 17,8քմ տարածք տարածքը տրված է վարձակալության «Սյունէներգաշին» ՓԲԸ-ին՝ տարեկան 20,000.0 ՀՀ դրամ գումարով (պայմանագիրը լուծվել է 01.02.2018թ.):

- Հաշվեքննողների հարցադրմանն առ այն, թե ինչ սկզբունքով են որոշվել վարձատվության տրված գույքերի վարձերի արժեքները՝ ԲԷՑ-ի կողմից տրվել է համառոտ պարզաբանում, որ գույքերի վարձավճարները որոշվել են ըստ շուկայական գների:

ԲԷՑ-ՄԱԱՇՁԲ-17/113 պայմանագրով կատարված գնման վերաբերյալ

ԲԷՑ-ը «ԲԷՑ-ՄԱԱՇՁԲ-17/113» ծածկագրով նշագրված մրցույթ է կազմակերպել «Մարաշ», «Սևան», «Կենտրոն» օդային գծերի որոշ հենարանների հողանցման կոնտուրների կառուցման աշխատանքների գնման նպատակով:

Գնման առարկան կազմավորվել է երկու չափաբաժնով՝

1. «Մարաշ» 220 կՎ օդային գծի թիվ 169, 171, 173-176, 178-188 հենարանների հողանցման կոնտուրների կառուցում:
2. «Սևան» 110կՎ օդային գծի թիվ 2, 3, 82, 84, 85 հենարանների և «Կենտրոն» 220 կՎ օդային գծի թիվ 1 հենարանի հողանցման կոնտուրների կառուցում:

Մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել երեք կազմակերպություն՝ «Առսարքտեխ» ՍՊԸ, «Բիգ Էներգո» ՍՊԸ և «Էներգովեստ» ՍՊԸ: Մրցույթով ընտրված մասնակից է համարվել «Բիգ Էներգո» ՍՊԸ-ն՝ երկու չափաբաժինների

համար իր առաջարկած 3,688,784.0 դրամ և 1,386,825.0 դրամ (առանց ԱԱՀ) գնային չափանիշերով:

Հաշիվը դուրս է գրվել 07.04.2018թ., իսկ վճարումները կատարվել են 27.04.2018թ.-ին:

Անհամապատասխանություններ

- Օդային գծերի նշված հենարանների հողանցման կոնտուրների կառուցման աշխատանքները ընդգրկված են եղել ԲԷՑ-ի 2017թ. գործարար ծրագրում և գնումների պլանում: Այսինքն նախապես հայտնի և պլանավորված, առաջնահերթ կարևորություն ունեցող աշխատանքի կատարման գնման մրցույթ կազմակերպելն ընկերությունը կարող էր իրականացնել նախապես, ողջամիտ ժամկետում՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթով առ այն, որ գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է:

  Մինչդեռ, ՓԲԸ-ի համապատասխան պաշտոնատար անձինք ծառայական գրություններով և դրանց հիման վրա հանձնարարականներով նախաձեռնել են գնման գործընթացը՝ 24.04.2017թ. սկսած՝ ստեղծելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված իրավիճակը:

  Նշված աշխատանքները կատարելու հիմնավորման փաստաթղթերից ԲԷՑ-ի տեխնիկական տնօրենի 03.08.2017թ. զեկուցագրում (մուտքգրման համար 2737) նշվում է հողանցման կոնտուրների վերականգնման մասին, որից հետևում է, որ նախկինում հողանցման կոնտուրներն առկա են եղել: Հարցին, թե՝ ինչ են եղել նախկին հողակցման կոնտուրները, ԲԷՑ-ի մասնագետը պատասխանել է, որ նախկինում դրանք չեն եղել՝ անհրաժեշտության բացակայության պատճառով:
- Մրցույթի արդյունքում 25.09.2017թ. ԲԷՑ-ը կնքում է աշխատանքների կատարման «ԲԷՑ_ՄԱԱՇՁԲ_17/113» պայմանագիրը «Բիգ Էներգո» ՍՊԸ-ի հետ՝ 6,090,730.0 ՀՀ դրամ (այդ թվում՝ ԱԱՀ) արժեքով: Հրատապ համարվող և այդ պատճառով մեկ անձից կատարվող գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանված 90 աշխատանքային օր: Այնուհետև «Բիգ Էներգո» ՍՊԸ-ի գրության հիման վրա, որով կապալառուն հայտնում է, որ «եղանակային պայմաններից ելնելով աշխատանքները փոքր-ինչ հետաձգվեցին» և խնդրում հետաձգել պայմանագրի գործողության ժամկետը մինչև 31.03.2018թ.:
- ԲԷՑ-ի և «Բիգ էներգո» ՍՊԸ-ի միջև 09.02.2018թ. N1 համաձայնագրով կնքված պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգվել է 30 օրով՝ մինչև

05.03.2018թ.: Եղանակային պայմաններից ելնելով պայմանագրի ժամկետի երկարաձգման գործոնությունները հիմնավոր չեն, քանի որ, եթե դրանք են աշխատանքների հետաձգման պատճառը, տարվա տվյալ ժամանակաշրջանում (ձմեռ-գարուն) եղանակային պայմանները առնվազն ավելի բարենպաստ չեն դառնում:

ԲԷՑ-ը հրատապ աշխատանքների կատարման 90 օրյա ժամկետ սահմանելով, առաջացրել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման պահանջների հետ

➢ ԲԷՑ-ը հրատապ աշխատանքների կատարման 90 օրյա ժամկետ սահմանելով, առաջացրել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման պահանջների հետ:

➢ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 4-րդ մասի գ) կետով սահմանված է, որ գնումները կարող են կատարվել օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ (մեկ անձից գնում) չկանխատեսված իրավիճակների հետևանքով առաջացած և հրատապ համարվող գնումների դեպքում՝ բացառությամբ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու դեպքերի:

➢ Ընդ որում, հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝ պայմանագրի կատարման արդյունքն ամբողջ ծավալով ընդունվի, գնման պահանջի ծագման օրվանից մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում՝ պայմանով, որ հրատապ համարվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվեն այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Աշխատանքների համար սահմանվել է երկար ժամկետ, որն իր հերթին երկարաձգվել է ոչ հիմնավոր պատճառաբանությամբ

➢ Հաշվի առնելով պայմանագրով նախատեսված աշխատանքների ոչ մեծ ծավալը (17 հենասյան հողանցման կոնտուրի կառուցում, արժեքն առանց ԱԱՀ՝ 5,075,609.0 ՀՀ դրամ), աշխատանքների համար սահմանվել է երկար ժամկետ, որն իր հերթին երկարաձգվել է ոչ հիմնավոր պատճառաբանությամբ:

- ԲԷՑ-ի կողմից կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ակտի ստորագրման ժամկետի վերաբերյալ հիմքեր 15.03.2019թ. դրությամբ չեն ներկայացվել:

Աշխատանքների ուշ կատարման համար պայմանագրով սահմանված տույժերի գանձման համար ԲԷՑ-ը գործողություններ չի ձեռնարկել

Աշխատանքների ուշ կատարման համար պայմանագրով սահմանված տույժերի գանձման համար ԲԷՑ-ը 30.09.2018թ. դրությամբ գործողություններ չի ձեռնարկել:

ԲԷՑ-ՊԸԱՇՁԲ17/19 պայմանագրով աշխատանքների կատարման մրցույթի և կնքված պայմանագրի կատարման վերաբերյալ

ԲԷՑ-ՊԸԱՇՁԲ17/19 ծածկագրով աշխատանքների կատարման գնման մրցույթի արդյունքում պայմանագիր է կնքվել «Էներգո Ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ի հետ՝ «Լոռի-1» հողմաէլեկտրակայանի առկա թերությունների վերացման աշխատանքների կատարելու վերաբերյալ:

«Լոռի-1» հողմակայանում թիվ 2 և 3 հողմային տուրբինների վնասվածքների վերանորոգման աշխատանքների իրականացումը ներառված է եղել ընկերության 2017թ. գնումների պլանում, որի իրականացման նպատակով ընկերությունը 10.04.2017թ. հայտարարել է պարզեցված ընթացակագրով մրցույթ 14.5 մլն դրամ նախահաշվային արժեքով:

Մրցույթն իրականացվել է պարզեցված ընթացակարգով, որին մասնակցել է միայն «Էներգո Ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ն՝ 14,140,600.0 ՀՀ դրամ գնային առաջարկով:

Հրավերով մասնակցից պահանջվել է «Հողմային տուրբինների տեխնոլոգիաներ և կիրառում» հավաստագիր, լիցենզիաներ չեն պահանջվել:

«Էներգո Ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ի հետ 06.05.2017թ. կնքվել է պայմանագիր, որի արժեքը կազմել է 14,170.6 հազ.դրամ:

Պայմանագրի 6.2 կետով, աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացած օրվա համար նախատեսվել է գանձել տույժ՝ կատարման ենթակա, սակայն՝ չկատարված աշխատանքի գնի մեկ տոկոսի չափով:

Պայմանագրի 8.5 կետով նախատեսվել է պայմանագրի ժամկետի երկարացման հնարավորություն՝ մեկ անգամ 30 օրացուցային օրով: Աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ ստորագրման պահից, 40 աշխատանքային օր, այն է՝ 03.07.2017 թվականը: Վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրման օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Պայմանագրին կից համաձայնագրեր, համաձայն ԲԷՑ-ի տեղեկատվության, չեն կնքվել: Համաձայն ԲԷՑ-ի կողմից տրամադրված փաստաթղթերի լուսապատճենների և տեղեկությունների պայմանագրով կատարվել են հետևյալ աշխատանքները և դրանց դիմաց վճարումները՝

05.03.2018թ. հանձման-ընդունման ակտով, որպես կատարված աշխատանք, հանձնվել-ընդունվել է «Լոռի-1» հողմաէլեկտրակայանի թիվ 3 հողմաագրեգատի վթարված ուղղության շեղման համակարգի (YAW TOP) ատամանաանիվների վերանորոգումը, հանգույցների քսուկապատումը, ABB A9-30-10 թողարկիչի և CT 3503 բլոկի փոխարինումը: 13.03.2018թ. կողմերի միջև ստորագրվել է մեկ այլ հանձնման-ընդունման արձանագրություն: Միաժամանակ ներկայացվել են պայմանագրի կատարման վերաբերյալ եզրակացություն (առանց համարի) և պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտ՝ թիվ 7:

Կատարված աշխատանքների համար «Էներգո Ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից 14.03.2018թ. դուրս է գրվել 7,084,133 ՀՀ դրամի հաշիվ, որը ԲԷՑ-ը վճարել է 16.03.2018թ.:

Անհամապատասխանություններ

- Հրավերով մասնակցի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում առնվազն 660 կՎտ հզորությամբ գեներատորների վերականգնողական աշխատանքների կատարումը:

2) Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը

գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Էներգո Ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում և ընկերության մրցութային փաթեթում բացակայել են որակավորման չափանիշներին, մասնավորապես՝ տեխնիկական չափանիշների, համապատասխանության պահանջված հիմնավորումները

➢ «Էներգո Ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում և ընկերության մրցութային փաթեթում բացակայել են որակավորման չափանիշներին, մասնավորապես՝ տեխնիկական չափանիշների, համապատասխանության պահանջված հիմնավորումները՝ «Հողմային տուրբինների տեխնոլոգիաներ և կիրառում» հավաստագիր, առնվազն 660կՎտ հզորությամբ գեներատորների վերականգնողական աշխատանքների կատարման փորձ և այլն:

Այս դեպքում առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջների հետ: Մասնավորապես, անտեսելով օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, ԲԷՑ-ն «Էներգո Ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար, իսկ վերջինիս համարել ընտրված մասնակից:

➢ ԲԷՑ-ի գլխավոր տնօրենի 03.07.2017թ. թիվ 1-03/1093 գրությամբ պայմանագրով նախատեսված աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են, և որպես հիմնավորում ներկայացվել է VRCC (էլեկտրոնային

Պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 7 ակտում կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները չեն համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական նկարագրով սահմանված ցուցանիշներին

բլոկ, ռեզիստորային բլոկ, կառավարման բլոկ) ամբողջական լրակազմը ձեռք բերելու համար ԲԷՑ-ի կողմից ֆինանսական միջոցներ չնախատեսելը և առանց VRCC-ի ձեռք բերման աշխատանքների անարդյունավետ լինելը: Նշված հիմքով աշխատանքները 30.09.2019թ. դրությամբ դադարեցվել են, սակայն այս մասով համաձայնագիր չի կնքվել և չի արձանագրվել, թե կատարողը այս ընթացքում ինչ աշխատանքներ է կատարել և ինչ գործոններով է պայմանավորվելու պայմանագրի հետագա վերսկսումը, այն լուծվում է, թե ոչ:

➢ Պայմանագրի արդյունքը պատվիրա-տուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 7 ակտում կատարված աշխատանքների քանակական

ցուցանիշները չեն համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական նկարագրով սահմանված ցուցանիշներին: Մասնավորապես՝ տեխնիկական նկարագրով սահմանված է թիվ 3 հողմաագրեգատի 6 կոտրված ատամների վերանորոգում սպեկտրի փոխարինման հատուկ տեխնոլոգիայով և պտտող շարժիչների 4 ատամնաանիվների փոխարինում նորով, իսկ թիվ 7 ակտում նշված է 8 հատ ատամանանիվների փոխարինում և 15 հատ ատամնանիվների վերանորոգում: Տեխնիկական նկարագրով սահմանված ատամնանիվների կարգաբերման, թիվ 3 հողմաագրեգատի գեներատորի և փոխանցման տուփի պտտման առանցքի շեղման վերացման և կարգաբերման աշխատանքներ իրականացված չեն: Փոխարինված չէ ABB A9-30-10 թողարկիչներից մեկը: Կատարված չեն թիվ 2 հողմաագրեգատի համար տեխնիկական նկարագրով սահմանված աշխատանքները՝ 18 հատ կոտրված ատամների վերանորոգումը և կարգաբերումը, թևերի ուղղորդման օղակի վերանորոգումը, PTS 5 PROPORTIONAL TERMOSTAT-ի փոխարինումը: Ակտում նշված է թիվ 3 հողմաագրեգատի ատամանանիվի հենահարթակի ստորին մակերևույթի եզրաելուստի ամբողջ պարագծով ճաքի վերացում, որը նախատեսված չի եղել պայմանագրով: Ընդ որում կատարողը, համաձայն պայմանագրի, պարտավոր է կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման անհատական փորձարկում և մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը, որը չի կատարվել:

- Եզրակացության սյունակներում որպես տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանք նշված է «թիվ 3 հողմագրեգատ», քանակական ցուցանիշները՝ ըստ պայմանագրի 1, փաստացի 1, որոնք չեն համապատասխանում պայմանագրին կից համար 1 հավելվածի («Լոռի-1» հողմաէլեկտրակայանի առկա թերութունների վերացման աշխատանքների մասին տեխնիկական նկարագիր) նկարագրին: Եզրակացությամբ կատարման ժամկետը նշված է՝ 05.03.2018թ. և տրված է դրական եզրակացություն (պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտ՝ թիվ 7):
- 05.03.2018թ. հանձման-ընդունման ակտում նշված չեն, թե քանի ատամնաանիվ է վերանորոգվել «Լոռի-1» հողմաէլեկտրակայանի թիվ 3 հողմաագրեգատի վթարված ուղղության շեղման YAW TOP համակարգում, թե՝ քանի հանգույց է քսուկապատվել, ABB A9-30-10 թողարկիչը և CT 3503 բլոկը մատակարարել է կատարողը, թե՝ տրամադրել է պատվիրատուն:
- 13.03.2018թ. կողմերի միջև ստորագրված մեկ այլ հանձնման-ընդունման արձանագրության բովանդակությունը ընկալելի և համադրելի չէ պայմանագրի դրույթներին:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը ժամանակավորապես դադարեցվել է պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետի օրը, մինչդեռ այդ ընթացքում աշխատանքները պետք է ավարտված լինեին

➢ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը ժամանակավորապես դադարեցվել է պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետի օրը, մինչդեռ այդ ընթացքում աշխատանքները պետք է ավարտված լինեին:

➢ Վերը նշվածից պարզ է, որ «Էներգո Ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ն թույլ է տվել անհամապատասխանություն պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի հետ, իսկ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի ԲԷՑ-ի կողմից միակողմանի ժամանակավորապես դադարեցումը չունի փաստարկված հիմնավորումներ:

➢ Արդյունքում, չնայած վերանորոգման համար փաստացի կատարած 7,084,133.0 ՀՀ դրամի չափով ծախսին, թիվ 3 հողմաագրեգատն այդպես էլ առ այսօր չի աշխատում:

➢ ԲԷՑ-ՊԸԱՇՁԲ17-19 պայմանագրի դրույթներով սահմանված է պատվիրատուի իրավունքը՝ իրականացնել աշխատանքների կատարման որակի և ժամկետի ընթացիկ ստուգում, չընդունել թերություններով կատարված աշխատանքը, դադարեցնել կամ միակողմանիորեն լուծել պայմանագիրը, եթե աշխատանքների կատարման պայմանագրով սահմանված պայմանները խախտվում են, և պահանջել սահմանված տույժերի, տուգանքի և պատճառված վնասների հատուցում կատարողից: Մինչդեռ նշված հանգամանքների ակնհայտ առկայության պարագայում ԲԷՑ-ը չի ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ պատճառվող վնասները կանխելու, արդեն պատճառված վնասները վերականգնելու ուղղությամբ, փոխարենը պայմանագրի վերջնաժամկետից ութ ամիս անց կատարել է աշխատանքների դիմաց վճարում:

ԲԷՑ-ը չի ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ պատճառվող վնասները կանխելու, արդեն պատճառված վնասները վերականգնելու ուղղությամբ, փոխարենը պայմանագրի վերջնաժամկետից ութ ամիս անց կատարել է աշխատանքների դիմաց վճարում

➢ Կատարողի նկատմամբ կիրառելի են պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում յուրաքանչյուր ուշացած օրվա համար նախատեսված տույժի գանձումը՝ կատարման ենթակա սակայն չկատարված աշխատանքի գնի մեկ տոկոսի չափով: Հաշվի առնելով, որ կողմերը չեն արձանագրել որևէ աշխատանքների կատարում,

տույժը պետք է կիրառվի պայմանագրի ամբողջ արժեքի չափով, որը 30.09.2018թ.-իդրությամբ կկազմի 14,170.6 հազ.դրամ (14,170.6 հազ.դրամ x 1% x 100 օր):

- Միաժամանակ՝ ԲԷՑ-ից ստացված գրությամբ ներկայացված տեղեկատվությունից պարզվել է, որ հողմակայանի թիվ 2 և 3 ագրեգատների նորոգման ժամանակ առաջացել են ծրագրային և գեներատորի աշխատանքին վերաբերվող խնդիրներ, որոնց համար ընկերությունը դիմել է իրանական Saba Nieroo ընկերությանը: Նշված փաստը ևս վկայում է, որ «Էներգո Ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ն նշված աշխատանքների կատարման համար չի ունեցել անհրաժեշտ որակավորման չափանիշներին համապատասխանություն:

ԲԷՑ-ի կողմից ներկայացված հաշվարկներով թիվ 2 և 3 ագրեգատների չաշխատելու հետևանքով ընկերության բաց թողնված եկամուտը կազմում է մոտ 152.8 մլն դրամ գումար

- ԲԷՑ-ի կողմից ներկայացված հաշվարկներով թիվ 2 և 3 ագրեգատների չաշխատելու հետևանքով ընկերության բաց թողնված եկամուտը կազմում է մոտ 152.8 մլն դրամ գումար:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր ԲԷՑ-ի կողմից տրամադրված փոխառությունների վերաբերյալ

- Համաձայն ԲԷՑի տրամադրած տեղեկատվության 01.01.2017-30.09.2018թթ. ընթացքում ԲԷՑ-ը տրամադրել է փոխառություններ Հավելված 1-ում նշված իրավաբանական և ֆիզիկական անձանց:
- Հավելվածում նշված անձանցից «Ապարան ԷՑՇ» ԲԲԸ-ի և «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի հետ նշված փոխառության պայմանագրերի կնքումից առաջ և այդ պայմանագրերի գործողության ընթացքում գնումների ընթացակարգով ԲԷՑ-ը կնքել է աշխատանքների կատարման հետևյալ պայմանագրեր՝
- «Ապարան ԷՑՇ» ԲԲԸ-ի հետ՝ 05.09.2018թ. ԲԷՑ-ԳՀ ԱՇՁԲ_ 18/33 պայմանագիրը դեպի «Երևանի ՋԷԿ» Էրեբունի ՕԳ առմուտներ աշխատանքներ կատարելու համար՝ 61,850,000.0 ՀՀ դրամ գումարի չափով,
- «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի հետ՝ 20.07.2018թ. ԲԷՑ-ՀՄԱ- ԱՇՁԲ_18/22 պայմանագիրը Սիփան ՕԳ վերականգնման աշխատանքներ կատարելու համար՝ 38,796,000 ՀՀ դրամ գումարի չափով:
- Այսպիսով ԲԷՑ-ը ֆինանսավորել է այն կազմակերպություններին, որոնք ընկերության հետ վերջինիս կազմակերպած գնումների արդյունքում ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման պայմանագրեր են ունեցել: Ընդ որում փոխառության գումարները, հաշվանցվել են կատարված աշխատանքների համար:

ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/33 պայմանագրի վերաբերյալ

Գնման առարկա՝ «Էրեբունի 220 ԿՎ ՕԳ-ի առմուտներ դեպի ԵԿ 220/110/10 ԿՎ «ԵՐՋԷԿ» աշխատանքներ
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 05.09.2018թ.
Պայմանագրի գումար՝ 61.0 միլիոն դրամ

Անհամապատասխանություններ

- Պայմանագրով կանխավճարի հնարավորություն նախատեսված չէր, և վճարումը պետք է կատարվեր հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրելուց հետո:
- Մինչդեռ 19.09.2018թ.-ին տրված 25.0 միլիոն դրամի չափով փոխառությունը փաստացի տվյալ պայմանագրով աշխատանքները ֆինանսավորելու համար է նախատեսված եղել, քանի որ 02.10.2018թ.-ին ստորագրված հանձնման-ընդունման ակտով մատուցված ծառայություններն ու ապրանքների գինը համընկնում է պայմանագրի գումարի և մինչ այդ պահը հաշվարկված տոկոսագումարի հետ: Բացի այդ 1 օր հետո ընկերությունը գրությամբ խնդրել է նշված ակտի գումարով մարել փոխառության պարտքը:

Պայմանագրով կանխավճարի հնարավորություն նախատեսված չէր, սակայն 19.09.2018թ.-ին տրված 25.0 միլիոն դրամի չափով փոխառությունը փաստացի այս պայմանագրով աշխատանքները ֆինանսավորելու համար է նախատեսված եղել:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- ԲԷՑ-ը 2017-2018թթ.-ին իր կենտրոնական մասնաշենքում /ք. Երևան, Անդրանիկի փ., **27.2 քմ** մակերեսով տարածքը – **16.7 հազար դրամ** ամսական վճարի դիմաց/ և Զովունիում /**171.8քմ** մակերեսով տարածքը – 10 **հազար դրամ** ամսական վճարի դիմաց/ տրամադրել է Ապարանի ԷՑՇ-ին:
- 19.09.2018թ.-ին ԲԷՑ-ը 6 տոկոս տարեկան տոկոսադրույքով 25 միլիոն դրամի չափով փոխառություն է տվել ընկերությանը: Փոխառության տրամադրման նպատակը չի նշվել պայմանագրում:
- Գնման մյուս մասնակից «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Արտաշատի ԷՑՇ/ նշված պայմանագրով ենթակապալառու է: Ամբողջությամբ նույն նկարագրությամբ աշխատանքների համար Արտաշատի ԷՑՇ-ն 14.11.2018թ.-

ին 13,507,555.0 դրամի չափով հարկային հաշիվ է դուրս գրել Ապարանի ԷՑՇ-ին՝ վերջինիս հետ 06.09.2018թ.-ի պայմանագրի համաձայն[9]:

ԲԷՑ-ԲԸԱՀԾՁԲ-17/47 պայմանագրի մասով

Գնման առարկա՝ «Անուշ-Բջնի» 110կՎ ՕԳ-ի թիվ 1-3, «Շահումյան 2 - Էջմիածին» ՕԳ թիվ 100 /1/ հատվածի հենարանների հետ կապված վթարի վերացում:
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 07.04.2017թ.
Պայմանագրի գումար՝ 5.43 մլն. դրամ:

Անհամապատասխանություններ

Ծավալաթերթ-նախահաշիվը ստորագրված չէ

- Պայմանագրի փաթեթի զննությամբ պարզվեց, որ ծավալաթերթ-նախահաշիվը ստորագրված չէ:
- Ապարան ԷՑՇ-ն 03.04.2017թ.-ին կատարված մատակարարման համար /այսինքն պայմանագրի կնքումից 4 օր առաջ/ 11.04.2017թ.-ին ամբողջությամբ նույն գումարի՝ ստացողի կողմից չստորագրված, 13.04.2017թ.-ին գումարի 1 տոկոսից քիչ տարբերությամբ՝ ստորագրված, հարկային հաշիվ էր դուրս գրել Բիգ էներգոյին նույն նկարագրով աշխատանքների համար:
- Հարկային հաշիվը հիմնված էր 01.02.2017թ.-ի /ավելի քան 2 ամիս առաջ կնքված/ ԲԷ-01022017 պայմանագրի վրա: Մինչդեռ 17/47 պայմանագրով չէր նախատեսվում ենթակապալի հնարավորություն:
- Ինչպես գնումների պորտալում, այնպես էլ համացանցում որևէ նյութ առկա չէ գնման վերաբերյալ, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքով պարտադիր է գնումների փաթեթի որոշ մասի /գնման հրավեր, գնման ընթացակարգի արձանագրություն և այլն/[10] հրապարակում:
- 14.04.2017թ.-ին /պայմանագրի կնքումից 7 օր հետո/ պայմանագրի գումարն ամբողջությամբ փոխանցվել է Բիգ Էներգոյին:
- Լրացուցիչ պահանջված բոլոր նյութերը, ԲԷՑ-ի պնդմամբ, առգրավվել են ոստիկանության կողմից:

[9] Իսկ պայմանագրով և գնման հրավերով նախատեսվել էր պայմանագրի առարկայի մինչև 25 տոկոսի չափով ենթակապալ:
[10] Տես «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 9 /մաս 1/, 10, 20 /մասեր 2,3/, 21, 24 /մասեր 1-3/, 26 /մասեր 2, 4/, 35 /մաս 3/

ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/30 պայմանագրի մասով

Գնման առարկա՝ ավտոտեխսպասարկման և նորոգման աշխատանքներ
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 09.08.2018թ.
Պայմանագրի գումար՝ «Մ-բի-ռ» ՍՊԸ-ի մասով /այսուհետ՝ Մ-ԲԻ-Ռ/ - 9.5 միլիոն դրամ, «ԱՎՏՈԴԱՍ» ՍՊԸ-ի մասով /այսուհետ՝ Ավտոդաս/ - 2 միլիոն դրամ

Էլեկտրոնային աճուրդի փոխարեն կիրառվել է գնանշման հարցում ընթացակարգ

Անհամապատասխանություններ

- Սխալ գնման ընթացակարգ է կիրառվել. Էլեկտրոնային աճուրդի փոխարեն գնանշման հարցում /Տես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մաս/: Այսինքն գնման առարկան մտնում է ՀՀ կառավարության N 534-Ն որոշմամբ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եվ ծառայությունների ցուցակի մեջ:
- Հաշվեքննողների կողմից պահանջվել և չեն տրամադրվել Մ-ԲԻ-Ռ-ի 2017-2018թթ. անսարքությունների վերացման ակտերը և դրանց հայտերը, ինչպես նաև սպասարկված մեքենաների մասով ավտոդիագնոստիկայի /եթե թերությունները, փչացումները, կամ անսարքությունները տեսողական են հայտնաբերվում, ապա լուսանկարները կամ տեսաերիզները/ արդյունքները:

Սպուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Մ-ԲԻ-Ռ-ը չի մասնակցել 4 չափաբաժիններից 2-ին, իսկ մյուս երկուսով Ավտոդասն առաջարկել է մոտ 140%-ով ավելի գին:
- Մ-ԲԻ-Ռ-ը հանրային ոլորտում գնումներին ամենահաճախը ընտրված ընկերություններից է /ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի/[11]:
- Բացի այդ նախորդ 2014-2015թթ. Մ-ԲԻ-Ռ ընկերությունը ևս 33.3 միլիոնի ԲԷՑ-ի գնումների ընտրած մասնակից է եղել: 2014-2016թթ.-ին Մ-ԲԻ-Ռ-ն անընդհատ մասնակցել և ընտրվել է 2 կատեգորիայի գնումներում. ավտոտեխսպասարկում և ավտոպահեստամասեր: Այսպիսով, 2014-2018թթ.-ին միայն 2017թ.-ին է, որ Մ-ԲԻ-Ռ-ը մասնակցել, բայց չի շահել որևէ գնումով, սակայն նախորդ տարվա կնքված 2017թ.-ին շուրջ 9,932.0 միլիոն դրամի բանկային փոխանցումներ ունի:

[11] Տես https://transparency.am/files/publications/1475339122-0-450372.pdf

Տեխնիկական սարքերի սպասարկման մասով
Անհամապատասխանություններ

Եվ ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/28, և ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24 գնումների դեպքերում էլ գնման ընթացակարգ է կիրառվել. էլեկտրոնային աճուրդի փոխարեն գնանշման հարցում, ինչը անհամապատասխանություն է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին: Այսինքն գնման առարկան մտնում է ՀՀ կառավարության N 534-Ն որոշմամբ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եվ ծառայությունների ցուցակի մեջ:

Սպուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Ըստ էության և ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/28, և ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24 գնումների դեպքերում հիմնականում գնումներին մասնակցել են կամ նույն անձինք, որոնք նախկինում էլ մասնակցել/ընտրվել էին հատկապես ԲԷՑ-ի գնումներին, կամ առհասարակ գնումներին ամենահաճախ մասնակցած անձանցից են:
- Առհասարակ Անուշ Պետրոսյան ԱՁ-ը, «ՍԵԳ» ՍՊԸ-ը, Գրիգոր Այվազյան ԱՁ-ը և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ը հանդիսանում են հանրային ոլորտում գնումներին հաճախ ընտրվող անձինք /Ըստ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի/[12]:
- Պահանջվել և չեն տրամադրվել ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/28, ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24 պայմանագրերի իրականացման մասով թերությունների ակտերը, զեկուցագրերը՝ բացառությամբ «Այ-սերվիս» ընկերության, ԱՁ Անուշ Պետրոսյանի, ՍԵԳ և Մագիստրալ Նախագիծ ՍՊԸ-ների :

ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/28 պայմանագրերի մասով

Գնման առարկա՝ համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 01.08.2017թ.
Պայմանագրի գումար՝ 10.3 միլիոն դրամ /10.0 միլիոն դրամ - Սմարթ սոլուշնսի մասով, 0.3 միլիոն դրամ - Այ սերվիսի մասով/

Անհամապատասխանություններ

Սմարթ Սոլուշնսը որպես կատարված աշխատանքների ապացույց գնումներից ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/41-ում նշել է ընկերության ներկայիս միակ մասնակից

[12] Տես https://transparency.am/files/publications/1475339122-0-450372.pdf

հանդիսացող «Եղիշանս» ՍՊԸ-ին /Եղիշանս/: Ս.Ա.-ն ոչ միայն ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/41-ի /6.1 միլիոն դրամի չափով, ԵԿ սերվերների սպասարկում/ Շ.Ք.-ի, այլև Եղիշանսի ստացման տակ է ստորագրել: ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/41 գնմանը Սմարթ սոլուշնսի հետ միաժամանակ մասնակցել է նաև «Քրոս Հիթեք» ՍՊԸ-ը /Քրոս/, որին 16-17թթ.-ին Սմարթը 23 միլիոն ապրանքի և ծառայության հաշիվ ապրանքագիր է դուրս գրել: Արտաքին հաստատման ընթացակարգով ստացված տեղեկատվության վերլուծությունից պարզ է դառնում, որ Քրոսը, Սմարթ սոլուշնսը և Եղիշանսը նույն/փոխկապակցված անձանց կողմից են կառավարվում:

Ստուգմամբ արձանագրված այլ փաստեր

- Ընդամենը 14 անգամ /2 անգամ Այ սերվիս – 200,000.0 դրամի չափով, Սմարթ – 3.9 միլիոն դրամի չափով/ ծառայություն է մատուցվել պայմանագրի գործողության ողջ ընթացքում: Պահանջվել և չեն տրամադրվել Սմարթ սոլուշնսի մասով հայտերը կամ հանձնման-ընդունման արձանագրությունները:
- Սմարթ Սոլուշնսի պաշտոնական կայքում ծառայությունների ցանկը սպառիչ է ներկայացված, և բոլորը կապված են միայն ՀԴՄ-ների հետ /վաճառք, սպասարկում և խորհրդատվություն/: Արտաքին հաստատման ընթացակարգով ստացված տեղեկատվությամբ նշված և ընկերության պաշտոնական կայքում առկա ընկերության հասցեները տարբեր են: Բացի այդ ընկերությունն անընդհատ իրականացրել է գործադիր մարմնի, մասնակիցների և հասցեների փոփոխություններ /2013-2018թթ-ին 8 անգամ/:
- Պետական գնումներին մինչ այդ հաճախակի հաղթած Անուշ Պետրոսյան ԱՁ-ի հայտի փաստաթղթերը ոչ մի տեսակի ստորագրություն չունեին:

Ծանոթություն: *ԲԷՑ-ում իրականացված ՀՀ պետական վերահսկողական ծառայության ուսումնասիրությունների արդյունքում մի շարք գործընկերների կողմից 2018թ. կատարվել են փոխհատուցումներ 172.5 մլն դրամի չափով, որոնք ԲԷՑ-ի կողմից ձևակերպվել են «ստացված կանխավճարներ» (523.4) հաշվով: Որպես «ստացված կանխավճար» ձևակերպման համար ընկերությունը տվել է պարզաբանում, համաձայն որի ձևակերպումները նախնական են հիմքերի բացակայության պատճառով: Հաշվի առնելով այն, որ որոշ գործընկերների կողմից ֆիքսված գումարներով ստացվել են փոխհատուցումներ (ընկերության հաշվարկային հաշվին մուտքագրվել են կոնկրետ գումարներ) և որպես մեկնաբանություն նշվել է ՀՀ պետական վերահսկողական ծառայության ակտը, ուստի գործարքի էությունը և բովանդակությունը հակասության մեջ է «ստացված կանխավճար» ձևակերպման հետ:*

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[13]

Նախարարության 2017 թվականի աշխատավարձի ֆոնդը կազմել է 704,539.6 հազ. դրամ, որից 72,602.4 հազ. դրամը «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարների աշխատակազմերի մասով)» ծրագրով, իսկ 631,937.2 հազ. դրամը «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով)» ծրագրով: 2018 թվականի 9 ամսվա աշխատավարձի ֆոնդը կազմել է 404,962.21 հազ. դրամ:

2017 թվականին նախարարությունը ձեռք է բերել և օգտագործել 6,817.2 հազ. դրամի կամ 22.8տ բենզին, իսկ 2018 թվականին՝ 7,427.6 հազ. դրամի կամ 18.57տ բենզին, որից օգտագործել է 7,384.0 հազ. դրամը՝ 18.46տ:

2018 թվականին նախարարությունը «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում» ծրագրով ձեռք են բերել 4,297.08 հազ. դրամի վարչական սարքավորումներ:

Անհամապատասխանություններ

Սխալ հաշվարկի արդյունքում ավելի է վճարվել 8 օրվա աշխատավարձ

Հաշվեքննության ընթացքում վերահաշվարկվել են 2017 թվականի ապրիլ և հոկտեմբեր ամիսների աշխատավարձերը: Պարզվել է, որ հոկտեմբեր ամսվա աշխատավարձի հաշվարկի ընթացքում, մեկ աշխատակցի համար ավելի է հաշվարկվել և վճարվել 8 օրվա աշխատավարձ, որը կազմում է 126.52 հազ. դրամ, որից առձեռն վճարվել է 89.83 հազ. դրամ, իսկ մեկ այլ աշխատակցի աշխատավարձից չի պահվել դրոշմանիշային վճարը, որը կազմում է 9.0 հազ. դրամ՝ 2017 թվականի համար և 12.0 հազ. դրամ՝ 2018 թվականի համար:

[13] «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարների աշխատակազմերի մասով)», «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով)», «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում» ծրագրերի վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի փետրվարի 1-ի թիվ 37-Ն հրամանով սահմանված աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը լրացված են թերություններով:

2017 թվականի երթուղային թերթիկները լրացվել են դրանց լրացման պահանջներին ոչ համապատասխան

Նախարարության 2017 թվականի և 2018 թվականի 9 ամիսների բենզինի օգտագործման հիմք հանդիսացող վառելիքի ծախսի նորմերի, երթուղային թերթիկների, վառելիքի բաշխման վերաբերյալ ամենամսյա ցուցակների հաշվեքննությամբ պարզվել է, որ 2017 թվականի երթուղային թերթիկները լրացվել են ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի փետրվարի 1-ի թիվ 37-Ն հրամանով սահմանված՝ Ձև ԾԽ-6 մարդատար ավտոմեքենաների երթուղային թերթիկների լրացման պահանջներին ոչ համապատասխան, իսկ 2018 թվականի մայիս ամսից դրանք նաև չեն լրացվել ամեն օրվա համար:

Գնումների տեխնիկական բնութագիրը պարունակել է հղում ASUS և Inter Tech առևտրային նշանին և ֆիրմային անվանմանը

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին: Մասնավորապես, նախարարության կարիքների համար գնանշման հարցմամբ իրականացված 3,936.6 հազ. դրամի համակարգչային տեխնիկայի (սեղանի համակարգիչ, CPV 30211220-1) ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով գնումների իրականացման համար մշակված տեխնիկական բնութագիրը պարունակում է հղում ASUS և Inter Tech առևտրային նշանին և ֆիրմային անվանմանը, մինչդեռ ՀՀ օրենսդրությունը սահմանափակում է նման գործողությունները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Այս դեպքում, համաձայն օրենդրության, հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը, ինչը վերոնշյալ տեխնիկական բնութագրում բացակայում է:

Առկա է անհամապատասխանություն գնումների գործընթացի մրցակցային կազմակերպման պահանջի մասով

Այնուամենայնիվ, սեղանի համակարգիչների գնման արդյունքում հաղթող է ճանաչվել «Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է պայմանագիր (ծածկագիր ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-18/4-1), որը հաշվառվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ սեղանի համակարգիչների ձեռքբերման համար իրականացված գնումների արդյունքում հաղթող ճանաչված ընկերությունը մատակարարել է, իսկ նախարարությունը ընդունել է, ոչ թե Inter Tech ֆիրմայի case-եր այլ GoldenField Quebec ֆիրմայինը: **Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ**

հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված գնումների գործընթացի մրցակցային կազմակերպման պահանջի մասով: Մասնավորապես, տեխնիկական բնութագրում նշելով ֆիրմային անվանում, սահմանափակել են մյուս հնարավոր սուբյեկտների մասնակցությունը գնման գործընթացին, մինչդեռ իրականում մատակարարվել է ոչ տվյալ ֆիրմայի, այլ մեկ այլ ֆիրմայի ապրանք:

Հարկ է նշել, որ նույն գնման ընթացակարգի ժամանակ տպիչ սարքերի համար գնման հրավերում նույնպես առկա է հղում HP առևտրային նշանին և ֆիրմային անվանմանը: Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունը տպիչ սարքերի ՀՀ ԷԵԲՊՆ-ԳՀԱՊՁԲ-18/4-2 ծածկագրով գնման պայմանագիրը, որը նախարարությունը կնքել էր «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի հետ, հաշվառման չի վերցրել՝ հաշվի առնելով ֆիրմայի անվանման հղման առկայության հանգամանքը, որի հիման վրա էլ պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիրը չի կիրառվում լիարժեք կերպով

Առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի մասով, համաձայն որի կազմակերպությունները պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով: Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ նախարարությունում լիարժեք չի կիրառվում հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիրը: Ծրագրով հաշվարկվում է միայն աշխատավարձը:

Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր

- Նախարարության երեք ավտոմեքենաների մասով վառելիքի ծախսի նորմերը հաստատվել են նորմայից բարձր: Մանավորապես, ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշմամբ սահմանվել են ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների և մոտոտրանսպորտի վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի նորմաները, իսկ այն մեքենաները, որոնք ընդգրկված չեն ՀՀ կառավարության որոշման մեջ, պետական մարմինը կարող է սահմանել վառելիքի ծախսի ժամանակավոր նորմաներ՝ մեկ տարի ժամկետով:

- 2017 և 2018թթ.-ի համար նախարարությունը 3 ավտոմեքենաների մասով սահմանել է ժամանակավոր նորմեր: Ինտերնետային կայքերի հետազոտությունների[14], ինչպես նաև բանավոր հարցումների արդյունքում առաջացել են նորմերի տարբերություններ (տես աղյուսակը):

Ավտոմեքենայի մակնիշ	Արտադրման տարեթիվ	Նախարարության կողմից հաստատված բենզինի ծախսի ելակետային նորմ	Հարցումների արդյունքում ձևավորված միջին նորմ	Տարբե-րություն
Nissan pathfinder	2001	18.6	16	2.6
Nissan X-Trail NY	2012	18.5	14	4.5
Toyota camry	2016	13	11	2

- Հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների բանավոր հարցմանն ի պատասխան հաշվեքննության օբյեկտի կողմից մեքենաների անսարքությունը հաստատող փաստաթղթեր չեն ներկայացվել:

[14] http://fuelcontrol.info/services/model/noclass/Pathfinder
https://toyota-camry.infocar.ua/mod_2.5-at-comfort_camry_id1329.html
https://avtomera.com/nissan/nissan-x-trail-1-6-2-0-2-2-2-5-rasxod-topliva-na-100-km-pokoleniya-t30-t31-t32/

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 07.03.19թ. թիվ 01ԳԲ/08ԷԴՇ/1395-19 գրության համաձայն, ընդերքի մասով հարուցված են քրեական գործեր, որոնց շրջանակներում առգրավված են հաշվեքննությանը առնչվող փաստաթղթեր տարբեր նախաքննական մարմինների կողմից: Հաշվեքննիչ պալատը՝ ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով, 18.03.2019թ.-ի թիվ 5/3 որոշմամբ կասեցրել է բյուջետային մուտքերի ապահովմանը վերաբերող հաշվեքննության առարկայի շրջանակներում ընդերքի մասով հաշվեքննությունը: Արդյունքում հաշվեքննությունը շարունակվել է բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտների և պետական սեփականության կառավարման մասով:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) պահանջվել և ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1262-Ն որոշմամբ սահմանված՝ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ֆինանսատնտեսական մոնիթորինգի իրականացման ընթացքում ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը տրամադրվող ցուցանիշների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսական արդյունքների հաշվետվությունը: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ 2017թ.-ի և 2018թ.-ի առաջին կիսամյակի համար ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են որոշմամբ սահմանված պահանջներին:

Նախարարության ենթակայության տակ գտնվող պետական մասնակցությամբ առևտրային թվով 12 կազմակերպությունների ֆինանսական դիտարկման արդյունքում 2017թ.-ի համար ընդհանուր եկամուտները կազմել են 118,610,577.0 հազ. դրամ, ընդհանուր ծախսերը՝ 125,744,400.0 հազ. դրամ, իսկ ընդհանուր զուտ շահույթը (նախքան շահութահարկի գծով ծախսի նվազումը)՝ -7,133,824.0 հազ. դրամ: 2018թ.-ի առաջին կիսամյակի համար ընդհանուր եկամուտները՝ 65,376,221.0 հազ. դրամ, ընդհանուր ծախսերը՝ 57,389,358.0 հազ. դրամ, իսկ ընդհանուր զուտ շահույթը (նախքան շահութահարկի գծով ծախսի նվազումը)՝ 7,986,863.0 դրամ:

2017թ.-ի ընթացքում բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներից մուտքերը կազմել են 187,761.0 հազ. դրամ, այդ թվում՝

հազ. դրամ

Հ/Հ	Կազմակերպության անվանում	Գումար
1.	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	163,370.0
2.	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	3,356.0
3.	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	7,695.0
4.	«Հայատոմ» ՓԲԸ	5,803.0
5.	«Անալիտիկ» ՓԲԸ	3,621.0
6.	«Էներգակարգաբերում» ՓԲԸ	3,246.0
7.	«Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	670.0
	Ընդամենը	187,761.0

30.09.2018թ.-ի դրությամբ տվյալ տարում բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենտներից մուտքերը կազմել են 55,652.0 հազ. դրամ, այդ թվում՝

հազ. դրամ

Հ/Հ	Կազմակերպության անվանում	Գումար
1.	«Անալիտիկ» ՓԲԸ	4,961.5
2.	«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	6,751.0
3.	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	14,296.5
4.	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	18,830.0
5.	«Էներգակարգաբերում» ՓԲԸ	2,117.5
6.	«Հայատոմ» ՓԲԸ	8,695.1
	Ընդամենը	55,651.6

Նախարարության ենթակայության տակ գտնվող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում հաշվեքննության ընթացքում արձանագրվել են բազմաթիվ ռիսկեր և խեղաթյուրումներ, որոնք արտացոլում են նախարարության ներքին հսկողության համակարգի պատկերը: Հաշվի առնելով առկա վիճակը, նպատակահարմար է 11 կազմակերպությունների մասով հետագայում իրականացնել կատարողականի հաշվեքննություն, որի միջոցով փորձ կարվի տրամադրել նոր տեղեկություններ, վերլուծություններ, ապահովել խորքային պատկերացում և անհրաժեշտության դեպքում ներկայացնել բարելավմանը ուղղված առաջարկներ՝ համաձայն ISSAI 300-ի: Կատարողականի հաշվեքննության նպատակն է լինելու բացահայտել Նախարարության ներքին հսկողության համակարգում առկա ռիսկերը

և առաջարկությունների միջոցով նպաստել այդ համակարգի բարելավմանը, գործունեության արդյունավետության բարձրացմանը, ինչը թույլ կտա նվազեցնել ֆինանսատնտեսական գործունեության մեջ էական անհամապատասխանություն-ների և խեղաթյուրումների առաջացման ռիսկերը:

«Նաիրիտ-2» ՓԲԸ-ի գույքի օտարման գործընթացի վերաբերյալ

ՀՀ կառավարության 01.03.2018թ. թիվ 200-Ա որոշման համաձայն՝ թույլատրվել է «Նաիրիտ-2» ՓԲԸ-ին (ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող Երևանի Արտաշատի խճուղի 5/1 հասցեում գտնվող 114,642.2 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով շենք-շինությունները և զբաղեցված 10.5813 հա մակերեսով հողատարածքը 626,905.0 հազ. դրամ շուկայական լիկվիդային արժեքով (ներառյալ ԱԱՀ-ն)՝ ուղղակի վաճառքի ձևով օտարել «Ա-Ս Ինվեսթմենթս» ՍՊԸ-ին:

Ընկերության գույքն օտարելու թույլտվության մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը կառավարություն է ներկայացվել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի (այսուհետ՝ Նախարար) կողմից՝ ի կատարումն ՀՀ վարչապետի 28.02.2018թ. հանձնարարականի՝ 1-օրյա ժամկետում: Նախագիծը ՀՀ կառավարություն է ներկայացվել նույն օրը և անմիջապես՝ 01.03.2018թ. հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ: Որոշմամբ նախարարին հանձնարարվել է ապահովել ընկերության և գնորդի միջև գույքի առուվաճառքի պայմանագրի կնքումը, իսկ գնորդի ստանձնած շուրջ 7.5 մլրդ դրամի ներդրումային և 250 նոր աշխատատեղերի ստեղծման առաջարկությունն ընդունվել է ի գիտություն:

Նաիրիտ-2-ի գույքն օտարվել է նորաստեղծ կազմակերպությանը, որի կողմից ներդրումների, դրանց կատարումը վերահսկելու մեխանիզմները բացակայել են:

ՀՀ կառավարության կողմից ուղղակի վաճառքով օտարված գույքի գնորդը՝ «Ա-Ս Ինվեսթմենթս» ՍՊԸ-ն, հիմնադրվել և իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 22.02.2018թ.՝ ՀՀ վարչապետին հասցեագրված գրությունը ներկայացնելուց 1 օր առաջ:

Ընկերության գույքն օտարելու թույլտվության մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է միայն Նախարարության շրջանակներում: Համաձայն «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ և 7-րդ հոդվածների՝ պետական գույքի, այդ թվում՝ ընկերությունների պետական բաժնեմասի կառավարման մարմինը հանդիսացել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը, սակայն վարչության պետի կողմից

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարին ուղղված՝ գնորդի կողմից ներդրումների, դրանց կատարումը վերահսկելու մեխանիզմների վերաբերյալ դրույթներ սահմանելու կապակցությամբ առաջարկությունը հաշվի չի առնվել:

Ընկերության գույքի շուկայական արժեքի գնահատումն իրականացվել է «Նաիրիտ-2» ՓԲԸ-ի պատվերով՝ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից 16.02.2018թ.՝ անշարժ գույքի շուկայական և լիկվիդային արժեքների որոշման նպատակով: Գնահատման ներկայացված հողամասը կազմել է 10.5813 հա, վարչական շենքը՝ 2,390.4 քառ.մ և 50,859.7 քառ.մ մակերեսով 25 անվանում այլ շենքեր, շինություններ: Գնահատումն իրականացվել է ծախսային մեթոդով:

Ըստ գնահատման հաշվետվության՝ գնահատման ենթակա են եղել 6 շենք, շինություններ, իսկ մնացածը կամ ենթակա են ապամոնտաժման, կամ ունեն շատ փոքր մակերեսներ:

Գնահատման արդյունքում հողամասի շուկայական արժեքը հաշվարկվել է 1 քառ. մետրը 5,030.0 դրամ՝ ընդամենը՝ 532,239.0 հազ. դրամ:

Քանի որ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված տարածագնահատման 8-րդ գոտու հողամասի 1 քառ.մ արժեքը սահմանվել է 2940 դրամ, հետևաբար հողամասի չվճարված կադաստրային արժեքը կազմել է 311,090.2 հազ. դրամ (105,813 ք.մ x 2,940.0 դրամ):

Քանի որ գնահատման այլ մեթոդներ չեն կիրառվել, 6 շենք, շինությունների և հողամասի ծախսային մեթոդով գնահատված արժեքը կազմել է 835,873.0 հազ. դրամ:

Ընկերության գույքը համարելով ցածր իրացվելի՝ օտարվել է լիկվիդային արժեքով

Ելնելով գնահատման առաջադրանքից լիկվիդային արժեքը (անշարժ գույքի արժեքը շուկայում ներկայացված նախատեսված ժամկետից ավելի կարճ ժամանակահատվածում իրացման դեպքում, կախված գույքի գրավչությունից և այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից) հաշվարկվել է որպես ցածր իրացվելիություն ունեցող գույքի արժեք: Գնահատված շուկայական արժեքի նկատմամբ կիրառվել է 0.75 գործակից: Լիկվիդային արժեքը կազմել է 626,905.0 հազ. դրամ:

17.04.2018թ. թիվ 05/19.1/2001-18 գրությամբ Նախարարը ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետին է ներկայացրել ՀՀ կառավարության 01.03.2018թ. թիվ 200-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին նախագիծ, որով 5,950.0 հազ. դրամ արժեքով ապամոնտաժման ենթակա գույքը ևս առաջարկվել է օտարել նույն գնորդին: Նախագծին հետագայում ընթացք չի տրվել, սակայն գույքի օտարումն իրականացվել է Նաիրիտ-2 ՓԲԸ-ի նախաձեռնությամբ բորսայական վաճառքի միջոցով:

Անհամապատասխանություն

Գույքի օտարման մասին ՀՀ կառավարության 01.03.2018թ. թիվ 200-Ա որոշման մեջ գույքի գնահատված շուկայական արժեքը չի նշվել: Որպես վաճառքի գին, հաստատված լիկվիդային արժեքում ներառվել է նաև ավելացված արժեքի հարկը՝ 104,484.0 հազ. դրամ գումարով: Այսինքն, գույքի օտարումն, ըստ էության, իրականացվել է 522,421.0 հազ. դրամով (քանի որ, ԱԱՀ-ն ենթակա է վերադարձման): Թե ինչ հանգամանքներից ելնելով են պատասխանատու պաշտոնատար անձինք որոշել կիրառել ուղղակի վաճառքի ձևը և որպես վաճառքի գին՝ լիկվիդային արժեքը, Հաշվեքննիչ պալատը չի կարող մեկնաբանել, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով Հաշվեքննիչ պալատն իր կողմից բացահայտված փաստերի վերաբերյալ որակում չի տալիս և դրանց հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում:

Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր

- Ընկերության և գնորդի միջև կնքվել է միայն անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, իսկ ներդրումների և աշխատատեղերի ստեղծման մասով որևէ պայմանագրային պարտավորություն չի սահմանվել:
- Գնահատման հաշվետվությունում նշվել է, որ գլխավոր հատակագծի վրա առկա են 2 շենքեր, որոնք վաճառված են, սակայն ՀՀ կառավարության որոշման ընդունումը հիմնավորող փաստաթղթերում դրան անդրադարձ չի եղել և որոշումն ընդունվել է առանց հաշվի առնելու այդ հանգամանքը, ինչը պատճառ է հանդիսացել հետագա դատական գործընթացի համար:

«Էներգաիմպեքս» ՓԲԸ-ի վերաբերյալ

Իրան-Հայաստան գազամուղն օգտագործելու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծված «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ի գործունեությունն ուղղորդվել է այլ նպատակային ուղղություններով

«Էներգաիմպեքս» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 4-ի թիվ 798-Ն որոշմամբ: Ըստ նախարարության՝ ընկերության ստեղծման անհրաժեշտությունը հիմնավորվել է Իրան-Հայաստան գազամուղն օգտագործելու արդյունավետությամբ և պետք է նպաստեր պետական բյուջեի տնտեսական ցուցանիշների և հարկային մուտքերի ավելացմանը:

Նախարարի տեղակալի կողմից 11.01.2017թ. ստորագրվել է հուշագիր իրանական «National Iranian Gas Company» ընկերության հետ՝ «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ի միջոցով գազի առուվաճառքի վերաբերյալ:

Ընկերությունը «Արդշինբանկ» ՓԲԸ-ի հետ կնքել է 3 վարկային պայմանագրեր, իսկ Բարձրավոլտ էլեկտրացանցեր (այսուհետ ԲԷՑ) ՓԲԸ-ի հետ՝ 1 փոխառության պայամանագիր:

Պայմանագրի համարը, կնքման ամսաթիվը և գործողության ժամկետը	Վարկի կամ փոխառության ստացման ամսաթիվը	Վարկի կամ փոխառության մարման ամսաթիվը՝ ըստ պայմանագրի	Վարկի կամ փոխառության տոկոսադրույքը	Վարկի կամ փոխառության հիմնական գումարի չափը (հազ. դրամ)
1	2	3	4	5
ԱՎՊ 17/16-47 24.03.17-24.07.17	24.03.2017	24.07.2017	10	471,000.0
ԱՎՊ 17/24-47 20.04.17-20.08.17	20.04.2017	20.08.2017	10	1,109,000.0
ԱՎՊ 17/39-47 25.05.17-27.06.17	25.05.2017	27.06.2017	10	751,000.0
Փոխառություն	15.02.2017	15.08.2017	3	20,000.0
Ընդամենը				2,351,000.0

Վարկերը ստացվել են էլեկտրաէներգիա ձեռք բերելու հիմնավորումով՝ բացառապես «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (այսուհետ՝ ՀԷՑ) փոխանցվելու պայմանով: Վարկերի և փոխառության մարումն իրականացվել է ժամանակին:

Նախարարը գրությամբ դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահին՝ Հայաստանի և Վրաստանի միջև էլեկտրական էներգիայի փոխհոսքերը իրականացնելու գործառույթի լիցենզիա տրամադրելու համար՝ հիմնավորմամբ, որ գործարքի արդյունքում կկրճատվեն էլեկտրաէներգետիկական համակարգի ծախսերը:

Հանձնաժողովի 16.02.2017թ. N 39-Ա որոշմամբ թույլատրվել է Վրաստանից էլեկտրական էներգիայի փոխհոսքերի իրականացում, իսկ N 40-Ա և N 41-Ա որոշումներով տրվել են արտահանման և ներկրման լիցենզիաներ՝ մինչև 16.02.2019թ. գործողության ժամկետով:

Ընկերության և վրացական կողմից «Global International Energy Corporation» (հասցեն՝ 15, Gartmore Road, Uford, Essex, IQ 39XQ, UK) կազմակերպության հետ կնքվել են երկու պայմանագրեր՝ 14.02.2017թ. թիվ 1 պայմանագիրը՝ «էլեկտրաէներգիայի փոխանակման (գնման-վաճառքի)» մասին մինչև 01.01.2028թ. ժամկետով և 05.10.2017թ. թիվ 2 պայմանագիրը՝ «էլեկտրաէներգիայի գնման-վաճառքի» մասին մինչև 01.01.2028թ. ժամկետով: Պայմանագրով գործարք չի կատարվել:

Անհամապատասխանություններ

Վարկային պայամանգիրը կնքվել է առանց Հանձնաժողովի համաձայնության

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի հետ կնքած վարկային պայմանագրի «Երաշխավորության» պայմանագրով ԲԷՑ-ը համապարտ պատասխանատվություն է կրել «Արդշինբանկ» ՓԲԸ-ի առջև գրավի պայմանագրով ստանձնած պարտավորությունների մասով: Վարկային պայմանագրում նշվել է, որ գործարքի իրականացման համար առկա են իրավասու մարմինների թույլտվություններն ու համաձայնությունները, մինչդեռ Հանձնաժողովի համաձայնությունը չի եղել: Առկա է անհամապատասխանություն լիցենզիայի պայմանների և «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջների հետ:

14.02.2017թ. N 1 պայմանագրի հավելված 3-ով սահմանվել է 1 կվտ/ժ-ի գինը՝ 0.05 ԱՄՆ դոլար, իսկ որպես վճարման սկզբունք ընդունվել է, որ Ընկերության առաքած 1 կվտ/ժ հոսանքի դիմաց վրացական կողմը պետք է փոխանցի 1.05 կվտ/ժ հոսանք: Էլեկտրական էներգիայի գնումը և վաճառքը, ինչպես նաև 1 կվտ/ժ-ի գինը նախատեսվել է իրականացնել լրացուցիչ համաձայնագրերի հիման վրա՝ ըստ համաձայնեցված գրաֆիկների: Ընդ որում, պայմանագիրը Հանձնաժողովում գրանցվել է լիցենզիայի տրամադրման օրը:

Թիվ 1 պայմանագրին կից կնքվել են 7 համաձայնագրեր, որոնք, ըստ պայմանագրի, ուժի մեջ կարող էին մտնել Հանձնաժողովում և «Վրաստանի պետական Էլեկտրահամակարգ» ընկերությունում գրանցվելուց հետո: Թիվ 1, 2, 4, 5 և 6 համաձայնագրերով կատարվել են էլեկտրաէներգիայի ներկրման/արտահանման ժամկետների և ծավալների փոփոխություններ:

25.03.2017թ. թիվ 3 համաձայնագրով պայմանագրում ավելացվել են դրույթներ Հանձնաժողովի 16.02.2017թ. N 39-Ա որոշումից, հանվել է «Վրաստանի պետական Էլեկտրահամակարգ» ընկերությունում գրանցման պահանջը, և դրանց

տրվել է հետադարձ ուժ՝ գործողությունը տարածելով պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից (համաձայնագիրը գրանցվել է Հանձնաժողովում 26.04.2017թ. կամ մեկ ամիս հետո):

Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի և լիցենզիայի պայմանների՝ ընկերության և վրացական կողմի՝ «Global International Energy Corporation» կազմակերպության միջև 14.02.2017թ. կնքված «էլեկտրաէներգիայի փոխանակման (գնման-վաճառքի)» թիվ 1 պայմանագիրը ըստ պայմանագրի 13-րդ մասի, պետք է գրանցվեր Հանձնաժողովում, ինչպես նաև՝ «Վրաստանի պետական էլեկտրահամակարգ» ընկերությունում և դրանից հետո միայն, պայմանագիրը պետք է մտներ ուժի մեջ: Սակայն Հանձնաժողովում գրանցելուց հետո էլեկտրաէներգիայի մատակարարումները կատարվել են առանց «Վրաստանի պետական էլեկտրահամակարգ» ընկերության կողմից պայմանագրի գրանցման:

Փոխհոսքի սկզբունքից շեղվելու արդյունքում գումարային փոխհատուցման սահմանաչափեր սահմանված չեն:

19.02.2018թ. թիվ 7 համաձայնագրով կատարվել է գնի փոփոխություն վրացական կողմից փոխհոսքի սկզբունքի պայմանով նախատեսված՝ 16.02.2017-31.01.2018թթ. ժամանակահատվածում 36,951,518.2 կվտ/ժ էլեկտրաէներգիան չմատակարարելու հետևանքով: Համաձայնագրում արձանագրվել է, որ վրացական կողմը չի կարող որպես փոխհոսք ընդունել հայկական կողմից արտահանման ենթակա 36,951,518.2 կվտ/ժ էլեկտրաէներգիան և պատրաստ է դրա փոխարեն ընդունել գումարային վճար՝ 1 կվտ/ժ-ը 0.048 ԱՄՆ դոլարի հաշվարկով՝ ընդամենը 1,773,672.8 ԱՄՆ դոլար (համաձայնագիրը գրանցվել է Հանձնաժողովում 23.02.2018թ.):

Ըստ նախարարության ենթակայության «Հաշվարկային կենտրոն» ընկերության տեղեկատվության՝ 2017թ. ընթացքում ներկրվել է 178.7 մլն կվտ/ժ, 4,287.7 մլն դրամի արժեքով էլեկտրաէներգիա, ներկրումն իրականացվել է մայիս-սեպտեմբեր ժամանակահատվածում: Ընկերությունը 2017թ. փետրվար, մարտ, ապրիլ, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին արտահանել է 127.4 մլն կվտ/ժ՝ 3,081.2 մլն դրամի էլեկտրաէներգիա:

2018թ.-ին ներկրում չի եղել, արտահանվել է միայն հունվար ամսին՝ 7.6 մլն կվտժ 178.5 մլն դրամի էլեկտրաէներգիա: Ընդամենը 2017-2018թթ. արտահանվել է 135.0 կվտ/ժ՝ 3,259.7 մլն. դրամ արժեքով էլեկտրաէներգիա:

15.02.2017թ. Ընկերության և ՀԷՑ-ի միջև, մինչև 2018թ. փետրվարի 1-ը գործողության ժամկետով, կնքվել է էլէկտրական էներգիայի փոխանակման (առուվաճառքի) թիվ ENA-16-178 պայմանագիրը, ըստ որի կողմերից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ և՝ որպես վաճառող, և՝ որպես գնորդ: ՀԷՑ-ի հետ կնքված պայմանագիրը գրանցվել է Հանձնաժողովում 16.02.2017թ.:

Ըստ պայմանագրի, էլեկտրաէներգիայի առուվաճառքի գինը որոշվում է համաձայն Հանձնաժողովի էներգիայի փոխհոսքերի իրականացման մասին որոշման: «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ի կողմից ՀԷՑ-ից էլեկտրական էներգիայի ձեռքբերման և վաճառքի գինը 1 կվտ/ժ–ի համար սահմանվել է 15.459 դրամ, առանց ԱԱՀ-ի՝ համաձայն թիվ ENA-16-178 պայմանագրի հավելված 1-ի:

Փոխհոսքերի գործառույթի իրականացմամբ պայմանավորված Ընկերության կրած ծախսերը փոխհատուցվում են ՀԷՑ-ի կողմից: Գնված յուրաքանչյուր 1 կվտ/ժ-ի համար վճարվել է 1.8 դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Բացի դրանից այլ վճարներ չեն սահմանվել:

Գնված կամ վաճառված էներգիայի քանակական հաշվառումն իրականացվել է Հանձնաժողովի 16.09.2004թ. N 110-ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: Պայմանագրի Հավելված 2-ով և Հավելված 3-ով տրվել են հաշվառքի ու վճարումների մասին ձևանմուշները, որոնք ենթակա են հաստատման նաև «Հաշվարկային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից:

Թիվ ENA-16-178 պայմանագրին կից 31.01.2018թ. կողմերը կնքել են լրացուցիչ համաձայնագիր, որով փոփոխություններ են կատարվել պայմանագրում, մասնավորապես՝

- պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 01.02.2019թ.,
- ավելացվել է նոր կետ, որով «կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին փոխադարձ վաճառել սույն պայմանագրի շրջանակներում իր կողմից գնված էլեկտրաէներգիան՝ ՀԷՑ-ի 1 կվտ/ժ-ն հավասար Ընկերության 1.05 կվտ/ժ-ի համամասնությամբ» (որոշվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների ուժով կիրառել 16.02.2017 թվականից),
- փոխվել է առուվաճառքի գինը՝ 15.459 դրամի փոխարեն 20.284 դրամ (որոշվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների ուժով կիրառել 01.02.2018 թվականից),
- նշվել է, որ մինչև 31.01.2018թ. ՀԷՑ–ի կողմից Ընկերությանը պակաս է մատակարարվել 35,191,916.33 կվտ/ժ, որի դիմաց ՀԷՑ-ը պարտավորվել է վճարել 275,236.0 հազ. դրամ հրաժարագին (որոշվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների ուժով կիրառել 31.01.2018 թվականից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ):

Հրաժարագինը վճարվել է 24.05.2018 թվականին: Ընկերությունը հրաժարագնին ավելացրել է իր հաշիվներին առկա գումարներից (որոնք առաջացել էին ՀԷՑ կողմից 15,456.0 սակագնով կատարված վճարումներից) և 1,773,672.8 ԱՄՆ դոլար փոխանցել է վրացական կողմին:

01.02.2018-01.02.2019թթ. ժամանակահատվածում նախատեսված է եղել իրականացնել 100 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիայի փոխհոսք:

Ընկերության 2017թ. ֆինանսական հաշվետվությամբ արձանագրվել է 140,000.0 հազ. դրամի չափով վնաս: Փոխհոսքերի իրականացման ամբողջ ծախսային մասը կատարվել է 2017 ֆինանսական տարվա ընթացքում, իսկ եկամտային մասը տեղափոխվել է 2018թ.:

Անհամապատասխանություններ

ՀԷՑ-ի հետ կնքված պայմանագիրը գրանցվել է Հանձնաժողովում 16.02.2017թ.-ին: Ընդամենը 2 ամիս հետո՝ 20.04.2017թ. թիվ 01/19.1/2191-17 գրությամբ Նախարարը Ընկերությանն առաջարկել է ընդգրկել պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ. ծրագրում՝ հիմնավորելով, որ մասնավորեցման դեպքում Ընկերության գործունեությունը կլինի ավելի արդյունավետ և ճկուն:

Հիմնադրվելուց ընդամենը 8 ամիս հետո Ընկերութունն ընդգրկվել է մասնավորեցման ծրագրում:

Ընկերությունն ընդգրկվել է պետական գույքի մասնավորեցման 2017-2020թթ. ծրագրում, իսկ բաժնետոմսերի տնօրինման լիազորությունը 28.11.2017թ. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունից փոխանցվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը: 01.07.2017թ. դրությամբ ներկայացված ելակետային տվյալների հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից ՀՀ կառավարություն է ներկայացվել որոշման նախագիծ՝ Ընկերության 100% պետական բաժնեմասը դասական աճուրդով մասնավորեցնելու մասին՝ 196,592.0 հազ. դրամ մեկնարկային արժեքով: Գույքի կազմում գնահատված՝

- ակտիվների արժեքը կազմել է 1,296,810.0 հազ. դրամ,
- պարտավորությունները (ակտիվներից նվազեցվող)՝ 1,100,218.0 հազ. դրամ, այդ թվում
- կարճաժամկետ բանկային վարկեր՝ 1,078,060.0 հազ. դրամ,
- կարճաժամկետ փոխառություններ՝ 20,224.0 հազ. դրամ:

Մասնավորեցման վերաբերյալ որոշում չի ընդունվել, իսկ ՀՀ կառավարության 06.02.2019թ. թիվ 108-Ա որոշմամբ Ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունը կրկին վերապահվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը ու առաջարկվել Ընկերությունը հանել մասնավորեցման ծրագրի ցանկից:

- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից

17.05.2018թ. Ընկերությունում կատարվել է 2017թ. տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգում: Մինչդեռ, 28.11.2017 թվականից բաժնետոմսերի տնօրինման լիազորությունը ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունից արդեն փոխանցվել էր ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

- Մասնավորեցման նպատակով, որպես պասիվ (ակտիվներից հանվող) գնահատված կարճաժամկետ բանկային վարկերը (1,078,060.0 հազ. դրամ) «Արդշինբանկ» ՓԲԸ-ից ստացված վարկի մնացորդն է, որը 20.08.2017թ. դրությամբ արդեն մարվել է և 01.07.2017թ. դրությամբ ներկայացված տվյալներով գույքի գնահատումը չի արտահայտում փաստացի իրավիճակը:

Ընկերությունն ընդգրկվել է մասնավորեցման ծրագրում՝ առանց Հանձնաժողովի համաձայնության

- Ընկերությունը հանդիսանում է էներգետիկայի ոլորտում լիցենզավորված անձ, հետևաբար, ըստ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 17-րդ, 27-րդ հոդվածների և լիցենզիայի պայմանների առանց Հանձնաժողովի կողմից նախապես ստացված թույլտվության չի կարելի վաճառել լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմսերը: Մինչդեռ մասնավորեցման ծրագրում ընդգրկելու առաջարկությունում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից Հանձնաժողովի համաձայնությունը չի պահանջվել:

Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր

Հաշվեքննության ընթացքում ընկերությունը դուրս է բերվել մասնավորեցման ծրագրից

- Վրաստանից առաքված էլեկտրաէներգիան ձեռք է բերվել ՀԷԿ-երի ակտիվ գործունեության ժամանակահատվածում, երբ 1 կվտժ հոսանքի արտադրության սակագինը Վրաստանի ՀԷԿ-երի համար սահմանվել է մոտ 0.02 ԱՄՆ դոլար (Տեղեկատվությունը համապատասխանում է Վրաստանի էներգետիկայի և ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովի (GNERC.org), regnum.ru (21.12.2016) ինտերնետային կայքերին): Գումարի փոխհատուցման մասին համաձայնագիրը կնքվել է 0.048 ԱՄՆ դոլարի հաշվարկով կամ այդ սակագնից 2.4 անգամ ավելի:
- Ընկերության հիմնադրումից ընդամենը 8 ամիս, իսկ լիցենզավորված գործունեությունը սկսելուց 2 ամիս հետո, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի կողմից

20.04.2017թ. թիվ 01/19.1/2191-17 գրությամբ առաջարկվել է Ընկերության 100% պետական բաժնետոմսերը մասնավորեցնել, սակայն հետագայում ՀՀ կառավարության 06.02.2019թ. թիվ 108-Ա որոշմամբ առաջարկվել է Ընկերությունը հանել մասնավորեցման ծրագրի ցանկից:

- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 17.05.2018թ. ստուգմամբ եզրակացություն է կազմվել, որ հաշվեկշռում արտացոլված տարեկան ցուցանիշների համաձայն 2017թ. հաշվեկշիռը ոչ բավարար է, իսկ Ընկերությունը՝ անվճարունակ, այն դեպքում, երբ Ընկերության զուտ շահույթը 31.03.2018թ. դրությամբ արդեն կազմել է 350,173.0 հազ. դրամ, կուտակված դրամական միջոցները՝ շուրջ 180,000.0 հազ. դրամ:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջնորդվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում գնահատվել է նախարարությունում գործող ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը: Գնահատման համար չափանիշ է ընտրվել համակարգի գործունեության բարելավմանը և հավելյալ արժեքի ստեղծմանը նպաստող գործառույթների պատշաճ կատարումը՝ ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան, որը նախարարության աշխատակազմում գործող ներքին աուդիտի բաժնին վերապահված լիազորությունն է:

Անհամապատասխանություններ

- Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 146-րդ կետի 4-րդ ենթակետի՝ աուդիտի տարեկան ծրագրի մշակումն ընդգրկում է ծրագրում ներառված առաջադրանքների բաշխումը ամսական կտրվածքով՝ բացառելով անհամապատասխանությունները: Ներքին աուդիտի բաժնի վավերացված տարեկան ծրագրերով առաջադրանքների անցկացման ժամանակացույց չի սահմանվել:
- ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 305-րդ կետի պահանջին համապատասխան՝ ներքին աուդիտի բաժնի կողմից տարեկան գործունեության հաշվետվություններ նախարարին և ներքին աուդիտի կոմիտեին չեն ներկայացվել:
- ՀՀ ֆինանսների նախարարի 2011թ. դեկտեմբերի 8-ի N 974-Ն հրամանի հավելվածի 233-րդ կետի համաձայն՝ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կազմակերպության հսկողության գործընթացների վերաբերյալ հաշվետվությունը կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնում է յուրաքանչյուր տարի: Հսկողության գործընթացների վերաբերյալ պահանջված հաշվետվությունները հաշվեքննության օբյեկտի կողմից չեն ներկայացվել:
- ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի 314-րդ կետին համապատասխան՝ նախարարի հրամանով հաստատվող՝ արձանագրված խախտումների և թերությունների վերացման վերաբերյալ գործողությունների ծրագրեր հաշվեքննության օբյեկտի կողմից չեն կազմվել:

Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր

- Ներքին աուդիտի բաժնի 2017թ. տարեկան ծրագրով նախատեսված է եղել աուդիտի ենթարկել թվով 8 աուդիտի ենթակա միավոր, որոնցից 2 միավոր աուդիտի չի ենթարկվել: Դրանց թվում են «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ և ԲԷՑ-ը, որը 2017թ. հանձնվել է հավատարմագրային կառավարման «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ին: Ներքին աուդիտի բաժնի 2018թ. տարեկան ծրագրով նախատեսված է եղել աուդիտի ենթարկել թվով 10 աուդիտի ենթակա միավոր, որոնցից 4 միավոր աուդիտի չի ենթարկվել: Դրանց թվում են «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Հայատոմ», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Երևանի ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունները: ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված 2017թ. և 2018թ. տարեկան ամփոփ հաշվետվությունների մեջ աուդիտի առաջադրանքների չկատարման պատճառ է նշվել ռեսուրսների ոչ բավարար լինելը, մինչդեռ առաջադրանքների իրականացման համար ռեսուրսները, ըստ էության, պետք է սահմանված կարգով պլանավորված լինեին մինչև տարեկան ծրագրերի վավերացումը:
- Նախարարության էներգետիկայի պետական տեսչությունում 2017թ. տարեկան ծրագրով նախատեսված ֆինանսական աուդիտի փոխարեն իրականացվել է համապատասխանության աուդիտ:
- Նախարարության 08.06.2012թ. N-38-Ա հրամանի 7-րդ կետի համաձայն՝ ներքին աուդիտի կոմիտեն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: 2017թ. ներքին աուդիտի կոմիտեի նիստ անցկացվել է ընդամենը մեկ անգամ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ քննության առնել սույն ընթացիկ եզրակացությունում առկա անհամապատասխանությունների և խեղաթյուրումների հնարավոր ազդեցությունը համապատասխան սակագների ձևավորման գործընթացի վրա:

«Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» վարկային և դրամաշնորհային ծրագրերի մասով

- Քննարկել ծրագրերը փաստացի դադարեցնելու դրդապատճառները, դրանց իրավաչափությունը և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ծրագրերի հետագա ընթացքը չվտանգելու ուղղությամբ՝ նկատի ունենալով Հանրապետության էներգետիկ անվտանգության և հուսալիության հիմնահարցերի վրա դրանց հնարավոր էական ազդեցությունը:
- Ծրագրերի նոր միջոցառումների (տեխնիկական լուծումների) վերաբերյալ որոշումներում հաշվի առնել, որ ծրագրերի միջոցառումները սահմանված են վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով, ինչպես նաև քննարկել ծրագրերի սկզբից ծախսված ավելի քան 5.5 մլն եվրոյի, իսկ ծրագրերի դադարեցման դեպքում ֆինանսավորող աղբյուրների կողմից մոտ 13.9 մլն եվրո տույժի կիրառման հարցերը:

«ԱԶԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220կվ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման ծրագիր»-ի մասով

- Քննարկել վարկային ծրագրի շրջանակներում պայմանագրի իրականացման ընթացքում առաջացած ուշացումների, դրանց արդյունքում կապալառուի նկատմամբ հաշվարկվող տույժի կիրառման հարցը և տալ համապատասխան լուծումներ:

«Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (այսուհետև՝ KFW) աջակցությամբ իրականացվող Գյումրի-2 ենթակայանի վերականգնման ծրագիր» - մեքենամեխանիզմների ձեռք բերման մասով

- Քննարկել վարկային ծրագրի շրջանակներում պայմանագրի իրականացման ընթացքում առաջացած ուշացումների, դրանց արդյունքում կապալառուի նկատմամբ հաշվարկվող տույժի կիրառման հարցը և տալ համապատասխան լուծումներ:

«Իրան-Հայաստան 400կՎ երրորդ էլեկտրահաղորդման գծի և «համապատասխան ենթակայան» օբյեկտի շինարարության ծրագիր»-ի մասով

- Քննարկել վարկային ծրագրի շրջանակներում պայմանագրի իրականացման ընթացքում ուշացումների հարցը և տալ համապատասխան լուծումներ:
- Քննարկել «Սանիր» ընկերությանը տրամադրված փոխառության վերադարձման հարցը և տալ համապատասխան լուծումներ:

«Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր»-ի մասով

- Քննարկել վարկային ծրագրի շրջանակներում պայմանագրերի իրականացման ընթացքում ուշացումների, դրանց արդյունքում կապալառուների նկատմամբ հնարավոր տույժերի կիրառման միասնական մոտեցման հարցը և տալ համապատասխան լուծումներ:

«Վերակառուցման և զարգացման համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիություն ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման», «Վերակառուցման և զարգացման համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրերի մասով

- Քննարկել վարկային ծրագրի շրջանակներում պայմանագրերի իրականացման ընթացքում ուշացումների, դրանց արդյունքում կապալառուների նկատմամբ հնարավոր տույժերի կիրառման միասնական մոտեցման հարցը և տալ համապատասխան լուծումներ:
- Քննարկել «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման աշխատանքների կասեցման հարցը և տալ համապատասխան լուծումներ՝ հաշվի առնելով, որ ծրագրի սկզբից կապալառուին վճարվել էր 1,246,041.0 ԱՄՆ դոլարի կանխավճար և 30.09.2018թ. դրությամբ աշխատանքներ չեն իրականացվել:

«Նաիրիտ-2» ՓԲԸ-ի մասով

- Պետական բաժնեմասով առևտրային կազմակերպությունների գույքի օտարման գործընթացը իրականացնել ՀՀ պետական գույքի կառավարման մարմնի՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի ՀՀ կառավարություն ներկայացված առևտրային կազմակերպության գործունեության բարելավմանն ուղղված առաջարկությունների և գնորդի ստանձնած ներդրումային պարտավորությունների առկայության դեպքում՝ դրանց կատարման վերահսկման մեխանիզմների հիման վրա:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Հաշվեքննության /ստուգման/ գործընթացի կազմակերպման մասով

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԲԷՑ ՓԲԸ-ում ստուգման ընթացքում Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների՝ ստուգման վերաբերող օրինական պահանջներին մի շարք դեպքերում պատշաճ ընթացք չի տրվել հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձանց կողմից, մի շարք դեպքերում չի պահպանվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջը, ըստ որի հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձը պարտավոր է հաշվեքննության ընթացքում հաշվեքննողի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հաշվեքննության առարկայի վերաբերյալ առկա և հասանելի ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, փաստաթղթեր և գրանցումներ, ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով, առաջարկվում է պատասխանատվության ենթարկել ստուգման օբյեկտի համապատասխան պաշտոնատար անձանց:

«Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» վարկային և դրամաշնորհային ծրագրերի մասով

- Վարկային և դրամաշնորհային ծրագրերում փոփոխություններ իրականացնելու նախաձեռնության դեպքում հիմք ընդունել ՀՀ ԱԺ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված պահանջները, ինչպես նաև հաշվի առնել ծրագրի սկզբից կատարված ծախսերը և ծրագրի դադարեցման դեպքում ֆինանսավորող աղբյուրների կողմից տույժի կիրառումը:

- ՀՀ էներգետիկական համակարգի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված տեխնիկական հանձնաժողովի կողմից նոր միջոցառումների (տեխնիկական լուծումների) վերաբերյալ առաջարկություններում հիմք ընդունել վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով հաստատված միջոցառումները:

«Իրան-Հայաստան 400կՎ երրորդ էլեկտրահաղորդման գծի և «համապատասխան ենթակայան» օբյեկտի շինարարության ծրագիր»-ի մասով

- Քննարկել ԲԷՑ-ի կողմից ծրագրի վերաբերյալ ՀՀ կառավարության 09.07.1998թ. թիվ 429 որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան հաշվետվությունների տրամադրման հարցը:

Իրան-Հայաստան գազատարի առաջին հատվածի մասով

- Գազատարի նման տնտեսական մոդելով շահագործելը արդյունավետ չէ՝ նկատի ունենալով, որ սեփականատերը կարող է այն իրական գնով օտարել, ներդնել որպես բաժնային սեփականություն, որպես ոչ պրոֆիլային ակտիվ կամ շահագործել՝ նշված կոմունիկացիան անմիջականորեն օգտագործելով ԲԷՑ-ի կողմից որպես գազի ներմուծման և հետագա իրացման միջոց: Նշված ցանկացած տարբերակի կիրառումը կբերի անհամեմատ ավելի շատ եկամուտ ԲԷՑ-ին, քան ներկա շահագործման տարբերակը:
- Գազատարի կառուցման շրջանակներում ձեռք բերված խողովակների այն մասը, որը չի օգտագործվել կառուցման մեջ, հաշվառել ըստ չափանիշերի, կազմակերպել սահմանված կարգով դրանց պահպանման համապատասխան պայմանները, գազատարի օտարման դեպքում՝ խողովակներն օտարել աճուրդային եղանակով:
- Օրենքով թույլատրելի տարբերակներով կանոնակարգել գազատարի շահագործման իրավական ռեժիմը՝ գույքի տեսակի հետ կապված իրավաբանական բոլոր անհրաժեշտ գործողությունների կատարման ապահովմամբ:

«Էներգաիմպեքս» ՓԲԸ-ի մասով

- Իրականացնել փոխհոսքի սկզբունքով կնքված պայմանագրերի կողմ հանդիսացող երկրներում էլեկտրաէներգետիկական շուկայի մշտադիտարկում և վերահսկել մատակարարման գների ձևավորման արդյունավետությունը:
- Փոխհոսքի սկզբունքը պահպանելու նպատակով պայմանագրերում սահմանել դրամային վճարման ողջամիտ սահմանաչափեր:
- Հաշվի առնելով, որ «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ի ստեղծման նպատակ է հանդիսացել Իրան–Հայաստան գազամուղի օգտագործման արդյունավետության բարձրացումը, սակայն իրականում գործունեությունն

իրականացվել է այլ ուղղությամբ, հետևաբար առաջարկվում է այսուհետ Ընկերության գործունեությունն համապատասխանեցնել նախատեսված նպատակներին:

- Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի համար առավել արդյունավետ կլիներ Վրաստանի հետ փոխհոսքերը իրականացնել անմիջականորեն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության միջոցով, առանց միջնորդ կազմակերպության: Քանի որ գործարքից առաջացող շահույթի միջոցները կկուտակվեին ոչ թե միջնորդ կազմակերպության հաշվին, այլ անմիջապես բաշխող ընկերության հաշվին, որն էլ կարող էր հիմք հանդիսանալ Հանձնաժողովի կողմից բնակչությանը և այլ սպառողներին մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների վերահաշվարկի համար:

Ներքին աուդիտ մասով

- Քայլեր ձեռնարկել նախարարության ներքին աուդիտի համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝ հատկապես հաշվի առնելով սույն ընթացիկ եզրակացությունում արձանագրված էական անհամապատասխանությունները:

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ԻՆ

«ԱԶԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220կվ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման ծրագիր»-ի մասով

- Ենթակապալառուների հաստատման գործընթացում՝ հիմք ընդունել կապալառուի մրցութային փաթեթում սահմանված ենթակապալառուների որակավորման նվազագույն չափանիշները:
- Կապալառուից պահանջել պայմանագրի գնացուցակում չներառված և մատակարարված ապրանքների մաքսազերծման ծախսերի հատուցում:
- Պայմանագրի պայմաններին համաձայն՝ Կապալառուին ներկայացնել ուշացման տույժի պահանջ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար պայմանագրի գնի 0.1%-ի չափով (տույժի առավելագույն չափը կազմում է պայմանագրի գնի 10%-ը):

«Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (այսուհետև՝ KFW) աջակցությամբ իրականացվող Գյումրի-2 ենթակայանի վերականգնման ծրագիր» - մեքենամեխանիզմների ձեռք բերման մասով

- Պայմանագրի պայմաններին համաձայն՝ Կապալառուին ներկայացնել ուշացման վնասի հատուցման պահանջ՝ շաբաթական 1.5% մատակարարման գնից (առավելագույն գումարը կազմում է պայմանագրի գնի 10%-ը):
- Գնման նախահաշվի կազմման համար իրականացվող շուկայական ուսումնասիրության գործընթացը փաստաթղթավորել, նշել դրանց տեղեկատվության աղբյուրները:

«Իրան-Հայաստան 400կՎ երրորդ էլեկտրահաղորդման գծի և «համապատասխան ենթակայան» օբյեկտի շինարարության ծրագիր»-ի մասով

- «Սանիր» ընկերության հետ քննարկել հարցը տրամադրված փոխառության միջոցների դիմաց չօգտագործված մասի համար հաշվարկված գումարի՝ 18,672.52 եվրոյով նվազեցնելու հարցը և տալ համապատասխան լուծումներ:
- «Սանիր» ընկերությանն առաջադրել փոխառության համաձայնագրի 3-րդ կետով սահմանված ուշացման տույժի վճարման պահանջ:

«Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր»-ի մասով

- Պայմանագրի պայմաններին համաձայն՝ Կապալառուին ներկայացնել տույժի վճարման պահանջ՝ շաբաթական 2% չավարտված աշխատանքների նկատմամբ (առավելագույն գումարը կազմում է պայմանագրի գնի 10%-ը):
- Կապալառուից պահանջել ապամոնտաժման ընթացքում թերացումներով կատարված աշխատանքների մասով առաջացած վնասների վերականգնում:
- Ապամոնտաժման աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել ապամոնտաժումից առաջացած ապրանքանյութական ակտիվների գույքագրում, չափագրում, պահեստավորում, դրանց վերաբերյալ համապատասխան հաշվապահական ձևակերպում, ինչպես նաև դրանց սկզբնական հաշվառման փաստաթղթերի կազմում:

«Վերակառուցման և զարգացման համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիություն ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման», «Վերակառուցման և զարգացման համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրերի մասով

- Կապալառուներից պահանջել ապահովելու պայմանագրի պայմաններին համապատասխան գործարանային և անհատական փորձարկումները և պայմանագրով սահմանված ժամկետում ներկայացնելու գործարանային փորձարկումների ծրագրերը:
- Պայմանագրի պայմաններին համապատասխան գործարանային փորձարկումներ չիրականացնելու դեպքում չթույլատրել դրանց ներմուծումը և չընդունել պայմանագրի պայմաններին անհամապատասխան գործարանային փորձարկումների հաշվետվությունները:
- Ապամտոնաժման ընթացքում վնասված ապրանքների և նյութերի կորստի վերաբերյալ կազմել համապատասխան արձանագրություններ և դրանց վերաբերյալ Կապալառուին ներկայացնել վնասի հատուցման պահանջ:
- Պայամանագրերում փոփոխություններ իրականացնելու գործընթացում հաշվի առնել խորհրդատուի կողմից պայմանագրերով սահմանված կատարողականների դանդաղ առաջընթացի մասին դիտարկումները և միջոցներ ձեռնարկել դրանց պատճառները վեր հանելու ուղղությամբ: Հրատապ հարցերի դեպքում առաջնորդվել ՀՀ վարչապետի 2000թ. փետրվարի 8-ի թիվ 44 որոշմամբ հաստատված Խորհրդի կանոնադրության 9-րդ կետի պահանջով:
- «Հաղթանակ», «Վանաձոր-1» և «Աշնակ» ենթակայանների վերակառուցման աշխատանքների ուշացումների դեպքում, գլխավոր կապալառուների պայմանագրերի պայմաններին համաձայն, կիրառել տույժ 0.5%-ի չափով յուրաքանչյուր շաբաթվա համար պայմանագրի գնի այն մասին նկատամամբ, որի համար կապալառուները չեն կարողացել հասնել ավարտման (տույժի առավելագույն գումարը կազմում է պայմանագրի գնի 10%-ը):

Անտառահատման գործարքի մասով

- Նախաձեռնել արդեն հատված անտառների մակերեսին կամ ծավալներին համապատասխան կրկնակի նոր անտառների վերականգնման աշխատանքները՝ չսպասելով ծրագրի էլեկտրահաղորդման կոմունիկացիաների կառուցման ավարտին:
- Անտառային ֆոնդին պատճառված ցանկացած վնասի վերականգնման աշխատանքները սկսել և իրականացնել անտառհատման աշխատանքներին

զուգահեռ՝ անտառվերականգնման համար բնական սեզոնայնության հանգամանքը հաշվի առնելով:

Մաքսային ներկայացուցչական ծառայությունների մատուցման մասով

- ԲԷՑ-ի կողմից 2017, 2018, 2019 թվականների ընթացքում ընկերության կողմից ներմուծվող, արտահանվող ապրանքների մաքսային հայտարարագրումների, դրանց հետ կապված մաքսային այլ անհրաժեշտ ներկայացուցչական գործառույթներ իրականացնելու համար մաքսային բրոքերի ծառայությունների մատուցման գնումներ իրականացնելու գործառույթն ինքնին, ֆինանսատնտեսական առումով, ֆինանսական միջոցների ակընհայտորեն ոչ արդյունավետ կառավարման և օգտագործման փաստ է: Նկատի առնելով ԲԷՑ-ի կողմից պլանավորված կամ սպասվելիք մաքսային հայտարարագրումների քանակը, ակընհայտ է, որ 109,200,000 դրամ ծառայության գումար ծախսելու փոխարեն անհրաժեշտ էր, թեկուզ տվյալ ծառայություն իրականացնող՝ որակավորում ունեցող մասնագետների (մաքսային բրոքերների) շրջանում ձևավորված միջին աշխատավարձից էլ բարձր աշխատավարձով պայմանագրային կարգով կամ հաստիք բացելու միջոցով, աշխատանքի ընդունել համապատասխան մեկ կամ երկու մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում ունեցող անձանց, որոնք պայմանագրի գործողության ժամկետում մի քանի անգամ քիչ ֆինանսական միջոցներ ծախսելով կապահովեին ընկերության համար նույն ծավալի գործառույթների իրականացումը:

Վթարավերականգնողական աշխատանքների գնումների մասով

- Վերը նշված փաստարկի տրամաբանությամբ ակնհայտորեն տնտեսապես նպատակահարմար է ԲԷՑ-ի կառուցվածքում ձևավորել կամ վերակառուցման ճանապարհով ավելացնել պրոֆիլային ուղղություններ սպասարկող ստորաբաժանումներ: Այդ կառուցվածքային ստորաբաժանումները անմիջականորեն կկատարեն այն աշխատանքները և ծառայությունները կամ դրանց մեծ մասը, այդ թվում՝ հրատապ համարվող, որոնք գնումների ընթացակարգով ընկերությունը ամեն տարի ձեռք է բերում, ինչպես ցույց են տալիս ՀՀ հաշվեքննիչ պալատի ստուգումները, երբեմն չհիմնավորված բարձր գներով:
- Ընդ որում, վթարավերականգնողական և այլ նեղ պրոֆիլային աշխատանքները կկատարվեն ժամանակային առումով՝ արագ, անհրաժեշտ որակով, անմիջապես պատասխանատու մասնագետների կողմից, առանց գնումներ կազմակերպելու: ԲԷՑ-ը ձեռք է բերել հատուկ նշանակության մեքենամեխանիզմներ: Սեփական ստորաբաժանումներ կազմավորելու պարագայում դրանք կօգտագործվեն այն աշխատանքները կատարելու

համար, որոնք երբեմն ձեռք են բերվում գնումների ընթացակարգով: Արդյունքում նշված աշխատանքների և ծառայությունների գինը կնվազի առնվազը 25-30 տոկոսով:

Գույքի և ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման մասով

- Առաջարկվում է ազատվել ոչ պրոֆիլային հետևյալ ակտիվներից՝ գազատարից, էլեկտրահողմակայանից, Սևանա լճում շահագործվող նավից, այլ գույքերից, որոնք ընկերությանն ըստ էության անհրաժեշտ չեն և հիմնականում օգտագործվում են որպես վարձատվության առարկա:
- Նշված ոչ պրոֆիլային ակտիվների ընթացիկ շահագործման հետ կապված ծախսերը, ոչ արդյունավետ շահագործումը և նեղ մասնագիտական հմտությունների և համապատասխան մասնագետների բացակայությունը, ընկերության հաշվեկշռում դրանց առկայությունը դարձնում են տնտեսապես ոչ շահավետ:
- Այլ կազմակերպություններին հանձնված գույքը՝ հիմնականում տրանսպորտային միջոցները և ոչ պրոֆիլային սարքավորումները (գեոդեզիայի իրականացման և այլն) օտարել աճուրդային կարգով:
- Ընկերության ղեկավար կազմին սպասարկող տրանսպորտային միջոցները, որոնք հիմնականում չեն օգտագործվում ընկերության տարածքային օբյեկտներ այցելելու և այլ հրատապ օպերատիվ նպատակներով, օտարել աճուրդային կարգով: Սահմանել ընկերության ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման այնպիսի ռեժիմ, որի պարագայում մեքենաները աշխատանքային օրվա ավարտին հանձնվեն ընկերության ավտոպարկ և սկսեն շահագործվել առավոտյան աշխատանքային ժամը սկսելու պահից, իրականացնել շաբաթական հաշվառում՝ տրանսպորտային միջոցների օգտագործման ժամերի, կիլոմետրաժի հաշվետվության կիրառմամբ:

Վարձակալության տրվող գույքի վարձավճարների մասով

- Առաջարկվում է սահմանված կարգով վերանայել վարձատրության տրված անշարժ գույքերի վարձավճարները՝ շուկայական ձևավորված գներին համապատասխան: ԲԷՑ-ը վարչական շենքերի տարածքներում այլ կազմակերպություններին վարձավճարով տրված աշխատասենյակների վարձատրության պայմանագրերը չեղարկել, դրանք տրամադրելով ընկերության այն կառուցվածքային ստորաբաժանումներին, որոնց աշխատակիցները տեղակայված են սահմանված նորմատիվային չափանիշներից պակաս մակերես ունեցող տարածքներում: Վարձակալության տրված այլ գույքերի կամ գույքային իրավունքների վարձավճարները վերանայել, համապատասխանեցնելով դրանց տնտեսական նշանակության արդյունքների համապատասխան արժեքներին:

Տրամադրված փոխառությունների մասով

- ԲԷՑ-ի կանոնադրության մեջ կատարել լրացում, համաձայն որի ընկերության կողմից որոշ գումարից ավելի (օրինակ՝ մեկ միլիոն դրամից ավել) փոխառությունների տրամադրումը իրականացնել միայն ԲԷՑ-ի խորհրդի կողմից հաստատվելուց և բաժնետիրոջը նախապես տեղեկացնելուց հետո: Փոխառությունները տրամադրել միայն իրավաբանորեն հիմնավոր ձևակերպված համարժեք երաշխիք տրամադրելու դեպքում՝ փոխառության տրամադրման պահին ԲԷՑ-ի կողմից սպասարկվող վարկի (վարկերի) տոկոսներից և ՀՀ բանկերի կողմից համապատասխան արժույթով ներգրավվող ֆինանսական միջոցների համար սահմանված տոկոսներից ոչ ցածր տոկոսներով: Ընդ որում պետք է բացառել փոխառության տրամադրման պահին ԲԷՑ-ի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձին փոխառություն տրամադրելը:

Թերի կատարված կամ չկատարված պայմանագրերի մասով

- Թերի կատարված, չկատարված, կասեցված պայմանագրերով նախատեսված աշխատանքների, ծառայությունների թերի կատարման կամ չկատարման պատճառների և պայմանների վերաբերյալ կազմել հանձնաժողով, որը կպարզի չկատարված պարտավորությունների ամբողջ ծավալը, արժեքը, պատճառները, պատասխանատու անձանց: Նշված անձանցից իրենց գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասների հատուցման վերաբերյալ ձեռնարկել օրենքով սահմանված միջոցներ:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի** 26-**րդ հոդվածի** 6-**րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝** 30 **օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննության /ստուգման/ ընթացքում կազմվել են 20 արձանագրություններ, որոնք օրենքով սահմանված կարգով ներկայացվել են հաշվեքննության /ստուգման/ օբյեկտների ղեկավարներին: Վերջիններիս կողմից որոշ արձանագրությունների վերաբերյալ ներկայացվել են առարկություններ և բացատրություններ, որոնք բերված են ստորև: Առարկությունների ճնշող մեծամասնությունը Հաշվեքննիչ պալատի կողմից չի ընդունվել, քանի որ դրանք, ըստ էության, ներկայացնում էին բացատրություններ արձանագրված փաստերի վերաբերյալ, իսկ մի մասն էլ հիմնազուրկ էր: Ընթացիկ եզրակացությունը շարադրված է՝ հաշվի առնելով ընդունված առարկությունների բովանդակությունը:

Հարկ է նշել նաև, որ արձանագրություններից մեկը պարունակել է գաղտնի տեղեկատվություն, ուստի դրա մասնրամասները չեն կարող հրապարակվել: Այն վերաբերվել է էական նշանակություն ունեցող ԲԷՑ-ի կողմից կնքված երեք գնումների պայմանագրերի: Արձանագրությունը պարունակել է էական անհամապատասխանություններ: Արձանագրության վերաբերյալ ԲԷՑ-ի ղեկավարի կողմից առարկություններ չեն ներկայացվել:

Արձանագրություններում նշված մի շարք փաստեր տեղ չեն գտել ընթացիկ եզրակացությունում՝ հաշվի առնելով խեղաթյուրումների նվազագույն շեմը չգերազանցելու հանգամանքը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

II. Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ

1. 2017թ. ապրիլ ամսին հաշվապահական հաշվառման բաժնում հիմնական համակարգիչը, որտեղ տեղադրված է ՀԾ ծրագրի բանալին, խափանվել է: Դրոշմանիշերի համար գանձումը կատարվում է ծրագրային եղանակով՝ համապատասխան դաշտում նշման առկայությամբ: Համակարգչի խափանումը վերացնելիս տվյալ գանձման համար դաշտի նշումը բացակայել է, որի արդյունքում գանձում չի իրականացվել: Ներկայումս կատարվել է ծրագրային ուղղում: Իսկ մեկ աշխատակցի նկատմամբ կատարվել է մեխանիկական սխալ, որի արդյունքում ավել գումար է վճարվել:

2. Քանի որ ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի փետրվարի 1-ի թիվ 37-Ն հրամանի վերաբերյալ տեղեկացված չենք եղել՝ Նախարարությունում աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերը վարվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N 535-Լ հրամանի համաձայն:

Այսուհետ աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը կվարվեն համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 01.02.2016թ. թիվ 37-Ն հրամանով սահմանված ձևերի:

4. CPV 30211220-1 ծածկագրով գնումների իրականացման ժամանակ տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես նշվել է ֆիրմային անվանում: Հաղթող կազմակերպության կողմից մատակարարվել է այլ ֆիրմային ապրանք, որը վկայում է այն մասին, որ ապրանքային անվանման նշումը չի պարունակել դիտավորություն և չի կատարվել միտումնավոր:

5. ՀՀ ֆինանսների նախարարության 13.03.2018թ. № 01/3-2/4346-18 գրությամբ պահանջվող 2017թ. հանրային հատվածի հաշվապահական հաշվառման տարեկան հաշվետվությունը իրականացվել է ՀԾ հաշվապահ ծրագրով և 05.05.2018թ. № 05/014/2280-18 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել հաշվետվություն՝ պահանջվող 5 ձևերին համապատասխան: Քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պահանջ չի ներկայացվել այսուհետ տարեկան հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ, հետևաբար 2018թ. տարեկան հաշվետվությունը ՀԾ հաշվապահ ծրագրով իրականացվել է մասնակի, որը կշարունակվի և կբերվի ամփոփ տեսքի: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի և «Գանձապետական

համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջների հիման վրա ՀՀ Ֆինանսների նախարարություն է ներկայացնում ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվությունները LS Finance ծրագրով:

III. Հաշվեքննության ընթացքում արձանագրված այլ փաստեր

Ծառայողական ավտոմեքենաների վառելիքի ծախսի նորմերը սահմանելիս առաջնորդվել ենք ՀՀ կառավարության 01.06.2005 թվականի <<ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների և մոտոտրանսպորտի վառելիքի, յուղերի ու քսուկների ծախսի, ավտոդողերի վազքի և կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմեր>> թիվ 1001-Ն որոշմամբ: Ըստ որոշման՝ Հավելված 1-ի Աղյուսակ 1-ում չընդգրկված տրանսպորտային միջոցների համար կարող են սահմանվել ժամանակավոր նորմեր՝ մեկ տարի ժամկետով, ինչ վերաբերվում է տեղեկանքում նշված երեք տրանսպորտային միջոցներին, ապա այդ նորմերը սահմանվել են դեռևս 2016 թվականից՝ հիմք ընդունելով վերջիններիս փաստացի ծախսը: Նշենք նաև, որ մասնավորապես, Արցախի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 713 որոշման համաձայն, օրինակ, Նիսսան Պատֆայնդեր 3.3 ատոմեքենայի 100 կմ վազքի համար սահմանված է 18 լիտր բենզինային վառելիքի ծախս:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ նախարարության հաշվեկշռում հաշվառված թվով 9-ը տրանսպորտային միջոցներից 7-ը օրեքով սահմանված կարգով օտարելու ուղղությամբ և թվով 7 ավտոմեքենաների օտարման վերաբերյալ տեղեկատվությունը 2019 թվականի մարտի 4-ի թիվ 01ԳԲ/18ԱՆՄ/1068-19 գրությամբ ներկայացվել է տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ սահմանված կարգով ընթացք տալու համար:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. Ընդհանուր մաս

Ծրագիր** 1՝ 04030502 **դասակարգման Գերմանիայի զարգացման վարկերի բանկի** (KFW) **աջակցությամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների վարկային և Ծրագիր** 2՝ 04030507 **դասակարգման Եվրոպական միության Հարևանության Ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» դրամաշնորհային ծրագրերով ներկայացված են, որ ՀՀ** 2017**թ. պետական բյուջեով Ծրագիր** 1**-ի հաստատված պլանը կազմել է՝** 1,115,591.2 **հազ. դրամ և Ծրագիր** 2**-ի հաստատված պլանը կազմել է՝** 997,197.8 **հազ. դրամ և որ** 2017**թ.-ի ընթացքում երկու ծրագրերով էլ ծախս չի կատարվել, ինչպես նաև** 2018**թ. պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվել:

2017թ. ընթացքում պետական բյուջեով վարկային և դրամաշնորհային ծրագրերով նախատեսվում էր կատարել վճարումներ, ծրագրի շրջանակներում մատուցվող խորհրդատվական ծառայությունների, ծրագրի շրջանակներում ընտրվող գլխավոր կապալառուներին կանխավճարի իրականացման և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների հաշվին առաջացող հարկերի և տուրքերի վճարման համար: Սակայն, 2017թ. փետրվարի 21-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած՝ բարձր լարման ենթակայանների վերակառուցման ծրագրերի, ինչպես նաև Իրան-Հայաստան և Հայաստան-Վրաստան բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի ներդրումային ծրագրերի առաջին փուլի արդյունքների մասին խորհրդակցության N 24.10/[394769]-17 արձանագրության 2) կետի համաձայն հանձնարարվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին՝ դադարեցնել Հայաստան-Վրաստան բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի ներդրումային ծրագիրը՝ այն համարելով ոչ նպատակահարմար: Բացի այդ ՀՀ կառավարության 09.03.2017թ. № 213-Ն, 13.04.2017թ. № 424-Ն, 24.08.2017թ. № 1053-Ն և 07.12.2017թ. № 1574-Ն որոշումներով կատարվել են փոփոխություններ և 2017թ. ընթացքում պետական բյուջեով վարկային և դրամաշնորհային ծրագրերով ճշտված պլանը կազմել է՝ 0.0 դրամ, հետևաբար ծրագրերի շրջանակներում վճարումներ չեն իրականացվել, ինչպես նաև պայմանավորված ծրագրի դադարեցմամբ 2018թ. պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվել:

II Անհամապատասխանությունների և այլ փաստեր

5-րդ կետով ներկայացվել է, որ Նախարարության համակարգին տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող և իրականացվող ծրագրերի կառավարման խորհրդի կողմից** 01.01.2017**թ.-**30.09.2018**թ. դրությամբ վարկային և դրամաշնորհային ծրագրերի հաստատված տարեկան աշխատանքային ժամանակացույցից և բյուջեից շեղումների վերաբերյալ ՀՀ կառավարություն որևէ առաջարկություն չի ներկայացվել:

Արդյունքում ի հայտ է եկել անհամապատասխանություն ՀՀ վարչապետի** 2000**թ. փետրվարի** 8**-ի թիվ** 44 **որոշմամբ հաստատված Խորհրդի կանոնադրության** 7**-րդ կետի թ) ենթակետի պահանջի մասով:

Նշված ժամանակահատվածում, հաստատված տարեկան աշխատանքային ժամանակացույցից ու բյուջեից առկա շեղումների վերացման, վերաբերյալ Խորհրդի կողմից որոշումներ չեն ընդունվել՝

պայմանավորված 2017թ. բյուջեով նախատեսված միջոցների զրոյացմամբ և ծրագրի գործընթացի դադարեցմամբ:

Միևնույն ժամանակ ըստ Խորհրդի կանոնադրության 7-րդ կետի թ) ենթակետի Խորհրդի խնդիրն է ծրագրի՝ հաստատված տարեկան աշխատանքային ժամանակացույցից ու բյուջեից առկա շեղումների վերացման վերաբերյալ որոշումների ընդունումը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը: Արդյունքում Խորհրդի կանոնադրության 7-րդ կետի թ) ենթակետով չի սահմանվում դրույթ, որի համաձայն Խորհրդի կողմից ընդունված որոշումը պետք է ներկայացվի ՀՀ կառավարություն:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

II. **Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ**

1. ՀՀ կառավարության 01.03.2018թ. №200-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) նախագծում ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության 01.03.2018թ. №01/14.13/1520-18 գրությամբ ներկայացված՝ գնորդի կողմից ներդրումների, դրանց կատարման վերահսկման մեխանիզմների վերաբերյալ դրույթներ սահմանելու անհրաժեշտության առաջարկությունը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ, իսկ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը այդ առաջարկությունը չի տրամադրվել: Որոշման նախագիծը վերջնական տեսքով ամփոփվել է ՀՀ կառավարության աշխատակազմում: Որոշման 3-րդ կետը (ներդրումներ կատարելու վերաբերյալ ի գիտություն ընդունելու նորմը) այդ խմբագրությամբ ավելացվել է ՀՀ կառավարության աշխատակազմում:

2. Որոշման մեջ նշված գույքի ուղղակի վաճառքի ձևի և վաճառքի գնի՝ լիկվիդային արժեքի (627 մլն դրամ) հիմքը «Ա-Ս ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» ՍՊԸ-ի գրության մեջ նշված գույքի ձեռքբերման առաջարկության վերաբերյալ ՀՀ վարչապետի 28.02.2018թ. №02/23.11/3092-18 (1-օրյա ժամկետով) հանձնարարականն է և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» (անկախ գնահատող) ՊՈԱԿ-ի գույքի գնահատման հաշվետվությունն է:

Որոշման մեջ նշվել է միայն գույքի հաշվեկշռային արժեքը՝ 114,6 մլն դրամ (հիմքը՝ «Նաիրիտ-2» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկանքն է), հողատարածքի մակերեսը՝ 10,5813 (հիմքը՝ անկախ գնահատողի հաշվետվությունն է) և գույքի վաճառքի լիկվիդային արժեքը՝ 626,9 մլն դրամ ԱԱՀ-ով (հիմքը՝ անկախ գնահատողի հաշվետվությունն է):

«Նաիրիտ-2» ՓԲԸ-ն գույքի օտարման լիկվիդային արժեքից հաշվարկված ԱԱՀ-ն՝ 104,5 մլն դրամը ստանալով գնորդից վճարել է ՀՀ պետական բյուջե:

III. **Հաշվեքննության ընթացքում արձանագրված այլ փաստեր**

1. Որոշման 3-րդ կետով ընդունվել է ի գիտություն գնորդի ներդրումներ կատարելու վերաբերյալ նորմը և չի հանձնարարվել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին գնորդի հետ կազմել որևէ պայմանագիր:

2. Մեկնաբանությունը բերված է «II. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ» բաժնի 1-ին կետում

3. Որոշման մեջ նշված գույքի գնահատումն իրականացվել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» (անկախ գնահատող) ՊՈԱԿ-ի կողմից:

4. Որոշման մեջ նշված գույքի հաշվեկշռային արժեքում (114,6 մլն դրամ) համաձայն «Նաիրիտ-2» ՓԲԸ-ի տրամադրած տեղեկանքի ներառված չեն նշված 2 շենքերի արժեքները: Այդ շենքերի արժեքները ներառված չեն նաև անկախ գնահատողի կողմից որոշված գույքի լիկվիդային արժեքում:

Վերը նշված 2 շենքերի մասով ներկայումս ընթանում են դատական գործընթաց: Շենքերի երկար տարիների վարձակալները 2016թ-ի մայիս ամսին հրապարակային սակարկություններով ձեռք բերելով դրանց գնման իրավունքը մինչև 2018թ-ի փետրվար ամիսը չեն ձևակերպել այդ սեփականության իրավունքը նոտարով և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում (այսուհետ՝ Կադաստր): Շենքերի ձեռքբերման նոտարական գործարքը մերժվել է Կադաստրի կողմից՝ ՀՀ օրենսդրության պահանջների խախտման հետևանքով:

5. 5,950 հազ. դրամ արժեքով ապամոնտաժման ենթակա շարժական գույքը ևս գնահատվել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» (անկախ գնահատող) ՊՈԱԿ-ի կողմից և «Նաիրիտ-2» ՓԲԸ-ի բաժնետիրոջ 02.07.2018թ. որոշման համաձայն «Ադամանադ» ապրանքա-հումքային բորսայի կողմից մրցույթով օտարվել է:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

II. **Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ**

1. 1-ին կետի վերաբերյալ - «Էներգաիմպեքս» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ների միջև կնքված փոխառության պայմանագրի կնքումը չի հակասում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի պահանջին, քանի որ տվյալ դեպքում պայմանագրով գույք չի ձեռք բերվել, այլ փոխառվել են ֆինանսական միջոցներ «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ի բնականոն գործունեության ապահովման նպատակով, ինչը նախատեսված է նաև նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի «ա)» ենթակետով:

2. Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի և «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ին տրված լիցենզիայի պայմանների, ընկերության և վրացական կողմի միջև 14.02.2017թ-ին կնքված թիվ 1 պայմանգիրը պետք է գրանցվեր ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում, ինչը և կատարվել է «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն, այսինքն՝ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր նորմերը պահպանվել են: «Վրաստանի պետական էլեկտրահամակարգ» ընկերությունում գրանցման անհրաժեշտությունը բացակայում էր համաձայն Վրաստանի գործող օրենսդրության, որի մասին փոփոխությունները ձևակերպվել են լրացուցիչ համաձայնագրով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի թիվ 441 հոդվածի 2-րդ մասի համաձայն:

3. թիվ 1 պայմանագրում կատարված փոփոխությամբ պայամանագիրը համապատասխանեցվել է վրացական օրենսդրությանը, փոփոխությունը գրանցվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում: Պայմանագրային դրույթների փոփոխությանը հետադարձ ուժ տալը չի հակասում ՀՀ օրենսդրությանը, մասնավորապես ՀՀ ՀԾԿՀ 2017թ. օգոստոսի 9-ի թիվ 344-Ն և 2004թ. սեպտեմբերի 16-ի թիվ 110-Ն որոշումների դրույթներին:

4. Փոխհոսքի սկզբունքով 178 674 274.1 կվտժ էլեկտրական էներգիայի ներկրման դիմաց պետք է արտահանվեր 170 165 975.3 կվտժ էներգիա, պարտքը մարելու նպատակով էլեկտրական էներգիա մատակարարելու դեպքում: Դեպի Վրաստան մատակարարած 134 974 059 կվտժ–ին 1.05 գործակից կիրառելով թույլ է տվել պարտքից մարել 141 722 762 կվտժ, մնացած՝ 36 951 512.2 կվտժ-ն համաձայն պայմանագրի պետք է մարվեր 35 191 916 կվտժ էլեկտրական էներգիա մատակարարելու միջոցով կամ դրամական միջոցներով՝ ելնելով 5 ԱՄՆ ցենտ 1 կվտժ գնից: Վրացական կողմի հետ բանակցությունների ընթացքում հաջողվեց համաձայնության գալ, որ 1.05 գործակիցը կիրառվի ոչ միայն պարտքը նյութական տեսքով մարելու դեպքում, այլ նաև դրամական միջոցներով մարելու դեպքում, ըստ այդմ էլեկտրական էներգիայի չմատակարարված ծավալի համար ֆիքսվեց նոր գին – 4.8 ԱՄՆ ցենտ 1 կվտժ–ի համար: Վերոնշյալից ելնելով՝ «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ն գերավճար չի կատարել վրացական կողմին:

5. «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ի 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի (գույքի) գնահատումը իրականացվել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կողմից:

6. Ի կատարումն ՀՀ վարչապետի մոտ 07.04.2017թ. կայացած խորհրդակցության №23.11/[401711]-17 արձանագրության 2-րդ կետի հանձնարարականի ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացված 20.04.2017թ. №01/19.1/2191-17 գրությամբ առաջարկել է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք)՝ 2017-2020թթ մասնավորեցման ենթակա պետական գույքի ցանկում (այսուհետ՝ Ցանկ) ընդգրկել «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ն: ՀՀ կառավարությունը առաջարկությունը տրամադրել է Վարչությանը, վերջինս Ընկերությունը ընդգրկել է Օրենքի Ցանկում: Օրենքի նախագիծը շրջանառել և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցրել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը: Ընկերությունը չի մասնավորեցվել, ՀՀ կառավարության 06.02.2019թ. №108-Ա որոշմամբ Ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել է Նախարարությանը, միաժամանակ հանձնարարվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանդես գալ առաջարկությամբ Օրենքի Ցանկից Ընկերությունը հանելու վերաբերյալ:

7. Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ին տրամադրված լիցենզիայի պայմանների ընկերությունը պետք է ստանա Հանձնաժողովի համաձայնությունը այլ լիցենզավորված անձի հետ գործարքներ կնքելիս, մինչդեռ, «Էներգաիմպեքս» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ները կնքել են առանձին պայմանագրեր «Արդշինբանկ» ՓԲԸ-ի հետ:

III. **Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր**

1. Վրաստանից առաքված էլեկտրաէներգիայի մատակարարման գինը նպատակահարմար չի համեմատել ներքին արտադրության սակագների հետ:

2. «Էներգաիմպեքս» ՓԲԸ-ի կողմից Հանձնաժողովին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ներկայացվել է Հանձնաժողովի կողմից համապատասխան ձևը մշակելուց հետո՝ հնարավոր ամենասեղմ ժամկետներում:

3. Բացատրությունները բերված են «II. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ» բաժնի 6-րդ կետում:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

II. **Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ**

4. Ներքին աուդիտի բաժինը, 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N974-Ն հրամանով հաստատված հավելվածի 225-232-րդ կետերի համաձայն, իրականացնում է հսկողության գործընթացներ, պահպանում է ռիսկերի կառավարման և հսկողության արդյունավետությունը, գնահատման ենթակա կառուցվածքային միավորներից ստանում է համապատասխան անհրաժեշտ տեղեկատվություն եռամսյակային կտրվածքով, կատարվում են ընթացիկ պահանջվող բոլոր աշխատանքները:

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին (Այսուհետ՝ կազմակերպության ղեկավար) և ներքին աուդիտի կոմիտեին տարվա կտրվածքով ներքին աուդիտի բաժնի կողմից պարբերաբար տրամադրվում են նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև նախարարության ենթակայության տակ գտնվող ընկերությունների վերաբերյալ տեղեկատվություններ, ուստի վերոգրյալով պայմանավորված և հաշվի առնելով ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվող աշխատանքների ծանրաբեռնվածությունը՝ անհրաժեշտություն չի առաջացել հաշվետվության տեսքով ներկայացնել կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին:

5. Ներքին աուդիտի բաժնի 2017 թվականի տարեկան ծրագրով պլանավորված թվով 8 աուդիտի ենթակա միավորներում փաստացի իրականացվել է թվով 6-ը:

01.05.2016 թվականից մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնը համալրված չլինելու պատճառով ներքին աուդիտի կոմիտեի նիստ չի իրականացվել: Ուստի վերոգրյալով պայմանավորված՝ բացահայտված խախտումների շտկման ուղղությամբ կազմակերպության ղեկավարի հրամանով միջոցառումներ չեն իրականացվել, իսկ 2017 թվականի հուլիսի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացրած աուդիտի արդյունքների վերաբերյալ կազմակերպության ղեկավարի կողմից արդեն իսկ տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ (կից ներկայացնում ենք) բացահայտված խախտումների շտկման վերաբերյալ:

III. **Արձանագրված այլ փաստեր**

1. 2017 թվականի տարեկան ծրագրով նախատեսված է եղել իրականացնել թվով 8 աուդիտի ենթակա միավորներում ֆինանսական և գնումների համապատասխանության աուդիտ: 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ա հրամանի 28-րդ կետի համաձայն՝ համակարգի գնահատման աուդիտն ընդգրկում է ֆինանսական կառավարման համակարգերի և ղեկավարության կողմից ներդրված ներքին հսկողության համակարգերի մանրակրկիտ գնահատում՝ դրանց արդյունավետությունը և օգտավետությունը ուսումնասիրելու և դիտարկելու նպատակով, ինչպես նաև 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ա հրամանի 26-րդ կետի համաձայն՝ համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցության տարատեսակներից են՝ համակարգի գնահատման, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ աուդիտները: Ուստի վերոգրյալով պայմանավորված՝ լիազոր մարմնին ներկայացված ամփոփ հաշվետվությանը կից բաղկացուցիչ աղյուսակում նշվել է համակարգի գնահատման աուդիտ, որն էլ ընդունվել է ի գիտություն:

2. <Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության> հիմնադրամը որպես աուդիտի ենթակա միավոր ընդգրկված չի եղել տարեկան ծրագրում, սակայն անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ ԷԵԲՊ նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N115-Ա հրամանի համաձայն, <Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության> հիմնադրամում իրականացվել է ուսումնասիրություն: Ուստի լիազոր մարմնին ներկայացված ամփոփ հաշվետվությանը կից բաղկացուցիչ աղյուսակի 10.1 տողում ներառվել է որպես չնախատեսված ուսումնասիրություն (չնախատեսված առաջադրանք), որն էլ ընդունվել է ի գիտություն:

3. Ձեր կողմից արձանագրված այն փաստը, որ ներքին աուդիտի բաժնի կողմից 2018 թվականի ընթացքում թվով 6 միավորներում չի իրականացվել աուդիտ, հարկ ենք համարում նշել, որ ներքին աուդիտի բաժնի կողմից 2018 թվականի առաջին կիսամյակի վերջում Ձեզ տեղեկատվությունը տրամադրելու պահից հետո՝ 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ներքին աուդիտի բաժնի կողմից փաստացի իրականացվել է տարեկան ծրագրով պլանավորված ևս 2 աուդիտ՝ <<Էներգակարգաբերում>> ՓԲԸ և <<Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում>> ՓԲԸ, (Հիմք՝ 2018 թվականի սեպտեմբերի 24-ի N117-Ա հրաման, 2018 թվականի նոյեմբերի 15-ի N149-Ա հրաման):

4. 2017 թվականի դրությամբ իրականացվել է ներքին աուդիտի կոմիտեի նիստ միաժամանակ թվով 2 ընկերությունների վերաբերյալ (<Հայատոմ> ՓԲԸ և <Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում> ՓԲԸ):

5. Միաժամանակ տեղեկացնում ենք, որ <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն՝ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ներքին աուդիտի հաշվետվությունը ներկայացնում է կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին: Տվյալ պարագայում ներքին աուդիտի կոմիտեի նիստի պարբերաբար անցկացման անհրաժեշտությունը պայմանավորված է կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի պահանջով, ուստի վերոգրյալով պայմանավորված՝ պարբերաբար նիստեր անցկացնելու պահանջ չի առաջացել, ինչպես նաև ոչ մի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ նիստի պարտադիր անցկացման պահանջը:

ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 18.03.2019Թ-Ի NO.ՀՊԹ-ԿԱ-47 ԳՐՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ NO.1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գլուխ I Ընդհանուր մաս

Ծրագիր 1 հատվածի չորրորդ պարբերության վերաբերյալ տեղեկացնում եմ, որ 83 մլն եվրո գումարի հատուկ համաձայնագրի կնքման ամսաթվի՝ 16.05.2016թ. փոխարեն պետք է լինի 25.05.2016թ., ինչպես նաև ըստ 83 մլն եվրո հատուկ համաձայնագրի՝ Հաշվեքննիչ պալատի կողմից հստակեցված ծրագրի Փուլ 2a-ի միջոցառումները թերի են, քանի որ ստորագրված 83 մլն եվրո հատուկ համաձայնագրով ծրագրի Փուլ 2a-ն ներառում է հետևյալ միջոցառումները՝

- *ԲԼՀՀ փոխակերպիչ կայանից մինչև նոր «Դմաշեն» ենթակայան մոտ 100կմ 400կՎ ՕԳ-ի մեկ շղթայի կառուցում երկշղթա հենարանի վրա,*
- *400/220/10կՎ «Դմաշեն» ենթակայանի կառուցում (500ՄՎԱ ԱՏ),*
- *220կՎ «Մարաշ» երկշղթա գծի, 220կՎ «Նորադուզ» և 220կՎ «Աթարբեկյան» միաշղթա օդային գծերի կառուցում՝ նոր «Դմաշեն» ենթակայանը գոյություն ունեցող 220կՎ ենթակայանին («Հրազդան» ՋԷԿ-ում), «Հրազդան» ՀԷԿ-ին, ինչպես նաև «Կամո» և «Մարաշ» ենթակայաններին միացնելու համար*
- *Մոտ 50կմ 220կՎ «Լոռի» ՕԳ-ի հաղորդալարի փոխարինում և հենարանների վերականգնում սկսած 4.5 կմ-ից՝ «Վանաձոր» ենթակայանից մինչև «Ալավերդի-2» ենթակայան,*
- *2 հատ 110կՎ «Թումանյան 1 և 2» երկշղթա ՕԳ-ի կառուցում (մոտ 3կմ՝ «Ալավերդի-2» ենթակայանից մինչև «Ալավերդի-1» ենթակայան) և հին գծերի ապամոնտաժում և No. 14 հենարանից սկսած մոտ 45.5 կմ երկարությամբ միաշղթա ՕԳ-ի կառուցում և առաջին 14 ու վերջին հենարանների ու հիմքերի վերակառուցում:*

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 83 մլն եվրո գումարով կնքված հատուկ համաձայնագրի Փուլ 2a-ի միջոցառումների 5-րդ կետում սահմանված («*No. 14* ***հենարանից սկսած մոտ*** *45.5* ***կմ երկարությամբ միաշղթա ՕԳ-ի կառուցում և*** *1-****ից*** *14-****րդ ու*** *131-****րդ հենարանների ու հիմքերի վերակառուցում****») նախադասությունը վերաբերում է «Լոռի» ՕԳ-ին:*

Ծրագիր 2 հատվածի առաջին պարբերության վերաբերյալ տեղեկացնում եմ, որ 10 մլն եվրո արժողությամբ կնքված NIF դրամաշնորհի ամսաթվի՝ 30.06.2016թ. փոխարեն պետք է լինի 30.05.2016թ.:

ԲԷՑ-ի սեփական միջոցներից ծրագրերի իրականացմանն ուղղված ծախսեր հատվածի առաջին պարբերության երկրորդ ենթակետով վարկերի չօգտագործված մասի տոկոս՝ 1,197,267.49 եվրո գումարի փոխարեն պետք է լինի 1,177,763.70 եվրո, իսկ երրորդ ենթակետով հողերի ձեռքբերում՝ «Այրում» ենթակայանի մասով նշված 503,308.17 եվրո գումարի փոխարեն պետք է լինի 539,308.17 եվրո, այսպիսով ընդհանուր 3,483,783.69 եվրոյի փոխարեն պետք է լինի 3,464,279.9 եվրո:

Երկրորդ պարբերությունում նշված 2017թ-ին ԲԷՑ ՓԲԸ-ի միջոցներից «Դմաշեն» ենթակայանի համար հողերի ձեռք բերման մասով իրականացված ծախսը նպատակաուղղվել է արդեն իսկ ձեռք բերված հողերի նպատակային նշանակության փոփոխության համար հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշումը և միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացություն N3:

Երրորդ պարբերությունով «Այրում» եթակայանի կառուցման համար նշված մասնավոր հողերի 62,35 հեկտարի փոխարեն պետք է լինի 62,37 հեկտար, իսկ համայնքային հողերի 2.21 հեկտարի փոխարեն 2,2 հեկտար մակերես:

Խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման հատվածի առաջին պարբերության մեջ նշված Ծրագիր 1 և Ծրագիր 2-ով նախատեսված խորհրդատուի պայմանագրի 6,457,400.00 եվրո գումարի փոխարեն պետք է լինի 6,457,100 եվրո գումար, որը իր մեջ ներառում է Ծրագիր 1, Ծրագիր 2 և փուլ 2b-ով նախատեսված խորհրդատվական ծառայությունները:

Պայմանագրի ավարտման ժամկետ է սահմանվել 20.04.2019թ. (տևողությունը 40 ամիս), ըստ կնքված պայմանագրի 4-րդ կետի 4.1 ենթակետի:

Գլխավոր կապալառուների ընտրության մրցույթ հատվածի 10-րդ պարբերությունով ներկայացված Լոտ-2-ի մասով աշխատանքային խումբ ստեղծելու վերաբերյալ տեղեկացնում եմ, որ որակավորման

փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով ԲԷՑ ՓԲԸ գլխավոր տնօրենի 08.02.2017թ-ի No.17-Լ Հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ:

Ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի մասին հատվածի 4-րդ կետով ներկայացված ԲԷՑ ՓԲԸ-ի սեփական միջոցների՝ 3,483,783.69 եվրո ծախսերի փոխարեն պետք է լինի 3,464,279.9 եվրո:

Գլուխ II Արձանագրված անհամապատասխանությունների և այլ փաստերի 1-ին կետի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող գլխավոր կապալառուների մրցույթներն ԲԷՑ ՓԲԸ-ի կողմից դադարեցվել են՝ հիմք ընդունելով 21.02.2017թ.-ին ՀՀ Վարչապետի մոտ կայացած բարձր լարման ենթակայանների վերակառուցման ծրագրերի, ինչպես նաև Իրան-Հայաստան և Հայաստան-Վրաստան բարձր լարման էլետրահաղորդման գծերի ներդրումային ծրագրերի առաջին փուլի արդյունքների մասին խորհրդակցության թիվ 24.10/394769-17 արձանագրության 2-կետը և ՀՀ կառավարությունում ծրագրի դադարեցման մասով քննարկման արդյունքները:

7-րդ կետի վերաբերյալ բացատրությունը արդեն իսկ ներկայացված է սույն պարզաբանման **ԲԷՑ-ի սեփական միջոցներից ծրագրերի իրականացմանն ուղղված ծախսեր** հատվածի երկրորդ պարբերության մեջ:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

II. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ

1. **Համաձայն «Վարկային ծրագրերի իրականացման գրասենյակների կողմից վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգի մասին» ՀՀ կառավարության 09.07.1998 թվականի թիվ 429 որոշման 1-ին կետի և նրա «ա» ենթակետի՝** Վարկային ծրագրերի իրականացման գրասենյակները հիմնադիր պետական կառավարման մարմիններ (համապատասխան ճյուղային նախարարություն կամ գերատեսչություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն) պետք է ներկայացնեն օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ըստ առանձին ծրագրերի տրամադրված վարկերի օգտագործման վերաբերյալ ամենամսյա (մինչև հաջորդ ամսվա 10-ը) հաշվետվություն:

«Իրան-Հայաստան 400կվ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում» ծրագիրն իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը վերոնշյալ որոշման շրջանակում պետական կառավարման մարմիններին հաշվետվություն չի տրամադրել, քանի որ ծրագրի շրջանակներում վարկային միջոցները տրամադրող Իրանի արտահանման և զարգացման բանկը չի հանդիսանում օտարերկրյա պետություն կամ միջազգային կազմակերպություն:

2.ՀՀ Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված №2 Արձանագրության «անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ» կետ 2-ում նշվում է, որ չեն հաշվարկվել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ սեփական միջոցներից «Սանիր» ընկերությանը տրամադրված 560 000 000 դրամի համար տուգանքները և դրանք չեն ներկայացվել «Սանիր» ընկերությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձեռք է բերվել պայմանավորվածություն առ այն, որ նշված գումարը պետք է հաշվանցել SUNIR INTERNATIONAL FZE կողմից տրամադրված փոխառության հետ, ուստի ներկայումս պատրաստվում է պայմանագիր: Նշված հարցը պետք է կարգավորել ՀՀ օրենսդրության շրջանակներում՝ «Փոխադարձ պահանջների հաշվանցման» պայմանագիր կնքելու միջոցով:

3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ և SUNIR International FZE միջև 2012 թվականի փետրվարի 23-ին կնքված փոխառության պայմանագրի /այսուհետ՝ նաև Պայմանագիր/ 6.1 հոդվածի համաձայն՝ Փոխառուն տարեկան պետք է վճարի Հատկացման վճար Փոխատուին,որը հավասար է Պայմանագրի գումարի չօգտագործած մասի 0.25%-ին Փաստաթղթայնացված Ակրեդիտիվը ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո ամենաշուտը այն օրը, երբ ընդհանուր փոխառության գումարը վճարվի, կամ համապատասխան Փաստաթղթայնացված Ակրեդիտիվի ամսաթիվը լրանա, կամ ըստ Պայմանագրի Փոխատուի պարտավորության կատարման դադարեցումը: Հատկացման վճարը ենթակա է վճարման Փոխառուի կողմից փոխառության վճարի վճարման ամսաթվին:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ և SUNIR International FZE միջև 2018 թվականի փետրվարի 1-ին կնքված Պայմանագրի լրացուցիչ №5 համաձայնագրով՝ Փոխառուն 2018 թվականի փետրվարի 1-ից հետո տարեկան պետք է վճարի Հատկացման վճար Փոխատուին, որը հավասար է Պայմանագրի գումարի չօգտագործած մասի 0%-ին:

2017 թվականի սեպտեմբերի 29-ից 2018 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում փոխառության միջոցների դիմաց չօգտագործված մասի համար հաշվարկվել է 18,234.88 եվրո գումար:

Պայմանագրի 1-ին հոդվածի 1.1.2 կետի համաձայն՝ փոխառության պայմանագրի «Օգտակարության ժամկետ» նշանակում է 18 ամիս ժամանակաշրջանը՝ սկսած սույն Պայմանագրի Էֆեկտիվ ամսաթվից, որի ընթացքում կատարվելու են փոխառությունից Պայմանագրով նախատեսված վճարումները: 18 ամսվա ընթացքում աշխատանքների իրականացումը չավարտելուց հետո ժամանակահատվածը ավտոմատ կերպով կերկարաձգվի մինչև աշխատանքների իրականացման գործողությունների ավարտը:

Համաձայն Պայմանագրի փետրվարի 1-ին կնքված լրացուցիչ համաձայնագիր № 5-ի «Օգտակարության ժամկետը» սահմանվել է մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ը:

Հաշվի առնելով վերոնշյալը, կարող ենք փաստել, որ Պայմանագրի համաձայն՝ փոխառություն գումարները Պայմանագրով սահմանված «էֆեկտիվ ամսաթվից» հետո (այդ թվում՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ից 2018 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար) եղել են հասանելի: Միաժամանակ, 2017 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված փոխառության պայմանագրով նախատեսված չէ որևէ դրույթ այն մասին, որ փոխառության գումարը տրամադրվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ և SUNIR International FZE միջև 2012 թվականի փետրվարի 23-ին կնքված փոխառության պայմանագրով սահմանված փոխառության միջոցների անհասանելիության հիմքով: Հետևաբար, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը պարտավոր էր հաշվարկել Պայմանագրով սահմանված փոխառության միջոցների դիմաց չօգտագործված մասի համար հատկացման վճարները:

III. **Ստուգման ընթացքում արձանագրված այլ փաստեր**

4. ՀՀ Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված №2 Արձանագրության «ստուգման ընթացքում արձանագրված այլ փաստեր» կետ 3-ում նշվում է, որ ստուգման ընթացքում սահմանված 3.3 փաստաթղթերը գտնվում են ՎԾԻ №4 բաժնում: Այս մասին 27.02.2019 թվականի էլեկտրոնային գրությամբ տեղեկացրել ենք ՀՀ Հաշվեքննիչ պալատի աշխատակցին:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019Թ. ՄԱՐՏԻ 18-Ի № 3 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. **Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիր (№ 8388**-AM)

1. **Ընդհանուր մաս**

1.1 Առաջարկվում է ավելացնել նաև, որ վարկային համաձայնագրում (ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստորագրվել է 20.03.2018թ.) և ենթավարկային համաձայնագրում (ստորագրվել է 13.07.2018թ.) կատարվել են փոփոխություններ, որով վարկի և ենթավարկի գումարը նվազեցվել է՝ սահմանելով 37.5 մլն. ԱՄՆ դոլար:

1.2 Ենթավարկային համաձայնագրի 3.1 կետում նշված չէ, որ համաֆինանսավորումից ֆինանսավորվելու են ՀՀ գործող հարկերը, տուրքերը և մաքսային վճարումները:

1.3 2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ փաստացի ծախս նշված է 185,600.0 հազ. դրամ, մինչդեռ փաստացի ծախսը (վճարված գումար) կազմել է 1,969,326.3. հազ. դրամ:

1.4 Անհատ խորհրդատու Գ.Խ.-ի և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ միջև ստորագրված պայմանագրի գումարում ներառված է եկամտային հարկ այլ ոչ ԱԱՀ:

1.5 Անհատ խորհրդատու Հ.Ա.-ի և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ միջև ստորագրված պայմանագրի գումարում ներառված է եկամտային հարկ այլ ոչ ԱԱՀ:

2. **Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ**

2.1 «**Հաղթանակ» ենթակայանի մասով ըստ ներկայացված կետերի հերթականության**

- Հաշվի առնելով, որ գծային կարգավորող տրանսֆորմատորը մատակարարվել էր «Կասկադ էներգո» ընկերության անունով և անհրաժեշտություն էր առաջացել իրականացնել դրա ձևակերպումը, կողմերը ստորագրել են պայմանագրի փոփոխություն № 4-ը, որով գծային տրանսֆորմատորները գնային աղյուսակ 1-ից տեղափոխվել էին գնային աղյուսակ 2, և այնուհետ կատարվել է վաճառքը:
- «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ տեղեկանքում նշված է 215,000.0 ԱՄՆ դոլար **մաքսատուրք**, սակայն կոնտեքստում ենթադրվել է մաքսազերծման համար անհրաժեշտ համաֆինանսավորման գումարներ՝ մաքսատուրք, մաքսավճար, բնապահպանական վճար, ակցիզային հարկ և այլ պետվճարներ: Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրության մեջ ներկայացվել է տեղեկատվություն միայն 63.9 մլն. դրամ (132,374.0 ԱՄՆ դոլար) մաքսատուրքի մասով, առանց հաշվի առնելու մատակարարված սարքավորումների դիմաց, վերոնշյալ հոդվածներով «Կասկադ էներգո» ընկերության կողմից կատարված այլ վճարումները: Կապված լրացուցիչ 542,360.0 ԱՄՆ դոլարի հարկային պարտավորությունը, անհրաժեշտ է նշել որ, քանի որ վճարված 674,734.4 ԱՄՆ դոլարը հաշվանցվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից մատուցված ծառայությունների արդյունքում առաջացած ԱԱՀ-ով, ուստի լրացուցիչ հարկային պարտավորություն չի առաջացել:
- Պայմանագրի հավելված 1-ով սահմանված վճարման պայմաններում նշված է, որ կապալառուն պետք է ներկայացնի գործարանային փորձարկման հաշվետվությունը, որն էլ կապալառուն ներկայացրել է: Կապալառուն չի կազմակերպել և չի ապահովել պատվիրատուի մասնակիցների ներկայությունը փորձակումներին, որի մասով կապալառուից պահվելու է համապատասխան գումար: Սակայն բոլոր փորձարկման հաշվետվությունները ներկայացվել են Հաշվեքննիչ պալատին և համապատասխանում են սահմանված պահանջներին:
- Գծային կարգավորիչ տրանսֆորմատորի, 220/110 կՎ անջատիչների և 10 կՎ բջիջների մասով առկա անհամապատասխանությունները, որոնց մասին հայտնվել է Հաշվեքննիչ պալատին «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ մասնագետների կողմից, չեն ազդում այդ սարքավորումների ըստ իրենց նշանակության

ծառայելու համար և տեխնիկապես ընդունելի են, իսկ անհամապատասխանությունների վերացմանը պայմանագրային տեսք տալու համար պատրաստվել է պայմանագրի փոփոխության համաձայնագիր, որով այդ անհամապատասխանությունների համար սահմանված գումարը «Կասկադ Էներգո» ընկերությունը կփոխհատուցի «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին: Ինչ վերաբերվում է նրանց վաճառված լինելուն, հայտնում եմ, որ 10 կՎ բջիջները/վահանները 18.03.2019թ. դրությամբ չեն վաճառվել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին:

2.2 «**Չարենցավան**-3» **ենթակայանի մասով**

- Հաշվեքննիչ պալատի հետևյալ նկատառումը անհասկանալի է. *«Ապրանքների մատակարարումը միաժամանակ աշխատանքների կատարման պարագայում չի համապատասխանում պայմանագրով սահմանված աշխատանքների ժամանակացույցին»:*

2.3 «**Վանաձոր**-1» **ենթակայանի մասով**

- «Վանաձոր-1» ենթակայանում ավտոտրանսֆորմատոր, գծային կարգավորող տրանսֆորմատոր չկա և չի էլ եղել: Ինչ վերաբերվում է պայմանագրի տեխնիկական պայմանների 4.1.9 բաժնում ներկայացված պահանջին, ապա հայտնում եմ որ արտաքին տեղակայման սարքավորումների համար (անջատիչ, բաժանիչ և այլն) նման պահեստավորման պայմանները կիրառելի չեն: Պայմանագրով սահմանված այդ պահանջը վերաբերվում է ներսի տեղադրման սարքավորումների պահպանմանը, որոնք պատշաճ կերպով պահեստավորված են փակ տարածքներում, շենքերի ներսում:

3. **Ստուգման արդյունքում արձանագրված այլ տեղեկատվություն** (ըստ կետերի)

3.1 Նշված փոփոխությունների կատարման համար «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 14.12.2017թ. դիմել է Համաշխարհային բանկին և 22.12.2017թ. ստացել բանկի գրությունը առ այն, որ փոփոխությունը չի պահանջում Համաշխարհային բանկի համաձայնությունը:

3.2 Պայմանագրի հավելված 5-ում ներկայացված են առաջարկված արտադրողները՝ Siemens Transformers LLC, SVEL JSC, Electric Machine Plant LLC, մինչ դեռ «Կալուգագլավսնաբ» ընկերությունը չի հանդիսանում որևէ աշխատանքի ենթակապալառու և չպետք է ներառվեր պայմանագրի հավելված 5-ում՝ «Կառույցի և տեղակայման ծառայությունների հիմնական սարքավորումները և Հաստատված Ենթակապալառուների ցանկ»-ում: «Կալուգագլավսնաբ» ընկերությունը հանդիսանում է «Կասկադ Էներգո» ընկերության համար սարքավորումների մատակարարման գծով միջնորդ/գործակալ, որը որևէ առնչություն չունի պայմանագրի ներքո ապրանքների արտադրության հետ և չէր կարող ներառվել պայմանագրի հավելվածում:

3.3 Բեռնաթափման արդյունքում վնասված երկու 110 լարման տրանսֆորմատորների յուղի քանակը կազմում է 320 կգ: Կապալառուն պարտավորվել է փոխհատուցել վնասը:

II. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» վարկային համաձայնագիր (№ 8495-AM)

1. Ընդհանուր մաս

1.1 Առաջարկվում է ավելացնել կամ նշել վարկից «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ մասը, և որ վարկային համաձայնագրում (ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստորագրվել է 20.03.2018թ.) և ենթավարկային համաձայնագրում (ստորագրվել է 28.06.2018թ.) կատարվել են փոփոխություններ, որով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ մասով վարկի և ենթավարկի գումարը ավելացել է՝ սահմանելով 28,2 մլն. ԱՄՆ դոլար:

1.2 Ենթավարկային համաձայնագրի 3.1 կետում նշված չէ որ համաֆինանսավորումից ֆինանսավորվելու են ՀՀ գործող հարկերը, տուրքերը և մաքսային վճարումները: Ավելին՝ վարկային համաձայնագրով վճարումները կատարվում են 80 % / 20% մասերով:

1.3 2017թ.-ի փաստացի ծախս նշված է 1,000,254.0 հազ. դրամ, մինչդեռ փաստացի ծախսը (կատարված աշխատանքի գումար) կազմել է 1,030,049.4 հազ. դրամ:

1.4 Ծրագրի սկզբից մինչև 30.09.2018թ. «Աշնակ» ենթակայանի վերակառուցման պայմանագրով համաֆինանսավորման միջոցներից վճարված գումարը նշված է 322,608.0 ԱՄՆ դոլար, սակայն վճարված է 1,362,665.3 ԱՄՆ դոլար:

1.5 «Աշնակ» ենթակայանի վերակառուցման մասով decon international GmbH & Consulectra Unternehmensberatung GmbH JV ընկերության հետ ստորագրված պայմանագրի գումարը նշված է 339,468.75 եվրո (407,734.0 ԱՄՆ դոլար), սակայն դոլարային արտահայտությամբ պայմանագրի գումարը կազմում է 366,726.65 ԱՄՆ դոլար համաձայն ՀՀ ԿԲ 08.12.2016թ. համար սահմանված փոխարժեքի:

1.6 Անհատ խորհրդատու Գ.Խ.-ի և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ միջև ստորագրված պայմանագրի գումարում ներառված է եկամտային հարկ այլ ոչ ԱԱՀ, իսկ պայմանագրի համարը ETNIP_HVEN_SSS_1 է:

1.7 Անհատ խորհրդատու Հ.Ա.-ի և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ միջև ստորագրված պայմանագրի գումարում ներառված է եկամտային հարկ այլ ոչ ԱԱՀ, իսկ պայմանագրի համարը ETNIP_HVEN_SSS_2 է:

1.8 «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ հետ ստորագրված պայմանագրի համարը ETNIP-HVEN_CS_1/2017 է այլ ոչ HV-CS-ESRAF_1/2017:

2. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ

2.1 Կապված ղեկավարման և պաշտպանության վահանների աշխատանքների խեղաթյուրմանը, հայտնում եմ որ՝

- Նշված աշխատանքները ներկայացված են Գնային աղյուսակ 4-ի կետ 1.1.1.11 կետում և այդ աշխատանքների համար նախատեսված գումարը կազմում է 25,600.0 ԱՄՆ դոլար:
- Նշված աշխատանքները ընդունվել են պատվիրատուի կողմից առ 18.07.2018թ. № XD_ASH_CW_4 հանձնման-ընդունման ակտով, այլ ոչ թե հաշվեքննիչ պալատի կողմից նշված առ 06.08.2018թ. ակտով:
- Հանձնման-ընդունման ակտում 1.1.1.11 կետը ներկայացված է ըստ հետևյալի՝

Կետ	Նկարագրություն	Գումար ԱՄՆ դոլար
1.1.1.11	Ղեկավարման և Պաշտպանության վահանների մոնտաժում ներառյալ անհրաժեշտ մալուխների անցկացումը և հողանցումը	25,600.0
1.1.1.11 a	Ղեկավարման և Պաշտպանության վահանների մոնտաժում	10 240,00
1.1.1.11 b	Կարգաբերման աշխատանքներ	15 360,00

- Համաձայն ներկայացված բացվածքի վահանների մոնտաժման կշիռը կազմում է 40 %, իսկ կարգաբերման աշխատանքներինը 60 % (որոնց համար անհրաժեշտ է մալուխների միացումը):
- Պատվիրատուի կողմից ընդունվել են միայն վահանների մոնտաժման աշխատանքները:
- Մալուխների մոնտաժումը նախատեսված է գնային աղյուսակ 4-ի կետ 1.1.7.1, 1.1.7.2 և 1.1.7.3 կետերով, որոնցով աշխատանքներ չեն ընդունվել:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 18.03.2019**Թ**. NO.**ՀՊԹ-ԿԱ**-47 **ԳՐՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ**
NO.4 **ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Վկայակաչելով No.4 ստուգման արձանագրության 2-**րդ կետը՝** տեղեկացնում եմ, որ տվյալ կետի հավելված 1-ում նշված վթարային ավտոարհեստանոցը և ավտոլաբորատորիան հանդիսանում են հատուկ մասնագիտացված գործառույթ կատարող տեխնիկա ենթակայանների և օդային գծերի շահագործման և տեխնիկական սպասարկման համար: Հաշվի առնելով դա՝ Ծրագրի խորհրդատու CONSULECTRA Unternehmensberatung GmbH հետ մեքենամեխանիզմների մրցութային փաթեթը պատրաստելիս բազմիցս քննարկվել են այդ մեքենամեխանիզմների տեխնիկական պահանջների աղյուսակները և խորհրդատուի հետ համատեղ որոշվել է այդ աղյուսակներում նշված կահավորման որոշ պահանջներում նշել ապրանքատեսակների մակնիշը կամ դրա համարժեքը, որպեսզի պահպանվի գնումների գործընթացի թափանցիկությունը, բայց միևնույն ժամանակ հնարավորություն տրվի հայտատուներին այդ հատուկ մասնագիտացված տեխնիկայի մասով հստակ պատկերացում ունենալու համար: «Համարժեքության վերաբերյալ պայմանի կատարման սահմանափակման» հետ կապված, տեղեկացնում եմ, որ չկա ոչ մի սահմանափակում, քանի որ նման տեխնիկական պարամետրերով սարքեր-սարքավորումներ արտադրվում են նաև այլ երկրներում: Կից ներկայացվում են համացանցի միջոցով կատարված ուսումնասիրության արդյունքները (6 թերթ):

3-**րդ կետի** վերաբերյալ տեղեկացնում եմ, որ ԲԷՑ ՓԲ ընկերությունը իր 26.09.2017թ-ին No.1-03/1565 գրությամբ տեղեկացրել է ԿՖՎ բանկին, որ գլխավոր մատակարարի հետ բանակցությունների արդյունքում փոխարինվել են ի սկզբանը նախատեսված որոշ մեքենամեխանիզմների մակնիշները, և նույն նամակով ԿՖՎ բանկի հաստատմանն է ներկայացվել պայմանագրի (որի մեջ ներառված են եղել բոլոր փոփոխությունները) նախնական նախագիծը: ԿՖՎ բանկը իր հաստատումը տվել է 2017թ-ի սեպտեմբերի 28-ին: Ինչ վերաբերում է No.4 ստուգման արձանագրության հավելված 2-ում ներկայացված աղյուսակին՝

N/N	**Մեքենամեխանիզմի տեսակը**	**Վառելիքի տեսակը ըստ մրցույթի տեխնիկական պահանջի**	**Վառելիքի տեսակը ըստ կնքված պայմանագրի**
1	Cargo and Passenger Vehicle UAZ Profi 4x2	դիզել	բենզին
2	Mobile Car Workshop 5328A0 – KAMAZ 43114(euro 3)	դիզել	դիզել
3	Crane on Truck KS 55713-1K-1. KAMAZ 65115-32 (Metan) 25 tons 21.6m	դիզել	դիզել
4	Truck with Loading Crane 5328CC-KMU-KAMAZ 65117	դիզել	դիզել

ապա նշված 4 մեքենամեխանիզմներից 3-ի շարժիչների վառելիքի տեսակները ամբողջովին համապատասխանում են մրցույթի տեխնիկական պայմաններին: Իսկ ինչ վերաբերում է բեռնաուղևորատարին, ապա բանակցությունների ժամանակ քննարկվել է այն հարցը, որ Հայաստանում չկա բարձր որակի Եվրո 5 դիզելային վառելիք, որը անհրաժեշտ է ՈՒԱՋ ֆերմերի համար, ինչպես նաև այն, որ ունենալով դիզելային

վառելիքով մեքենա և օգտագործելով եվրո 5-ից ցածր վառելիք, հետագա շահագործման ընթացքում ընկերությունը կբախվի բազմաթիվ տեխնիկական խնդիրների (շարժիչի խափանումների), հետևաբար, որոշվել է ՈՒԱՋ ֆերմերի փոխարեն մատակարարել ՈՒԱՋ պրոֆի (վառելիքի տեսակը՝ բենզին), որը ի տարբերություն դիզելային վառելիքով մեքենայի ավելի արդյունավետ է, քանի որ տնտեսվում է մոտ 500-600 հազար ռուբլի, որը համարժեք է մոտ 6,850-8,219 եվրոյին (հաշվի առնելով ռուսաստանի կենտրոնական բանկի 2018թ. միջինացված ռուբլի-եվրո փոխարժեքը (1 եվրո = 73 ռուբլի)): Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ բենզինով շահագործվող մեքենայի վրա հետագայում հնարավոր է տեղադրել գազ, որը կբերի շահագործման ծախսերի կտրուկ նվազեցման:

4-**րդ կետի** երրորդ ենթակետով տեղեկացնում եմ, որ ներկայացված 903.5 եվրո գումարով պայմանագրի գնի թանկացում տեղի չի ունեցել, որովհետև ԿՖՎ բանկի հաստատմանը ներկայացված պայմանագրի նախագծում գլխավոր մատակարարի կողմից կատարված ծավալաթերթի բաղդատման մեջ ներառված չի եղել մրցութային փաթեթով նախատեսված ուսուցման պահանջը: Միաժամանակ Գլխավոր մատակարարին տեղեկացվել էր այդ մասին, որից հետո Գլխավոր մատակարարը ներկայացրել է նոր վերամշակված ծավալաթերթ՝ ներառելով ուսուցումը՝ 1500 եվրո գումարով և նվազեցնելով պահեստամասերի գումարը 596.5 եվրոյով: Արդյունքում, մատակարարի կողմից համապատասխան փոփոխություն կատարելու հետևանքով, ծրագրի մնացորդային միջոցների ոչ մի ավելացում տեղի չի ունեցել և պայմանագրի գինը չի թանկացել:

5-**րդ կետի** վերաբերյալ տեղեկացնում եմ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը ցանկանում է իր դիրքորոշումը ներկայացնել ըստ կետերի:

1. Նախ ցանկանում եմ քննարկման առարկա դարձնել Ձեր կողմից վկայակոչված այն փաստը, համաձայն որի՝ «Պայմանագրի անգլերեն տարբերակի 7.4 ենթակետի համաձայն՝ ուշացման վնասի հատուցման պահանջի հաշվարկը կատարվում է մատակարարումների ծավալների նկատմամբ»: Այլ կերպ ասած՝ Ձեր կարծիքով «Delay Damages»-ը (այսուհետ՝ նաև վնաս) պետք է կիրառվի պայմանագրի ամբողջ գնի նկատմամբ: Ընդ որում հարկ եմ համարում ընդգծել, որ Դուք ևս կիսում եք այն տեսակետը, որ Պայմանագրի 7.4 ենթակետում խոսքը գնում է Պատվիրատուի կողմից կրած վնասների մասին և ոչ ավելին: Այժմ ավելի մանրամասն:

Այսպես, Պայմանագրի 7.4 ենթակետի համաձայն՝ «The amount of Delay Damages shall be the sum of 1,5 % of the Contract Agreement Price per week in respect of the supply, […]»: Հայերեն թարգմանությունը, որպեսզի կարողանանք հստակ պատկերացում կազմել վնասի հատուցման ինստիտուտի մասին, հետևյալն է՝ «Վնասի գումարն ուշացման համար կազմում է Պայմանագրի գնի 1.5 տոկոս շաբաթական՝ ըստ մատակարարման […]: Պայմանագրի 7.4 ենթակետից բխում է, որ կողմերը պայմանագիր կնքելիս հստակ նախատեսել են պայմանագրային դրույթ առ այն, որ Կատարողը կհատուցի Պատվիրատուի կրած վնասները պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման մասով: Պայմանագրի 7.4 ենթակետի բովանդակությունը կողմերին հնարավորություն չի տալիս վերջինս մեկնաբանել այլ կերպ. Պայմանագրային հիշյալ դրույթի երկիմաստությունը պարզապես բացակայում է: Սա դասագրքային ճշմարտություն է: Համոզվելու համար, որ վնասների դեպքում չի կարող խոսք գնալ պայմանագրի գնի նկատմամբ վնաս հաշվարկելու մասին, առաջարկում ենք դիտարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ ՔՕ) 17-րդ հոդվածը: Ինչու ՀՀ ՔՕ 17-րդ հոդվածը. Պայմանագրի նկատմամբ կիրառելի իրավունքը ՀՀ օրենսդրությունն է:

Այսպես, ՀՀ ՔՕ 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վնասն, դա իրավունքը խախտված անձի ծախսերն են, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), […]: Եթե արտահայտվենք հակիրճ, ապա կարող ենք արձանագրել, որ սույն իրավանորմի բովանդակությունից բխում է, որ անձը կարող է պահանջել իր կրած վնասի հատուցումը միայն այն մասով, որ մասով որ իր իրավունքը խախտվել է: Բացառվում է, որ անձը կարողանա պահանջել վնասի հատուցում կատարված պարտավորության մասով: Համոզվելու համար կարող եք դիտարկել առանձին դատական գործեր:

Այսպիսով, շատ ճիշտ եք նկատել, որ Պայմանագրում խոսքը գնում է կողմի՝ Պատվիրատուի կրած վնասի, այլ ոչ թե տուժանքի մասին: Հետևաբար, եթե կողմերը պայմանագրով նախատեսել են վնասի հատուցման ինստիտուտը, ապա այն կարող է հատուցվել, եթե կողմը ապացուցում է, որ մյուս կողմի կողմից իր պարտավորությունը պատշաճ չկատարելու հետևանքով ինքը կրել է վնասներ: Համոզվելու համար կարող եք դիտարկել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները և ոչ միայն: Պատկերը բոլորովին այլ կլիներ, եթե կողմերը Պայմանագրով նախատեսած լինեին տուժանքի ինստիտուտը, որի պարագայում Կատարողը կհատուցեր Պատվիրատուին՝ անկախ վերջինիս կողմից Պայմանագրի շրջանակներում վնաս կրած լինելու փաստից: Ընդ որում հարկ ենք համարում նշել, որ Պայմանագրով նախատեսված ինստիտուտի ընկալման հարցում ևս չկա երկիմաստություն: Պայմանագրով կողմերը նախատեսել են «Delay Damages»-ի (կրած վնասի) ինստիտուտը: Մինչդեռ պայմանագրում որևէ խոսք չկա «fine»-ի, «penalty»-ի կամ «default charge»-ի՝ որպես տուժանքի ինստիտուտի մասին: Հետևաբար, Պատվիրատուի կրած վնասները կարող են հատուցվել միայն այն չափով, ինչ չափով, որ կապացուցվի վերջինիս կողմից կրած իրական վնասը:

2. Կատարողին պատասխանատվության ենթարկելու մասով: Միակ մարմինը, որը կարող է իրավական գնահատական տալ այն հարցում, այլ կերպ ասած՝ միակ մարմինը, որը կարող է հաստատել ֆորս-մաժորի՝

որպես իրավաբանական փաստի առակայություն կամ բացակայությունը, որի հետ ՀՀ օրենսդրությունը և Պայմանագիրը կապում են քաղաքացիաիրավական հարաբերությունների առաջացումը, փոփոխումը և դադարումը, վեճը քննող մարմինն է (դատարան կամ արբիտրաժ): Ինչևէ, ընկերությունը կրկին կդիտարկի առկա փաստերը առ այն, թե որոշակի ժամանակահատվածում եղել է ֆորս մաժոր, թե՝ ոչ: Ընդ որում ընկերությունն ամենևին էլ չի կորցրել Կատարողի դեմ նման պահանջ ներկայացնելու իր իրավունքը: Ավելին, ընկերությունը ներկայումս իր տրամադրության տակ ունի կատարման բանկային երաշխիք, որը վավեր է մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ը:

3. Հարկ ենք համարում նշել, որ եթե Դուք համոզված եք (սուբյեկտիվ մոտեցում), որ բացակայել է ֆորս-մաժորի փաստը, այնուամենայնիվ նախքան դատարան դիմելը, Պատվիրատուն պետք է հաշվի առնի մի շարք փաստեր՝

ա. Պատվիրատուն արդյո՞ք կարողանում է ապացուցել, որ իր կողմից կրած վնասները կազմում են, ինչպես որ նշել եք, 143.290.3 եվրո,

բ. արդյոք ճիշտ է Պայմանագրի 7.4 ենթակետի Ձեր մեկնաբանությունը: Հարկ ենք համարում նշել, որ Պայմանագիրը վերջին հաշվով կարող է մեկնաբանվել միայն դատարանի կողմից՝ որպես վեճը լուծող մարմին,

գ. արդյոք Պատվիրատուն համոզված է, որ դատական գործ սկսելու դեպքում այն կավարտվի հաջողությամբ: Իսկ պարտվելու դեպքում ո՞վ է կրելու վերջինիս հետևանքով ընկերության կրած ծախսերի պատասխանատվությունը: Այս դեպքում էլ ընկերությունը կարող է մեղադրվել այն հարցում, որ ոչ բավարար իրավական հիմքերի առկայության պարագայում վնասի հատուցման պահանջ է ներկայացրել դատարան՝ ընդդեմ Կատարողի:

Այլ կերպ ասած՝ խնդիրն առերևույթ այդքան էլ դյուրին չէ: Կան բազմաթիվ հարցեր, որոնք պետք է հաշվի առնել Կատարողի դեմ նման պահանջ ներկայացնելիս: Ընդ որում, այդ հարցերը բացառապես իրավական են: Այնուամենայնիվ, ընկերությունը պատրաստակամ է կրկին քննարկման առարկա դարձնել Կատարողի դեմ վնասի հատուցման պահանջ ներկայացնելու հարցը:

6-**րդ կետի** վերաբերյալ տեղեկացնում եմ, որ Գլխավոր մատակարարի գնային առաջարկում նշված է 6 հատ ԳԱՋ 27057 հիմքով ЛВИ HVT 3A մակնիշի ավտոլաբորատորիա, որի միավորի գինը կազմում է 129,320.00 եվրո գումար: Պայմանագրային բանակցությունների ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրվել են վերոնշյալ մակնիշի ավտոլաբորատորիայի տեխնիկական պահանջները և պարզվել է, որ այդ տեսակի ավտոլաբորատորիան անհրաժեշտ է միայն մալուխային ցանց ունեցող ընկերության համար, օրինակ՝ ՀԷՑ ՓԲԸ-ն: Քանի որ ԲԷՑ ՓԲ ընկերությունը չունի մալուխային ցանց, ուստի GVI-2000M բարձր լարման իմպուլսների գեներատորը, TDR-107 ռեֆլեկտոմետրը, Setting burn down UP-7M, Inductive search set IFL55106 ֆունկցիաներով ավտոլաբորատորիա ունենալու անհրաժեշտությունը չկա: Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ ԲԷՑ ՓԲ ընկերության բոլոր մասնաճյուղերի բարձրավոլտ փորձարկումների ծառայությունները հագեցված են Megger E6-31, հողանցման դիմադրության, ինչպես նաև նպանատիպ այլ չափման սարքեր-սարքավորումներով, ուստի այս ֆունկցիաները անհրաժեշտ չեն ԲԷՑ ՓԲ ընկերությանը իր ենթակայանները և օդային գծերը սպասարկելու համար: Արդյունքում որոշվել է, որ գլխավոր մատակարարը 6 հատ ԳԱՋ 27057 հիմքով ЛВИ HVT 3A մակնիշի ավտոլաբորատորիայի փոխարեն մատակարարի 2 հատ ԳԱՋ 27057 հիմքով ЛВИ HVT-1 մակնիշի ավտոլաբորատորիա, որի միավոր գինը կազմում է 85,000.00 եվրո գումար, արդյունքում կատարվել է խնայողություն մեկ միավորի համար 44,320 եվրո գումարի չափով, ընդհանուր 88,640 եվրո (երկու ավտոլաբորատորիայի համար): Սակայն, տեղի է ունեցել վրիպում, որի արդյունքում պայմանագրի ծավալաթերթում փոխվել է ավտոլաբորատորիայի գինը, իսկ հին մակնիշը չի փոփոխվել նոր մակնիշով:

7-**րդ կետի** երկրորդ ենթակետի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը իր գրություններով (15.09.2014թ., 26.09.2014թ., 27.11.2014թ.) բազմիցս նշել է, որ ցանկանում է «Գյումրի-2» ենթակայանի խնայված մնացորդային գումարներով ձեռք բերել մեքենամեխանիզմներ «Վանաձոր-2», «Կամո», «Ալավերդի-2» և «Գյումրի-2» ենթակայանների տեխնիկական սպասարկման և շահագործման համար: Ձեռք բերվող մեքենամեխանիզմների ամբողջական ցանկը հստակ սահմանվել է միայն Խորհրդատուի հետ համատեղ մրցութային փաթեթ պատրաստելիս: Հաշվի առնելով այն, որ ԲԷՑ ՓԲ ընկերությունում գոյություն ունեցող մեքենամեխանիզմները բարոյապես և ֆիզիկապես մաշված են եղել, հետևաբար, ԲԷՑ ՓԲ ընկերության ղեկավարությունը նպատակահարմար է գտել կատարել ձեռք բերված մեքենամեխանիզմների համապատասխան բաշխում ըստ մասնաճյուղերի, ինչպես նաև տնտեսական նպատակահարմարությունից ելնելով որոշ մեքենաներ տրվել են վարձակալության:

8-**րդ կետի** վերաբերյալ տեղեկացնում եմ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության և «Կալուգագլավսնաբ» ԲԲԸ/«Ռուսկոմտրանս» ՍՊԸ կոնսորցիումի միջև 2017 թվականի նոյեմբերի 15-ին կնքված մատակարարման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 16.1 ենթաբաժնի համաձայն՝ մատակարարվող մեքենա-մեխանիզմների սեփականության իրավունքը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությանն է անցնում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Պայմանագրի 1.4 ենթաբաժնի համաձայն՝ Պայմանագրի կիրառելի իրավունքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 1277 հոդվածի համաձայն՝ գործարքի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների ծագումն ու դադարելը որոշվում են այն պետության իրավունքով, որը կիրառելի է տվյալ գործարքի նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ:
Օրենսգրքի 507 հոդվածի համաձայն՝ գնորդը դառնում է ապրանքի սեփականատեր ապրանքի համար վճարելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
Օրենսգրքի 179 հոդվածի համաձայն՝ Պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է գույքը հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:
Օրենսգրքի 177 հոդվածի համաձայն՝ գույքի հանձնում է համարվում գույքը ձեռք բերողին, ինչպես նաև ձեռք բերողին առաքելու համար փոխադրողին կամ առանց տեղ հասցնելու պարտավորության օտարված գույքը ձեռք բերողին ուղարկելու համար կապի կազմակերպությանը հանձնելը:
Այսպիսով, մեքենա-մեխանիզմների սեփականության իրավունքը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը ձեռք է բերել «Կալուգագլավսնաբ» ԲԲԸ/ «Ռուսկոմտրանս» ՍՊԸ կոնսորցիումի կողմից մեքենա-մեխանիզմները փոխադրող ընկերությանը հանձնելու պահից:
Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ կառավարության 1998 թվականի հուլիսի 9-ի թիվ 429 որոշմամբ հաստատված վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ 2018 թվականի երրորդ եռամսյակի համար կազմված հաշվետվության մեջ հաշվետու տարվա սկզբից վարկային միջոցների հաշվին կատարված աշխատանքների ծավալում ներառված է մատակարարված մեքենամեխանիզմների արժեքը՝ ընդհանուր 1,431.4 հազար եվրո գումարով:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 18.03.2019Թ-Ի NO.ՀՊԹ-ԿԱ-47 ԳՐՈՒԹՅԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ NO. 5 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I Ընդհանուր մաս

Կետ 2. Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մասով կնքվել է 2 պայմանագիր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 1,100,969.91 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ Անհատ խորհրդատուի հետ կնքվել է 11,000.0 ԱՄՆ դոլար արժողությամբ պայամանագիր, իսկ CESI S.p.A. & INCICO S.p.A. խորհրդատվական ընկերության հետ կնքվել է 1,089,969.91 ԱՄՆ դոլար արժողությամբ պայամանագիր:
Ըստ այդմ ՀՀ հաշվեքնիչ պալատի կողմից ներկայացված ծրագրի սկզբից պայմանագրերի շրջանակներում փաստացի ծախսերը վերաբերվում են 2 պայմանագրերին և համապատասխանում են:

II Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ

Կետ 2. LEEEC ընկերության կողմից 2017-2018թթ. մատակարարված սարքեր և սարքավորումների հաշիվ ապրանքագրերի և պայմանագրի գնացուցակի միջև առկա են անհամապատասխանություններ: Համաձայն Պայմանագրի Ընդանուր Պայմանների 21.3.3 կետի պահանջի գլխավոր կապալառուն պետք է նախապես համաձայնեցներ հաշիվ ապրանքագրերը ԲԷՑ ՓԲ ընկերության հետ, ինչը չեն կատարել: ԲԷՑ ՓԲ ընկերության կողմից գրվել է բազմաթիվ գրություններ (11.07.2018թ. No 1-03/800, 17.08.2018թ. No 1-03/987, 24.10.2018թ. No 1-03/1285, 21.11.2018թ. No 1-03/1443), սակայն LEEEC ընկերությունը շարունակել է մատակարարումը իրականացնել նույն անպատասխանատու գործելաոճով՝ չպաշտպանելով մատակարարվող սարքավորումների հաշիվ ապրանքագրերի և պայմանագրի գնացուցակի համապատասխանությունը: Վերոնշյալ անհամապատասխանությունները ճշտելու համար ԲԷՑ ՓԲԸ կիրականացնի վերահայտարարագրման գործընթաց, որի հետ կապված խնդիրները քննարկվում են LEEEC ընկերության հետ: Գործընթացը ձգձգվում է LEEEC ընկերության կողմից:

Հավելված No 3-ի

Կետ 2- մատակարարվել է Աղյուսակ IV-ի կետ 1.18.17-ով նախատեսված դարպասները, որի արժեքը չի վճարվել, վճարելու ժամանակ գինը կնվազեցվի մաքսային վճարների չափով:
Կետ 6- մատակարարվել է Աղյուսակ IV-ի կետ 2.19.22 ապրանքը, որի արժեքը վճարվել է մասնակի, վերջնավճարը կնվազեցվի մաքսային վճարների չափով:
Կետ 7-ի մասով LEEEC ընկերությունը 09.08.2018թ. No LEEEC-A-539 գրությամբ հավաստիացրել է, որ կփոխհատուցի ԲԷՑ ՓԲ ընկերությանը նշված ապրանքի մաքսային ձևակերպման հետ կապված բոլոր կարգի վճարները, սակայն առ այսօր չեն վճարել:

III. Ստուգման ընթացքում արձանագրված այլ փաստեր

Կետ 1. Հայտնում ենք, որ մատակարարված ապրանքների պահպանումը կորուստի կամ վնասվելու հետ կապված, համաձայն ՊԸՊ 31.1 և 32.1 կետերի պահանջների, մինչև վերակառուցման ավարտը գլխավոր կապալառուի պարտավորությունն է:
«Ագարակ-2» ենթակայանից գողացված մալուխների հետ կապված հայտնում ենք, որ LEEEC ընկերությունը չի տեղեկացրել ԲԷՑ ՓԲ ընկերությանը գողության մասին: ԲԷՑ ՓԲ ընկերությանը հայտնի է դարձել գողության մասին, երբ ստացել է Սյունիքի մարզային քննչական վարչության 19.12.2018թ. No 57-5/451542Քր-18 գրությունը:

Գողության վերաբերյալ հաղորդումը 03.10.2018թ. տվել է LEEEC ընկերությունը, գողության ժամանակահատվածը նույնպես նշել է LEEEC ընկերությունը: Ապրանքների հանձման-ընդունման ժամանակ ԲԷՑ ՓԲ ընկերությանը հայտնի չի եղել գողության փաստը և քանի որ մալուխները հատային ապրանք չեն և ներկրվել են թմբուկներով չի նկատվել ԲԷՑ ՓԲ ընկերության կողմից: Թաքցնելու պատճառը մեզ հայտնի չէ: Քրեական գործից պարզ է դառնում, որ գողացված է 4 տեսակի ընդհանուր 314մ մալուխ, որի ընդհանուր գինը կազմում է 10485 ԱՄՆ դոլար:

LEEEC ընկերությունը պետք է վերականգնի գողության պատճառով ԲԷՑ ՓԲ ընկերությանը հասցրած կորուստը նաև համաձայն ՄՓ-ի B 01 կետ 8.1-ի: Դրա վերաբերյալ ԲԷՑ ՓԲ ընկերությունը 15.03.2019թ. No 01/259-19 գրությամբ դիմել է LEEEC ընկերությանը կորուստը վերականգնելու համար: Չվերականգնելու դեպքում վերջնահաշվարկի ժամանակ հաշվի կառնվի 10485 ԱՄՆ դոլարի չափով նվազեցումը:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019Թ. ՄԱՐՏԻ 18-Ի № 6 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

II. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումների մասով

1.- ՀՀ Ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության միջև 2017 թվականի ապրիլի 26-ին ստորագրված «18.11.2011թ. կնքված Ենթավարկային համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին» Համաձայնագիր N 1-ի և 2018 թվականի նոյեմբերի 23-ին ստորագրված Համաձայնագիր N2-ի 3-րդ կետի համաձայն՝ համաձայնագրի պայմանները կիռարվում են 18.11.2011թ. ստորագրված Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ Համաշխարհային բանկը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղված իր 20.06.2018թ. գրությամբ հաստատել է, որ ՀՀ և ՎԶՄԲ միջև 2011թ. հունիսի 1-ով թվագրված/կնքված Վարկային համաձայագրում սահմանված վարկի փակման ժամկետը երկարաձգվել է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հրազդան ՋԷԿ-ից Շինուհայր ենթակայան 220 կՎ ՕԳ-ի կառուցման ծրագրի մասով

2.1- Կապալառուի կողմից մաքսային մարմնին ներկայացված սխալ հաշիվ ապրանքագրի հետ կապված տեղեկացնում ենք, որ Kalpataru Power Transmission LTD-ի նախաձեռնությամբ (07.06.2018թ HVEN_2011_1_80883 գրություն) (իրենց իսկ կողմից թույլ տված թերությունը վերացնելու նպատակով), ինչպես նաև ՀՀ ՊԵԿ-ից 18.10.2018թ. ստացած թույլտվության համաձայն, վերախմբագրված հաշիվ-ապրանքագիրը՝ 751,119.98 ԱՄՆ դոլար արժեքով ԲԷՑ-ի կողմից 24.10.2018թ. վերահայտարարագրվել է մաքսային մարմիններում: Բացի սահմանված տեղական հարկերից և մաքսատուրքից, վերահայտարարագրման արդյունքում առաջացած անհրաժեշտ ծախսերը և այլ մաքսային վճարները, ներառյալ վնասները, տույժերը, որոնք կրել է ԲԷՑ-ը, համաձայն 12.03.2019թ. ԲԷՑ-ի և Kalpataru Power Transmission LTD-ի միջև կնքված Համաձայնագիր No 1.1-ի հոդված 2-ի 2.3 և 2.4 ենթակետերի պետք է փոխհատուցի Կապալառուն, համապատասխան հաշվարկը Կապալառուին ներկայացնելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2- Պայմանագրի ՊՀՊ 32.1 կետի համաձայն կապալառուն պատասխանատու էր մատակարարված կառույցի և պարտադիր պահեստամասերի յուրաքանչյուր խմբաքանակի պահպանման և խնամքի համար: ՊՀՊ 21.4 կետի համաձայն՝ առաքված կառույցները և պարտադիր պահեստամասերը խնամքի, պահպանման և կառավարման նպատակով կազմված հանձնման-ընդունման ակտով հանձնվում էին Կապալառուին: Միևնույն ժամանակ՝ ցանկացած չհայտնաբերված թերմատակարարման, թերության կամ վնասվածքի հետ կապված խնդիրները Կապալառուին չէին ազատում պատասխանատվությունից: Իրականացված ծրագիրը վերջնական առումով փաստեց, որ կապալառուի նկատմամբ կրկնակի պարտավորություն կիրառելու անհրաժեշտություն չկար:

3.1- Նշված դիտողության վերաբերյալ պարզաբանում ենք, որ դեռևս 2016թ. ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգումների ժամանակ արձանագրվել էր, որ «Ծրագրի Տեխնիկա-տնտեսական հիմնավորում» պատրաստող Խորհրդատու՝ «ՄՎՎ Դեկոն-Քոնսալտեքտրա Ունտերնեհ-մենսբերատունգ ԳմբՀ» համատեղ ձեռնարկության (Գերմանիա) կողմից կատարված ուսումնասիրությունները չեն հանդիսանում աշխատանքների իրականացման նախագիծ: Ըստ կազմված տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության (նախնական նախագծի) հենարանների և այլ սարքավորումների ու նյութերի վերաբերյալ քանակական տվյալները կողմնորոշիչ բնույթի են և որպես կանոն կարող են փոփոխվել նախագծման փուլում: Քանի որ նախնական նախագծի մշակման փուլում հաշվի չեն առնվում տեղանքի ռելիեֆը (տոպոգրաֆիկ հանույթը) և չեն հաշվարկվում հաղորդալարերի վրա ազդող վեր հանող՝ պոկող ուժերը, հետևաբար՝ վերը նշվածը կարող էր մշակվել միայն աշխատանքների իրականացման նախագծային փուլում, որից հետո կարող էր միայն հատկորոշվել հենարանների տեղակայման ճշգրիտ վայրերը: Կառույցի նախագծային աշխատանքները իրականացվել են մրցույթի արդյունքում ընտրված Գլխավոր կապալառու՝ Kalpataru Power Transmission LTD (Հնդկաստան) ընկերության կողմից: Միաժամանակ ծրագրի իրականացման ընթացքում, ի հայտ են եկել նաև մի շարք տեղամասեր, որտեղ ԲԷՑ-ը ստիպված էր կապալառուին հանձնարարել իրականացնելու ուղեգծի և հենարանների տիպերի ու դրանց մասերի փոփոխություններ, մասնավորապես՝ Սյունիքի մարզում հատուկ տարածքի շրջանցում, Գավառի գերեզմանոցի տարածքի ամբողջ երկարությամբ՝ թվով 2 հենարանների

տիպերի հզորացում, Զորագյուղի տարածքում հենարանների բարձրացում՝ հենարանի տիպի հզորացում և նոր երկարացումների մոնտաժում: Գլխավոր կապալառուի կողմից Կառույցի իրականացման ընթացքում ՕԳ Ծրագծում (պլան-պրոֆիների վերջնական հաստատված նախագծերով) կատարվել են վերջնական փոփոխություններ/շրջանցումներ, ինչն հանգեցրել էր հենարանների տիպերի և դրանց երկարացումների փոփոխությունների, այսինքն՝ հենարանները և քանակական և ըստ տեսակի (***խարսխային և միջանկյալ***) նախագիծ փոլում ենթարկվել են փոփոխության: Արդյունքում ունեցել ենք պայմանագրի ընդհանուր գնի ավելացում: Չնայած վերջնական առումով, 26.12.2018թ. կնքված Համաձայանգիր No1-ի /Կապալառուի կողմից իր նկատմամբ եղած պարտքի զիջման/ արդյունքում Kalpataru Power Transmission LTD ընկերությանը պակաս է վճարվել՝ մոտ 1,544 միլիոն ԱՄՆ դոլար գումար:

3.2- Պարզաբանելով դիտողությունը, ներկայացվում է նշված մեխանիզմ-սարքի (անվավոր քաշող և ձգող սարքերի) 26.12.2017թ. հանձնման ընդունման ԱԿՏ-երը, ինչպես նաև հայտնում ենք հետևյալը, որ Պայմանագրի գնային աղյուսակի N1 **/գնացուցակ** 1-**ի/** «Արտասահմանից մատակարարված կառույցը և պարտադիր պահեստամասերը» 5.6 ենթակետի համաձայն նշված ներկրված սարքեր-սարքավորումները պետք է շահագործվեր «հենարանների վրա աշխատանք կատարելու» ժամանակ, և Պատվիրատուի տրամադրության տակ պետք է թողնվեր «անցկացման և տեղակայման աշխատանքների ավարտից հետո»: Հարկ ենք համարում նշել, որ 26.12.2018թ. ԲԷՑ-ի և Kalpataru Power Transmission LTDի միջ կնքված No 1 Համաձայագրի 1.3 կետի համաձայն, տեղի է ունեցել պայմանագրի գնային աղյուսակի փոփոխություն՝ նշված սարքավորումը գնային աղյուսակ 1-ից հանվել է և սարքավորման գինը՝ ներառյալ տեղական սահմանված հարկերը վերաձևակերպվել է «Պատվիրատուի երկրից մատակարարված կառույցը, սարքավորումները և պարտադիր պահեստամասերը» վերտառությամբ գնային աղյուսակ 2-ում: Նշված սարքավորումը ուշացումով է ձեռքբերվել ԲԷՑ-ի կողմից, քանի որ կապալառուն փաստացի հարկային հաշիվ կարող էր միայն ներկայացնել վերոնշյալ No 1 Համաձայագրով տեղի ունեցած փոփոխությունից հետո: Կապալառուի կողմից ներկայացված հարկային հաշիվը հաստատվել է ԲԷՑ-ի կողմից, և մեխանիզմ-սարքը (անվավոր քաշող և ձգող սարքերը) որպես հիմնական միջոց հաշվառվել է արևելյան մասնաճյուղի հաշվեկշռում:

3.3- Ի նկատի ունենալով վերոշարադրյալ (3.1 կետ) պարզաբանումը, հարկ ենք համարում հիշեցնել, որ ԲԷՑ-ին մատակարարված վերջնական ապրանքների ծավալները նույնականացված են պլան-պրոֆիների վերջնական հաստատված նախագծերին, այսինքն կառույցը համապատասխանում է վերջնական փորձաքննություն անցած նախագծին, և հետևաբար նաև գնային առումով՝ վերը հիշատակված 26.12.2018թ. կնքված Համաձայանգիր No1-ում արատացոլված վերջնական ծավալներին-գնային աղյուսակին ու պայմաններին: Պայմանագրի «գնային աղյուսակ» N4-ից 271,974 ԱՄՆ դոլար և 114,071,740 ՀՀ դրամ գումարները տնտեսվել են, քանի որ կապալառուն հիմք ընդունելով տեղանքներում հաստատված գրունտների վերջնական կատեգորիաների որոշման վերաբերյալ գեոլոգիական եզրակացությունները, տեղանքներում չի տեղադրել ցցաշեն հիմքերը («գնային աղյուսակ» N1 և N4, 2.3 կետ) և ժայռոտ հիմքերը («գնային աղյուսակ» N1 և N4, 2.2 կետ)՝ փոխարենը Ծրագրի Խորհրդատուի հաստատմամբ տեղադրելով միայն «գնային աղյուսակ» N1-ի և N4-ի 2.1 կետին համապատասխանող առանձին և ծխնելույզային տեսակի հիմքեր:

4.- Ի պատասխան Ձեր պնդմանը, հայտնում ենք, որ Համաշխարհային բանկի (ՀԲ) Վարկային ծրագրի գործառնական ձեռնարկի 6-րդ հավելվածի համաձայն 4 մլն ԱՄՆ դոլարի շեմը նախատեսված է նոր մրցույթների իրականացման ընթացքում մրցույթի տեսակը հաստատելու համար, այսինքն պետք է հստակեցվի, թե մենք ինչպիսի մրցույթի հետ գործ ունենք՝ միջազգային մրցակցային մրցույթի (international competitive bidding), թե ազգային մրցակցային մրցույթի (national competitive bidding): Համաձայն Համաշխարհային բանկի (ՀԲ) գնումների ուղեցույցի Հավելված 1-ի 3 կետի b ենթակետի պահանջների, կնքված պայմանագրում մատակարարվող ապրանքների և իրականացվող աշխատանքների ծավալների նշանակալի փոփոխություններ չկան: Հավելված 1-ի 3 կետի c ենթակետի՝ *(Modifications of the signed contract)*, պայմանագրի գնումների ուղեցույցի համաձայն *(3.Modifications of the signed contract)* պայմանագրի գնի ցանկացած փոփոխություն, որն իրականացվում է նույն պայմանագրի գնի 15%-ից ավել փոփոխության դեպքում, պետք է լինի ՀԲ հաստատումը, հակառակ դեպքում՝ 15%-ի սահմաններում կատարվող գնի փոփոխությունը ՀԲ-ի հաստատում չի պահանջում: Նշված պայմանագրի շրջանակներում պայմանագրի վերջնական գինը ավելացել է պայմանագրի ընդհանուր գնի 15%-ի սահմաններում:

5- Պատվիրատուի կողմից Կապալառուին համապատասխան ավարտման սերտիֆիկատ չի տրվել, քանի որ «Համաձայնագիր #1-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ» 2019թ. մարտի 12-ին կնքված Համաձայնագիր #1.1-ի 1.6 կետի համաձայն կապալառուին Ավարտման սերտիֆիկատն անվերապահ և հստակ կերպով կտրամադրվի ԲԷՑ-ի անունով ներմուծված ապրանքների վերահայտարարագրման գործընթացը ավարտելուց և հաշվապահական վերջնական ձևակերպում ստանալուց հետո, ինչը կհավաստի (կերաշխավորի) կապալառուի կողմից պայմանագրով ստանձնած աշխատանքները 2017թ. նոյեմբերի 28-ին ավարտած լինելու փաստը:

6.- Տեղեկացնում ենք, որ Պատվիրատուի կողմից տույժի վճարման պահանջ չի կիրառվել, հաշվի առնելով հետևյալ փաստական հանգամանքները.

«Kalpataru Power Transmission» LTD-ն 21.11.2016թ. դիմել է ԲԷՑ-ին պայմանագրի ժամկետի երակարացման նպատակով, կից ներկայացնելով հիմնավորումներ: Կապալառուի կողմից ուշացման վերաբերյալ մասնավորապես ներկայացվել են՝ դեպի տեղանք մոտեցման ճանապարհների հետ կապված խնդիրները, կադաստրային սխալ քարտեզագրումը, աշխատանքային վիզաների տրամադրման ուշացումները և եղանակային անբարենպաստ պայմանները: Հետագայում՝ 2017թ. ապրիլին ԲԷՑ-ը կապալառուին հայտնել է հետևյալի մասին, որ «պայմանագրի երկարացման համար համապատասխան համաձայնությունը ձեռք է բերված, սակայն, վերջինս այդպես էլ չի ստորագրել Փոփոխություն No 6-ը և ԲԷՑ-ը 2017թ. հուլիսին միջանկյալ գրությամբ կապալառուին առաջարկել է ֆիքսվել մինչև 30.11.2017թ. աշխատանքների ավարտման ժամկետի վրա, միաժամանակ պնդելով, որ պայմանագրի ժամկետի երկարացման հետ կապված բոլոր հարցերը կապալառուի հետ կքննարկվեն, երբ վերջինս կավարտի բոլոր աշխատանքները Օբյեկտներում, ներառյալ՝ բոլոր հայտնաբերված թերությունների վերացումը: 2018թ. փետրվարի 23-ին կառավարման խորհուրդը կայացրել է պայմանագրում փոփոխություններ կատարելու առաջարկը մերժելու մասին որոշում և հանձնարարել է ԲԷՑ-ին կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնել փոփոխությունների ամբողջական փաթեթը՝ ներառյալ պայմանագրի ժամկետի երկարաձգման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկը: Խնդրի վերաբերյալ ամբողջական նախապատմությունը ներկայացված է 2018թ. դեկտեմբերին կառավարման խորհրդին ներկայացված տեղեկանքում: Ադյունքում՝ կառավարման խորհրդի 17.12.2018թ. որոշմամբ ԲԷՑ-ի և «Kalpataru Power Transmission» LTD-ի միջև կնքված պայմանագրի մի շարք կետերում կատարվել են փոփոխություններ, այդ թվում՝ փոփոխվել է Պայմանագրի ՊՀՊ 8.2 կետը, երկարաձգվել է պայամանագրի ավարտման ժամկետը, և այն բոլոր Օբյեկտների համար սահմանվել է մինչև 2017 թվականի նոյեմբերի 30-ը: Ինչպես ներկայացվեց վերոգրյալում (3.1 կետ), 26.12.2018թ. կնքված համաձայանգիր N1-ի /Կապալառուի կողմից իր նկատմամբ եղած պարտքի զիջման/ արդյունքում Kalpataru Power Transmission LTD ընկերությանը պակաս է վճարվել՝ մոտ 1,544 միլիոն ԱՄՆ դոլար գումար:

7.1.1- Հայտնում ենք հետևյալը, որ Կապալառուի կողմից համաձայն պայմանագրի տեխնիկական առաջադրանքի 2.1.7 կետի ՕԳ-երի վերակառուցման աշխատանքների ընթացքում փաստացի իրականացվել են Նորադուզ օդային գծի թվով ոչ թե 21, այլ թվով 25 հենարանների ապամոնտաժում, մասնավորապես՝ հին օդային գծի N 1-ից մինչև N21, ինչպես նաև նույն օդային գծի NN 170, 171, 171Ա, 172 հենարանները: Արևելյան մասնաճյուղի՝ ք.Սևանում գտնվող տարածք են տեղափոխվել փաստացի՝ թվով 4 լրակազմ (NN 170, 171, 171Ա, 172 հենարաններ) և մնացած թվով 21 հենարաններից որոշակի մասեր/դետալներ: Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ համաձայն վերոնշյալ 2.1.7 կետի Լիճք օդային գծից փաստացի ապամոնտաժվել են ոչ թե 3, այլ թվով 5 հենարաններ, մասնավորապես՝ հին օդային գծի N 1-ից մինչև N4 և N85 հենարանները, որոնցից ամբողջական 4 լրակազմ (N 1-ից մինչև N4 հենարաններ) տեղափոխվել և փաստացի գտնվում են արևելյան մասնաճյուղի՝ ք.Սևանում գտնվող տարածքում, իսկ 1 ամբողջական լրակազմ (N 85 հենարան) Լիճք ենթակայանի տարածքում (արևելյան մասնաճյուղի ենթակայության տակ գտնվող տարածք),:

8.- «Hifab Oy» ընկերությունը 28.11.2017-04.04.2018**թթ**. ժամանակահատվածից հետո ՕԳ կառույցի տեղանքում իրականացրել է կառույցի՝ մոնտաժված հենարանների, հաղորդալարերի, մեկուսիչների շարանների և այլ սարքեր սարքավորումների տեղակայման աշխատանքների որակի վիզուալ/տեսողական ստուգում, որն «Hifab Oy» ընկերության անձնակազմում ներառված վերահսկողի կողմից հաստատվել է միջանկյալ ակտերով, իրականացված աշխատանքների վերաբերյալ ԲԷՑ-ին ներկայացված սահմանված կարգի հաշվետվություններով, մասնավորապես՝ հենարանների հավաքակցման, մեկուսիչների շարանների տեղադրման և հաղորդալարերի, ՕՄԱՄ-ի ձգման աշխատանքները: Պետք է նշել, որ 01.01.2017-04.04.2018թ.թ. ժամանակահատվածում Կապալառուի կողմից, որպես ծածկված/թաքնված բնույթի աշխատանքներ, իրականացվել են ընդամենը թվով 2 հենարանների հիմքերի բետոնացում (3-րդ հատվածի թ.137,138 հենարաններ), որոնք անմիջականորեն վերահսկվել են ԲԷՑ կապիտալ շինարարության բաժնի մասնագետների՝ լիցենզավորված վերահսկողների կողմից:

110 **կՎ «Լալվար» և «Նոյեմբերյան» օդային էլեկտրահաղորդման գծի փոխարինում/վերակառուցում/ ծրագրի մասով**

9.- Պարզաբանում տալով Ձեր դիտողություններին, տեղեկացնում ենք, որ 2018թ. 15.05.2018թ. կապալառու «Gam Arak Industrial Company» ընկերությունը գրությամբ և դրան կից մանրամասն հիմնավորումներով դիմել է ԲԷՑ-ին պայմանագրի ժամկետը 570օր երկարացնելու գործող պայմանագրի ժամկետը: 2018թ. հուլիսի 30-ին ԲԷՑ-ը գրությամբ դիմել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, կառավարման խորհրդի դիտարկմանը ներկայացնելով պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ փաթեթը: 14.08.2018 թվականին ԲԷՑ-ը, ի լրումն նախորդ գրության, կառավարման խորհդին է ներկայացրել նաև պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ ՀԲ-ի դրական եզրակացությունը: Հարցի հետ կապված կառավարման խորհրդի համաձայնության վերաբերյալ համապատասխան որոշումը ստացվել է 02.10.2018 թվականին, հաջորդիվ՝ 05.10.2018թ. «Gam Arak Industrial Company» ընկերության և ԲԷՑ-ի միջև կնքվել է պայմանագրի «Փոփոխություն N1»-ը, համաձայն որի պայմանագրի ավարտման ժամկետները բոլոր Օբյեկտների համար սահմանվել է 37 ամիս, պայմանագրի ուժի մեջ մտնելու օրից (22.09.2016թ.):

11.-Նշվածի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Tractebel Engineering S.A ընկերությունը պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետում՝ 16 ամսվա ընթացքում իր անմիջական մասնակցություն է ունեցել ծրագրի շրջանակներում կապալառուի կողմից կատարված նախագծային բոլոր փաստաթղթերի ստուգման-դիտարկման և վերջնականացման վերաբերյալ՝ մինչև նախագծերի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փորձաքննության ենթարկվելը: Միևնույն ժամանակ Խորհրդատուն ներկայացրել է Կապալառուի կողմից էլեկտրահաղորդման ցանցի և ծրագրի տեխնիկական խնդիրների բավարարման նպատակով առաջարկված նյութերի և սարքավորումների բնութագրերի դիտարկման վերաբերյալ գրություններ, հայտնելով իր դրական կամ այլընտրանքային տեսակետները: «Tractebel Engineering» ընկերության հետ կնքված պայմանագրի ժամկետը լրացել է 2018 թվականի հունվարի 22-ին, իրականացված ծառայությունների դիմաց հաշիվ-ապրանքագրեր չեն ընդունվել: Խորհրդատուի հետ պայմանագրի ժամկետի երկարաձգման գործընթացը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №7 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Համաձայնագրով սահմանված ամբարձիչի 1182 ժամ աշխատանքը 15 518 541 ՀՀ դրամ արժեքով հանձնման - ընդունման ամփոփ արձանագրության մեջ ներառված է հենարանի ներկման աշխատանքների միավոր արժեքի մեջ 26 050 ՀՀ դրամ մասնաբաժնով, որը կազմում է ընդհանուր 15 478 389 ՀՀ դրամ, կամ 1տ հենարանի ներկման համար մոտավորապես 2 ժամ ամբարձիչի աշխատանք: (աղյուսակ 2)

1.2.Համաձայնագրով 13,5տ նյութական միջոցների բեռնում, բեռնաթափում և տեղափոխում ասֆալտե ու գրունտային ճանապարհներով նախատեսված ընդհանուր 2 081 913 ՀՀ դրամի փոխարեն հանձնման – ընդունման ամփոփ արձանագրությամբ սահմանվել է փաստացի 17,4 տ նյութական միջոցների տեղափոխման համար ընդհանուր 1 197 267 ՀՀ դրամ գումար: (աղյուսակ 2)

II. 7 **և** III. 2 **կետեր**

2. «Շամբ» 220կՎ ՕԳ 1-268 մետաղական հենարանների ներկման աշխատանքների վերաբերյալ

II գլխի 7-րդ կետի աղյուսակի 1-ում ներկայացված թվերը չեն համապատասխանում, քանի որ հանձնման և ընդունման արձանագրություններում չեն ընդգրկված կատարողական ակտեր թիվ 11 և 12:

III գլխի 2-րդ կետում նշված ՀՀ կառավարության 23.11.2006թ. (էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ) տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին թիվ 1933-Ն որոշման 103-րդ կետի համաձայն՝ հենարանների ներկման աշխատանքները բացառություն են կազմում հենարանների լայնակները և նրանցից վերև պետք է ներկել հոսանքազրկելուց հետո:

4-ՐԴ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

STS 207-230 HV, Repeator RD 48 IV, RD 48 HV 3 կետ

3. Պատվիրված սարքվածքների տիպերի անվանումները պարունակում են այդ սարքվածքների տեխնիկական բնութագրերը: Վնասված STS 207-230 HV, Repeator RD 48 IV, RD 48 HV սարքվածքների համալրման համար գնվել են նույն տիպի և նույն արատադրողից (STS 207-230 HV, Repeator RD 48 IV, RD 48 HV) սարքվածքներ, ինչի վերաբերյալ տրվել է տեղեկանք այդ սարքվածքների համադրելիության վերաբերյալ ստուգում իրականացնող անձանց:

Ենթակայանների շահագործումը, որտեղ տեղադրված են այդ սարքավածքները, իրականացվում է 2003 թվականից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ենթակայանում գտնվող սարքավորումները էլեկտրոնային են և ունեն կարճ շահագործման ժամկետ (8-10 տարի), ինչպես նաև վթարների հետևանքով շարքից դուրս եկած սարքվածքների պահուստի բացակայությունը, ինչի հետևանքով անմիջապես հնարավոր չի լինում վերականգնել ավտոմատ կառավարման համակարգի պատշաճ աշխատանքը, անհրաժեշտ էր համալրել պահուստային սարքվածքները:

Ներածության 2 **կետի վերաբերյալ պարզաբանումներ**.

«Բարձավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում ՀՀ պետական վերահսկողական ծառայության ուսումնասիրությունների ընթացքում մի շարք գործընկերների կողմից 2018թ.-ի ընթացքում կատարվել են գումարների փախանցումներ մեր ընկերության բանկային հաշվին, նպատակ դաշտում նշելով որպես վնասի փոխհատուցում:

Վերը նշված աղյուսակում ներառված գումարների մուտքագրումը «Բարձավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի հաշվին հաշվապահորեն ձևակերպվել է նախնական «ստացված կանխավաճարներ» (523,4) հաշվին որպես տարանցիկ, քանի որ դեռ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից չի տրամադրվել վերջնական ուսումնասիրությունների արձանագրությունը, որը ուսումնասիրելուց հետո կտրվեն ճշգրիտ հաշվապահական ձևակերպումներ, իսկ ընկերության 2018թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների և ընկերության 2018թ. տարեկան շահութահարկի հաշվարկի պատրաստման ներկայացման համար դեռ ժամանակ կա:

Մաս II, **Ստուգման արդյունքներում արձանագրված այլ փաստերի և Մաս** III, **Ստուգման արդյունքներում արձանագրված այլ փաստերի մասով**

1. Համապատասխան տնօրենի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ վերջինս հայտնել է, որ ինքը երբևէ նշված ընկերության տնօրեն չի հանդիսացել:

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերի՝

6. Գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել գնահատող հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստին պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ:

7. Եթե առկա է սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից: Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հրապարակվում է տեղեկագրում:

N	Ստացման ամսաթիվ	Վճարող	Գումար	Վճարման նպատակ
1	05.11.2018	ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿՈՈՊՇԻՆ ՍՊԸ	5,000,000	վնասի փոխհատուցում
2	24.10.2018	Առսարք Տեխ ՍՊԸ	7,000,000	ՀՀ ՊՎԾ կողմից 2017-թ. ընթացքում հայտնաբերած թերությունների փոխհատուցում
3	11.06.2018	ԲԻԳ ԷՆԵՐԳՈ ՍՊԸ	20,000,000	Պետության պատճառած վնասի վերականգնում
4	24.10.2018	ԲԻԳ ԷՆԵՐԳՈ ՍՊԸ	16,000,000	ՀՀ ՊՎԾ կողմից 2017-թ. ընթացքում հայտնաբերած թերությունների փոխհատուցում
5	25.10.2018	ԲԻԳ ԷՆԵՐԳՈ ՍՊԸ	24,000,000	ՀՀ ՊՎԾ կողմից 2017-թ. ընթացքում հայտնաբերած թերությունների փոխհատուցում
6	05.11.2018	ԲԻԳ ԷՆԵՐԳՈ ՍՊԸ	18,000,000	2017թ. -ի վնասի փոխհատուցում
7	05.11.2018	ԲԻԳ ԷՆԵՐԳՈ ՍՊԸ	20,000,000	ՀՀ ՊՎԾ կողմից 2017-թ. ընթացքում հայտնաբերածի փոխհատուցում
8	24.10.2018	էներգացանցնախագիծ ինստիտուտ ՓԲԸ	25,000,000	2017թ. -ի վնասի փոխհատուցում
9	05.11.2018	Հիդրոէլեկտրամոնտաժ ՓԲԸ	7,500,000	վնասի փոխհատուցում 2017թ. համար
10	24.10.2018	Մոնտաժտրանսսշին ՓԲԸ	11,000,000	2017թ. վնասի փոխհատուցում
11	24.10.2018	Մոնտաժտրանսսշին ՓԲԸ	19,000,000	2017թ. վնասի փոխհատուցում

Տվյալ դեպքում, Ընկերության գլխավոր տնօրենի 30.03.2017թ. N 43-Լ հրամանով հաստատված գնահատող հանձնաժողովի կազմում ընկերության <<Հարավային>> մասնաճյուղի տնօրեն ընդգրկված չի եղել:

Մաս II, **Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումների** 3-**րդ կետի մասով**.

ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-17/12 պայմանագրով համաձայնագիրը կնքվել է 2017թ. դեկտեմբերի 18-ին, որի 3-րդ կետի համաձայն՝ համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրը կնքելը Կողմերի միջև 2017 թվականի մայիսի 29-ից ծագած հարաբերությունների նկատմամբ /հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետ:

Նշված հարցի շուրջ ներկայացնեմ հետևյալ պարզաբանումը.

համաձայնագիրը հետին ամսաթվով կնքելը չի հակասում ՀՀ օրենսդրության պահանջներին, քանի որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կողմերն իրավունք ունեն սահմանելու, որ իրենց կնքած պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիր կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: Ինչպես նաև, ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի մարտի 20-ի «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 09-ի № Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ» պաշտոնական

պարզաբանման (այսուհետ՝ Պարզաբանում) համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն իրականացվելու դեպքում՝ եթե պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը մատակարարվել են ապրանքներ, մատուցվել են ծառայություններ կամ կատարվել են աշխատանքներ, ապա կնքվելիք համաձայնագրով երկկողմ համաձայնությամբ կարող է նախատեսվել դրույթ հետևյալ բովանդակությամբ. «Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ»: Տվյալ դեպքում, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասով և հաշվի առնելով Պարզաբանումը, Կողմերն իրավասու են կատարված աշխատանքներից հետո կնքել համաձայնագիր՝ նշելով, որ համաձայնագրի պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Ծածկագիր ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-17/16

1. Առաջին կետում նշված անհամապատասխանությունները չեն կարգավորում «Գնումների մասին» ՀՀ օրենքի և «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ: Նշված փաստերը հիմք չեն հանդիսանում գնման գործընթացի շրջանակներում մասնակցների կողմից ներկայացված հայտերը մերժելու համար:

3. Հաղթող մասնակցի կողմից ներկայացած նմանատիպ պայմանագիրը համապատասխանում է շինարարական լիցենզիայի շրջանակներում իրականացվող աշխատանքներին՝ մասնավորապես էներգետիկ ոլորտի:

4. Հաշվի առնելով, որ նշված գնման գործընթացի հրավերը gnumner.am կայքում հրապարկվել է 30.03.2017թ., ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում գործում էր «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումը, որով չի պահանջվում շահերի բախման բացակայության մասին հայտարարություն:

Ծածկագիր ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-17/12

1. Հայտնում ենք, որ գրանցամատյանում և հայտերի փաթեթների վրա կատարված ուղղումները արված են գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից և հանդիսանում են տեխնիկական վրիպակի արդյունք:

Ծածկագիր ԲԷՑ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/61

1. Չնայած այն հանգամանքին, որ գնման պահանջը պլանավորված է եղել նախապես, սակայն տեղի է ունեցել անկանխատեսելի վթար տվյալ ժամանակահատվածում և վթարային ակտի առկայության պայմաններում կիրառվել է բանակցային ընթացակարգ՝ ղեկավարվելով գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետի գ պարբերության պահանջներով, բնականաբար նախագծանախահաշվային խաստաթղթերը պետք է կազմվեն և համապատասխան փորձաքննություն անցնեն գնումների պլանում ներառվելուց հետո, որովհետև գնումների պլանում չներառված աշխատանքի համար անիմաստ է գումար ծախսել՝ կազմել նախագծանախահաշվային փաստաթղթեր և վճարել փորձաքննության համար՝ այն դեպքում, երբ պարզ չէ գնումների պլանում և գործարար ծրագրում տվյալ աշխատանքը կներառվի, թե ոչ:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №8 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. կետ 1.3.3 «Գյումրի» օդային գծի երկու հատ /թիվ 18, թիվ 28/ հենարանների ամբողջական ներկման փաստի վերաբերյալ հայտնում ենք, որ վերոնշյալ այսպես կոչված <<ցինկապատ>> հենարանները իրականում ենթակա են եղել ներկման: Կից ներկայացնում ենք այդ հենարանների մինչև ներկման աշխատանքները արված լուսանկարները: /5 լուսանկար/

2. II. **բաժնի՝ «էլեկտրահաղորդման գծերի հանութագրման և բազային երկրատեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան քարտեզագրական հիմքի ստեղծման և ներդրման աշխատանքների» ձեռք բերման (ծածկագիր՝ «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ**-18/02»), 2.3 **կետի՝ ստուգման ընթացքում արձանագրված այլ փաստեր**, 2.3.1 **ենթակետի վերաբերյալ**.

2.1. Հայտնում եմ, որ 2018 թվականի Գնումների պլանով «էլեկտրահաղորդման գծերի հանութագրման և բազային երկրատեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան քարտեզագրական հիմքի ստեղծման և ներդրման աշխատանքների» ձեռք բերման համար սահմանված 146.5 **մլն ՀՀ դրամ** (122.039 մլն դրամ, առանց ԱԱՀ) գումարի նախահաշիվը (առանց ստորագրության) ներառված է եղել մատակարարման բաժնում գտնվող 2018թ. գնումների պլանի փաստաթղթային փաթեթում, որի հետ ծանոթացել է հաշվեքննողը իր կատարած ուսումնասիրության ժամանակ:

3. կետեր 2.3.4, 2.3.5 և 3.3.2 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կողմից ձեռք բերված գեոդեզիական չափագրման սարքերը 2018թ. ընթացքում «Վոլիոս» ՓԲԸ-ի կողմից օգտագործվել է «Նախագիծ» մասնաճյուղին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով «Վոլիոս» ՓԲԸ

գեոդեզիական որակավորում ունեցող աշխատակիցների կողմից 220կՎ «Էրեբունի» «Մուսալեռ» առմուտներ «ԵՐՋԵԿ»220կՎ ԵԿ-ն օդային գծերի նախագծային աշխատանքների հատակագծերի և կտրվածքների կազմման համար, քանի որ «Նախագիծ» մասնաճյուղը գեոդեզիական որակավորում ունեցող աշխատակից չի ունեցել:

2018թ. ընթացքում «Վոլիոս» ՓԲԸ-ի կողմից օգտագործվել է ոչ միայն «Նախագիծ» մասնաճյուղին պատկանող գեոդեզիական սարքավորումները, այլ նաև մասնաճյուղին պատկանող ամբողջ գույքը աշխատողների հետ միասին:

4. Քանի որ պլանավորման ժամանակ հնարավոր չի ճշգրտորեն որոշել յուղերի վերլուծության ամբողջ ծավալը դրանք կատարվում են էլեկտրական սարքավորումների փորձարկումների և չափումների արդյունքներից ելնելով:

Հաշվի առնելով, որ «ԲԷՑ» ՓԲԸ-ում գործում են հին յուղալցված սարքավորումներ, իսկ տրանսֆորմատորները սպառել են իրենց ծառայության ժամկետները արտադրողների կողմից սահմանված, այն էլ կրկնակի անգամ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ մենք չենք գերազանցել պայմանագրով նախատեսված 10% թույլատրելի չափը:

5. «ԲԷՑ» ՓԲԸ և «Էներգակարգավորում» ԲԲԸ միջև 2017թ.-ի նոյեմբերի 14-ին կնքված «ԷՆ/Կ-17/39-1» կապալի պայմանագրում նշված 220կՎ «Մարաշ» ենթակայանի ՏՄ-630/10 կՎԱ տիպի տրանսֆորմատորի նորոգման աշխատանքները «ԲԷՑ» ՓԲԸ 2017թ. գնումների պլանում չեն ընդգրկվել, որովհետև տրանսֆորմատորի նորոգման անհրաժեշտությունն առաջացել է նույն թվականի նոյեմբերի 9-ին ենթակայանում տեղի ունեցած վթարից հետո, երբ պարզվել է, որ վնասված է տրանսֆորմատորի փաթույթը:

Ծածկագիր ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-17/44

1.2.4 ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների մասին» № 368-Ն որոշման 10-րդ կետով սահմանվում է, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնման գործընթացի կազմակերպման ժամանակ գնահատող հանձնաժողովը բաղկացած է առնվազն հինգ անդամից՝ երկու բացող (համակարգում՝ ԲԱ) և առնվազն երեք գնահատող անդամից (համակարգում՝ ԳԱ): Ընդ որում, գնահատող անդամներից մեկը հանձնաժողովի նախագահն է (համակարգում՝ ԳԱՊ): Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար (համակարգում՝ ՄՀՄ), որը հանձնաժողովի անդամ չէ, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամները կազմված են եղել հինգ անդամներից, որոնցից միայն երեքն են գնահատող անդամ հանդիսանում: Տվյալ պարագայում գնման ընթացակարգերի գնահատման արձանագրությունները ստորագրվել են միայն գնահատող անդամների կողմից: Համակարգում գնահատման փուլի ավարտին ավտոմատ կերպով ստեղծվում է հաշվետվություն, որը նույնպես հաստատվում է միայն գնահատող անձնակազմի կողմից: Բացող անդամները ներկա են գտնվել հանձնաժողովի նիստերին, սակայն չեն ստորագրել գնահատման նիստերի արձանագրությունները:

Ծածկագիր ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-18/02

1. Տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում պահանջվող հաղթող մասնակցի կողմից ներկայացված մասնագիտական որակավորման փաստաթղթերը 2018թ. դեկտեմբերի 19-ին էլեկտրոնային տարբերակով ուղարկվել են ---------- հասցեին, որը տրամադրվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի աշխատակիցների կողմից:

2.Նախահաշիվը առկա է մրցութային փաթեթում:

Հիմք ընդունելով, որ ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների մասին» № 368-Ն որոշման 10-րդ կետով սահմանվում է, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնման գործընթացի կազմակերպման ժամանակ գնահատող հանձնաժողովը բաղկացած է առնվազն հինգ անդամից՝ երկու բացող (համակարգում՝ ԲԱ) և առնվազն երեք գնահատող անդամից (համակարգում՝ ԳԱ): Ընդ որում, գնահատող անդամներից մեկը հանձնաժողովի նախագահն է (համակարգում՝ ԳԱՊ): Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար (համակարգում՝ ՄՀՄ), որը հանձնաժողովի անդամ չէ, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամները կազմված են եղել հինգ անդամներից, որոնցից միայն երեքն են գնահատող անդամ հանդիսանում: Տվյալ պարագայում գնման ընթացակարգերի գնահատման արձանագրությունները ստորագրվել են միայն գնահատող անդամների կողմից: Համակարգում գնահատման փուլի ավարտին ավտոմատ կերպով ստեղծվում է հաշվետվություն, որը նույնպես հաստատվում է միայն գնահատող անձնակազմի կողմից: Բացող անդամները ներկա են գտնվել հանձնաժողովի նիստերին, սակայն չեն ստորագրել գնահատման նիստերի արձանագրությունները:

Ծածկագիր ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-17/31

3.2.1 կետում նշված է, որ խախտվել է «Գնումներ մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետը, մինչդեռ, նույն կետը նախատեսում է նաև հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակեն «կամ համարժեք» բառերը, որը սահմանված կարգով նախատեսվել է հրավերում:

3.2.2 Դ.Գ.-ն և Հ.Հ.-ն չեն հանդիսացել գնումների համակարգող աշխատակիցներ:

3.2.3 Հայտերի բացումը տեղի է ունեցել սահմանված ժամին՝ համակարգի միջոցով ավտոմատ եղանակով, տեխնիկական պատճառներով նիստը անցկացվել է երկու ժամ հետո, ինչը ոչ մի կերպ չի խոչընդոտել գնման գործընթացի իրականացմանը:

3.2.4 Հիմք ընդունելով, որ ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների մասին» № 368-Ն որոշման 10-րդ կետով սահմանվում է, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնման գործընթացի կազմակերպման ժամանակ գնահատող հանձնաժողովը բաղկացած է առնվազն հինգ անդամից՝ երկու բացող (համակարգում՝ ԲԱ) և առնվազն երեք գնահատող անդամից (համակարգում՝ ԳԱ): Ընդ որում, գնահատող անդամներից մեկը հանձնաժողովի նախագահն է (համակարգում՝ ԳԱՊ): Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար (համակարգում՝ ՄՀՄ), որը հանձնաժողովի անդամ չէ, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաածողովի անդամները կազմված են եղել հինգ անդամներից, որոնցից միայն երեքն են գնահատող անդամ հանդիսանում: Տվյալ պարագայում գնման ընթացակարգերի գնահատման արձանագրությունները ստորագրվել են միայն գնահատող անդամների կողմից: Համակարգում գնահատման փուլի ավարտին ավտոմատ կերպով ստեղծվում է հաշվետվություն, որը նույնպես հաստատվում է միայն գնահատող անձնակազմի կողմից: Բացող անդամները ներկա են գտնվել հանձնաժողովի նիստերին, սակայն չեն ստորագրել գնահատման նիստերի արձանագրությունները:

3.2.5 Պահանջվող փաստաթղթերը հայտնաբերվել են:

Ծածկագիր ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-17/35

4.2.1 Պահանջվող հավելվածները հայտնաբերվել են:

4.2.3 Հիմք ընդունելով, որ ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների մասին» № 368-Ն որոշման 10-րդ կետով սահմանվում է, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնման գործընթացի կազմակերպման ժամանակ գնահատող հանձնաժողովը բաղկացած է առնվազն հինգ անդամից՝ երկու բացող (համակարգում՝ ԲԱ) և առնվազն երեք գնահատող անդամից (համակարգում՝ ԳԱ): Ընդ որում, գնահատող անդամներից մեկը հանձնաժողովի նախագահն է (համակարգում՝ ԳԱՊ): Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար (համակարգում՝ ՄՀՄ), որը հանձնաժողովի անդամ չէ, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաածողովի անդամները կազմված են եղել հինգ անդամներից, որոնցից միայն երեքն են գնահատող անդամ հանդիսանում: Տվյալ պարագայում գնման ընթացակարգերի գնահատման արձանագրությունները ստորագրվել են միայն գնահատող անդամների կողմից: Համակարգում գնահատման փուլի ավարտին ավտոմատ կերպով ստեղծվում է հաշվետվություն, որը նույնպես հաստատվում է միայն գնահատող անձնակազմի կողմից: Բացող անդամները ներկա են գտնվել հանձնաժողովի նիստերին, սակայն չեն ստորագրել գնահատման նիստերի արձանագրությունները:

Քանի որ գնահատման նիստի արձանագրությունը կարող է հաստատվել երկու գնահատող անդամների և նախագահի կողմից՝ այս պարագայում երկու անդամի ստորագրությունը բավարարում է օրենքի պահանջը:

Ծածկագիր ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-17/24

5.2.2 Հիմք ընդունելով, որ «ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների մասին» № 368-Ն որոշման որոշման 10-րդ կետով սահմանվում է, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնման գործընթացի կազմակերպման ժամանակ գնահատող հանձնաժողովը բաղկացած է առնվազն հինգ անդամից՝ երկու բացող (համակարգում՝ ԲԱ) և առնվազն երեք գնահատող անդամից (համակարգում՝ ԳԱ): Ընդ որում, գնահատող անդամներից մեկը հանձնաժողովի նախագահն է (համակարգում՝ ԳԱՊ): Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար (համակարգում՝ ՄՀՄ), որը հանձնաժողովի անդամ չէ, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաածողովի անդամները կազմված են եղել հինգ անդամներից, որոնցից միայն երեքն են գնահատող անդամ հանդիսանում: Տվյալ պարագայում գնման ընթացակարգերի գնահատման արձանագրությունները ստորագրվել են միայն գնահատող անդամների կողմից: Համակարգում գնահատման փուլի ավարտին ավտոմատ կերպով ստեղծվում է հաշվետվություն, որը նույնպես հաստատվում է միայն գնահատող անձնակազմի կողմից: Բացող անդամները ներկա են գտնվել հանձնաժողովի նիստերին, սակայն չեն ստորագրել գնահատման նիստերի արձանագրությունները:

Ծածկագիր ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/27

6.2.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների մասին» № 368-Ն որոշման որոշման 10-րդ կետով սահմանվում է, որ էլեկտրոնային գնումների համակարգի

միջոցով գնման գործընթացի կազմակերպման ժամանակ գնահատող հանձնաժողովը բաղկացած է առնվազն հինգ անդամից՝ երկու բացող (համակարգում՝ ԲԱ) և առնվազն երեք գնահատող անդամից (համակարգում՝ ԳԱ): Ընդ որում, գնահատող անդամներից մեկը հանձնաժողովի նախագահն է (համակարգում՝ ԳԱՊ): Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար (համակարգում՝ ՄՀՄ), որը հանձնաժողովի անդամ չէ, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաածողովի անդամները կազմված են եղել հինգ անդամներից, որոնցից միայն երեքն են գնահատող անդամ հանդիսանում: Տվյալ պարագայում գնման ընթացակարգերի գնահատման արձանագրությունները ստորագրվել են միայն գնահատող անդամների կողմից: Համակարգում գնահատման փուլի ավարտին ավտոմատ կերպով ստեղծվում է հաշվետվություն, որը նույնպես հաստատվում է միայն գնահատող անձնակազմի կողմից: Բացող անդամները ներկա են գտնվել հանձնաժողովի նիստերին, սակայն չեն ստորագրել գնահատման նիստերի արձանագրությունները:

Քանի որ գնահատման նիստի արձանագրությունը կարող է հաստատվել երկու գնահատող անդամների և նախագահի կողմից՝ այս պարագայում երկու անդամի ստորագրությունը բավարարում է օրենքի պահանջը:

Ծածկագիր ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/14

7.2.1 Ն.Գ.-ն ներկա է գտնվել բացման նիստին, պարզապես չի ստորագրել շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը տեխնիկական պատճառներով:

7.2.2 Հիմք ընդունելով, որ ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների մասին» № 368-Ն որոշման որոշման 10-րդ կետով սահմանվում է, որ Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնման գործընթացի կազմակերպման ժամանակ գնահատող հանձնաժողովը բաղկացած է առնվազն հինգ անդամից՝ երկու բացող (համակարգում՝ ԲԱ) և առնվազն երեք գնահատող անդամից (համակարգում՝ ԳԱ): Ընդ որում, գնահատող անդամներից մեկը հանձնաժողովի նախագահն է (համակարգում՝ ԳԱՊ): Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար (համակարգում՝ ՄՀՄ), որը հանձնաժողովի անդամ չէ, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաածողովի անդամները կազմված են եղել հինգ անդամներից, որոնցից միայն երեքն են գնահատող անդամ հանդիսանում: Տվյալ պարագայում գնման ընթացակարգերի գնահատման արձանագրությունները ստորագրվել են միայն գնահատող անդամների կողմից: Համակարգում գնահատման փուլի ավարտին ավտոմատ կերպով ստեղծվում է հաշվետվություն, որը նույնպես հաստատվում է միայն գնահատող անձնակազմի կողմից: Բացող անդամները ներկա են գտնվել հանձնաժողովի նիստերին, սակայն չեն ստորագրել գնահատման նիստերի արձանագրությունները:

Քանի որ գնահատման նիստի արձանագրությունը կարող է հաստատվել երկու գնահատող անդամների և նախագահի կողմից՝ այս պարագայում երկու անդամի ստորագրությունը բավարարում է օրենքի պահանջը:

7.2.3 Դ.Գ.-ն չի հանդիսացել գնումների համակարգողի աշխատակից:

4.2.2.2 **կետի համաձայն** «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը մինչև օրս չի ներդրվել և 2017թ.-ի համար վճարվել է 980 հազ., իսկ 2018թ.-ի համար 1,152.0 հազ. ՀՀ դրամ:

Հայտնում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը ներդրվել է 2017 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին՝ ի կատարումն ՀՀ վարչապետի 11.08.2017թ. N 02/31.6/18346-17 հանձնարարականի: 27.12.2017թ.-ին «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ին վճարվել է 921.6 հազ. ՀՀ դրամ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի 25.09.2017-25.09.2018թթ. սպասարկման համար, իսկ 21.01.2019թ.-ին 288.0 հազ. ՀՀ դրամ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի 25.09.2018-25.12.2018թթ. սպասարկման համար:

Տեղեկացնում եմ նաև, որ Ձեզ դիտորդի կարգավիճակով իրավասություններ էր տրվել ընկերության «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգից օգտվելու և ծանոթանալու (օգտվողը ստեղծվել է 02.10.2018 թվականին):

2017 թվականի գնումների պլանով նախատեսված է եղել «Սերվեր տիպ 1» և «Սերվեր տիպ 2» համապատասխանաբար 3,180.0 հազ. և 3,033.0 հազ. ՀՀ դրամ գումարներով սերվերների ձեռքբերումը, որոնք նախատեսված են եղել միայն «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման և հետագա անխափան աշխատանքի ապահովման համար: Սակայն նշված սերվերների ձեքբերում ընկերությունը չի իրականացրել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի սպասարկման գինը անկախ սերվերների տեղակայման վայրից մնում էր անփոփոխ, 2017 «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրումից հետո որոշում կայացվեց

փաստաթղթաշրջանառության համակարգը թողնել սպասարկող կազմակերպության սերվերների վրա, իր վերահսկողության ու պատասխանատվության ներքո:

Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրումից բացի, ընկերության կարիքների համար անհրաժեշտ եր ներդնել հետևյալ համակարգերը՝

1C հաշվապահական ծրագրի համար նախատեսված երկրորդ սերվեր,

էլ. փոստի համար նախատեսված սերվեր,

աշխատակիցների աշխատաժամանակի հաշվառման համակարգի համար նախատեսված սերվեր,
կենտրոնացված հակավիրուսային ծրագրի համար նախատեսված սերվեր,
Ֆայլ սերվեր,
DC–ի համար անհրաժեշտ երկրորդ սերվեր,
Backup համակարգի ավտոմատիզացիայի սերվեր,
WSUS թարմացումների ավտոմատիզացիայի սերվեր,
RDP կենտրոնացված հասանելիության սերվեր,
Irtek տեղեկատվական սերվեր,
Ըստ անհրաժեշտության նաև որոշ պահուստային սերվերներ

Իրականացված շուկայի ուսումնասիրությունների արդյունքում վերը նշված համակարգերի ներդրման ծախսերը կկազմեին մոտ 36 մլն. ՀՀ դրամ (յուրաքանչյուր ծրագրային ապահովման համար առանձին սերվերի ձեռքբերման դեպքում, և կրիտիկական առաքելություն ունենցող սերվերների համար նախատեսելով երկրորդ սերվերը): Նշված գումարի մեջ ներառված չէ սերվերային սենյակում հովացման համակարգի ներդրման և սերվերների անխափան աշխատանքը ապահովող անհրաժեշտ քանակության ու հզորության անխափան սնուցման սարքերի գնման լրացուցիչ ծախսերը:

Հաշվի առնելով վերոհիշյալը, ընկերությունը որոշեց ձեռք բերել «Սերվերային և տվյալների պահպանման համակարգ», որը հնարավորություն է տալիս բոլոր անհրաժեշտ սերվերները ներառել մեկ ամբողջական համակարգում: Տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով, «ԲԷՑ» ՓԲԸ հաշվեկշռում գտնվող նախկին սերվերի (սպասարկում էր 1C հաշվապահական ծրագիրը) համատեղ օգտագործվում է «Սերվերային և տվյալների պահպանման համակարգ» -ի հետ, ապահովելով ընկերության առկա SS ենթակառուցվածքի բոլոր սերվերների անխափան և հուսալի աշխատանքը:

«Սերվերային և տվյալների պահպանման համակարգ» -ի ձեռքբերման գումարը 26,950.0 ՀՀ դրամից դարձել է 33,635.0 ՀՀ դրամ, քանի որ գնվող ապրանքների մեջ իրականացվել են հետևյալ փոփոխությունները (հիմք՝ 15.04.2017 և 18.06.2017 թվականների շուկային ուսումնասիրությունը)՝

HP StoreEasy 1650 -ը փոխարինվել է HPE MSA 2052 SAN DC LFF Storage - ով
HPE 1920S 24G 2SFP Switch –ը փոխարինվել է Aruba 2920 24G Switch – ով
Երկու հատ E5-2660v4-ը փոխարինվել է երկու հատ E5-2667v4 – ով
Մակ հատ HPE SN1100Q 16Gb 2p FC HBA – ը ավելացվել է,
Մեկ հատ PE SN1000Q 16Gb 2P FC HBA – ը ավելացել է

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №9 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայտնում ենք, որ նկատի ունենալով, որ հողմաագրեգատները արտադրվել և տեղադրվել է իրանական Սաբա Նիրու ընկերության կողմից, ԲԷՑ-ը հողմաագրեգատների վերանորոգման հարցով նախ դիմել է նշված ընկերությանը, սակայն վերջինս հայտնել է, որ ատամնաիվների փոխարինման համար համար անհրաժեշտ է ոչ պակաս 150տ քաշ բեռնաբարձողունակությամբ և 48 բարձրությամբ սլաք ուեցող ավտոկռունկ, ինչը ոչ ՀՀ-ում է առկա, ոչ Վրաստանում և դրա ձեռքբերումը, ինչպես նաև այլ երկրներից վարձկալությունը մեծ ծախսերի հետ է կապված: Նշված հանգամանքը հաշվի առնելով ԲԷՑ-ը հողմաագրեգատների վերանորոգման աշխատանքների համար հայտարարել է մրցույթ, որին մասնակցելու հայտ է ներկայացրել միայն հաղթող ընկերությունը, որը պատրաստակամություն է հայտնել տեղում վերանորոգելու դրանք, սակայն աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկած VRCC էլեկտրոնային բլոկի թերության պատճառով հնարավոր չի եղել հողմակայանի թողարկումը, այսինքն, կապալառուի կողմից կատարված աշխատանքների որակի ստուգումը:

Այսպես.

թիվ-3 հողմաագրեգատի համար նախատեսված կոտրված 6 ատամնանիվների (ատամների) փոխարեն փոխարինվել է 8 ատամ սպեկտրի փոխարինման հատուկ տեխնոլոգիայով, այդ 2 ատամի անհրաժեշտությունն ի հայտ է եկել աշխատանքների ժամանակ, ինչպես նաև նույն հատուկ տեխնոլոգիայով հայտնաբերվել և հատուկ զոդման և հղկման եղանակով նորոգվել է 15 ատամների ճաքեր և 620 սմ երկարությամբ ճաք (կից 9 նկար): Այդ թերությունները հայտնաբերվել են կապալառու կազմակերպության կողմից /«ԲԷՑ» ՓԲԸ-ի աշխատակիցների ներկայությամբ/ իրականացված աշխատանքների ժամանակ օգտագործված հատուկ քսուկների միջոցով, որը «ԲԷՑ» ՓԲԸ տեխնիկապես հնարավորություն չուներ դրանք հայտնաբերելու մինչև մրցույթը:

Թիվ 2 ագրեգատի 18 կոտրված ատամնանիվների (ատամների) նորոգումը, քսուկապատումը և կարգաբերումը, ABB թողարկիչի և CT 3503 բլոկի փոխարինումը կատարվել են կապալառուի կողմից, սակայն VRCC էլեկտրոնային բլոկի վնասված լինելու պատճառով հնարավոր չի եղել թողարկել ագրեգատը, որպեսզի իրականացվի կատարված աշխատանքների որակի ստուգում աշխատանքի մեջ, այդ իսկ պատճառով աշխատանքները չեն ընդունվել և համաձայն 03.07.2017թ. 1-03/1093 գրության կապալառուի աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են:

VRCC էլեկտրոնային բլոկի ձեռքբերումը ԲԷՑ-ը ներառել է 2018թ. գործարար ծագրի պլանում: VRCC էլեկտրոնային բլոկի ձեռքբերման նպատակով ԲԷՑ ՓԲԸ-ն ուսումնասիրություններ է կատարել, որի արդյունքում կարողացել է տեղեկություն ձեռք բերել միայն օգտագործված ապրանքի վերաբերյալ և նպատակահարմար չի գտել օգտագործված ապրանքի ձեռքբերումը՝ մտավախություն ունենալով, որ այն առանց երաշխիքի է և հնարավոր է շուտ շահագործումից դուրս կգա:

Այս պահին դիմել ենք Սաբա Նիրու ընկերությանը, վերջինիս կողմից ներկայացվել է թերությունների ցանկ և գնային առաջարկ հողմաագրեգատների վերանորոգման համար: Նախապատրաստվում է գնման հայտ:

Ծածկագիր ԲԷՑ-ՊԸԱՇՁԲ-17/19

Հաշվի առնելու աշխատանքի կատարման ժամկետների սղությունը և հրատապությունը և այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին մասնակցել է մեկ ընկերություն՝ որոշում է կայացվել հավաստագրի բացակայության փաստը հաշվի չառնել և ընտրված մասնակից ճանաչել միակ մասնակցին:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 **ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ** 18-**Ի №10 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ելնելով եղանակային բարենպաստ պայմանների ընձեռնված հնարավորություններից և ՀՀ կառավարության 02.04.2009 թվականի № 363-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրացանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգի պահանջներից մրցույթի անցկացման ժամկետը կրճատելու նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության 2017 թվականի գործունեության ծրագրում ընդգրկված 220 կՎ լարման «Մարաշ», «Կենտրոն» և 110 կվ «Սևան» էլեկտրահաղորդման օդային գծերի հենարանների հողանցման կոնտուրների մոնտաժման աշխատանքների մրցույթը անցկացվել է մեկ անձից գնման ընթացակարգով, քանի որ ընթացիկ նորոգման աշխատանքների ժամանակ շահագործող անձնակազմի կողմից բազմիցս արձանագրվել է հենարանների վրա մակածված լարում և այդ իսկ պատճառով խնդիր է առաջացել անվտանգության նկատառումներից ելնելով սեղմ ժամկետներում խնդիրը կարգավորել:

220 կՎ լարման «Մարաշ», «Կենտրոն» էլեկտրահաղորդման օդային գծերը նախկինում ըստ նախագծի չեն ունեցել հողանցման կոնտուրներ, իսկ 110 կվ «Սևան» էլեկտրահաղորդման օդային գծի հողանցման կոնտուրները երկար տարիների օգտագործման և բնակլիմայական պայմաններից ելնելով քայքայվել էր և չէր ծառայում իր նպատակին, անհրաժեշտ էր կառուցել նորը:

220 կՎ լարման «Մարաշ», «Կենտրոն» և 110 կվ «Սևան» էլեկտրահաղորդման օդային գծերի հենարանների հողանցման կոնտուրների մոնտաժման աշխատանքների համար նախատեսված ժամանակը որոշվել է այն հանգամանքից ելնելով, որ ՀՀ կառավարության 02.04.2009 թվականի № 363-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրացանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգի 44-րդ կետի պահանջի համաձայն, գյուղատնտեսական տարածքներով անցնող էլեկտրահաղորդման օդային գծերի նորոգման վերակառուցման պլանային աշխատանքները կատարվել են հողօգտագործողների հետ համաձայնեցնելով և այն ժամանակ երբ այդ տարածքները գյուղատնտեսական մշակաբույսերով զբաղեցված չեն կամ հնարավոր է ապահովել այդ մշակաբույսերի պահպանվածությունը:

Նկատի ունենալով վերոհիշյալը և այն, որ հողանցման կոնտուրները պետք է կառուցվեին տարբեր տեղերում և տարբեր գյուղատնտեսական մշակաբույսերով մշակված տարածքներում հնարավոր չէր ճշգրիտ կանխատեսել մշակաբույսերի հասունացման և հողօգտագործողների կողմից մշակաբույսերի հավաքման ժամկետները, այդ իսկ պատճառով աշխատանքների կատարման համար նախատեսվել է համեմատաբար երկար ժամանակ:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 **ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ** 18-**Ի №11 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ծածկագիր ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-17/30

Հրավերի 8.5 կետում հստակ նշված է, որ արտարժույթով գնային առաջարկ ստանալու դեպքում գնի հաշվարկը իրականացվելու է ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքով:

Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներում նշված է, որ խախտվել է «Գնումներ մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետը՝ մինչդեռ նույն կետը նախատեսում է նաև հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակեն «կամ համարժեք» բառերը, որը սահմանված կարգով նախատեսվել է հրավերում և չի հակասում օրենսդրությանը:

Քանի որ «Կալուգագլավսնաբ» ԲԸ-ն չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ, բայց միևնույն ժամանակ հանդիսանում է ԵԱՏՄ անդամ երկրի կազմակերպություն և ԵԱՏՄ տարածքում ապրանքների ներմուծման ժամանակ ազատված է մաքսատուրքից: Միևնույն ժամանակ գնային առաջարկում մասնակիցը գումարը նշել է առանց ԱԱՀ գումարի /22788000 ՀՀ դրամ/ և հետագայում պայմանագրում նույնպես այդ գումարը չի ներառվել: Ինչից հետևում է, որ գնումների պլանով նախատեսված 27600000 ՀՀ դրամ նախահաշվային գումարից ավել

գումար չի ծախսվել տվյալ ապրանքի ձեռքբերման համար: Գնումների գործընթացի կազմակերպման տեսանկյունից նույնպես որևէ շեղում թույլ չի տրվել, որովհետև եթե նույնիսկ մասնակիցը իր գնային առաջարկում ներառեր ԱԱՀ գումարը գների համեմատումը իրականացվում է առանց այդ գումարի հաշվարկման:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №12 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծածկագիր ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-17/34

Պայմանագրի կնքման ժամկետի 17 օր ուշացման պատճառ է հանդիսանում այն փաստը որ տվյալ ժամանակահատվածում իրականացվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն հավատարմագրային կառավարման հանձնելու գործընթացը:

Ստուգում իրականացնող մարմնի աշխատակցի կողմից սխալ է մեջբերվել գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 100-րդ կետի 7-րդ ենթակետը, որը առընչություն չունի տվյալ գնման ընթացակարգի հետ, պետք էր հղում կատարել նույն որոշման 61-րդ կետի 1-ին ենթակետին.

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝
հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

«Ֆինանսական միջոցներ», «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշները և լիցենզիայի համապատասխանությունը հարավերով սահմանված պահանջներին գնահատվել է բավարար հիմք ընդունելով «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «Մոնտաժտրանսշին» ՓԲԸ-ի իրավահաջորդը լինելու վերաբերյալ տեղեկանքը:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №13 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲԷՑ-ԳՀԾՁԲ-15/02 պայամագրի մասով.

Նշվել է, որ պայմանագրում կատարված փոփոխությունները՝ 01.04.2018 և 27.04.2018 թվականներին կնքված համաձայնագրերով պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելը հակասում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետային սահմանափակման դրույթին, այն է՝ արգելվում է պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը մեկ անգամ մինչև երեսուն օրացուցային օրվանից ավելի ժամկետով երկարաձգելը, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Հաշվեքննիչ պալատի ուշադրությանն եմ հրավիրում այն հանգամանքին, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա, հետևաբար, կնքված ԲԷՑ-ԳՀԾՁԲ-15/02 պայամագրի գործողության ժամկետը 2-րդ անգամ երկարաձգելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը որևէ խախտում թույլ չի տվել:

Նշված է, որ «Գրիֆ» ԱՀԻԳ ՍՊԸ հետ 01.04.2015թ կնքված պայամանագրին կից 01.04.2018թ կնքված համաձայանագրի շրջանակներում վճարված 10,974,500 դրամի վճարման հիմքերը բացակայում են: 05.02.2019թ.-ի ՀՀ հաշվեքննիչ պալատի ՀՊԵ-ԿԱ-21 գրության համաձայն պահանջվող տեղեկատվությունը ներկայացվել է՝ այն է «Գրիֆ» ԱՀԻԳ ՍՊԸ հետ 01.04.2015թ կնքված «ԲԷՑ_ԲԸԾՁԲ 15/02» պայամանագրի 2.2.7 կետով նախատեսված ծախսեր և հավելավճարներ, ապա դրանց հաշիվներն ու վճարային փաստաթղթերը: Այնուհետև վճարումների վերաբերյալ հիմքերի և վճարման հանձնարարագրերի պատճենները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ գնման ընթացակարգի անցկացման և կազմակերպման ժամանակահատվածում գործում էր «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ

կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումը, որով սահմանված չի եղել բանկային երաշխիքի անհրաժեշտությունը, ընտրված մասնակցից չի պահանջվել տվյալ փաստաթուղթը: Ինչպես նաև պայմանագրի երկարացման սահմանափակում չի նախատեսվել թիվ 168 որոշմամբ:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №14 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ հաշվեքննիչ պալատի ստուգման արձանագրությունում անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումների մասում նշված՝ Իրան – Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան հատվածի շինարարության շրջանակներում չօգտագործված, պահպանվող խողովակների խմբաքանկում առկա 11մմ պատի հաստությամբ խողովակները գտնվում են Սյունիքի մարզի ք.Ագարակի հավաքատեղիում:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №15 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծածկագիր ԲԷՑ-ԲԸԾՁԲ-17/05

Գնման մրցույթի արձանագրության մեջ որպես գնման անհրաժեշտություն նշված է 2017թ. գնումների պլանը, իսկ գնման ձևի ընտրության հիմնավորումը՝ գլխավոր տնօրենի 28.02.2017թ.-ի N 27 - Լ հրամանը:

Պայմանագրի կատարման ապահովումը գտնվել է:

Մասնակցի կողմից ներկայացվել է տեխնիկական բնութագիր միավոր գներով, որը կցվել է պայմանագրի հավելված 1-ին: Կնքված պայմանագրի շրջանակներում պայանագրի կողմին մինչ օրս վճարվել է 56788660 ՀՀ դրամ, որը չի գերազանցում պայմանագրի ընդհանուր գումարը 109200000 ՀՀ դրամ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության հիման վրա գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ունի 95 806 ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որը սահմանված կարգով շտկվել է մասնակցի կողմից՝ գնահատող հանձնաժողովի ներկայացրած հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկանքի միջոցով, ելնելով վերոգրյալից հանձնաժողովը բավարար է գնահատել մասնակցի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը:

Բեռի ժամանումից մաքսային միջնորդը ներկայանում է մաքսային հսկողության տարածք (տերմինալ), որից հետո մաքսային մարմնի ներկայացուցչի հետ իրականցվում է նախնական զննման գործընթաց, որը իրենից ենթադրում է կապարակնիքների առկայությունը, մեքենաների համարանիշների ճշտությունը ներկայացված փաստթղթերի հետ, մեքենայի ծածկի (տենտի) չվնասված լինելու փաստը, բեռնարկղի դեպքում՝ համարանիշի ճշտությունը: Այնուհետև կապարակնիքները բացվում են և մաքսային միջնորդը զննում է բեռը՝ ըստ ներկայացված հաշիվ-ապրանքագրի, փաթեթավորման թերթիկների և CMR-ի: Սխալի արձանագրման պարագայում Պատվիրատուին տրամադրվում է տեղեկատվություն:

Նշված գործընթացից հետո սկսվում է մաքսային ձևակերպումների գործընթացը, ապրանքների դասակարգումն՝ ըստ ԵՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, ծածկագրերի որոշում՝ ըստ հաշիվ-ապրանքագրի, ապրանքային հայտարարագրի կազմումը և այլն: Այնուհետև, այն ներկայացվում է փաստաթղթային և ձևակերպումների բաժիններ: Փաստաթղթային և ձևակերպումների բաժինների կողմից հաստատվելուց հետո տերմինալում իրականացվում է փաստացի բեռի և ապրանքային հայտարարագրի համապատասխանություն, որից հետո միայն մաքսային միջնորդի ներկայությամբ բեռը բաց է թողնվում:

Ասվածից հետևում է, որ նշված գործունեությունը փաստացի իրականացվում է մաքսային մարմնի կողմից, սակայն դրա ապահովումը իրականացվում է մաքսային միջնորդի ներկայությամբ և իր ձևակերպումների համաձայն:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №16 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

II. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ

1.ՀՀ Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված №16 Արձանագրության «անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ» կետ 1-ում նշվում է, որ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման վերաբերյալ ծրագիրը բացակայում է, սակայն նշված ծրագիրը տրամադրվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի աշխատակիցներին: Կցվում են նաև «Հայանտառ» ՊՈԱԿ և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացված անտառային ծածկույթի հատմամբ տնտեսությանը հասցվող վնասի փոխհատուցման նպատակով հատկացված տարածքների վերաբերյալ գրությունները, ինչի հիման վրա կազմվել են անտառվերականգնման նախագծերը:

2. *<u>Պարզաբանումներ №16 Արձանագրության կետ 3-ի վերաբերյալ</u>՝*

Անտառային հողերին պատճառված վնասի վերականգնման նախագծային աշխատանքները իրականացվել են և ստացել են ՀՀ բնապահպանության նախարարության պետական փորձաքննության դրական եզրակացությունը: «Հայանտառ» ՊՈԱԿ նախատեսված 6,74 հա տարածքից հատումները իրականացվել են մասնակի՝ 2,5 հա: «Հայանտառ» ՊՈԱԿ անտառահատված 2,5 հա տարածքում շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2019 թվականի 2-րդ կիսամյակում՝ «Հայանտառ» ՊՈԱԿ հետ անտառային հողերի օգտագործման մասին պայմանագիր կնքելուց հետո: Պայմանագրի կնքումից հետո կմեկնարկեն անտառվերականգնման աշխատանքները:

3. ՀՀ Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված №16 Արձանագրության «անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ» կետ 9-ում ՀՀ Հաշվեքննիչ պալատը ներկայացրել է ԲԷՑ-ԲԸԾՁԲ 17/11 պայմանագրի շրջանակներում աշխատանքների մնացած մասի վերսկսված չլինելու փաստը: Սակայն հաշվի առնելով, որ Կապալառու ընկերությունը նշված հատվածներում դեռ աշխատանքներ չի իրականացնում, ուստի անտառահատումը ներկայումս արդիական չէ: Աշխատանքները կսկսվեն Կապալառու ընկերության կողմից՝ մոտեցման ճանապարհների նախագծի վերջնականացումից և հայտը ներկայացնելուց անմիջապես հետո: Ինչ վերաբերում է անտառների վերաճին, ապա անտառահատված տեղամասերում վերաճը չի կարող խոչընդոտել աշխատանքներին:

Ծածկագիր ԲԷՑ-ՊԸԾՁԲ-17/11

Հարկային մարմնի կողմից տրամադրված եզրակացության մեջ տեղեկետվության բացակայությունը հիմք չի հանդիսանում մասնակցի հայտը մերժելու համար՝ հիմք ընդունելով գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 44-րդ կետը: Հարցումը կատարվել է 10.04.2017թ. դրությամբ, 12.04.2017թ. ստացվել է պատասխանը՝ ըստ որի մասնակիցը հարկային պարտավորություններ չունի, ստուգում իրականացնող մարմինը նշում է որ «Էներգո ցանց Մոնտաժ» ՍՊԸ-ն ունի ժամկետանց հարկային պարտավորություններ 21.04.2017թ. մինչդեռ հայտը ներկայացվել է 10.04.2017թ., իսկ պարտավորությունների առկայությունը պետք էր դիտարկել այդ օրվա դրությամբ:

Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ տարածում գործող ստանդարտներով և նորմատիվ տեխնիկական պահանջներով չի նախատեսում տեխնիկական և աշխատանքային ռեսուրսներ, հրավերով չի սահմանվել համապատասխան պահանջ: Այդ պատճառով առաջին տեղ զբաղեցրած մասնակցից չի պահանջվել տվյալ փաստաթղթերը:

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ մասնակիցը ներկայացրել է 7840000 ՀՀ դրամի չափով հանձնման-ընդունման արձանագրություն, ինչը հավաստում է այն մասին, որ տվյալ կազմակերպությունը մատուցել է նշված գումարի չափով ծառայություն և ունի բավարար մասնագիտական փորձառություն:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 **ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ** 18-**Ի №17 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«ԲԷՑ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՆԹԱԿԵՏԻ 5, 6, 7 **ԿԵՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Բարձր հաճախականային սարքավորումները (ԲՀ) չհիմնավորված ցածր գներով վարձակալական հիմունքներով «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին (ԷԷՀՕ) շահագործման հանձնելու վերաբերյալ հայտնում եմ հետևյալը՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (ԲԷՑ) տարբեր վարկային ծրագրերով իրականացրել է 220 կՎ լարման ենթակայանների վերակառուցման և 220 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի հիմնական պաշտպանությունների արդիականացման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն, որ «ԲԷՑ» ՓԲԸ չունի ԲՀ սարքավորումները սպասարկող բաժին կամ անձնակազմ և այն, որ նոր տեղակայված ԲՀ սարքավորումները բազմաֆունկցիոնալ են և միաժամանակ օգտագործվելու էին «ԷԷՀՕ» ՓԲԸ կողմից էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման և տեխնոլոգիական կապի ապահովման նպատակով «ԲԷՑ» ՓԲԸ և «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի միջև ԲՀ սարքերը «ԷԷՀՕ» ՓԲԸ-ին վարձակալական հիմունքներով շահագործման հանձնելու վերաբերյալ համաձայնագրում նշված գումարը հաշվարկելու ժամանակ հաշվի է առնվել հետևյալը՝

- ԲՀ սարքավորումների շահագործման և նորոգման ծախսերը կրելու է «ԷԷՀՕ» ՓԲԸ-ն:
- ԲՀ սարքավորումները օգտագործվելու են նաև «ԲԷՑ» ՓԲԸ 220 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի ռելեական պաշտպանության «արագագործության» բարձրացման նպատակով:

2.«ԲԷՑ» ՓԲԸ «Հյուսիսային» մասնաճյուղի 220 կՎ լարման «Վանաձոր-2» ենթակայանի 10 կՎ ՓԲՍ-ն և 220 կՎ լարման չգործող «Փամբակ» էլեկտրահաղորդման օդային գիծը «ՀԷՑ» ՓԲԸ-ին վարձակալական հիմունքներով «չհիմնավորված» գներով շահագործման հանձնելու վերաբերյալ հայտնում եմ, որ հաշվի առնելով

հետևյալը՝ 2001 թվականին «Վանաձոր-2» ենթակայանի վերակառուցման ժամանակ ֆինանսական միջոցների տնտեսման նպատակով մինչ վերակառուցումը գործող 220 կՎ ենթակայանի գլխավոր սխեմայում կատարվել է փոփոխություն և որոշվել է թերբեռնված 16000 կՎԱ հզորության 110/10 կՎ լարման երկու տրանսֆորմատորները իրենց 110 կՎ բջիջներով չվերակառուցել և ապամոնտաժել, իսկ 10 կՎ ՓԲՍ-ից սնվող սպառիչների էլեկտրամատակարարումը իրականացնել «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից կառուցվող «Վանաձոր-1» ենթակայանից 6 կՎ լարման միջակայքով, այդ նպատակի համար օգտագործելով նաև դեռևս 1988 թվականի երկրաշարժից հետո չգործող 220 կՎ լարման «Փամբակ-2» էլեկտրահաղորդման օդային գծի մի հատվածը:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի սպառիչներին սնող 10 կՎ լարման բակային ենթակայաններում 10 կՎ տրանսֆորմատորները կփոխարինի 6 կՎ տրանսֆորմատորներով և «Վանաձոր-2» ենթակայանի նախկին ՓԲՍ առանց վերակառուցման և «Փամբակ-2» օդային գծի մի հատվածը վարձակալական հիմունքներով կօգտագործի որպես 6 կՎ բաշխիչ կետ և «Վանաձոր-1»-6 կՎ բաշխիչ կետ (նախկին 10 կՎ ՓԲՍ) միջակապի մի հատված:

3. «Նինոծմինդա» 110 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի մի հատված (ՀՀ տարածք) հենարանների վարձակալական հիմունքներով «չհիմնավորված» գներով «Ucom» ընկերության կողմից օգտագործելու վերաբերյալ հաշվի է առնվել հետևյալը՝ այն, որ հենարանները «Ucom» ընկերության կողմից օգտագործելու դեպքում ոչ մի ազդեցություն չի կարող ունենալ էլեկտրահաղորդման օդային գծի բնականոն աշխատանքի վրա և այն ոչ մի ձևով չի կարող խոչընդոտել էլեկտրահաղորդման օդային գծի շահագործման աշխատանքների կազմակերպմանը:

Ստուգման արձանագրության մեջ նշված է, որ Ա/Ձ Սեյրան Վերդյանի և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ միջև կնքված տարածքի վարձակալության պայմանագրի վարձավճարի ամսական չափը կազմում է 40,000 ՀՀ դրամ, սակայն ըստ վարձակալության պայմանագրի վարձավճարի տարեկան չափն է կազմում 40,000 ՀՀ դրամ:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №18 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. 2018թ. սեպտեմբերի 19-ի պայմանագրի շրջանակներում տրված փոխառության վերաբերյալ.

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի թիվ 01ԱԳ/22.4/4591-18 գրության համաձայն՝ անհրաժեշտ է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կողմից իրականացվող 220կՎ Էրեբունի օդային գծի մուտք-ելք սխեմայով միացման և ըստ նախագծի՝ դրա համար անհրաժեշտ 220կՎ երկշղթա հենարանի տեղադրման աշխատանքներն ավարտել մինչև ս/թ սեպտեմբերի 20-ը:

Նշված գրությունը հիմք ընդունելով Պատվիրատուն 2018թ. սեպտեմբերի 17-ի N 1-03/1117 գրությամբ խնդրել է Կապալառուին աշխատանքներն ավարտել մինչև 2018թ. սեպտեմբերի 20-ը, որին ի պատասխան՝ Կապալառուն 2018թ. սեպտեմբերի 18-ի N 40 գրությամբ հայտնել է, որ նշված ժամկետում հնարավոր չէ աշխատանքներն ավարտել, քանի որ շինարարական նյութերը /ապրանքները/ իրենց կողմից ձեռք են բերվելու ՌԴ-ից և այլ երկրներից, որոնց ավելի սեղմ ժամկետներում ձեռք բերման համար անհրաժեշտ է լրացուցիչ վճարում, ինչի հնարավորությունն այդ պահին իրենց ընկերությունը չունի, ուստի խնդրել են 25.000.000 դրամի չափով կանխավճար տրամադրել:

Պատվիրատուն քննարկելով Կապալառուի առաջարկը և հիմք ընդունելով պայմանագրի կատարման հրատապությունը, վերջինիս հայտնել է, որ <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 207թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 56-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն Պատվիրատուն իրավասու չէ կանխավճար տրամադրելու, միաժամանակ հայտնել է, որ կարող է փոխառությամբ գումար տրամադրել 1 ամիս ժամկետով, տարեկան 6% դրույքաչափով /դրույքաչափը որոշել է ֆինանսատնտեսագիտական բաժինը/:

Կապալառուն 2018թ. սեպտեմբերի 18-ի N41 գրությամբ հայտնել է իր համաձայնության մասին:

2. Հավելված 1-ի վերաբերյալ.

Ա.Բ.-ին փոխառությամբ տրամադրված գումարը վերջինից գանձվել է՝ աշխատավարձից պահումներ կատարելու միջոցով:

3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ աշխատակիցներ Վ.Գ.-ին և Ա.Բ.-ին տրված փոխառությունները 30.09.2018թ.-ի դրությամբ ամբողջությամբ մարվել են:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №19 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.ԲԷՑ-ԲԸԱՀԾՁԲ-17/47 պայամագրի մասով.

2.1 Ստորագրված և կնքված է թե պայմանագիրը, թե պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ը (Ծավալաթերթ-նախահաշիվ)-ը:

3-րդ կետով նշված է, որ «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ 2017-2018թթ կատարողական ակտերը չեն ներկայացվել: Նշեմ որ ՀՀ հաշվեքննիչ պալատի աշխատակից ------- տեղեկացվել է, որ տեղեկատվության ծավալը մեծ է, այնուհետև ձեռք է բերվել բանավոր համաձայնություն ուղարկել 5 ամենախոշոր գումարի ակտերը ինչպես նաև 30հատ ընտրանքային կարգով ընտրված ակտեր, որը 07.03.2019թ.-ին ուղարկել եմ ------ էլեկտրոնային հասցեին:

4. Հաշվեքննիչ պալատի ուշադրությանն եմ հրավիրում այն հանգամանքին, որ ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/28 պայմանագիրը կնքվել է 2017թ. օգոստոսի 1-ին, իսկ ՀՀ կառավարության N 534-Ն որոշումն ուժի մեջ է մտնել 2017թ. դեկտեմբերի 31-ին, հետևաբար «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը չէր կարող կիրառել էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգ:

4.1 կետով նշված է, որ «Սմարթ Սոլուշն ՍՊԸ կատարած աշխատանքների հանձնման ընդունման արանագրությունները չեն տրամադրվել, սակայն մեր կողմից տրամադրվել են էլեկտրոնային կրիչով:

Ծածկագիր ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/30

3.Գնման ընթացակարգի ընտրությունը համաձայնեցված է լիազոր մարմնի հետ և էլեկտրոնային աճուրդի փոխարեն ընտրվել է գնանշման հարցում գնման ընթացակարգը, քանի որ տվյալ ծառայության ձեռքբերումը ունի իր առանձնահատկությունները և բարդությունները, որոնց լուծումը այդ ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի համակարգը չէր կարող ապահովել:

3. Մ-ԲԻ-Ռ-ը չի մասնակցել 4 չափաբաժիններից 2-ին, իսկ մյուս երկուսով Ավտոդասն առաջարկել է մոտ 140%-ով ավել գին - Միտքը անհասկանալի է, խնդրում ենք պարզաբանել:

Ծածկագիր ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/28 և ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24

4.ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/28 և ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24 ծածկագրերով գնման ընթացակարգերի իրականացման ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի համակարգը գոյություն չի ունեցել:

ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/28 ծածկագրով գնման ընթացակարգին Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստաթղթերը հաստատված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ հետևաբար մատնանշված անհամապատասխանությունը չի համապատասխանում իրականությանը:

ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24 ծածկագրով գնման ընթացակարգին «ՍԵԳ» ՍՊԸ-ի ներկայացրած Հավելված 2-ը հաստատված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ հետևաբար նշված անհամապատասխանությունը չի համապատասխանում իրականությանը:

5.Որպես անհամապատասխանություն նշված է այն փաստը, որ ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/28, ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/19 և ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/20 ծածկագրերով գնման ընթացակարգերի ընտրված մասնակիցներ «Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ն և «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ն չեն ունեցել 3 տարիներին առհասարակ եկամուտ:

Սակայն այս բոլոր ընթացակարգերի նախահաշվային գները չեն գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, հետևաբար, հիմք ընդունելով գնումների կազմակերպման կարգի 63-րդ կետը՝ նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը կարող է լինել զրո:

63. Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

6. 2017 թ. գնումների պլանում նախագծերի փորձաքննության նախահաշվային գինը կազմում է 2000000 /երկու միլիոն/ ՀՀդրամ, իսկ մասնակցի գնային առաջարկի համեմատությունը նախահաշվային գնի հետ իրականացվում է ԱԱՀ-ի գումարը ներառյալ, այդ իսկ պատճառով «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է: